

# Բազրու

գրութիւններ ունին

- Վ. ՇՈՒՇԱՆՅԱՆ
- Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
- Պ. ՄՆԱՊԵԱՆ
- Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
- Ի. ՍԻՆՈՆԷ
- Մ. ՇԱՐԱՊԻԱՆՅԱՆ
- Կ. ԱՂԱԲԵԿԵԱՆ
- Թ. ԹՈՐԱՆՅԱՆ

Մեծ ժողովուրդին, ի էլ էւր  
կը ճշդին իրենց ճակատ  
պագիրը: Այ թէ էր ինքնին  
դէպքերուն, այլ կը սպեղ զի  
զանոնք:

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆՅԱՆ

Արտարական կեանքիս յե-  
թացքին, մըրածունն կրկն  
սակարարունցրա հայրենիքն,  
որովհետեւ սևոնք, որոնք  
բաժնուած կ'սպարին, ինչպէս  
կ'ըսէ Քաւի, կրկնան գտի  
մէջ սպարի...

ԻԿՆԱԶԻՕ ՍԻՆՈՆԷ

Օշակներ գրում է ժամա-  
նակի մէջ, բայց ժամանակե-  
րի հասար:

ԿԻՄ ԱՂԱԲԵԿԵԱՆ

2 / ԳԱՐՈՒՆ 1999

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.-Վ. ՇՈՒՇԱՆՆԵԱՆ	Օրագիր II
13.-Ա. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Հայկ. Նար. Ար. է
36.-Պ. ԱՆԱՊԵԱՆ	Օր-ցերեկով
53.-Ա. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Ինքնուրույն թախիծ
60.-Ի. ԱՎԼՈՆԷ	Հաց ու գինի
65.-Մ. ՇԱՐԱՊԻԱՆՆԵԱՆ	Իկնածիքի Սիլոնէ
72.-Կ. ԱՂԱԲԵԿԵԱՆ	Օշականի վիպական աշխարհի մատուցներում
93.-Թ. ԹՈՐԱՆՆԵԱՆ	Վերապրող արականագիրք՝ Ամբաստան Փանոսեան
115.-Պ. ԱՆԱՊԵԱՆ	«Ես իմ անուշ Հայաստանի»ի ողիսականը
135.-***	Նշմարներ
148.-***	Լոյս տեսան
153.-***	Մշակութային լուրեր

*Handwritten mark*



22 2 - 2005  
2 3 1 -

# Քաղաք

## ԱՅՄԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԸ. ՏԱՐԻ ԹԻԻ 2 ԳԱՐՈՒՆ 1999 ՊԵՅՄՈՒԹ

### Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ

Ըստ Վազգեն Շուշանեանի կատարած դասաւորումներուն, անտիպ ձեռագիրներն մէկը կնքուած է «Օրագիր II», որուն երկու հատուածները երեւցան «Քաղին»-ի նախընթաց տարիներուն, մէկը, ժաւալունը, Շահան Շահնուրի մասին առաջին գրիչով գրուած 105 էջերը, մեր 1997 տարնշրջանի համարներուն մէջ, իսկ 18 էջերը բաղկացած մէկ հատուածը՝ աւելի առաջ:

Յետագայ երկու հատուածներով լրիւ տրուած կ'ըլլայ «Օրագիր II»-ը: Նպատակայարմար նկատուեցաւ ֆրանսերէն գրուած էջերը ներկայացնել լուսապատճենով, գաղափար մը տալու համար Շուշանեանի նաեւ ֆրանսերէն ձեռագիրին եւ նոյն լեզուով արտայայտելու իր կարողութեան մասին:

### ՕՐԱԳԻՐ II

#### ԱԳՐԻՆ ԵՐԵՔ

Կ'ուզէի շարունակել Հաւատալ, թէ՛ զօրեղ ու տիրապետող ազգերը, իրապէս մեծ են ու արժանի իրենց ճակատագրին, իրենց յաղթական ու բարօր կեանքին, իրենց փառքին: Այլ տասնչինգ տարուան պանդխտութիւնս այս երկրին մէջ ու ինչ որ սորվեցայ ու տեսայ, իրաւունք կու տան ինձ կասկածելու: Այժմ սկսած եմ մտածել, թէ՛ ազգի մը գծած շառաւիղը, պատ-

մութեան գեղերին մէջ, լոկ արդիւնքը չէ իր կարողութեանց ու ճիգերուն, իր առաքինութեանց ու ընդունակութեանց. իրմէ դուրս, իրմէ անկախ կարգ մը ազդակներ կրնան դիրացնել կամ խափանել իր վերելքը, կրնան արագացնել կամ զեղչել իր լրիւ յայտնութիւնը:

Ինչ որ պիտի ըսեմ Հասարակ տեղիք մըն է անշուշտ, այլ ո՛չ ինձ Համար: Արդարեւ, ինձ կը թուի այժմ, որ երկրի մը աշխարհագրական դիրքը, ռազմական բնական պատուարները, Հողին ու ենթահողին Հարստութիւնը, կլիման ու իրեն դրացի ազգերուն քաղաքական-տնտեսական, ընկերային Հո-լովոյթը՝ կարեւոր չափով կրնան ազդել իր ճակատագրին վրայ, կրնան զայն սղել մարդկային պատմութեան առաջին գծերը կամ զայն նետել կէս մահաբունի մը խորը, դառնացեալ աշխարհին դէմ ու ինքզինքին:

Անշուշտ ամէն անգամ, որ ստիպուած եղած եմ, որեւէ յաղթական ազգի Հանդէպ ընդհանուր կարծիք մը բանաձեւել՝ բոլորովին չեմ մոռցած վիրոյիչեալ ազդակները, այլ մտածումս Հաճութեամբ կանգ առած է տարազի մը վրայ, որ ճիշդ չի թուիր ինձ այլեւս ու մեծ ժողովուրդները իրենք կը կոփեն իրենց ճակատագիրը: Ո՛չ թէ կը Հետեւին դէպքերուն, այլ կը ստեղծեն զանոնք: Ինչպէս անհատները, մեծագոյն չափով, այլեւ ազգերը կը կերտեն իրենց պատմութիւնը:

Արդ, վերոյիշեալ պնդումը՝ մասամբ կամայական կը թուի ինձ այժմ: Պատմութիւնէն իրաւագրկուած ազգեր կան, որ չեն դադրիր մեծ ըլլալէ, ու ուրիշներ, որ Հակառակ իրենց յաղթա-կան արշաւին, մեծութեան, իրական փառքի բոլոր տարրերը չունին:

Այս խորհրդածութիւնները կ'որոճամ ատենէ մը ի վեր, ականջալուր ու Հանդիսատես ըլլալով, վերջին քաղաքական ցնցող դէպքերուն դիմաց, Փրանսացիներու ցոյց տուած շփոթութեան ու կարգ մը արարքներուն:

Անտարակոյս, բսել չեմ ուզեր, թէ Փրանսական ազգը մեծ չէ: Այլ ուրիշ է իր մեծութիւնը: Այն Հաւաքական կամքի ծառայումը, այն մարդկային խորին ու ազնիւ Հպարտութիւնը, այն միահամուռ վեհանմտութիւնը՝ որ աշխարհը իրաւունք ունի յուսալու իրմէ, ի սպառ քացակայ կը թուին Փրանսական կեանքէն: Ամիսներէ ի վեր ծայր աստիճան աշայրջութեամբ կը Հետեւին Հանրային կարծիքի ելեւէջներուն, ներկայ կ'ըլլամ գրեթէ բոլոր քաղաքական Հաւաքոյթներուն, կը լսեմ զիրենք՝ գործիս բերմամբ ամէն դասակարգի ու տարիքի Փրանսացի-ներ ու բոլոր տպաւորութիւններու միջինը նպաստաւոր չէ իրենց: Պատմութեան այս ժամուն՝ պատուոյ նիշ մը կարելի չէ տալ Փրանսայի:

Արդարեւ, ահա՛ այն զգացումները, որոնց կը Հանդիպի մարդ, եթէ քաջութիւնը ունենայ քերելու յայտնուած բոլոր կարծիքներուն կճեպը:

Նախ երկիրը Գերմանիայէն, որ ոմանց մօտ կը Հասնի մինչեւ ֆիզիքական վախի սահմաններուն, ուրկէ դուրին է յանգիլ աստիճանական ու սակարկուած զիջումներու քաղաքականութեան մը: Վերապահութիւն ու թշնամանք դէպի Մեծն Բրիտանիան, ձգտում Համաձայնութեան եզր մը գտնելու Գերմանիոյ Հետ, ի վնաս փոքր ազգերուն, Հրաժարում ազատատենչ ամէն խոյանքէ: Ջգել դաշնակից փոքր ազգերը իրենց շարաշուք բախտին, փրկել ֆրանսայի Հարստութեան այն մասը՝ որ կարելի է փրկել, ընդունիլ նոյնիակ աշխատաւոր դասակարգերու դէմ Հալածանքը, եթէ այդ է Հիթլէրեան Գերմանիոյ Հետ Հաշտութեան ճամբան: Քսանհինգ Համալսարանական, իրական մշակոյթի տէր դասախօսներու մէջ՝ առնրւազն չորս Հոգի կան, որ կը պաշտպանեն նման ծաղրանկարային խաղաղութիւն մը:

Երկրորդ՝ ծածուկ, անխոստովանելի Համակրանք դէպի Փաշական Իտալիան ու Հիթլէրական Գերմանիան: Կարօտ նո՛յն բարքերուն, նո՛յն վարչաձեւին Հո՛ւս, Հանրապետական Փրանսայի մէջ: Ցամառ ատելութիւն դէպի բանուոր դասակարգն ու ի՛նչ որ այս դասակարգը կը ներկայացնէ, - ընկերային արդարութեան զգացում, բարօր կեանքի պապակ, ազատութեան Համար նուիրում: Քաղաքացիական կռուի գաղափարին Հետ Հաշտութիւն, ամօթապարտ օտարատեցութիւն, Հակահրէականութիւն, - աՀա՛ ընորոչ զգացումներ, որոնց կը Հանդիպի մարդ այժմ: Երեք դասախօսներ կարելի է այս դրօշակին տակ դնել:

Երրորդ՝ խաղաղասիրութիւն մը, որուն իրական աղբիւրը ծայրագոյն, այլամերժ եսասիրութիւնն է, անձնական գժուձ Հանգստութեան մտահոգութիւնը: Որ Սպանիոյ Հերոսական ժողովուրդը իր արիւնք շաղկոթեամբ կը թափէ՝ ի խնդիր ազատութեան, իր գործն է, իր գիտնալիք բանը: Այս պարոնները կաթիլ մը արիւն իսկ չունին, որեւէ առթիւ թափելու Համար: Ձեխոսովաքիա՞ն, - ո՞ւր կը գտնուի արդեօք: Հիթլէր կրնայ Ալզասն ու Լորենը պահանջել, - Հրաժարիլ ուրեմն այդ նահանգներէն: Կարեւորը այն է, որ ո՛չ ոք դպի այս պզտիկ մարդոց պզտիկ Հանգստութեանց: Այս խաղաղասիրութիւնը բացորոշապէս դասալքութիւն է եւ ուրիշ ոչինչ: Ձորս դասախօսներ խաղաղասէր են այս անփառունակ ձեռով:

Կը Հասնինք յարաբերական մեծամասնութեան, որ բաժան-բաժան է ինքն իր մէջ եւ որ սկսած է ցոյց տալ յարձակողական, վատթար ազգայնամոլութեան մը բոլոր ախտանշանները: Վայրկեաններ կան, որ ան կը բաժնէ վերիններուն ատելութիւններն ու երկխղները, եսասիրութիւններն ու դժուձ Հոգերը:

Ու ո՛չ ոք, ո՛չ իսկ մէկ Հոգի, որ ընդունի միակ բանական լուծումը, - անհրաժեշտութիւնը դրամատիրութեան տապալման ու այս գնով միայն պաշտպանութիւնը, նոյնիակ զէն ի ձե-

ոին, մարդկային այն բոլոր արժեքներուն, որ էութիւնն իսկ կը կազմեն քաղաքակրթութեան եւ որոնց կը սպառնայ մակընթաց ու ուղղման յետադիմութիւնը:

Միայն փարիզեան աւագանին մէջ քանի մը Հազար անկեղծ գինուորեակներ: Այլ այս փոքրամասնութիւնը կը բաւէ միթէ փրկելու Համար Փրանսայի պատիւը, նման պատմական ճգնաժամային վայրկեանի մը մէջ:

**ԱՊՐԻԼ ԸԻՆԳ**

Այսօր ուշադրութեամբ կարգացի վերի էջերը: Ու պէտքը կը զգամ փոքրիկ յետ-գրութեան մը: Իրենցմէ ոմանք կը պնդեն, ու պատմութիւնը կրնայ իրաւունք տալ իրենց, թէ այս ազգը ընդունակ է իր Հողուն խորին միութիւնը վերագտնելու վտանգի պահուն: Վերագտնելու, խաղաղութեան ժամանակ դժուարաւ ընդունուած կարգապահութեան մը հետ, իրական, դրական Համերաշխութիւն մը՝ այս երկրին փառաւոր դրօշակին շուրջ:

Կրնայ ըլլալ: Աւելին, իրենց պատմութիւնը կը Հաւաստէ, թէ Հաւանական է, որ այդպէս ըլլայ:

Այլ այդ պարագային այս միացեալ ճակատը որո՞ւ դէմ կրնայ ուղղուիլ, եթէ ոչ փոքր ու գերի ազգերուն, իրաւազրկեալ դասակարգներուն, գաղթային ժողովուրդներուն:

Պարոնայք ու տիկնայք, - Փրանսան ֆրանսացիներուն...

**ԱՊՐԻԼ ՈՒԹՐ**

Կը շարունակեմ գիշերները, օրուան սպառիչ խոնջէնքէն յետոյ, Լ. Ֆ. Սելինի վերջին գրքին ընթերցումը: Անկասկած այս Հայհոյական, պարսաւազրական, խարազանիչ երկը արդար զայրոյթի կարգ մը տարրեր կը պարունակէ: Այլ կարելի չէ պարկեշտութեան շքանշան տալ այս պարոնին:

Մօտէն դիտելով կարգ մը մեծ գրագէտներու, քաղաքական ու Հանրային գործիչներու դիմայեղութիւնը՝ մարդ ստիպուած է Հաստատել մարդկային բնութեան նոյն արատները: Դաւանափոխութեան, Հաւատուրացութեան դէմքը մէկ չէ անշուշտ: Ու դիրքին է արգարեւ ոեւէ քաղաքացիի ճակտին այս պիտակները փակցնել: Ինչ որ շահեկան է՝ այս մարդոց Հոլովոյթին ներքին շարժառիթն է, ներքին մեքենականութիւնը: Սելինի արգարեւ աղտոտ երեսին Հաւատուրաց մակդիրը փակցնելով՝ անոր յարուցած խնդիրներուն պատասխան տուած կ'ըլլա՞նք միթէ, - ո'չ երբեք:

ԱՀա՛ մարդ մը, որ իր գլորած բոլոր սրբապղծութիւններէն լեղապատառ, խելայեղ աներեսութեամբ մը կը գրոսայ, թէ հաւատորաց մը չէ ինք, թէ՛ սրիկաները միւսներն են, բոլոր հրեաներն ու հրէացածները: Հակառակ խառնիխուռն իր քշած ճամարտակութեանց, բունոցի եւ անդամի ապուշ պատմութիւններուն ու մերթ ընդ մերթ ճշմարտութեան արշաւաւաց ժայթքումներուն, պէտք չէ որ արհամարհոտ գթութեամբ մը փակենք իր հաշիւը: Պէտք չէ որ համախոհ բլլանք մամուլի մեղսակից ու վճարեալ լուծեան: Պէտք է որ հարցնենք, թէ ինչո՞ւ իրապէս յեղափոխական ու արի գրող մը քաջութիւնը չունի, հրապարակաւ, յանուն մեր գաղափարաբանութեան ու անոր լոյսին տակ, բզիկ-բզիկ ընելու այս գէշ կատուն, այս շնագայլը, որ կ'ոռնայ գիշերով: Ի՞նչ ցաւ է, որ կը պրկէ իր աղիքները, ի՞նչ զայրոյթ է, որ կը խարազանէ իր թիկունքները, ի՞նչ չարաշուք ուժ է, որ կարելիութիւն կու տայ անոր՝ երեք հարիւր յիսուն անվախճան էջերու մէջ, անարգելու, հայհոյելու, արաատրելու, պազոտութեամբ ու խենչչութեամբ զրպարտելու:

Իրապէս այդքան անպաշտպանելի՞ է միթէ մեր մարդկութիւնը, որպէսզի Սելին մը անպատասխան հեղնէ ու անարգէ զայն:

*ՄԱՅԻՍ ԻՆՇ*

Ոտրին հրճուանքով մըն է, որ կարդացի Անդրէաս Ժիտի վճռական, այլ հակիրճ էջերը, ուր մեծ գրագէտը կարգի կը հրաւիրէ Սելինը: Ժիտի արի միջամտութիւնը, ըստ իս, կը փրկէ Փրանսական մտաւորականութեան արժանաւորութեան զգացումն ու յեղափոխական պատիւը: Վասնզի լուծիւնը նման պարագաներու, եթէ նոյնիսկ հաճութեան նշան չըլլայ, կը պարունակէ այսուհանդերձ մեղսակցութեան, նոյնիսկ երկիւղի անորոշ տարր մը: Ու բացարձակապէս ապարդիւն է:

Ես անոնցմէ չեմ սակայն, որ կը կարծեն, թէ մեծ ազգերը իրաւունք չունին իրենց բնիկ գեղեցկութիւնն ու ինքնայատկութիւնները պաշտպանելու, ջանալու անաղարտ պահել իրենց հարազատ դիմագիծը: Այլ այս բնական ճիգը կրնայ ի կատար ածուիլ ազնուութեամբ, հպարտ վեհանմտութեամբ, առանց անարգական վայրահաշտութեան:

Կը հաւատամ, թէ ի վերջոյ հրեաներն ու չուրջ երեք միլիոն օտարականները կրնան ազդել Ֆրանսայի հոգեկան, իմացական, գեղարուեստական բնաշրջման վրայ: Այլ ուրոյն արժէքները անվթար պահելու ազնիւ միջոցներ կան: Հալածանքը մասամբ վախի նշան է, բռնութիւնը եւս՝ երբ պայքարի տենդոտ շրջանը անցած է ու խաղաղութիւնը նախընտրելի է ու բարեբար:

Բացի այս բարոյական առարկութիւններէն՝ կան այլ Հրամայական պատճառներ, որ թոյլ չեն տար Ֆրանսայի օտարատնցութեան ու ատելութեան վրայ Հիմնուած քաղաքականութիւն մը մշակել օտարներու Հանդէպ: Կարգ մը բնորոշ թիւեր կան, որ կրնան չափաորութեան Հրաւիրել է՛ն մոլեռանդներն իսկ: Այս երկիրը դեռ չէ յաջողած մեծ պատերազմին առթեած մարդկային կորուստները փոխարինել: Ֆրանսա պէտք ունի արուններու, պէտք ունի երիտասարդութեան, պէտք ունի աշխատող բազուկներու, պէտք ունի մանուկներու: Ժարտարարունեստի միւղեր կան, ուր օտար տարրը գրեթէ կը գերակշռէ տեղացին: Գրեթէ ամէնուրեք սեւ ու տաժանելի աշխատանքները կը կատարուին օտարներու եւ փրփկեան բանուորներու ձեռքերով: Շուրջ երեք միլիոն օտարականները կը Հարստացնեն Ֆրանսան ու ո՛չ թէ կ'աղքատացնեն զայն: Ու բացառիկ պարագաներէ դուրս, երբ կը մեկնին, Հոս կը ձգեն իրենց երիտասարդութիւնն ու ուժը:

Այլ այսպէս է մարդկութիւնը: Վերահաս աղէտին դիմաց՝ քաւութեան նոխազներ Հարկ են: Ու բարձրացող յետադիմութեան ու պատերազմի որոտընդոտ ուրականին առաջին զոհերը ո՞վ կրնան ըլլալ, եթէ ոչ անպաշտպան ու անապաւէն օտարականները:

1939. ՅՈՒՆՈՒԱՐ 20

Հին թղթերու վերջին ծրարի մը մէջ գտայ Հետեւեալ գրչախաղերը, ֆրանսերէն լեզուով գրուած, ի յիշատակ քանի մը բարեկամուհիներու: Կ'արտագրեմ տրտում Հանդիքով մը, քանի որ այս օտարոտի տողերը, իրենց անարուեստ ծալքերուն մէջ, կը պաւեն յուզումներ, որ ո՛չ եւս են, կ'ոգեկոչեն պզտիկ Հանդիքներ, որ խորին արձագանգներ ունին այժմ, այս տարիքիս, երբ կեանքը ժլատութեամբ միայն նոր յուզումներ կը շնորհէ, երբ ոչինչ կը պաւէ առաջին գարուններու խելայեղ ուրախութիւնը, երբ այլեւս ոչինչ յուսալ կարելի է՝ առանց յուսախաբութեան:



Իւրաքանչիւր տողը վարազորի մը պէս է, որ կը բացուի կորուսեալ եղանակներու վրայ: Ինչ փոյթ, թէ ինքնօրէն ու ներդրոյակ արժէք մը չունենան այս խաղերը: Ինձ Համար՝ անոնք կը շարունակեն բողբոջի, ծածուկ սաղարթներու տակ Համեստ ծաղիկներու պէս, որ Հաւատարիմ ձեռք մը կը քաղէ ամէն գարնան, որոնց ճամբան մէկ անձ միայն գիտէ, — ան՝ որ կը լիչէ զանոնք:

Vaine jeunesse

A Henriette Peat

Humblement je cherchais chez les cils la lumière  
Et la femme qui avoient les fleurs isolantes,  
Notre bel éternement devant nos beaux jours —  
Riase et savaient tout les autres casuantes...  
Tousse voluptueuse des eaux, O nuit d'années.  
Et humblement j'avais assés et sans félicité,  
Tenir un amant, j'attends et les autres,  
Te donne avouante, la grâce de te voir  
Et te suis l'épave et te fatigue mille.

Parce n'a rien pourtant, — la vie s'est avouée —  
Rien n'est, dit-on, de nos prisons éternelles —  
Avec mes chers mais je n'en vois et la tuer  
Tristement ou bien avec sa vaine jeunesse.

«Dis-moi jeunesse»

I     A Adeline

Abandonnant l'éternité le fruit amer, le mal latin,  
Devant mes yeux instant, j'ai cherché tes chers casus  
Et le vent d'adieu de s'élever et le faible parfum,  
La lumière de tes heures, O femme et les autres —  
Irré et bas à présent, dans la ville vieillie éternellement  
Nuit et jour je peinaux mes loges éternellement.

Rancune

II

Avec mes mains avides j'ai cherché tes beaux jours  
Dans la vaste nuit froide d'un long silence  
Et mes yeux à travers devant les tristes paysages  
L'attendant ivresse de la vie épuisée et acide.

Impossiblement fleur, pour assouvir au sonde rancune.  
Nourrir et tuer, tristement j'ai aimé la fleur l'âme.

Éloge du vin

a P. Lico-Gauthier

Pant-on aime ts paysans londs et fatigués,  
 Luns riyés vides, ducs pas le lalme rigoureux,  
 Et luns soubts p-sions et luns têtes saucées,  
 O France, la Da-s, sans ts vins givés...  
 N'ayant pas vu le jous ses ts riyés vides,  
 Gens et entimes luntemps vitteint étranges -  
 Avant d'aime ts l'ogues, j'aime ts vins adhés,  
 Unissant dans mon amour ts vins et ts l'ogues,  
 Ts l'ogues et castés, ts p'sons ans l'ogues  
 Hascinant le valles, le Dieu soliel unchant.  
 Il le France... j'm'empie l'atmosphère de d'œuvre  
 Et la rudesse caubé, la p'ion de ts paysans  
 Riant à vos l'ours, à vos l'ours plément.

Enfance perdue

a Riquier Berry

Rindy, ma l'infance perdue dans le l'œuvre  
 Et les rous inaltés de l'œuvre m'été -  
 Gaiment je clamerai avec le vin adhés,  
 Iron, j'assistai à votre royal fête,  
 Naissant l'œuvre d'été, j'assistai v'été, prodige,  
 Et l'œuvre l'œuvre d'été, j'assistai v'été,  
 Bire que les d'été, j'assistai sans fatigue,  
 Epiquement, l'œuvre d'été, j'assistai v'été,  
 Riant avec dans le p'is cascading le vin adhés,  
 Riant et calm, j'assistai v'été, j'assistai v'été,  
 Et v'été et qu'été le dernier rayon de jour.

Prière pour les mains

a Marguerite Ruas

Mains filibles et filantes, mains blanches et l'œuvre,  
 Aux d'été et faible p'ion, dans mes mains l'œuvre,  
 Ravissantes et têtes petites mains de l'œuvre infantes,  
 Gantes en l'œuvre, mains p'ionis t'ogues -  
 Avides de d'œuvre, de l'œuvre, mains d'œuvre,  
 Rayonnantes mains d'œuvre des j'êtes v'êtes,  
 Epiquement l'œuvre d'œuvre, mains d'œuvre,  
 Têtes, j'assistai mains de l'œuvre p'ionis,  
 Halitantes et l'œuvre, mains de l'œuvre v'êtes,  
 Aux mains v'êtes l'œuvre, mains de l'œuvre p'ionis,  
 Rabroyés par mes mains d'œuvre, mains d'œuvre.

Usés, différents, rompus, rompus de vitesses —  
 Usés et insupportables, deux années de ma vie —  
 Soyez toute humaine — soyez toute vivante.

I

Pour une petite fille morte.

à Marja Pican

Méthode un temps sage sur ses corps enfantins,  
 Avant que l'arbre en l'air, égaye la sue le d'air.  
 Répète-la tout son, tout palpitante, — le matin  
 Elle vivait la joie dans l'air, dans l'air  
 Et de l'apostrophe amant son l'air de l'air,  
 Peut-être peut-être sur des yeux, peut-être.  
 Elle était toute blanche, elle était fleurie,  
 Riant et toute fille comme les rayons du jour...  
 Avant que l'arbre en l'air, on l'apostrophe l'air.  
 Peut-être en l'air de l'air et de l'air.

II

Façon

Pour mes mains je demande les saints anciens  
 Et pour ma main sache la force de tes l'air.  
 Regarde-moi mes mains affaiblies, abruties, fatiguées.  
 Et donne-moi, donne-moi mes mains, mes mains.  
 Nourris-moi, nourris-moi avec les mets de ta table.  
 Méprisant la subtilité, s'ajoute et s'ajoute.  
 Avec tes bras fermés, l'air de l'air, l'air de l'air.  
 Ris, triomphe, j'attends avec tristesse, avec.  
 L'air de l'air, s'ajoute et s'ajoute, l'air de l'air.  
 Et donne-moi le feu, le feu et donne-moi le don, le don.

Vieux Chagrin

Viens, viens, viens, viens, viens, viens.  
 Au lieu de l'air de l'air, de l'air de l'air.  
 Dans quelques jours  
 Le printemps tombera à sa fin  
 Et tu seras, de l'air de l'air, de l'air de l'air.  
 Puisque je suis seul.  
 Dans quelques jours, de l'air de l'air.  
 Le printemps tombera à sa fin.  
 Reviens!  
 Reprends ta place, installe-toi!  
 Je t'attends, depuis quelques mois.  
 Tu es, tu es, tu es, tu es, tu es.  
 Mais reviens!

Le printemps tombe à sa fin  
 Et tout tremblant et tout fidèle, te sursais,  
 Comme un sursis et deux espais,  
 Vient !  
 Reviens !  
 Tuas-moi bas, perdonne-moi !  
 Avec toi ça va te suis, ça va même  
 Dis donc, reviens,  
 Reviens !  
 Vient élagier, vient élagier !

Lassitude

Tu dis tout bas  
 Que le chant d'allégresse est éteint, le vent  
 S'élève de l'ouest, la prodale s'en  
 Minuit, il pleut  
 Surtout et le nuit, l'année  
 Je glisse entre toi et moi.  
 Tristesse de vivre, incapacité d'écouter  
 Les heures s'en vont bêtement  
 Pourtant, sur le nez bêtard  
 La nuit se déchire,  
 Le silence aussi, la pluie tombe bêtement  
 Sur le paysage, sur la ville.  
 Tristesse de votre vie, impossibilité...  
 Que faire et que devenir ?  
 La prodale s'en  
 Minuit et dans...  
 Ombre glissante, empâtée sur le trottoir.  
 Je dis tout bas que tu jures  
 Sont gros d'amour, de désir, de jeunesse.  
 Ta main est froide, pourtant  
 Ton sang circule dans tes veines froids  
 Inconsciemment, le désir est vain.  
 Le désir est vague, te jure mesme...  
 Me deviens-tu la nuit ?  
 Regarde, la nuit est seule, tombe sur le pays...  
 Vient ! la prodale s'en  
 Selon la prodale bêtard sur la nuit.  
 Tes lèvres est-elles seif ?  
 Charles, deviens-moi, deviens-moi  
 Je disais tout bas que tu jures  
 Pêche, tu jures,  
 Hier...

ՅՈՒՆՈՒԱՐ 25

Ամէն քաջութիւն ամէն մարդու տրուած չէ:  
 Հարկ է երկարօրէն ապրիլ այս ժողովրդին Հետ, օրըստօրէ ալանատես ըլլալ՝ կեանքի մտերիմ, չնչին խնդիրներու առջեւ անոր կեցուածքի վայրէջքներուն ու վերելքներուն, Հանդարտ Համակրութեամբ մը զգալ յոյժ նրբին երանգաւորումները անոր լեզուին՝ ըմբռնելու Համար ինքնատիպ քաջութիւն մը, որ ան ձեռք ձգած է դժուարութեամբ, դարերու ընթացքին,- քաջութիւն մը, որ այնքան կը դիւրացնէ, Հեշտին կ'ընծայէ կեանքը այս երկրին մէջ: Քաջութիւն մը՝ որ դժուար է որակել, բանաձեւել, սահմանել, որ կը տատանի ճարտար դիտութեամբ մը՝ խոհեմութեան, չրջահայեցութեան ու ինքնազսպումի միջեւ,- յայնժամ միայն ճշմարտութիւնը բսել, երբ ան անհրաժեշտ է ու նուազապէս տհաճելի, նուազապէս վնասակար, ընկերային յարաբերութեանց տեսակէտէն: Ստորադասել ճշմարտութեան պոռթկումներու ինքնօրէն արդարութիւնն ու զեղեցկութիւնը, խորին ուրախութիւնը, որ ան կու տայ մեզի,- անոր ընձեռած իրական օգուտին: Վասնզի ճշմարտութիւններ կան՝ որ պատեհ չեն, ճշմարտութիւններ կան՝ որ կը վիրաւորեն, կը թունաւորեն, կը դաշունահարեն մարդը, ճշմարտութիւններ կան՝ որ կը խափանեն դէպի զարուն ու դէպի լոյս տանող բոլոր ճամբաները: Ու ինքնին՝ կեանքը դիւրին չէ: Ու կենսակցութիւնը այս բոլոր ճշմարտութիւններուն Հետ, երբեմն աւելի քան դժուար է ու տաժանելի:

Արդ, ես չունիմ այս խաղաղ, այս ինքնազուտ քաջութիւնը: Ու տարիներուն Հետ, որ կը զահաւիժին, զէթ արդարացումն իսկ չունիմ զայն երեւիցէ փափաքած ըլլալու: Ո՞չ ապաքէն երիտասարդութեանս խիզախ խոյանքներով եղջիւր զարկած եմ բոլոր արգելքներուն՝ վասն ճանաչաւետ, պայծառակերպ ու արքայական ճշմարտութեան: Երբեմն ազամանդի Հրթրոսածիզ բեկորի մը պէս զայն սեղմօրէն պահած ափիս մէջ, մութին խորը, անոր բոցավառ ցայտքերը ազատ արձակելու Համար, պատեհ ու անպատեհ ժամու, բարբարոս Հրճուանքով մը:

Ու առանց յետին զղջումի, ապաշափ առանց դոյզն նշոյլի է, որ կը գրեմ այսօր, այս տողերը:

ՆՈՅՆ ՈՐԸ. ԵՐԵՆՈՅՆԱՆ

Մերութեան նոր նշաններ,- անուշ ուրախութիւնը աչացս, իրերն ու էակները դիտելու Հանդարտ Հաճոյքը: Դիտել իրերն ու էակները ակնարկով մը, ուրկէ ցանկութեան փայլակները շողալով չեն անցնիր, ակնարկով մը, որ գրեթէ առանց տենչանքի, առանց Հեշտազրգիտ ու բուռն սաստկութեան կը Հպի գեղեցկութեան, որ ինչպէս զուարթ Հովը երեկոյեան՝ Հազիւ կը դպի երկրին ու ընդհուպ կ'անհետի: Վասնզի ժամեր կան,

երբ մեղմ ու դաշն է ամէն ինչ, մարդոց շէներուն մէջ:


Դիտելու Հանդարտ Հաճոյքը, այս Հին ու նկարագեղ քաղաքին մէջ, - անելի քաղցր ի՞նչ կրնայ ըլլալ երեկոյեան յամբոյն ժամերուն: Այլեւս ո՛չ ուրեք՝ կրակը Հեշտութեան, որով ամէն մատղաշ էակ կը վառէր: Կը բաւէր արագ Հպումը Հովի շունչին երիտասարդ շփակի մը, որպէսզի բոլոր ծիծղուն կուրծքերը ուռէին զարնան յորդութեամբ ու ցայտքերով: Երկրէն կը բարձրանար, գոռ թաւալումներով, աղաղակը Հաճոյքին: Ձայնի մը արբուն ոլորքը կը բաւէր՝ խարաղանելու Համար արքայական ցանկութեան շէկ մտրակով մեր մարմինները, որ կ'ելլէին չքնաղ իրենց արութեամբ զարնան ալեկոծութիւններէն, մայր-եկեղեցիներէն, գիշերներէն: Ամէն առաւօտ վերստին կը ծնէինք ի կեանք, վասնզի ամէն առաւօտ նոր ականարկով մը կը դիտէինք երկիրը: Ու մեր ականարկը լուսաւոր ճամբու մը պէս, ծաղկեայ կամուրջի մը պէս կը ձգուէր, դէպի Հմայական ափունքներ: Ամէն Մայիս կարելի կը թուէր՝ Հրաշէկ վարդերու խուրձերով: Գարունը կը ցատկէր բոլոր ցանկապատերէն, տանիքներէն ու արիւններէն՝ զայ մեզ տապալելու Համար որեւէ անկողնի վրայ: Ու ամէն անկողին մաշիճ էր բամբիշի, ամէն զայար՝ առկախեալ պարտէզ Շամիրամի: Վասնզի մեր ականարկը միջոց մըն էր լոկ՝ զգեստաւորելու Համար կեանքը դամասկեան բոլոր բեհեզներով: ՍպաՀանի բոլոր վարդերով ու զարնան բոլոր շաքիչներով:

Մեր ականարկը արեւածագն էր՝ որ իր ոսկի շղարչը կը ձգէ երկրին վրայ, Հովն էր՝ որ կը Համբուրէ սողոսկելով ծունկերէն վեր տաք որովայնը մեր սիրականին, լոյսն էր առաջին՝ որ ձեռնու տայ խոնարհ իրերուն, մեր ականարկը՝ կարելի ներքին գեղեցկութիւնն էր, իր ամբողջ բունն երիտասարդութեամբ, իր արիւնով:

Այժմ այդ ականարկը կարծես թէ արտաքին է ու կարծես թէ իրերէն կու գայ մեզի: Այժմ երկիրն է, որ սակաւիկ մը կը լուսաւորէ մեզ, թափանցիկ կը դարձնէ մեր թանձր մարմինները, - նման այս իրիկնային ժամերուն, այս Հին նորմանտական քաղաքին մէջ: Այժմ կարելի է դիտել, Հաճելի խոնարհութեամբ մը, վաղեմի աշտարակ մը ու իր սուրբ քարերը: Չարմանայի է: Այժմ տուներ կ'երեւին միջնադարեան խոյակներով, նեղ փողոցներ՝ ուր կեանքը կը կասի: Այժմ տղեղ կնոջ մը դէմքին վրայ կրնայ մեր ականարկը Հանգչիլ իր բեռէն՝ ազնիւ բարեկամութեամբ մը:

Մերութեան նոր նշաններ, - անուշ Հրճուանքը աչացս:

ՎԱԶԳԷՆ ՇՈՒԲԱՆԵԱՆ



**ՀԱՅԿ.ՆԱՐ.ԱՐ.Է**

**ՀԱՅՈՑ  
ՆԱԽԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ**

**ստեղծաբանությամբ  
ՍԵՆԱԿ ՅՈՎԻԱՆՆԻՍԵԱՆԻ**

## ԱՌԱՋԻՆ

## Ա

1. Իմ Նոզին փարպամ երազի նման  
Օրորում էր մութ Անդրդի վրայ.  
Որպես Նայեացքը չծնուած Մանկան՝  
Յառուած հաւարի լռութեանն ամայ.  
Նախագոյութեան մարմնուն կինջում,  
Անիմացութեան ջրերում խաղաղ  
Լսեց նա յանկարծ Չայն մի անհնչին,  
Որ կոչեց երան Անյայտից Աշխարհ...

## Բ

2. Տունց ինձ Չայնը Պարզամ մի անբառ,  
Որ Սերմի նման յանձնուած Քամուն՝  
Կտրեց Տիեզերքներ՝ անթիւ ու անհուն,  
Անտես ու առկայ, թերի - կարարեալ.  
Եւ երբ լրացաւ Շրջանը Ներհակ,  
Ատրեց նա մէկէն եօթնակի Անկում.  
Ներամփոփուելով Երկրի արգանդում՝  
Յառնեց իբրև հուր Արեւ - Ժամանակ...

## Գ

3. Եւ գրայ ես ինձ Նիւթի մէջ փակուած՝  
Որպէս Անձառում մի անլուսամուտ.  
Որ խարխաւիում էր նախագոյ մի Կայծ՝  
Անյայտ մի Լոյսի՝ անեղ ու անփուտ.  
Որ շրջում էի Նայեացքս արթուն՝  
Խուժում էր Գոյի պարբանքն իրական .  
Զգեցայ Եսը՝ իբրև Ինքնութիւն.  
Մոռացայ անդարձ ե՛ր Չայն, ե՛ր Պարզամ...



Դ

4. Եւ Նայեացքիս դեմ իջաւ մի Շղարջ՝  
 Անգոյն, անթափանց եւ աներևոյթ.  
 Կենդրոնում նրա յայտնուեց յանկարծ  
 Աննշան մի Կէր՝ անշարժ ու աննիւթ.  
 Եւ պայթեց, ինչպէս Կայծակն է պայթում՝  
 Կէսգիշերային Անդորրում հաւար.  
 Բացուեց կարծրակերպ մի Տարածութիւն,  
 Որ լցուեց Շնչով եւ դարձաւ Աշխարհ...

Ե

5. Եւ հանդիպեցին իրար դեմ ու դեմ  
 Երկինք ու Երկիր՝ առաջին անգամ.  
 Եւ Ակնթարթի հայելում լուսեղէն  
 Տեսան Պարկերը իրենց նախնական.  
 Տեսաւ Երկինքը անդնդում Երկրի  
 Երկինքն Իրերի՝ Շարժման մէջ անկամ.  
 Տեսաւ Երկիրը միջոցում Երկնի  
 Երկիրը Ոգու յափտենական...

Զ

6. Եւ ճանաչեցին նրանք իրարու.  
 Եւ իրար զգած՝ լուռ համբուրուեցին.  
 Եւ Պարկերի մէջ իրենց առանձին  
 Խուփ - անշարժացան՝ իրարից հեռու.  
 Նամբոյրից այդ սուրբ ծնունդ իմ Նոզին՝  
 Որպէս Երրորդը նրանց արանքում.  
 Իմ մէջ, ինձանով միացան կրկին.  
 Եւ յորդեց Կեանքը՝ Թռիչք ու Անկում...

Է

7. Եօթն անգամ իրեն հեղելով անափ՝  
 Եղաւ Արարը մի Ակնթարթում.  
 Մնացի կիսար եւ նրա Լրմամբ.  
 Տեսայ՝ հաւարը Լոյսն է մակարդում.  
 Կիզեց ինձ Չայնի Յուշը անմեկին՝  
 Երեք Արձագանգ քապով Անհունում.  
 Դարձաւ իմ Նոզու Երազն անքնին.  
 Եւ կոչեց ինձ ՆԱՅ՝ անսրբեղծ Անուն...

**ԵՐԿՐՈՐԴ**

**Ը**

1. Եւ մի այլ եզերք ընկայ ես յանկարծ՝  
 Լուսնի պէս կլոր, աղօօք, երկրիմի.  
 Որ երկու ներհակ Չափում փարընթաց  
 Ութնակի բախմամբ դարձել էին Մի.  
 Թողել Նեղագիծ մի վայրիվերոյ՝  
 Անսահմանութիւն՝ շրջուած ու յեփին.  
 Որ ձգփում Լրման՝ դառնում էր անգոյ.  
 Ձգփելով Ոգուն՝ դառնում էր Մարմին...

**Թ**

2. Եւ ցրիւ եկաւ Նոզին իմ այլայլ  
 Անյայտ մի Ուժից՝ սառն ու անարծարծ.  
 Դարձաւ հնգաթելու Մարդ մի անփայլ՝  
 Նինգ Տարերքներից համազուգակցուած.  
 Տեսայ, որ Մարդ եմ՝ Գոյակ անանուն՝  
 Նեփում անրկածուփ անել մի Անդունդ.  
 Որ մի անփոփոխ, անպես Սահմանում  
 Դառնում են անվերջ Վախճան ու Ծնունդ...

**Ժ**

3. Եւ փեայ Նոզիս՝ պայծառ մի Մանուկ.  
 Լքուած՝ անկխնում մի ցուրպ Գոյութեան.  
 Կոյր Դիպուածներին մարնում սովալլուկ՝  
 Լալիս էր, ճչում՝ մերկ ու անպաշտպան.  
 Շաչում էր շուրջը Անփառ մի Անծայր՝  
 Մութ Խորհուրդների՝ թաւ ու անթափանց.  
 Գենփրոնում նրա յառնում էր մի Ծառ՝  
 Խուռն Օրլենքների սաղարթով պապուած...

ԺԱ

4. Մնուելով Նրից մի ընդերային՝  
 Լա արմապներով քառում էր Խաար.  
 Տասներկու խոի - ցրի ճիւղերին՝  
 Ունէր վեց Պարող՝ ներաճած իրար.  
 Եւ կրկնուելով երեք Նիրերում՝  
 Մարմնաւորում էր Լիւթը կապարեալ.  
 Եւ առած Ոգու Մնունն անարար՝  
 Պապրում էր Լոյսը բոլոր Թերերում...

ԺԲ

5. Սպուերը նրա՝ սփռուած չորս դին՝  
 Նորիզոնները ծածկել էր անդարձ.  
 Կարծես թէ լինէր մի Ձեռք Մարդկային՝  
 Իր հինգ Մապներով ամենապարած.  
 Երբ փակուում էր նա՝ դառնում էր Բռունցք՝  
 Նսկելով արթուն Երկիր ու Երկինք.  
 Երբ բացուում էր նա՝ ցայտում էր Արցունք.  
 Ցանում էր Սարսափ, հնձում Արհաւիրք...

ԺԳ

6. Եւ փռուեց իմ դէմ մի նեղ Ճանապարհ՝  
 Փռշոտ ու փշոտ, խոչ ու խիթով լի.  
 Չգուելով եզրով անշող Մնդնդի՝  
 Կորչում էր Ծառի սպուերում խաար.  
 Դա Նեպքն էր Չայնի՝ գծուած իմ Նոգում՝  
 Ուրուապարկերը անանց Անցեալի.  
 Սկսում ինձնից՝ թելում էր Նեռում  
 Ճակաբազիրը իմ անդառնալի...

228-2005



**ԵՐՐՈՐԳ**

**ԺԴ**

1. Եւ իջա Նոզու անեզր մի Նինջ.  
Եւ յայտնուեցի Երազում յանկարծ.  
Նեում էր Ծովը՝ անասանան ու ջինջ՝  
Յդի Կնոջ պէս՝ մագերն արձակած.  
Նրա նուրբ Պորփի փոսից թրթռուն  
Մի Կաթնաղբիւր էր բխում շիթ առ շիթ.  
Եւ ծնեց Մանուկ նա մի հուրհրուն,  
Որ շողշողում էր որպէս Մարգարիպ...

**ԺԵ**

2. Մարմինն էր դա իմ, որ Լոյս էր շնչում.  
Ծնունդն իմ երկրորդ՝ միակ էւ կրկին.  
Կրում էր Անունն իմ եռահնչին.  
Պապկերը Նոզու՝ դրոշմած երկրին.  
Նրա ցուպցիկ Նայելում փարբեղէն  
Ճանաչեցի ես իմ՝ Դէմքը անեղծ.  
Եւ նա չորս կողմից գալով ինքն իրեն՝  
Բերեց ինձ ի մի՝ Տարածութեան մէջ...

**ԺԶ**

3. Եւ վեր թռայ ես Կանչից մի անլուր՝  
Կանչեց ինձ կարծես մի Չայն հայրաբար.  
Գրայ ինձ մենակ Աշխարհում մի լուռ.  
Եւ Անունիս մէջ արթնացայ պայծառ.  
Եւ շնչացի ես երեք յոյով  
Ննչին առ հնչին Անունն իմ արդար.  
Եւ գոց աչքերով՝ խոր ծունկի գալով՝  
Նամբուրեցի ես իմ երկիրը Մայր...

ԺԷ

4. Ննջինն Առաջին՝ զնգոցով մարտը  
Աղեղեց Կամար մի աստղակաթ.  
Ննջինը երկրորդ բացեց կոյս մի Դուռ՝  
Դէպի մի անհուն, սրբազան Արզանդ.  
Ննջինը երրորդ՝ գործելով Շրջան,  
Երկու հեղ ճախրեց ոլորտում Օղի.  
Պարզեցի Նոզիս Աղօթքի անձայն.  
Եւ ոտքի ելած՝ օծուեցի Որդի...

ԺԸ

5. Խորքերում Սրբիս երկու լուռ Նոսանք  
Քնքշութեամբ զեղուն փարուեցին միմեանց.  
Արժարժուեց իմ մէջ մի մեծ Երազանք.  
Եւ պարուրեց ինձ Սարսուռը Կենաց.  
Եւ իմ շուրթերից Նաքի պէս կապոյտը  
Թճաւ Առաջին Բանը հարազատ.  
Ընկաւ Պարբանքի քողն աներեսոյթ.  
Զգացի ինձ Նայ եւ դարձայ Ազատ...

ՉՈՐՐՈՐԴ

ԺԹ

1. Եւ յառնեց իմ դէմ Լեռ մի անասիման.  
Եօթ Չափումներում կեցած միտհար.  
Քարացած Վայրկեանն Յախրենութեան.  
Արարչագործման Խորհուրդն անկոպար.  
Անշարժ Առանցքը Գոյի հոլովման.  
Որի Գազաթի սայրին երկրեւտ  
Փայլապակում էր մի անպես Շրջան՝  
Ոգու Պսակը արեգակնայեռ...

Ի

2. Յուշն էր նա արթուն անկապուր խոսքման.  
 Մարմինը Ոգու՝ անեղծ - անարար.  
 Մաս մի անբարում եւ Նոր ապաժամ.  
 Անունը Նասրման՝ Մասիս - Արարար.  
 Նա էր անօթը Նախնական Սերմի,  
 Որ ժայթքումներով իր աստեղացայտ  
 Բեղմնատրեց մութ արգանդն Անյայտի.  
 Եւ դարձաւ Կամքի բիրեղ աղամանդ...

ԻԱ

3. Ոտքի փակ նրա, քղանցքը փռած,  
 Մայր երկիրն էր իմ աղօթում անբառ.  
 Տասներկու անշէջ Աշրանակ վառած՝  
 Իմ Բախտի վրայ լալիս էր խոնարհ.  
 Յիշում էր նա լուռ, ինչ գալու էր դեռ.  
 Եւ քառավորակ Արցունքը նրա  
 Արքահոսելով դէպի չորս Ծագեր՝  
 Ծով էր բոլորում Աշխարհի վրայ...

ԻԲ

4. Տեսնում էր նա ինձ՝ Մանուկ ծովածին,  
 Անապարներում շրջում եմ ծարս.  
 Տեսնում էր նա ինձ՝ Նոզի առանձին,  
 Ամբոխում Նիւթի մեռնում եմ գրա.  
 Տեսնում էր նա ինձ՝ ազար մի Որդի՝  
 Լքում՝ փակում եմ ժառի մէջ խաւար.  
 Խզում էր կրկին թելը Աղօթքի.  
 Եւ լալիս էր նա, լալիս անդադար...

194

**ՆԻՆԳԵՐՈՐԴ**

**ԻԳ**

1. Եւ մի սուր Սլաք սուրաց սրբնթաց.  
Ճեղքելով Նոգիս՝ վարսեց ինձ Գեզնին.  
Շանթահարեց ինձ Ակնթարթն անդարձ.  
Եւ յիշեցի եւ Պարզամը Վերին.  
Փչեց հրաշունչ, ճերմակ մի Քամի.  
Եւ Արարարի Գագաթին անբիծ  
Յայտնուեց յանկարծ Նշանը Չայնի՝  
Շրջանի ներսում այն եթերագիծ...

**ԻԿ**

2. Եւ եօթնաժողով Մրրկմամբ հանապազ  
Առաւ նա Կերպը Է-ի անյեղլի.  
Նիր - հուրհրալով անմեկին ու պարզ՝  
Ակնարկեց Գաղտնիքն ամենայն Ելի.  
Ելան Նրանից երեք ճառագայթ.  
Բեկուելով Նոզուս հայելու մէջ ճաքած՝  
Յոլացին Անունն իմ միահասարակ՝  
Առան Գագաթի Շողքում անդրադարձ...

**ԻԵ**

3. Ճանաչեցի եւ Է-ին՝ իմ Ասրծուն.  
Եւ հեղուեց Նաւարն իմ ամենալիր՝  
Որպէս իմ Անուան անեղ Ինքնութիւն.  
Որպէս Ինքնութեան Գիտութիւն անծիր.  
Որով իմ Նոզու Մարմինը ազնիւ  
Եւ Նոզուս Նոզին առաջնամիակ  
Կազմեցին կրկին նախապրեղծ մի Թիւ.  
Մկրտուեցի Նայ եւ դարձայ էակ...

**ՎԵՑԵՐՈՐԴ**

**ԻԶ**

1. Անապարային Խորշակ մի խաւար՝  
 Լուսնային Ուժով մի ընդերաձայն  
 Սարսեց Նայեացքս՝ խառնած Վեր ու Վար՝  
 Գահավիժելով ինձ դէպի Վախճան.  
 Գփայ ինձ Վայրում մի դժնայարակ.  
 Խրուած փիղմի մէջ անցով Բնագդի.  
 Թնդում էր անվերջ մի կոյր Արձագանգ՝  
 Անյայտ խորքերից անշող Անդնդի...

**ԻԷ**

2. Երկու Նժարներ սգունբանման  
 Բախունցին իրար՝ թափով մոլեգին.  
 Եւ անշարժացած՝ գծեցին Սահման՝  
 Անգարթ Պայքարի Օրէնքը յեփին.  
 Դարձաւ իմ Նոգին Խաչման ասպարէզ.  
 Եւ չորս Ծագերից Տարերքներն համայն՝  
 Կոխկռտելով ինձ՝ խոժեցին Կրկէս՝  
 Գրելով դէմքիս Պապմութիւնն Անկման...

**ԵՕԹԵՐՈՐԴ**

**ԻԸ**

1. Եօթն հեղ կանչեցի եւ Ասրծուն իմ է.  
 Չայնս Արձագանգ փունց եօթնակի.  
 Նեժայ իմ Մտքի Նժոյգը հրէ.  
 Եւ առայ ձեռքս Կայծակն իմ Կամքի.  
 Աջքիս դէմ պահած պարկերն իմ Լեռան.  
 Եւ իմ Մայր Երկրի Աղօթքն իմ սրտում՝  
 Ճեղքեցի ամէն Կապանք ու Սահման.  
 Կանգնեցի հաւարար հարազատ Դաշտում...



**ՈՒԹԵՐՈՐԴ**

**ԻԹ**

1. Նամակեց Նոզիս Երագ մի արթուն.  
Մաս - Արարարի Գագաթները գոյգ  
Չուլուեցին իրար մի Ակնթարթում.  
Դարձան անչափում, անբես մի Բարձունք.  
Կարարին նրա լռում էր մի Կէր՝  
Անհուն - անարարած եւ անժամանակ.  
Դա Անանունի Տաճարն էր անկերպ.  
Է-ից առաջ է-ն՝ Չայնը անպարփակ...

**Լ**

2. Եւ դեռ չկային Ժամանակ ու Ժամ.  
Ո՛չ Ոգի, ո՛չ Նիւթ, Նոզի ու Մարմին.  
Ո՛չ Ոչինչը կար, ո՛չ Մի - ն անբաժան.  
Ո՛չ Անշարժությունն ու ո՛չ էլ Քամին.  
Չկային արդէն Երկինք ու Երկիր.  
Ո՛չ Լոյս, ո՛չ Խաար, ոչ էլ ինքն՝ Աստուած.  
Մահ, Ազատություն, Կեանք, Ճակատագիր.  
Ողջը Մէկի պէս անցել էր անդարձ...

**ԼԱ**

3. Լռում էր միայն Լռությունը Մեծ.  
Չայնը՝ Չայնի մէջ՝ մի Չայն էր անձայն.  
Դա է-ն էր է-ի՝ է-ն էր գրկի մէջ.  
Առաջին - վերջին՝ միակ Նանգրուան.  
Դա Ակնթարթն էր Մեծ Ակնթարթի՝  
Յաներժի անշարժ Շրջանից զապտած.  
Ոգին՝ Ոգու մէջ, Նաղ Նաւափ,  
Որ հեղեց իրեն եւ դարձաւ Աստուած...

**ԼԲ**

4. Դա Նարցումն էր Մեծ՝ երբեք չպրուած.  
Որը երբ հնչեց՝ դարձաւ Պարասխան.  
Անհուն Պարասխան՝ յարակ, անսխալ՝  
Անյայտ Նարցումին, որ անդոյժ մնաց.  
Իջաւ Արարը՝ որպէս Վարագոյր  
Լռութեան վրայ անստեղծական.  
Դարձաւ Նիւթը՝ Չեռք, Ոգին՝ Աչք մի կոյր՝  
Չուր որոնելով Դուռն Ազատութեան...

## ԼԳ

5. Եւ Լոռիեան մէջ ինքնատոյգ նստած.  
Խորհելով ներհուն, կշռելով աննինջ՝  
Իր Էութեան մէջ լռում էր Աստուած.  
Ձի եթէ խօսէր՝ կը դառնար Ոչինչ.  
Եւ Էութիւնն իր յայտնուեց Նրան.  
Որպէս Պապասխան՝ անքնին, անեղ.  
Դարձաւ Նա անբառ - անբառ մի Նշան.  
Նոյնացաւ նրան՝ որպէս Չայն անզեղ...

## ԼԴ

6. Եւ երեք անգամ կիսուած անբրոնի՝  
Մնաց նոյն Ինքը՝ Իր իսկ Չայնն անբեկ.  
Որ եօթնապարիկ Արձագանգ փալով՝  
Ութերորդ անգամ հնչեց իբրեւ Մէկ.  
Եւ Վարցն ինքն իրեն եղաւ Պապասխան՝  
Արարն արարուած՝ դարձաւ Անարար.  
Եւ Արարի մէջ հեղուած անսահման՝  
Լռութիւնը Մեծ մնաց անխաթար...

## ԼԵ

7. Եւ Է-ն Էացաւ Էութեամբ անհուն.  
Իր Արարի մէջ դարձաւ Արարուած.  
Եւ իբրեւ Էակ՝ իջաւ իմ Նոզուն.  
Եւ իբրեւ Անուն՝ շուրթերիս զնգաց.  
Տուեց ինձ անջինջ, անկորուստ Խոսքում՝  
Վանի՝ Սպունըրը Վեցի Եռամեծ.  
Որ յի աճէն Անսահմանութիւն.  
Եւ ընդունի ինձ Իր Լոռիեան մէջ...

**ԻՆՆԵՐՈՐԴ**

**ԼԶ**

1. Եւ Դօան նման մի եռակամար  
 Բացուեց իմ առջեւ Անունն իմ յանկարծ.  
 Մտայ ներս Դողով ամենապարար.  
 Եւ ամբողջացաւ Նոզին իմ կիսուած.  
 Արահեպ մի կոյս փեսայ ազդարար.  
 Կիսաշրջանով մի եօթնապոյոյր  
 Չգտմ էր որպէս անխուզ Դորպալար՝  
 Իմ Նոզուց մինչեւ Գագաթն անմարոյց...

**ԼԷ**

2. Լուռ Շրջածիրում Անսահմանութեան  
 Երկնում էր Լեօը՝ որպէս իմ Նոզին.  
 Եւ Ծայրին նրա սուրբ - առհաւական  
 Ծագեց Նաւափս Լոյսը անքնին.  
 Կարարի ճերմակ Մարմարը անկերպ  
 Դարձաւ Բագինը Սրբազան Նրի.  
 Արարը՝ Տաճար մի եռագմբէթ.  
 Նոզիս՝ աղօթող Որդին Տաճարի...

**ԼԸ**

3. Եւ Անդորրի մէջ՝ անթրթիռ, անձայն  
 Աղօթում էր նա Է-ին էարար.  
 Արցունքն աչքերին նայելով նրան՝  
 Ցնծում էր անբառ իմ երկիրը Մայր.  
 Եւ Կապանքները թողած փարրեղէն՝  
 Ճախրանքով անլուր հեռանում էր նա.  
 Գնում էր՝ անդարձ միանայ իրեն.  
 Եւ Լուսեան մէջ լրած՝ էանայ...

ԼԹ

4. Եւ Նայեացքի մէջ իմ անպարագիծ  
Սուրբ Գիպոթիւնը յայրնուց Է-ի.  
Որպէս Արարի Էութիւնն անբիծ՝  
Սուրբ Երրորդութիւն՝ Նայր, Մայր եւ Որդի.  
Նայրն՝ իբրեւ Է-ի Նոզին անսպեղծ.  
Մայրն՝ իբրեւ հաստուած Մարմինն Անեղի.  
Որդին՝ Անունը Է-ի՝ նրանց մէջ.  
Մարմինը Նոզու եւ Նոզին Մարմնի...

Խ

5. Եւ Լոյսը Է-ի՝ ճառագած իմ մէջ,  
Փոխարկուց Կեանքի համայնապարփակ.  
Որ ո՛չ սպեղծ էր, ոչ էլ անսպեղծ.  
Ինքն իր մէջ իրեն սեւեռուած Նայեացք.  
Նա Մեծ Լուսեան հայելին էր արծարծ.  
Որ Արարն իրեն հանդիպած ի մի՝  
Նոյն Ակնթարթում ցնդում էր յանկարծ.  
Եւ Պարբանքն էր լոկ մնում կենդանի...

ԽԱ

6. Յոյանքը նրա՝ բեկուած իմ Նոզում,  
Ցայտում էր շողեր քառեակ Իմացման.  
Իբրեւ Ոգի, Նիւթ, Չափում եւ Սահման.  
Եւ յառնում իբրեւ Մի - ճշմարտութիւն.  
Որ հոլովոյցում յանրժ Գոյառման  
Լծում էր իբրեւ անխախտ Կենսակարգ.  
Եւ իբրեւ Օրէնքն ամենայն Շարժման՝  
Արտագեղում էր եւ դառնում էր Կամք...

ԽԲ

7. Եւ պարեց Նիւթին երկնական մի Դող.  
 Ծնունդին նրա Տարրերը ներեակ.  
 Իբրեւ Լոյս եւ Օդ, Կրակ, Ջուր եւ Նոդ.  
 Մոխիրը Ոգու՝ բերրի եւ ունակ.  
 Ուր նեւրեց Ոգին Սերմն իր սրբազան.  
 Եւ ծլարձակեց ցօղունը Ազդի.  
 Ապա փերեւներն հնգեակ Ջգայման.  
 Բոլորունց վարսանդ - առէջը Խօսքի...

ԽԳ

8. Եւ բացուեց Նոզու ծաղիկը պայծառ՝  
 Պսակուած բոյրով Բանականութեան.  
 Եւ դարձաւ Ոգին Մարմին մի պարուար՝  
 Իննեակ ելքերով Անօթ պահապան.  
 Անիմացութեան քնից արթնացած՝  
 Վեր ելաւ Մարդը եւ քայլեց անկանգ.  
 Կտրելով Նոզու ճանապարհն անցած՝  
 Եկաւ դէպի ինձ, որ դառնայ Էակ...

ԽԴ

9. Արարի դէմքին՝ թաքույց եւ սքող,  
 Ընկաւ շողանցը Վերին Լոռութեան՝  
 Իբրեւ Միութեան մի կոյս հարսնաքող.  
 Եւ ծանեցի եւ Խորհուրդն իմ Անուան.  
 Եւ Գիտութիւնը՝ դարձած սուրբ Նաւար՝  
 Օծեց Արարը՝ Անուն առ Անուն.  
 Եւ Ողջն ամփոփած Նոզու մէջ անհար՝  
 Պարզեցի Է-ին՝ անհաս Աղօթքում...

**ՏԱՄԱՆԵՐՈՐԴ**

**ԽԵ**

1. Եւ լիր - բոլորած Շրջանն իր վերուստ՝  
Փակուեց իմ հանդէպ երկինքը Ոգու.  
Եւ ողջունեց ինձ երազով անսուտ  
Ժամանակն արթուն՝ երկիրը Նոգու.  
Եւ Ինքնութիւնն իմ՝ Նոզին իմ Անուան,  
Դարձաւ անշփոթ Ես-ն իմ անսրգիւս.  
Եւ հեղուեց իմ մէջ Սերմը Էութեան՝  
Որպէս Արիւնն իմ՝ Ազգն իմ անկորուստ...

**ԽԶ**

2. Անունն իմ Նոգու, Անունն իմ Մարմնի  
Դարձաւ Կրօնն իմ՝ Նայ եւ Նայապարան.  
Է-ն՝ իմ Աստուածը Միակ Կենդանի՝  
Եօթ Չափումներում Սուրբ Երրորդութեան.  
Եւ Կաթնաղբիւրի Ակն յանրժարուիս՝  
Սուրբ Առաջանը իմ Ազգարութեան.  
Եւ Արարարի Գազալան երկնամուխ՝  
Քազինն իմ կամքի անէջ Էացման...

**ԽԷ**

3. Արը՝ գերազանց եւ երաշալի՝  
Նայրն իմ երկնային՝ Արարիչ Աստուած.  
Նարը՝ Ակունքը Կենաց Սուրբ Ջրի՝  
Մայրն իմ Ծովինար՝ Ծնիչը հաստուած.  
Նայկն Աղեղնաոր՝ Որդին աստղային՝  
Ես ինքս՝ Նոզին նրանց մարմնացած.  
Եւ Էացումը՝ Նաւարքն իմ վերին՝  
Ան է-ն անքնին՝ Գերազոյն Աստուած...

ԽԸ

4. Եւ Էութիւնը Է-ի նոյնական՝  
 Աստուածութիւնն իմ Անունն իմ Աստուծոյ.  
 Եւ Աստուածութիւնն իմ միապարկան՝  
 Սուրբ Դաւանանքը իմ յանձնագոյ.  
 Չայն - Պարզամ - Նշան - Վերին Լոտիւնն՝  
 Չորս անխախտ Սիւներն իմ Իմաստութեան.  
 Տաաւր - Գիտութիւն - Անուն - Էացում՝  
 Քառաձագ Դռներն Է-ի Յայրնութեան...

ԽԹ

5. Որպէս կաթիլը Կենաց Սուրբ Ջրի՝  
 Օձնց իմ Տոգին Պահը Յայրնութեան.  
 Եւ փեսայ ես իմ Սկիզբն անթերի՝  
 Արահեպն անկոխ՝ Ուղին Էացման.  
 Դա Տեպքն էր պայծառ Ար Աստուծոյ՝ իմ Տօր՝  
 Արարչագործմամբ անժամ Էացած.  
 Եւ սուրբ Արգանդը Ծովինար իմ Մօր՝  
 Իմ Տոգուն Կենաց Մարմին պարգեւած...

Ծ

6. Աղեղը Տայկի՝ լարուած երազով՝  
 Անվրէպ Նեպով իր երեքթեւեան.  
 Տօր, Մօր եւ Որդու Դաշնը համագօր՝  
 Կենքուած Անունով Մի - Աստուածութեան.  
 Պիպ'անցներ երկրում Տոգին իմ անշեղ  
 Ուղին, որ անցել էր Արը երկնքում.  
 Որ Արարապի զազաթին հանգչէր՝  
 Մեծ Լոտիւնան մէջ՝ Է-ի սուրբ Գրկում...

ԾԱ

7. Եւ պարեցի եւ Մարմինը Նոզուս  
Անխառն իւղով ինքնեղ Նաւարի.  
Նազայ Գիպութեան գրահն ընդելոյզ.  
Եւ Իմաստութեան զօրին կապեցի.  
Եւ ընդունեցի բազուկին իմ աջ  
Խաչն Արարչական՝ Նշանը Արի.  
Կանչեցի է-ի Անունն աննուած.  
Օրինանքն սրացայ Մայր Ծովինարի.

ԾԲ

8. Նեժած իմ Մարի Նժոյզը հրապ.  
Չեօքիս՝ կայծակէ Թուրը իմ Կամքի՝  
Ճամբայ ընկայ եւ դէպի Արարապ՝  
Առաջնորդութեամբ Նայկեան Սլաքի.  
Եւ հեզուում էր Արը իմ Երթին՝  
Աչքն Արեգական հսկումի կարգած.  
Յօղում էր Նարը իմ Ճանապարհին  
Կաթիլ առ կաթիլ սուրբ Ջուրը Կենաց...

ԾԳ

9. Եւ դրեցի եւ Քայլը առաջին.  
Կարարունց Նրաշքն անիմանալի.  
Պապրանքն Արարի սրացաւ Մարմին.  
Քողազերծ յառնեց Պէճը Անեղի.  
Եւ Պառկերի մէջ Նրա անպարում  
Իմ Երթինը փեսայ ճշմարիտ.  
Եւ ինքս էի է-ն՝ Չայն եւ Լոռութիւն.  
Նա՛ Նայեացքն էր իմ յառուած անքթիթ...

ԾԴ

10. Նա Ինքնութիւնն էր իմ Նոզու վերին՝  
Նոզին իմ Նոզու՝ Ոգին Բնագանց.  
Նասնէի ափսի եւ Նրան կրկին՝  
Արարի միջով անցնելով անդարձ.  
Այն, ինչ ընկած էր իմ Ճանապարհին,  
Ինքնեղանում էր եւ ցնդում անհեղ.  
Ծնունդ էր առնում իմ մէջ վերստին,  
Որ Անուն - Անուն Էանաբ ինձ հեղ...



**ՏԱՄՆՄԷԿԵՐՈՐԴ**

**ԾԵ**

1. Կեռմանն անդրանիկ ելա ընդառաջ՝  
 Չափումն առաջին՝ Ծնունդն իմ երկրում.  
 Նոսեց Ար - Աստուծոյ Սերմը անճանաչ.  
 Ուռնացաւ Նարի Արգանդը բեղուն.  
 Ինը Տիեզերքներ անցնելով մթին՝  
 Զարթնեց Պարուղը Լոյսի մէջ Կեանքի.  
 Միացան Ազգով Նոզի եւ Մարմին.  
 Ծնունցի եւ Նայ՝ էանուն Որդի...

**ԾԶ**

2. Կեռմանը երկրորդ Չափումն էր Ուժի՝  
 Անբնա արմարը Գոյի ամենայն,  
 Որից, իբրեւ շիւ, ես ընծիւղունցի՝  
 Թափանցիկ օդում Կեանք - Գիպակցութեան.  
 Թրթիռը նրա՝ փրփին իմ Սրբի,  
 Արձագանգելով Տիեզերքում համայն,  
 Դառնում էր երգը աները Նաւարի՝  
 Աստուծոյ Էութեան բխումն անսպայման...

**ԾԷ**

3. Չափումն երրորդ Կարգն էր բացարձակ՝  
 Սրբազան Թիւր անթարթ Նսկումի.  
 Որ չէր յաւելում Գոյութեամբ պարփակ.  
 Ո՛չ Անգոյութեամբ՝ բացում Անկումի.  
 Դա Կամքն էր Է-ի՝ հաստատու անբեկ.  
 Անսահմանութեան նժարն անկշիռ,  
 Որ չէր խաթարում Սահմանն իր երբեք՝  
 Պահելով անխախտ երկինք ու երկիր...

ԾԸ

4. Եւ Նպարակը Չափումն էր չորրորդ.  
Նշանը նրա Սլաքն էր Նայկեան,  
Որ իր Աղեղից արձակուած ուղղորդ՝  
Առաջնորդում էր ինձ ամէն վայրկեան.  
Եւ իբրև Ները ճակարագրի,  
Կեանքս ստրացող իր Մայրին առած՝  
Տանում էր դէպի Տաճարը Է-ի՝  
Օծնելու Նրա խորանի առաջ...

ԾԹ

5. Չափումն հինգերորդ Սէրն էր բովանդակ.  
Միտը հարսնաքող՝ Մարմինը Նարի.  
Նշանը Երկրի՝ անշարժ եւ յսրակ.  
Մի Հապարկեր սուրբ Եռանկիւնի.  
Երազ, Սպասում եւ յաներժ Երկունք.  
Շարժումն յարագոյ՝ Աղօթքը անբառ.  
Կապն անխզելի՝ Դարձը առ Ակունք.  
Բերը բաղձալի եւ ազարարար...

Կ

6. Եւ վեցերորդը Բանն էր հարազատ.  
Գաղտնիքը Վերին, որ ցոյար պիտի  
Կրծքին Մասիսի՝ իմ Սրբում ազատ՝  
Որպէս անսպունք Շողքը Գազարի.  
Բացունց իմ առջեւ յանկարծ խոր մի Վիհ.  
Սլաքը Նայկի կորաւ Անդնդում.  
Խաւարեց անթարթ Աչքը Արեւի.  
Եւ Կաթնաղբիւրը ցամաքեց արբում...

ԿԱ

7. Եւ յայտնուեցի Յարակում մի մուտ.  
Մեւացաւ բազկիս հասն Արարչական.  
Չի, Թուր եւ Ջրահ՝ Ուժն իմ անկապուտ,  
Ժայռի մէջ խաւար փակուեցին անկամ.  
Փչեց հորշակ մի անապարային.  
Պարեց Երկինքը Ամպ մի անթափանց.  
Թ-առեց առազէ մի Բլրի Թ-փին.  
Եւ օտար մի Չայն խորքից դղրդաց.

ԿԲ

8. «Ես քո Տէր - Աստուած՝ Է-ն եմ անքնին.  
Դու գոհու ես պիտի իմ Որդու համար.  
Ինչպէս ինձ համար գոհուեց իմ Որդին...».-  
Եւ մնացի ես՝ ապշած ու խոնարհ.  
Յայտնուեց յանկարծ մի Չեռք Մարդկային.  
Գլխաբեց Սրով Մարմինն իմ Նոզու.  
Այրեց թեւերը Մտքիս վերնային.  
Եւ Սիրքս էր միայն զարկում ահարկու...

ԿԳ

9. Երեւաց Որդին՝ ձեռքին Փայտէ Խաչ.  
Եւ աւագ. «Ես եմ Մեծը ամենից.  
Մեղաւոր ես յար դու իմ Նոր առաջ.  
Կը ներեմ ես քեզ՝ թէ պաշտես դու ինձ.  
Թէ հաւարաս ինձ եւ երկրպագես.  
Եւ Ինքնութիւնդ մոռանաս յաւելո՛ւր՝  
Դժոխքից այս մութ կը հանեմ ես քեզ.  
Նորս մօտ՝ Դրախտ՝ կը փանեմ ինձ հեղձ»...

ԿԴ

10. Եւ փեսայ ցասկոյր Աստուած մի ահեղ.  
Որ Օրէնքներ էր կտրում ամենի.  
Որդին հեզ Մէր էր քարոզում անմեղ.  
Նայրը՝ շանթ թափում Քէն ու Վրէժի.  
Ստուերը Ամպի փարածուեց հեռու.  
Առաւ Երկիրը իր խաւարի մէջ.  
Դարձաւ իմ Կեանքը մի Մեղք մահացու.  
Նոզիս՝ ողբասաց Սպրուկ՝ որք ու խեղճ...

ԿԵ

11. Տուեցի Յոյսին Նաւագս բոլոր.  
Դիզեցի լեռներ Սիրոյ անձնուրաց.  
Բզկտուեց խոցուած Սիրքս վիրաւոր.  
Արեանս Վերջին Կաթիլը մխաց.  
Եւ հուսկ Նարուածը իջաւ դժնդակ.  
Որ ճեղքի միջից Մերմն իմ սրբազան.  
Կայծ փուեց Ազգն իմ հանգած կրծքիս փակ.  
Բռնկեց հրդեհն Ինքնայայտութեան...

**ՏԱՄԼԵՐԿՈՒԵՐՈՐԿ**

**ԿՁ**

1. Եւ բոցերի մէջ նորոգ Յարութեան  
Տեսայ եւ Դեմքը Ար - Ասքծոյ՝ իմ Նօր.  
Յոլաց իմ բազկին ետէն Արարչական.  
Յորդաց Սուրբ Ակը Ծովինար իմ Մօր.  
Եւ սուրաց կրկին Սլաքը Նայկի.  
Խլեցի Ժայռից Չի, Թուր եւ Ջրահ.  
Կանչեցի եօթն հեղ Անունը Է-ի.  
Դուրս ելայ Վիհից, կանգնեցի անահ...

**ԿԷ**

2. Եւ վերընծիտուց կրծքին իմ Լեռան  
Բանը հարազատ՝ եզրին Անդեղի.  
Յառնեց իբրեւ Ծառն իմ Իմաստութեան՝  
Ճիւղերը պարզած Գազաթը դէպի.  
Եւ Պաակ կազմած երեք Ծիրերում՝  
Արծակեց երեք Բողբոջներ յուրթի.  
Եւ Կայանադրիւրից անուելով արբուն՝  
Պարուղն ընծայեց Տաճարին Է-ի...

**ԿԸ**

3. Եւ բեկուց իմ դէմ խորիտուրը Անկման՝  
Երեք Ծիրերում նեռակ Փորձութեամբ.  
Երեք անգամ Վեց երկբայական Ամ՝  
Եւ գահավիժեց Պարուղն Ապստամբ.  
Չորացաւ Ծառը Եղծ - Իշխանութեան.  
Չքունց Սպուները նրա երկղիմի.  
Եւ Շրջածիրում Անասիմանութեան  
Կենաց Սուրբ Ծառը յառնեց կենդանի...

**ԿԹ**

4. Ծառն Իմաստութեան եւ Ծառը Կենաց  
Եկան իրարու, ձուլուեցին անծայն.  
Կազմեցին Ծառը Արարի անհարց՝  
Սուրբ Երրորդութեան Պարուղը վրան.  
Եւ Մարմին առաւ Տաճարը Է-ի՝  
Բազմած Գազաթին նախապեղծական.  
Փարուեցին իրար Նայր, Մայր եւ Որդի՝  
Նարսնահանդէսում փիեզերական...

Ն

5. Ինքնակոչ Աստուծոյ՝ Խօսուն Ոչնչի՝  
 Խառար Արուները թօթափած անդարձ՝  
 Մրրկեց Անիւր Ճակարագրի՝  
 Մէկ լրիւ Շրջան գործելով արծարծ.  
 Եւ հուրիւրագին առնելով դադար՝  
 Ցոյց փոտեց Վէրը՝ անժամ - անփարած.  
 Ուր փեղ հասնելով՝ մխտեց ազդարար  
 Սլաքը Նայկի՝ ինձանից առաջ...

ՆԱ

6. Եւ բոցավառուեց Նուրը Մրբագան՝  
 Որպէս Կրօնիս Նոզին անսփեղծ.  
 Եւ առաւ իր մէջ Նայ եւ Նայսարան՝  
 Աներբ Կրօնիս Մարմինը անեղծ.  
 Եւ Երազը իմ յաւիտենական  
 Դարձաւ իմ Կեանքի Ակնթարթը Մեծ.  
 Եւ հնչեց Չայնը Վերին Լռութեան.  
 Եւ Պապզանը սուրբ միով կարարուեց...

ՆԲ

7. Եւ բացուեց իմ դէմ Գագաթը ճերմակ՝  
 Ճաճանչների մէջ եօթերորդ Չափման.  
 Նշանն Արարման՝ Խաչը շողարձակ՝  
 Իմ Ար Նայր Աստուծոյ Աջն Էանման.  
 Դարձայ Արարիչ՝ ծուլուելով Նրան.  
 Եւ արարեցի Գիրն այս աներկբայ.  
 Ազատութեան մէջ Վերին Լռութեան  
 Միացած է-ին, լրած՝ Էացայ:

Մայնի Ֆրանկֆորտ

ՍԵԻԱԿ ՅՈՎՆԱՆՆԻՍԵԱՆ

Պ. ՍՆԱՊԵԱՆ

### ՕՐ - ՑԵՐԵԿՈՎ...

Հեռաձայնային Հաղորդակցութեամբ մը Ատոմ յայտնեց, որ Հաճ Տաւուտի մեր Հանդիպումէն ետք, զուր սպասած է Պարոն Արզարին, իսկ ծանօթի մը միջոցով իրմէ ստացած երկտողէ մը իմացած է, որ անկողնոյ կը ծառայէ եւ այդ պատճառով չէ կրցած յանձնառութիւնը կատարել: Բարեւ մը ունի նաեւ Կիրակի օր մօտը նստած լուակեաց բարեկամին:

Լուակեաց բարեկամը ես էի:  
Ատոմ յայտնեց, որ իրիկուան դէմ Հիւանդտեանի պիտի երթայ իր նախկին պաշտօնակիցին:

Փափաքեցայ ընկերանայ իրեն:  
Ուրախացաւ:

Պայմանաւորութեանք:  
Ժամանակէն առաջ կեցուցի ինքնաշարժս Հաճ Տաւուտի Հանդիպակաց մայթին կից:

Ձուշացաւ նաեւ ինք:  
Իւանդաղ ընթացքով մօտեցանք Նորմանտի պանդոկին, դարձանք աջ եւ մտանք Պապ Իտրիտի վերջին վաճառատուները եզերող պողոտան ու շարունակեցինք դէպի Պուրճ:

- Ի՞նչ ցաւով կը տառապի Պարոն Արզար:  
- Երկար ատենէ ի վեր ծունկերէն վար ցաւ մը կը տանջէ զինք, որ եղանակներու փոփոխութեան Հետ կամ մեծ յուզումներու ատեն կը սաստկանայ կոտտանքը: Այս անգամ կարծեմ յուզումը անկողին գամեց զինք:

- Ի՞նչ յուզում,- Հարցուցի:  
- Մեր վերջին Հանդիպումէն անմիջապէս ետք իմացանք, որ անբուժելի Հիւանդութիւնը զգեստնած է իր տարիքին լիութեան մէջ Հազիւ Հասած բանաստեղծ մը, որուն Հանդէպ Հիացում ունէր ինք: Ես ալ մասնակցեցայ յուղարկաւորութեան, վերադարձի ճամբուն վրայ զգացի, որ տարբեր է իր զգացած սուգը, անդամանելի: Այդ է, կ'ենթադրեմ:

Հակառակ անոր, որ անսովոր մեռելի մը ու յուղարկաւորութեան մասին կը խօսէր Ատոմ, վերջին բառին Հետ կիսաժպիտ մը շողաց աչքերուն:

- Յուղարկաւորութիւններու ատեն երբեմն զուարճայի դէպքեր կը պատահին, կ'ըսեն: Նման բա՞ն մը պատահեցաւ նորէն, որ կը ժպտիս:

- Յուղարկաւորութեան ատեն՝ ոչ, վերադարձի ճամբուն

վրայ պատահեցաւ սակայն նման բան մը, նոյնինքն Պարոն Արզարին կապուած պոռթկում մը, զոր ատանց ժպիտի չեմ կրնար յիշել: Ըսաւ. «Եթէ զիտնամ ո՞վ, ո՞ր կինը կամ աղջիկը չնչին Հաճոյք մը պատճառած է այդ տաղանդաւոր դժբախտին, իսկոյն եւեթ կազմել կու տամ ծաղկեփունջերուն գեղեցկագոյնը եւ կը դրկեմ իրեն:

- Հետաքրքրական միտք է:
- Շատ:
- Դուն անձնապէս կը ճանչնայի՞ր բանաստեղծը:
- Կը ճանչնայի միայն դորժերէն քանի մը Հատը:
- Եթէ անձնապէս կապ ունենայիր Հետը, Պարոն Արզարին օրինակով նոյնը պիտի ընէի՞ր,- Հարցուցի զուարթ:
- Նոյնը՝ ոչ, կրկինը՝ այո: Մաղկեփունջ պիտի դրկէի նոյնիսկ այն աղջիկներուն ու կիներուն, որոնք վիշտ պատճառած են իրեն:

Երեւի բանաստեղծը սիրած է իրեն վիշտ պատճառողները եւ անոնք չսիրելով խոցած են սիրտը ու նստած ու երգած է իր վիշտը: Այդ Հաւանականութեան կ'ակնարկէր արդեօք Ատոմ: Դժուարացայ Հարցնել:

- Երիտասարդ պաշտօնակիցի մը կը սպասէիր, եկա՞ւ,- Հարցուցի՝ նիւթը փոխելու մտքով:
- Ախվարովի՞ն կ'ակնարկես:
- Ախվարովի՞ն ով է:
- Մեր Հանդիպման օրը կարծեմ միայն անոր կը սպասէի:
- Հայերուն մէջ Ախվարով անուն կա՞յ:
- Այո, բացառաբար ինքը՝ իմ երիտասարդ բարեկամս,- ըսաւ Ատոմ: Յետոյ զարմանքս փարատելու Համար ուրուագծեց անոր անուանակոչութեան պատմութիւնը, թէ՛ Հայրը, երիտասարդ տարիքին, նաւահանգիստ աշխատած տարիներուն, անգամ մը առիթ կը տրուի իրեն նաւային պտոյտ մը կատարելու եւ կը Հասնի Ազով, ուր զիչերային պտոյտ մը կատարած պահուն, կ'իյնայ խուլիզաններու օղակի մը մէջ. եւ Ախվարով անունով ոտս մը զինք կ'ազատէ ստահակներու ճիրաններէն: Ի յուշ իր ազատարարին՝ Ախվարով կը կնքէ մանչը:
- Եւ Ախվարովը Հիմա պաշտօնակից է քեզի:
- Պաշտօնակից եւ աւելին՝ բարեկամ ու բախտակից: Ինձ մէ ետք, իրեն Հետ պիտի ժամադրուէին տիկին եւ պարոն Հոգաբարձուները: Բայց չեմ գիտեր ինչու ո՛չ ինք Հանդիպեցաւ, ոչ ալ լուր մը ունիմ իր մասին: Երբեք այսպէս չէ պատահած:
- Արեւամարի պահ էր, օդը քիչ մը թեթեւցած ու վաճառատուններուն ու խանութներուն մէջ ու շուրջը կ'երթեւեկէին կիսամերկ կին ու աղջիկներ:
- Աղջիկներու Հետ ինչպէ՞ս ես,- Հարցուցի՝ ի տես Հերարձակ Հրաչքի մը:
- Այսինքն,- ըսաւ անտարբեր:
- Այսինքն ի՞նչ,- Հարցուցի բուխ տրամադրութեամբ:

- Աւելի շատ ձախողութեան ցաւեր պատճառած են անոնք ինձի:
- Ինչո՞ւ այդպէս,- ըսի ջանալով զսպել խնդուքս:
- Երկու պատճառով:
- Հարցական նայեցայ աչքերուն:
- Նախ անոր Համար, որ Հանդիպածներուս մէջ տգեղները շատ էին:
- Իսկ երկրորդ պատճառը,- Հետաքրքրուեցայ արագ:
- Որովհետեւ խելացիները քիչ էին:
- Այնպիսի քաշքաշ մը պոռթկաց ներսէս, որ մա՛ղ մնաց զարնուէինք սուրացող «Պիէմ»ի մը:
- Եթէ շարունակենք աղջիկներուն մասին խօսիլ,- ըսաւ Ատոմ լուրջ,- կարծեմ Պարոն Արզարը ի՞նք Հիւանդոտեան պիտի գայ, կամ, ով գիտէ, աւելի տխուր տեղ մը Հանդիպի մեզի...
- Մի վախնար,- ըսի զուարթ,- դուն լրացուր պատմութիւնդ:
- Աղջիկներո՞ւ պատմութիւնը:
- Այո:
- Եղածը ըսի արդէն:
- Ուրեմն գեղեցիկներու եւ խելացիներու մօտ միայն բախտը ժպտացած է քեզի:
- Այո,- երկարեց ձայնը Ատոմ,- եւ որովհետեւ նոյնիսկ այդ քիչերուն քիչ անգամ Հանդիպելու բախտ եղած է, յաճախ մինակ քաշքաշ եմ կեանքը:
- Ապա, խօսակցութեան զուարթ շեշտը քիչ մը մեղմելով, անդրադարձաւ առեղծուած թուացող այդ երեւոյթին տուն տուող բուն պատճառին: Ձկայ էակ մը, ըսաւ, որ մասնաւոր արժանիքով մը եկած չլլայ աշխարհ, չունենայ անկրկնելի գրաւչութիւն մը: Այդ քիչ բարեձեւ եւ շատ անձակներուն մասնաւորն ու անկրկնելին կը պատահի, որ Համարումով լեցնեն Հոգիդ, բայց այդ արժանիքներուն ընդդժմը կապի չի վերածուիր անոնց մօտ, սուտ կը թուի իրենց Հասցէին եղած ամէն զնահատանը:
- Եւ նոյն պատճառով անառի՞կ կը մնան անոնք:
- Եւ ուրիշներ սովահար,- եզրակացուց Ատոմ:
- Երբ դիմացս ճամբան պարապ գտայ՝ լուռ նայեցայ դէմքին:
- Գիտեմ ինչ կ'անցնի Հիմա մտքէդ,- ըսաւ լուրջ:
- Ի՞նչ:
- Ի՞նչ պիտի ըլլայ վերաբերումդ, եթէ Հանդիպած գեղեցիկդ խելացի չըլլայ, իսկ գեղեցիկը խելացիութենէ զուրկ: Այդպէս չէ՞:
- Ճի՛շդ:
- Նոյնիսկ այդ Հաւանականութիւններէն անկախ, խնդիրը կը շարունակէ դարձեալ բարդ մնալ:
- Դեռ աւելի բա՞րդն ալ կայ:



- Կայ, անշո՛ւշտ կայ, եւ շա՛տ,- ըսաւ ու պարզեց այն միտքը, որ ի վերուստ տրուած այդ շնորհները լրիւ չեն լուծեր Հարցը: Կը պատահի, որ մէկուն կամ միւսին պակասի այն ուժը, այն անբացատրելին, որ ձգողական ջերմութիւններու ծնունդ կու տայ կամ կը ստեղծէ վանողական ցրտութիւններ: Երկ-րորդ Հաւանականութիւնը իր կարգին յաճախ Հեռու պահած է զիս նոյնիսկ գեղեցիկներէն ու խելացիներէն:

- Աղջիկներ կան,- եզրակացուց Ատոմ,- որոնց հմայքն ու Համը Համբոյրով մը սպառած են, կը սպասին: Քեզի չէ՞ պատահած:

- Ինձի բա՛ն մըն ալ չէ պատահած,- ըսի, ու սկսայ պըր-պըրտել ինքզինքս: Անդրադարձայ, որ ես նման Հարցեր ո՛չ ունեցած եմ եւ ոչ ալ երեւակայած: Անձնական արժանիքներէ աւելի՝ Փարիզի մէջ առաջին ամիսներուն իմ կապերուս հիմքը եղած է բախտս, իսկ վերադարձէս ետք՝ բախտաբեր միջոց-ներս, որոնք ընդհանրապէս օտարազգի բարեմեներու շրջա-նակներուն մէջ նետած են զիս: Ա՞յդ պատճառով է արդեօք, որ մնայուն բարեկամութիւն չեմ ունեցած, թէ սրտիս մէջ Ձեւային մնայուն ներկայութիւնը Հեռու պահած է զիս Հոգեկան եռուն ու ամուր կապերէ:

Վէշկան փողոցի ծովամերձ քառուղիին վրայ մանկամարդ աղջիկ մը, անպայման իր գեղեցկութեան վստահած, խաչածե-ւեց մեր ճամբան այնպիսի՝ ինքնավստահութեամբ մը, որ կար-ծես իրմէ զատ ուրիշ ոչ ոք այդ մասէն անցնելու իրաւունք ունէր: Ուժգնօրէն կոխեցի արգելակին վրայ: Աղջիկը խոժոռ Հայեացք մը նետեց մեր կողմը ու նոյն ինքնավստահութեամբ շարունակեց ճամբան:

Ամչցայ Հայճոյել:

Աւելի դանդաղեցուցի ինքնաշարժին ընթացքը, որ երկ-րորդ ցնցում մը չպատճառեմ Ատոմին:

Մտանք ծովափը եզերող պողոտան:

- Իսկ դո՞ւն,- Հարցուց Ատոմ:

- Իսկ ես ի՞նչ:

- Սիրա՞ծ ես բնաւ:

- Մէկ անգամ:

- Դժբախտ մարդ:

- Այո, դժբախտ եղայ:

- Դժբախտ մարդ:

- Ինչո՞ւ կը կրկնես:

- Միայն մէկ անգամ սիրած ըլլալուդ Համար:

- Դո՞ւն:

- Կարծեմ գուշակեցիր:

- Աւելի՞ պարզ:

- Ձսիրուած ըլլալուս թիւով:

- Նորէն լաւ չհասկցայ:

- Շա՛տ: Բայց ես ինքզինքս աւելի՞ դժբախտ պիտի Համա-

րէի, եթէ քեզի պէս միայն մէկ անգամ փորձած ըլլային զիս այդ փորձանքները: Քեզի չափ դժբախտ:

Այդ պահուն արդէն մէջս գործող դժբախտութիւնը աւելի սաստկութեամբ զգացուց ինքզինք, բայց այս անգամ ո՛չ միայն մէկ անգամ սիրած ըլլալուս համար, այլեւ մէկը, միակը ընդ-միշտ կորսնցուցած ըլլալուս պատճառով: Ձեզան...

Պարճ Համուտի քաղաքապետարանի արարախօս ոստիկանին բարեհաճ արտօնութեամբ մեքենան կեցուցի պզտիկ հրապարակին կից մայթին ու հետիտն թեքեցանք աջ:

- Պարոն Արզարին Հանդիպողը, անզգալաբար, կ'իյնայ անոր մտաւորական ծուղակին մէջ: Կը յուսամ անոր մօտ անցուցած վայրկեաններուն չես ձանձրանար:

- Հետաքրքրական մարդ կ'երևէր:
- Շատ, թէ՛ մարդկային եւ թէ՛ մտաւորական առումով:
- Ո՞ր դպրոցէն չըջանաւարտ եղած է:
- Երկրորդականը չէ աւարտած:
- Համալսարանական վկայական չունի՞:
- Ոչ:
- Եւ միշտ ըսելի՞ք կը գտնէ:
- Այն սակաւաթիւ մարդերէն է,- ըսաւ Ատոմ,- որ կարգացածը միտքը կը պահէ: Եւ ոչ միայն այդքան: Կարողացածին վրայ աւելցնելիք բան մը կ'ունենայ անպայման կամ անկէ պակսեցնելիք բան մը:
- Երեւի շատ ճամբորդած է:
- Ըսի՛, որ վարժապետ է,- ձայնը խստացուց Ատոմ:
- Ըսել կ'ուզես ի վիճակի չէ՞ եղած ճամբորդելու:
- Ինչպէ՛ս չէ:
- Ե՞րբ, ո՞ւր:
- Երազին մէջ եւ անշուշտ յաճախ:

Մեր ընթացքին վրայ չկրցայ ճշդել, թէ դէմքին ուրուացածը ժպիտ էր, թէ հեզանք:

Ատոմ չարունակեց:  
- Երազին մէջ կամ երեւակայութեամբ յաճախ եղած է Տանթէի դժոխքին մէջ, Տոսթոեւսկիի հետ անընդմէջ սաւառնած Սիպերիոյ տափաստանները, Շեքսպիրի հետ սովորութիւն ունի Դանիոյ թագաւորութիւնը խուզարկելու կամ Միլթընի հետ կորուսեալ դրախտը յայտնաբերելու կը ձեռնարկէ:  
- Կարծեմ,- ըսի,- Պարոն Արզարին Հանդիպելէ առաջ դուն պիտի դարձնես գլուխս:

- Ինձմէ մի վախնար:  
Հագիւ քանի մը Հարիւր մեթր առաջացած, մտանք ձախին բացուած նեղ անցքէ մը եւ բարձրացանք նպարավաճառի մը խանութի մօտէն բարձրացող քարաշէն աստիճաններէն:

- Բարձ՛վ, բարձ՛վ, Հազա՛ր բարի, Պարոն Ատոմ, ինչ լաւ ըրիք, որ եկաք,- ըսաւ քառասունի շուրջ դեղերող գուարթադէմ կին մը, որ սեմին վրայ նսեւ ինծի հետ ծանօթանալէ ետք,

ներս առաւ մեզ: Ժլատ կաշաւորումով յարդարուած Հիւրասենեակէ մը անցանք ու մտանք ննջարան, ուր Հին մահճակալի մը վրայ երկարած էր Պարոն Արզար: Լոյսի շող մը երեւցաւ դէմքին ու մարեցաւ ակնթարթի մը մէջ: Յայտնապէս ցաւ մը զսպելու ջանքի մը մէջ էր ան:

- Անցած ըլլայ, Պարոն Արզար,- ըսի՝ ձեռքը սեղմելով: Ուզեց անկողինին մէջ շտկուիլ: Ձագեցի:
- Անունդ Պարոյր էր կարծեմ,- ըսաւ ժպտուն:
- Այո:
- Պարոյր Հայկազն, փիլիսոփայ,- ըսաւ ժպտուն:
- Դժբախտարար ոչ փիլիսոփայ:
- Ըսէ բարեբախտարար: Եթէ փիլիսոփայ ըլլայիր, մեզի պէս վարժապետ կ'ըլլայիր Հինա:
- Պայմանը չըսիք, Պարոն Արզար,- մէջ մտաւ Ատոմ քրմ-ծիճազ մը աչքերուն:
- Ի՞նչ:
- Պիտի ըսէիք՝ եթէ բախտդ ժպտէր, եթէ Հոգաբարձուներու մէջ ազդեցիկ ազգական մը ունենայիք կամ ստրկահամ խառնուածք:

Երկուքը մէկ սկսան խնդալ: Ես՝ խնդալ մեւացուցի:

- Կ'ենթադրէի, որ անկողնոյ կը ծառայես,- ըսաւ Ատոմ խնդուքը զսպելով:
- Ի՞նչ Հիմամբ,- ժպտեցաւ Պարոն Արզար:
- Բանաստեղծ Լեոնանին մահը ծանր ազդած էր վրադ, եւ երկրորդ՝ Աւետիսեանին նուիրուած յիշատակի հանդիսութեան բացակայութենէն Հետեցնելով:
- Առաջին ենթադրութիւնդ որոշ չափով ճիշդ է, բայց երկրորդդ՝ ոչ: Եթէ նոյնիսկ քաջատղջ ըլլայի, պիտի դժուարանայի այդ հանդիսութեան ներկայ ըլլալ:
- Ինչու այդքան կտրուկ,- Հետաքրքրուեցայ ես:
- Պարզ այն պատճառով, որ չեմ կրնար Փրքեան կոչուած այդ բանախօսը բեմին վրայ տեսնել, սո՛ւտ, սո՛ւտ, երի՛ցս սուտ մարդ մը, որ իրաւ է միայն իր Հաշուոյն յարդարած Հաշուներուն մէջ:

Ատոմ շտապեց, մինչ Պարոն Արզար աջ ձեռքով խառնեց մազերը, խառնեց գիրքերը, Հառաչ մը արձակեց ու նորէն թափ տուաւ իր ցասումին.

- Մարդ մը, որ բառերը դիւրին գործածելու վարժութիւն մը ձեռք ձգած՝ շարունակ ծիպացած է ու կը ծիպայ, տիրողին առջեւ քծնելու եւ ստորադասները մնայուն սպառնալիքի տակ պահելու այն պահուածքով, որ տարիներ ու տարիներ կանգուն պահեց գինք, այնպէս՝ ինչպէս ներքինները կը դիմանան գահերու շուքին, գահակալներու փոփոխութենէն չցնցուելու կանխօրօք սերտուած անամորձիք գիտութեամբ:
- Հանգիստնիդ նայեցէք, Պարոն Արզար, նման երեւոյթ-

ներու առջև չ'արժեք այդքան ջղայնանալ: Կեանք է, ինձմէ լաւ գիտէք, որ այլազան են խառնուածքները, կը պատահի,- ըսաւ Ատոմ,- անհանգստութեան նոր պատճառներ մի աւելցնէք դուք ձեզի:

- Փառք Աստուծոյ, անհանգստութեան պատճառներու սովէն երբեք չեմ տառապած,- ըսաւ դուխը երերցնելէն:

Ես մէկ կողմէ մտիկ կ'ընէի զիրենք եւ, միւս կողմէ՝ անյաղ ակնարկով մը կը գննէի տան անկիւնները, շուտով վերադառնալով Պարոն Արզարի մօտն ու շուրջը պարզուող տեսարաններուն: Տարբեր անուններով թերթեր դիզուած էին անկողնին երկու կողմերուն, վրան, բարձին աջակողմեան մասերուն,- օրաթերթ, շաբաթաթերթ, ամսագիր: Զգացի, որ Ատոմ ինք եւս անոնց վրայ սեւեռած է աչքերը ու յայտնեց այն կարծիքը, որ մենք այսքան թերթ ունենալու իրաւունք չունինք, որովհետեւ զուրկ ենք անոնց գոյութիւնը արդարացնող հետաքրքիր հասարակութենէն:

- Բայց ես ուրախ եմ եւ շատ ուրախ,- երկարեց ձայնը Պարոն Արզար,- որ ունինք ո՛չ միայն կուսակցութիւններու եւ միութիւններու պատկանող հրատարակութիւններ, այլեւ անոնց շարքին անհատական բեմեր: Ամէնուն մատչելի թերթեր:

- Ամէնուն մատչելի ըլլալուն պատճառով է, որ անանուն ամէնուն թիւը կը բազմանայ,- առարկեց Ատոմ:

- Բայց աւելի սարսափելի պիտի ըլլար հակառակը, հակառակ պարագային որքան ինքնամեծար տաղանդներ պիտի ունենայինք, հոս-հոն տրտնջացող որքան տաղանդաշատներ, իբր թէ իրենց զլացուած տեղը դրամադուխի վերածող որքան հերոսներ:

- Այդ առումով՝ այո,- համաձայնեցաւ Ատոմ:

- Այդ թերթերը լաւ փորձաքարեր են, ուր ազատօրէն տեղ կը տրուի բանաստեղծութեան մը կամ արձակ էջի մը բառային նշանակութեան անգամ անձանօթ համբալկներուն շնչահեղձ տեսութիւններուն: Այլապէս ուր եւ ինչպէ՞ս պիտի տեսնէինք իրենց բուն դէմքը:

Վերջին բառերուն հետ ուրիշ գոյն մը ուրուացաւ Պարոն Արզարի դէմքին, մտա՛յլ, եւ պզտիկ ցնցումի մը հետ սկսաւ դարձնալ խառնել թերթերն ու գիրքերը, անջատեց անոնցմէ էջ մը եւ, աչքերը Ատոմին յառած՝ պատմեց, որ Շաքարեան երկրորդական վարժարանի աշակերտուհիներէն մէկուն բանաստեղծութիւն մը արտասանելու պարտականութիւն կը տրուի եւ աշակերտուհին կը յիշէ նախակրթարանի ամսվերջի հանդէսին արտասանած կտոր մը եւ կը փափաքի արտասանել այդ մէկը, որուն միտք մնացած մասը կը յուշէ եւ ուսուցչուհին կ'ուղղազրէ զայն՝ ամբողջութիւնը յայտնաբերելու համար: Փնտրածը կը դժուարանայ սակայն գտնել ու կը դիմէ իր օգնութեան:

- Առ կարդա՛,- ըսաւ՝ ուսուցչուհին ուղղադրուած մասը  
երկարելով Ատոմին:

Ատոմ կարդաց ու մտայեցաւ:

- Ի՞նչ է պատմութիւնը,- Հետաքրքրուեցայ:

Ատոմ ինծի երկարեց թուղթը:

Կարդացի իմ կարգիս.

Մի մէնաւոր ծիրանի ծառ,  
Մի խրճիղի աղոտ ճրագ,  
Ոսկարին մէջ տաքնապաշար  
Հովիվների կանչ ու կրակ...

Կարդացի ու վերադարձուցի թուղթը Ատոմին, որ անպա-  
մած դէմքով մէկ թուղթին կը նայէր, մէկ ինծի:

- Ձանդրադարձա՞ր ողբերգութեան,- Հարցուց վեր-  
դովուած:

- Ո՞ր ողբերգութեան,- Հարց տուի վիրաւոր ձայնով:

Ատոմ թուղթը աչքիս պարզելով ցոյց տուաւ «ողբերգու-  
թիւնը», որ սխալներու հրմշտուք մըն էր, չորս տողի մէջ եօթը  
սխալ, միայն երկրորդ տողին մէջ երեք հատ,- Մի խրճիղի  
աղոտ ճրագ...

- Այո՛,- երկարեց ձայնը Պարոն Արզար,- մեր սրբութիւն-  
ները թերաճ դրածոներու կողմէ այսպէս կը պղծուին Հիմա,  
մինչ մեր Հոգաբարձուները լծուած են արժանատիները Հա-  
լածելու մարտական մղովութեան մը:

- Նման երեւոյթներով Զղայնանալու Հարկ չկայ, Պարոն  
Արզար,- ըսաւ Ատոմ,- անարժաններու գործունէութիւնը այ-  
լեւս չի զարմացներ մեզ. վարժուած ենք անոնց գործած ամէն-  
օրեայ աւերներուն: Ձեզ աւելի չյոգնեցնենք: Նոր բան մը ըսէք  
մեզի ու մեկնինք:

- Մեկնիլը ձեր կամքէն կախում չունի,- ըսաւ ընտանի  
չելտով մը, եւ մտերմական նոյն եղանակով շնորհակալութիւն  
յայտնեց Ատոմին, որ ո՛չ միայն իր բարեւը փոխանցած էր  
ինծի, այլեւ Հետը բերած էր զիս: Ցայտնեց նաեւ զիս ու Ատոմը  
կրկին անգամ միասին տեսած ըլլալու իր ուրախութիւնը: Ըստ  
իրեն, երկար ժամանակը առանձին նշանակութիւն մը չունի  
բարեկամական շաղախին մէջ: Երբեմն մարդիկ ակնթարթի մը  
մէջ կ'եղբայրանան եւ երբեմն ամբողջ կեանք մը չի բաւեր  
զիրար ճանչնալու Համար:

- Մենք ամէնքս,- եզրակացուց Պարոն Արզար,- այդ  
մարզին մէջ շատ փորձառութիւններ ապրած ենք, դառնու-  
թիւնները շատ քաղցրութիւնները քիչ: Այդպէս չէ՞, Ատոմ:

Ատոմ տխրորէն օրօրեց գլուխը եւ, ի տես իր այլափոխու-  
թեան, կարծեցի նոր կասկած մը կը խմորուի Հոգին:

Աչքերս պաշ մը Հեռացուցի իրենցմէ ու կանգ առի այս

անգամ Հնամաշ լուսամտի մը մօտ տարտղնուած գիրքերուն,- նորատիպ, Հնատիպ, Հայերէն, Ֆրանսերէն, փոքր չափի, ստուարածաւալ: Պարոն Արզար նկատեց Հետաքրքրութիւնս, եւ Ատոմին դառնալով ըսաւ.

- Քերեւ Պարոյրը կը մտածէ, որ Հիւանդութեանս պատճառով այս բոլորը դիզուած են Հոս: Այդպէս չէ՞:

- Կ'ենթադրէի,- ըսի:

- Ոչ: Բնատրութիւն է: Ըստ տրամադրութեանս կը բանամ մէկը կամ միւսը: Յաւերս մոռնալու Համար երբեմն երգիծական գրականութեան կը դիմեմ եւ մերթ քարդ Հատորի մը:

Հիւանդտեսի դացած էինք, բայց աստիճանաբար զարմանալի ուրախութիւն մը սկսած էր որոզել զիս: Ծարժումներէն իւրաքանչիւրը նորութիւն մը կը բովանդակէր ու յայտնուած միտքերն ու սպաւորութիւնները զարմանալի անմիջականութեամբ սրտիս մէջ մտերմութիւններ ու քաղցրութիւններ կը ներարկէին, որոնցմէ ի սպառ զրկուած էի պատանութեանս սեմէն սկսեալ ու կը շարունակէի գուրկ ապրիլ, մարդու բոլորովին տարբեր տիպար մը անձնաւորելով, պանդուկներու, ճաշարաններու, սրճարաններու ու զուարճութեան միւս վայրերուն եռեւեմիոց ծոցերուն:

- Ի դէպ,- բարձրացուց ձայնը Ատոմ,- գիրքերուն Հայթայթած տուեալներով դուք կը ճանչնաք կեանքը, թէ կեանքին պարզեւած փորձառութիւններով կը ճշդէք գիրքերուն իրան ու սուտը:

- Ատոնք լրացուցիչ ուժեր են,- ըսաւ Պարոն Արզար կըտրուկ:

- Ո՞րն է սակայն Հիմնականը,- Հետապնդեց Ատոմ,- մերկը, անդիմակը ո՞րն է:

- Կեանքը, Հարկաւ:

- Կը կարծէ՞ք:

- Ինչ գիտնամ, Ատոմ, գիրքը ճշմարտութիւններ բովանդակելով Հանդերձ գրուած է երէկ, Հետեւաբար չի կրնար ամբողջութիւն մը ընդգրկել, նոր իրադարձութիւններու թռչուրո՛ւն Հետ քաղցատած՝ անպայման պակաս բան մը կ'ունենայ, թէեւ, ինչպէս ըսել ուզեցի, գիրքերու ընտիրներուն մէջ կան բոնուած ճշմարտութիւններ, որոնք ո'չ երէկ ունին, ո'չ այսօր. քիչ առաջ յիշեցինք մէկը, Նարեկը:

- Բայց ես կը կարծեմ գիրքը անելի վստահելի ուժ է,- ըսաւ Ատոմ,- կեանքին մէջ ամէն ոք առաւել կամ նուազ շարժով ծպտուած է, կը տեսնենք, կը Հաստատենք ամէն օր, մինչ գիրքերուն մէջ կարելի չէ ծպտուիլ: Կեղծը յանկարծ ցոյց կու տայ իր դիմակը, իսկ իրաւը կը պոռայ իր ճշմարտութիւնը: Եթէ պարզուած վիճակը կամ յարգարուած Հերոսները իրաւ չեն, կը ճանչնաս նաեւ Հեղինակը, որ մարդ մըն է ի վերջոյ, կեանք մը ըսել կ'ուզեն:

- Համաձայն եմ, Համաձայն եմ,- ըսաւ Պարոն Արզար,- Հա-

րիւր տոկոսով Համաձայն եմ,- մարդիկ միշտ ենթակայ եղած են ատորեսային պատճառած ձեւագեղծումներուն, մինչ դիրքը, ինչպէս ըսիք, ներքին աշխարհին մէկ ցոլքն է, անմացորդ խոստովանութեան մը լոյսը: Ինչպէ՛ս կը խենթենան Չղերս, ինչ անիմանալի Հրճուանք մը կը Հոսի երակներու մէջ, երբ նոր գիրքի մը մէջ նոր տարր մը նշմարեմ, ու ինչպէ՛ս սեւ տխրութիւն մը կը չոքի վրաս, որ ժամանակը պիտի չբաւէ ինծի այդ գանձը նոյն վայրկեանին սկսելու եւ մէկ շունչով աւարտին զխարենայ Հասցնելու Համար:

Վերջին բառին Հետ դէմքը ակելի կծկուեցաւ, քիչ մը վեր առաւ բարձր, ուրքերը խաղցուց անօտ սաւանին տակ, պղտորեցան աչքերը, Հարցուց.

- Վերջին լուրը իմացա՞ք:
- Ո՞ր լուրը:
- Այս տարի դարձեալ պատիւ ըրեր են մեր դպրոցին, որ Հայաստան Հրաւիրուած ուսուցիչներու շարքին Հաշուի անընթաց է մեզմէ մէկը եւ տնօրէն Տօներեանը տուեր է աղջկանց մարզանքի դասատուներէն Օրիորդ Նորիկին անունը:
- Ձեմ զարմանար,- յարեց Ատոմ:
- Անցեալ տարի գիտական դասեր աւանդող Երեւակը բախտաւորած էին, կը յիշե՞ս, որքան խնդացինք:
- Այդ Հրաւերները խնդալէ ակելի սկսած են լալու տրամադրութիւններ յուզել սրտիս: Նախկին պաշտօնակից մը Հաղորդած էր ինծի այս տարուան Հրաւիրեալներուն մեծ մասին անունները, որոնք ուղղակի ամօթով Համակեցին զիս:
- Ես որեւէ կապ չունէի դպրոցներուն Հետ, ոեւէ ուսուցչուհի կամ ուսուցիչ չէի ճանչնար ու Հրաւիրողներուն ու Հրաւիրեալներուն փոխարարներութիւններէն բոլորովին անտեղեակ էի ու ճիշդ այդ պատճառով Պարոն Արզարի ու Ատոմի առած-տուած լուրերուն ու Հակազդեցութիւններուն Հանդէպ կը պահէի լիակատար չէզոքութիւն մը:
- Եթէ տնօրէնին Հետ բնականոն յարաբերութիւն ունեցած ըլլայիր, անպայման այս տարուան իր թեկնածուն դուն կ'ըլլայիր,- ըսաւ Պարոն Արզար:
- Ես այդպէս չեմ կարծեր,- անասարեց ընդդիմախօսել Ատոմ,- այն ատեն դիմացէն արգելք մը կը յարուցանէին:
- Իսկ եթէ երկու կողմէն ալ բաց ըլլար ճամբան:
- Այն ատեն ես ինքս կը մերժէի ընդառաջել:
- Բայց ինչո՞ւ:
- Ես չեմ գիտեր ո՞վ կը կատարէ այս ընտրութիւնները եւ ընտրեալները իրենք ինչպէ՛ս կը Համարձակին ճամբայ ելլել, չեմ գիտեր: Ի վերջոյ ի՞նչ տեսնելու կ'երթան այս ողորմելի այր ու կիները, ի՞նչ լսելու, ի՞նչ բնելու,- զայրոյթով Հարցադրեց Ատոմ ու իրեն ծանօթ Հին ու նոր Հրաւիրեալներուն ակնարկելով անւըցուց, որ մեր երկրին պատմական թէ նոր սահմաններն անգամ անծանօթ են շատերուն, նոյնիսկ անգամ մը

չեն թերթատած Հայոց պատմութիւնը, ոչ մէկ անգամ Հաղորդըւած են մեր Հողին տուածներուն ու առածներուն բարդ Հոգեկանութեան, մարդոց տառապագին ճիւղերուն, ստեղծումներուն, կորուստներուն: Կ'երթան՝ ինչպէս որեւէ երկիր պիտի երթային, չէզոք գրօսաչրջիկներու պէս:

- Այս կէտին մէջ ես մէջ մտայ, ըսի.
- Քու պատկերացուցած պայմաններով Հազիւ քանի մը տասնեակ անձեր կրնան Հայաստան այցելել:
- Ես ոչ ոքի մասին չեմ խօսիր, կը խօսիմ ընտրեալներու մասին, որոնք...
- Որո՞նք...- ուզեցի իմանալ մտածումին ամբողջութիւնը, երբ կանգ առաւ:
- Որոնք ընտիր չեն:

Ատոմ այնուհետեւ անջատեց ժողովրդական խաւերէն ճամբայ ելող պարզ մարդերը, որոնց ուխտազնացութիւնը ցնծագին ուրախութեամբ կ'ողողէ մարդուս Հողին, ա՛յն մտածումով, որ միտք եւ երեւակայութիւն մշակելու առիթներէ զուրկ մնացած մարդոց Համար օրհնութիւններ էին այդ այցելութիւնները: Ըստ իրեն, անոնց աչքը բան մը կը տեսնէ ու Հողիններուն մէջ պատկանելիութեան շող մը կը փողփողի:

Ատոմի պատկերացումներուն Հետեւելու փոխարէն, Պարոն Արզար սկսաւ նորէն խառնչուել մօտը եղած թուղթերը: Ծունչ առաւ, շունչ տուաւ, նորէն տակնուվրայ ըրաւ մեծն ու փոքրը, անջատեց մէկը եւ սկսաւ պարզ մարդոց Հայրենական այցելութիւններուն մասին Ատոմի կատարած ընդհանրացումը մասամբ չէզոքացնող Հարցեր յուզել, թէ՛ անոնք, զովարանուած այդ պարզ մարդերն ու փափկասուն կիները նուազ ամօթալի յուշեր չեն ձգած իրենց ետին, զոնէ անոնց մէկ ստուար խաւը, արտօնեալները: Արարատը տեսնելու եւ էջմիածնայ խորանին առջեւ Հողի լեցնելու կարօտով բռնկած էութիւններ չեն անոնք, այլ ճամբայ կ'ելլեն կողուպուտի ախորժակներ սրող զարհուրելի ընչաքաղցութեամբ:

- Կարդացէք «Սովետական Հայաստան» ամսաթերթի մէջ լոյս տեսած յօդուածին սա ընդգծուած մասերը,- եզրակացուց ընչակտուր,- եւ պարզ կը դառնայ իմ կատաղութեանս շարժառիթը:

Ատոմ առաւ երկարած ամսագիրը եւ սկսաւ բարձրաձայն կարգալ կարմիր մատիտով նշուած պարբերութիւնը. «Հայաստան այցելած այրերից ոմանք նստել են մեր մեկուսարաններում, իսկ մաքսատնում բռնուել են այնպիսի կանայք, որոնք Հայրենիքի ոսկին ու աղամանղը դուրս Հանելիս, թաքցրել են իրենց մարմնի այն մասում, որն աստուածաշնչական Եւան ծածկում էր թղենիի տերեւով»:

Ես չկրցայ խնդուքս զսպել, Ատոմ եւս պոռթկաց, իսկ Պարոն Արզար կարծես պատրաստուած էր լալու:



- Քեզ ընտրեալները կ'ամչցենն, Ատոմ,- ըսաւ ան,- մը- տաւորական յորջորջութեանը, զրչի մարդիկ, ուսուցիչ- ուսուցչուհիները, իսկ ես կ'ամչնամ, երբ պարզ մարդիկ Հա- յաստանի Հաշուոյն շահեր ապահովելու ձեռնարկներու ետին կը տեսնեմ: Բան մը տանելու փոխարէն, բան մը յափշտակելու մոլեգնութիւնը սկսած է կեղեքել մեր Հոգին:

Ատոմ գլուխը երեւցնելով՝ նայեցաւ Պարոն Արզարին:  
Պարոն Արզար գլուխը երեւցնելով՝ նայեցաւ ինծի:  
- Ի՞նչ կը կարծէք,- վերսկսաւ Ատոմ,- ընչաքաղցութիւնը առհաւակա՞ն դիժ է, թէ նոր երեւոյթ է անիկա մեր մէջ:  
- Հարցումդ երկար պատասխանի կը կարօտի, Հետեւա- ըսար այդ մասին ձգէ որ խօսինք ուրիշ առիթներու, իսկ Հիմա դառնանք մեր Հրատապ Հարցերուն: Ըսէ նայիմ, ինչ ըրիր, դիմեցիր ուսուցիչ պահանջող իմ տուած Հասցէիս:  
- Ո՛չ,- եղաւ Ատոմի վճռական պատասխանը:  
- Ինչո՞ւ,- խստացուց ձայնը Պարոն Արզար:  
- Դեռ ժողովի մէջ եմ:  
- Ի՞նչ ժողով, որո՞ւ Հետ:  
- Մտքիս ու Հոն խլրտացող ցանցին Հետ,- ըսաւ Ատոմ ժպտելէն:

Լռութիւն:  
Այդ պահուն անհամբեր դարձաւ իմ Հետաքրքրութիւնը եւ թոյլ ձայնով մը Հետապնդեցի Ատոմը, որ սակայն ինծի գոհա- ցում տալու փոխարէն դարձաւ Պարոն Արզարին ու ըսաւ.

- Գիտե՞ք ինչ, յաճախ կը պատահի ինծի նման պարագա- ներ: Կարելոր թէ անկարելոր երեւոյթներու առիթով, իրարա- մերժ ուժեր կը խուժեն մտքիս ու ահարկու տակնուվրայու- թիւն մը կը ստեղծեն: Մերթ կ'ուզեմ ազատիլ անոնցմէ, բայց իրենք ազատ չեն ձգեր զիս: Կը վիճին, կը կռուին, կարելին, անկարելին իրարու կը խառնեն, ամէն օր նոր անակնկալի մը առջեւ դնելով տանջաւար մարմինս: Արի, յախուռն, երկչոտ, թոթովախօս, անտարբեր, վճռական, ներհուն, ապօրինի, Հա- մակերպող: Հաշտողական ուժեր կան մէջս, ստահակներ, սատանաներ, սատանայական աստուածներ ու աստուածային սատանաներ, յարձակէ կ'ըսէ մէկը, նահանջէ կ'ըսէ միւրը...

- Այդ սատանաներդ սանձէ քիչ մը,- ընդհատեց Ատոմի զեղումը Պարոն Արզար,- ու քիչ մը աճապարէ, փափուկ ժա- մանակներ են Հիմա:

- Նոյն Հասցէին դիմելու առաջարկը ես Ախվարովին պիտի առաջարկեմ: Անոր պարագան աւելի փափուկ է...  
- Հարկ չկայ այլեւս անով մտահոգուելու:  
- Հետաքրքրական է: Ինչո՞ւ:  
- Նայէ, Ատոմ, քանի մը պատճառներով արդէն քան- ղըւած տրամադրութիւնդ պիտի չուզէի աստիճան մը աւելի խորտակել, բայց ըսեմ նորէն, որ իբրեւ նոյն թաղին բնակիչ դժուար պիտի չըլլար ինծի Հանդիպիլ Ախվարովինց ու դժուար

չեղաւ, Հանդիպեցայ ձեզմէ բաժնուելէս անմիջապէս ետք, ու ականատես եղայ խոժոռ դէմքերու, ու ականջալուր այնպիսի անէծքներու, որոնց երբեք չէի սպասեր:

- Ի՞նչ է պատահեր,- Հետաքրքրուեցաւ Ատոմ:

Պարոն Արզար Հատաչ մը արձակելով լռեց:

Ատոմ շարունակեց իր Հետապնդումը:

Պարզուեցաւ, որ Պարոն Արզար Ախվարովին Հանդիպելու առիթ չէ ունեցած, զինք դիմաւորած են մայրը եւ երեք քոյրերը, յայտնելով, որ իրենց Հարազատը պայմանագիրը նորոգելէ ետք մեկնել է Կիպրոս, ընդատաջելով մօրեղբոր Հրաւէրին:

- Ի՞նչ պայմանագիր, որո՞ւ Հետ,- վրդովեցաւ Ատոմ:

Ատոմի Հարցումներուն շուտով գոհացում տրուեցաւ: Իր կրտսեր բարեկամը, Ախվարով, ամբողջ երեք տարի իր մտերմութիւնը վայելելէ ու նոյն դպրոցի Հոգաբարձուներուն մասին իր կարծիքները բաժնելէ ետք, իրեն Հետ բարեկամութիւնը արմատապէս խզելու պայմանով միացել է իրենց Հասարակաց Հակառակորդներուն...

- Տեսնէիր ինչպէ՞ս անէծք կը տեղային վրադ:

- Քոյրե՞րն ալ:

- Եւ ինչպէ՞ս:

- Մայրը անիծելու Համբաւ ունէր: Ձեմ գարմանար: Բայց քոյրե՞րը:

- Այդ պահուն դարձած էին իրենց մօր Հարազատ ծընունդները:

Դարձուցին էջը:

Քրքրեցին մօտիկ անցեալը:

Ջարմացան:

Յաւեցան:

Իրենց արտայայտութիւններէն ուղեղիս զիզուած առաջին մտախնդրները տակաւ կը փարատէին եւ ես կը յաջողէի կազմել իրենց մօտիկ անցեալը, երբ Ախվարովի Հետ բարեկամութիւն Հաստատած օրէն Ատոմ պարբերաբար, այլ Հարազատ անդամի մը պէս մտած-ելած էր իրենց տունը, ամէն օր այցելելու սրտաբուխ Հրաւէրներ ստանալով: Մինչդեռ Հիմա, Հաւաստի չըթնելէ կ'իմանար, որ կարճ ժամանակի մը մէջ եւ առանց որեւէ պատճառի ատելավառ տրամադրութիւններ անուցած էին իրեն Հանդէպ եւ եթէ որեւէ տեղ Հանդիպէին իրեն, մա՛ղ պիտի չձգէին վրան:

- Այդ, ա՛յդ, ա՛յդ ինքզինքը բան մը կարծած անիծեալը,-

յիշեց Պարոն Արզար մօրը խօսքը:

- Աստուծոյ փորձանքին արժանին,- բաժժ էր մեծ քոյրը:

- Դժոխքի կրակներուն Հանդիպելիքը:

- Սատկելիքը:

Լրացուցած էին միւսները:

Ըստ Պարոն Արզարի նկարագրութեան, մէկը Հազիւ վերջ

դրած իր զայրոյթին, միւսը ծայրէն սկսած է, ու ամէնքը աճապարած են ձայնակցել Հերթափոխին զայրագնութեանց:

- Անոնց ճիշդը դեռ կը պոռան սկանջներու,- շարունակեց Պարոն Արզար:

- Պզտիկ քո՞յրն ալ կը մասնակցէր ըսիք միւսներուն զայրոյթին,- Հարցուց Ատոմ կիսաժպիտ մը դէմքին:

- Ամէնէն աւելի:

- Ուրեմն պզտիկ քոյրն ալ, Հա՞,- ըսաւ Ատոմ օրօրելով գլուխը:

- Ըսի արդէն՝ ամէնէն աւելի:

- Իսկ դո՞ւք ինչ ըսիք, Պարոն Արզար:

- Ոչինչ:

- Ոչի՞նչ:

- Ինչ ընէի Հապա, նստէի եւ թերա՞մ արարածներու Հե՞տ վէճի բռնուէի: Դուն դիտես, որ բառերուն արժէքին անձանօթ Հոգիներուն ո՛չ օրհնութեան կարեւորութիւն կ'ընծայեմ եւ ոչ նզովքին:

- Ուրեմն լուռ ըմբռնեցիք անոնց փրփրերախ զայրոյթը,- ըսաւ Ատոմ՝ այս անգամ բարեխոյսուած տրամադրութեամբ:

- Ըսի միայն, որ անիծելու մոլեղնութիւնը լաւ բան չի խոստանար, երբ զուրկ է արդար պատճառներէ:

Պարոն Արզարի վերջին խօսքին Հետ սարսուռ մը անցաւ մարմինէս ու ջղայնօրէն Հարցուցի:

- Դուք կը Հաւատա՞ք նախապաշարունակներու:

- Նախապաշարունակներու, երազներու, դեռ չքանակուած բոլոր ուժերուն, բոլոր, բոլոր սարսուռ մղումներուն,- ըսաւ Ատոմ:

- Փիտէ՞ք ինչու Հարցուցի:

- Հետաքրքրական է:

Նկարագրեցի Հին երազներէս մէկը, ուր կին մը իր ամուսնոյն եւ Հինգ զաւակներուն շարունակ բարիք ըրած մարդու մը դիմաց կանգնած՝ անէծք կը թափէր անոր գլխուն: Անէծքի թիրախը, այնչեր ծերունի մը, որ, անսկիւկալ ձախողութեան մը պատճառով՝ առաջուան առատութեամբ չէր կրնար շոյլել իր բարիքները, անբարբառ սկանջալուր եղաւ շարախօսութեան Հեղեղին: Խոնարհ Հոգիով մարդ, ծերունին՝ ո՛չ իր բարիքները յիշեց, ոչ ալ իրեն դէմ մոլեղնած ապերախութիւնը նիւթ ըրաւ: Աչքին առջեւ ունենալով կնոջ զաւակները, սկսաւ սարսափ մը ապրել Հոգիին, թէ շարախօսը անպատիժ չի կրնար մնալ: Եւ այդպէս եղաւ: Երազի մէջ պատահած ամէն արարքի պէս պարզ: Տուն վերադարձին շարախօսը տեսաւ, որ կաթուածահար եղած է աւազ որդին: Արթնցայ՝ անէծքներ տեղացող կնոջ ճիշդէն սարսափահար: Քրտինքի մէջ կը լողայի: Ակրցայ այլեւս քնանալ, չկրցայ այլեւս ինքզինքըս Համոզել, որ տեսածս երազ էր, իրականութիւն չէր միայն, իրականութենէն աւելի ուժեղ էր այդ ցնորքը:

- Ես նման երազներ չեմ տեսած,- ըսաւ Ատոմ, բայց անակնկալ Հարուածներ ընդունած ծանօթ մարդոց կեանքը պրպտած եմ յաճախ ու անպայման Հանդիպած եմ շարութեան որոմի մը:

Իմ երազիս պատմութեան եւ Ատոմի մեկնաբանութեան շատ ուշադրութիւն չընծայեց Պարոն Արզար: Մխրճուած էր կարծէք ուրիշ աշխարհի մը մէջ, ու երբ սթափեցաւ, յարեց.

- Տուն դարձիս, ստացած տպաւորութիւններու տակ Հազիւ ինքզինքս գտած, դուռը բախեց տնտեսը, անմիջապէս Հոգաբարձութեան ատենապետ Լեւէրեանին Հանդիպելու պարտականութեամբ:

- Եւ դուք Հանդիպեցա՞ք,- Հարցուց Ատոմ:

- Նոյն վայրկեանին:

- Ցետո՞յ:

- Առաջին ակնթարթին, Ախվարովի մօր այր տեսակին Հանդիպած ըլլալու տպաւորութիւն մը կրեցի: Հազիւ բարեւս առած՝ ա՛ն, ըսաւ, տես ո՞վ է եղեր քու այդ բարեկամդ, Ատոմ կոչուած այդ ամբարիչտը, այդ անբարոն, այդ ինքնաՀաւանը, զոր դուն այնքան կը Հանէիր եւ մենք ամբողջ Հինգ տարի մեր ծոցին մէջ պաՀեցինք, ա՛ն, ապերախտը:

Պարոն Արզար պարզեց, որ ատենապետին իրեն յանձնաժը Հինգ մեծագիր էջերու վրայ Հատիկ-Հատիկ փոռած ձեռագիր մըն է, ծայրէ ծայր Ատոմի մասին, թունաւոր բառերու Հեղեղ մը, ստորագրութիւն՝ Ախվարով:

- Իմ մասի՞ս,- զարմացաւ Ատոմ:

- Այո:

- Եւ թունաւոր:

- Բոլորովին:

Պարոն Արզար փորձեց ոտքի ելլել, դժուարացաւ, նստեցաւ անկողինին վրայ, բարձրաձայն գաւաթ մը ջուր խնդրեց, գոյն առաւ, գոյն տուաւ, ու երբ վերագտաւ իր շնչառութեան կշռոյթը, իմ զարմանքիս ու Ատոմի անտարբեր նայուածքին դիմաց պարզեց Հոգաբարձութեան ուղղած Ախվարովի էջերուն բովանդակութիւնը, որ ծայրէ ծայր կը վերաբերէր Ատոմի մտերիմ կեանքին ու մտերմութեան մէջ որոշ անձերու մասին ունեցած գունաւոր արտայայտութիւններուն:

- Հոգաբարձուները Հոգաբարձուներ Համարեր ես, այդպէս գրուած է:

- Ատենապետին պէտք չէր նորութիւն թուէր աստիկա, նոյնը ուղղակի իրեն ըսած եմ,- յարեց Ատոմ:

- Տնօրէնը՝ ապիկար:

- Նոյնը տանիքներէն պիտի պոռայի:

- Տէրտէրը...

- Տէրտէ՞րը:

- Կարծեմ սաղմոս Հեզոդ տիրացու կոչեր ես տէրտէրը:

- Այդ մասին երկու կարծիք չունիմ:

Կը Հետեւէի իրենց փոխասացութեան, սեւեռարիք նայելով Ատոմին, որուն աչքերուն պայծառութիւնը պղտորեցաւ, երբ իմացաւ մտերիմ կեանքին մաս կազմած մոլորեցումներուն եղած անկարկութիւնները, խաղի, խմիչքի ու գիշերային անկիւններու Հետ ունեցած կապերուն մասին: Ատոմ անտարբերութենէն բոլորովին զուրս ելաւ, երբ Պարոն Արզար անգրադարձաւ Ախվարովի թուղթին մէջ՝ օգտագործուած նամակներէն մէջըրեալ սիրային խոստովանութիւններու:

- Կը յուսամ չեմ խանգարեր ձեզ,- ըսաւ Տիկինը գովացուցիչ գաւաթներով բեռնաւորուած սրճագոյն ավաճն սեղանին վրայ տեղաւորելով: Ապա դեղահատ մը տուաւ ամուսնոյն եւ մեր ներկայութիւնը Հանելի Համարող բարեկիրթ ժպիտով մը դարձեալ առանձին ձգեց մեզ:

Ակամայ մտայ իրենց Հարցին մէջ եւ ուզեցի պարզել այն Հանգամանքը, որ ամբողջ Հինգ տարի նոյն դպրոցին մէջ պաշտօնավարելէ ետք, ինչպէ՞ս պատահած է, որ վեցերորդի սեմին յանկարծ պաշտօնական մարմիններուն ու պաշտօնեաներուն միջեւ բացուած է այդքան լայն խրամատ մը:

Տրուեցաւ ատոր բացատրութիւնը:

Ուսուցիչ մը պակաս ունենալու Համար, այսինքն՝ քիչ դրամ ծախսելու շուկայիկ Հաշիւներով Հոգարարութիւնը երկու դասարան միացնելու որոշում մը առած է, իսկ Ատոմ Հոգարարձու-ուսուցչական կազմ խառն ժողովի մը նոյն որոշումը աշակերտներուն դէմ գործուած ոճիը Համարած ըլլալով սկսած է պայքար մը երկուքին միջեւ: Ատոմ չէ Հրաժարած իր յայտարարութենէն, իսկ Հոգարարձութիւնը չէ մարած Ատոմի սպաննիչ գնահատանքը: Այդ օրէն սկսած է բախումը ու յանգած է բաժանման, առիթ տալով ամէնօրեայ Հետապնդումներու, վերապահութիւններու, յիբիւրանքներու, նոյնիսկ բարեկամը բարեկամին դէմ լարելու մեքենայութեանց:

Պարոն Արզար չարունակեց Ախվարովի թուղթէն իշո՞ղութեամբ կատարած իր քաղուածքը ու երբ Հասաւ աղջկան մը մասին Ախվարովի վատահամ Ատոմի մտերիմ գաղտնիքին նկարագրութեան, Ատոմ յանկարծ պայթեցուց լիահագագ խնդուք մը, նեարդային, երկարատեւ, անզուսպ:

- Ինչո՞ւ այդպէս պոթեցիք մէկէն,- Հարցուց Պարոն Արզար շուարուն:

- Կիպարը յիշեցի,- Հազիւ կրցաւ ըսել Ատոմ խնդուքին մէջէն:

Պարոն Արզարի դէմքէն կարծես յանկարծ ջնջուեցաւ մոռալութիւնը եւ գրեթէ նոյն ուժգնութեամբ միացաւ Ատոմի լիահագագ խնդուքին:

- Կիպարը ով, որ տխուր պատմութեան մը մէջ այդքան դուարթութիւն կը պատճառէ ձեզի,- Հարցուցի երկուքին միջեւ անգամ մը եւս զգալով աւելորդ ներկայութիւնս:

Ատոմ աւելի սաստկացուց իր խնդուքը, իսկ Պարոն Ար-

զար պարտք Համարեց փարատել իմ զարմանքս: Դժուար չեղաւ Հասկնայ ինձի, որ Պարոնեանի Թատերական Հերոսներէն Պաղտասար աղբար կը զգայ, թէ կինը կը դաւաճանէ իրեն ու դաւաճանը մերկացնելու մտքով կը դիմէ իր մտերմագոյն բարեկամներէն Կիպարին: Դատը ստանձնած փաստարանը, սակայն, կը ստուգէ, որ դաւաճանը նոյնինքն իր մտերիմն է, Կիպարը ու իրականութիւնը կը Հաղորդէ Պաղտասար աղբոր, որ պարզուած իրականութենէն շանթահար, բոլորովին խեղճացած կ'ըսէ ու կը կրկնէ.

- Կիպա՞րը ըսիր, Կիպա՞րը...

Յայտնեցին ինձի, որ երկու պաշտօնակիցները միասին Հանդիսատես եղած են ներկայացման եւ շատ, չափէն աւելի շատ սիրած են Պաղտասար աղբարը անմնաւորած Հայրենի դերասանը, մանաւանդ անակնկալէն շանթահար անոր արտայայտչական գլուխ-գործոցը.

- Կիպա՞րը ըսիր, Կիպա՞րը...

Ատոմ կը կրկնէր նոյնը, բայց Հակադրաբար դաւաճանւած Պաղտասար աղբոր ապրած ողբերգութեան, իրեն դէմ ստորագրուած Թուղթին բովանդակութեան ի լուր կը խնդար:

- Եւ դեռ,- ըսաւ Պարոն Արզար, դարձեալ մտայնելով,-

Ախվարովի Թուղթին Հազիւ կէսը կարդացի:

- Ինչո՞ւ միայն կէսը,- նոյնպէս լրջացաւ Ատոմ:

- Երբ երկու բարեկամներէն մէկը անվերապահ զտնուած է միասին Հանդէպ եւ այդ միւսը յանկարծ իր մտերիմին ունեցած մտերիմ ծանօթութիւնները զունազարդելով կը խմբագրէ ու կը յղէ պաշտօնի վրայ եղող մարմինի մը, չեմ կրնար այլեւս զսպել Համբերութիւնս ու կ'ուզեմ առնել-քայել: Այլապէս, փորձով գիտեմ, մարդ արարածին Հանդէպ ունեցած ազնիւ տրամադրութիւնս կը պղտորի: Կ'ուզե՞ս պատեհ առիթով մը Լեւէրեանէն առնեմ ու քեզի բերեմ Ախվարովի ստորագրած Թուղթը:

- Ո՛չ,- ըսաւ Ատոմ կտրուկ:

- Ինչո՞ւ:

- Նոյն պատճառով:

(Շարունակելի)

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵՄՆ

**Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ**

**ՔԱՂՅՐ ԹՎԽԻԾ**

*ԱՆՀԵԹԵԹԻ ԲԱՐՏՈՒՂԱՐԸ*

Քարտուղարն եմ  
անհեթեթի սնանկացած կայսրութեան  
որուն փառքին ժառանգորդներն անտարբեր  
օրերը ծոյլ եւ երազները նեխած  
տոպրակ-տոպրակ կը նետեն  
աղբամանին մէջ վաղուան  
առաւօտէն առաջ

Աղբերը ձեր կը խառնեմ  
բեկորները գործածելի կ'անջատեմ  
բորբոս կապած օրերու տարբանջատուող կոյտերէն  
յետոյ յատուկ խնամքով վարպետօրէն եւ իրարու կը զօղեմ  
ձեզմէ յաճախ վրիպած բառերը ձեր կոշտ-կոպիտ  
եւ ձեր անտաշ բայց բարբախուն բառերէն  
մեր անհեթեթ ժամանակին  
յուշարձանը կը կոփեմ

Քերթուածն այս բիրտ  
գուցէ դառնայ յուշակաթողն այս օրերուն մոխրագոյն  
որունց անկապ եւ խունացած թուղթերուն  
քարտուղարն եմ անվճար  
եւ երջանիկ

*Պէլրուք, 13 Մարտ 1987*

*ՉԿԱՐ ՈՒ ԿԱՐ*

Կար ու չկար  
 գիշեր-ցերեկ յամեցող  
 հեքիաթ մը կար լուսաշող  
 որուն աւարտն սկսաւ  
 իր սկիզբէն շատ առաջ  
 եւ սկիզբն ալ վերջ գտաւ  
 իր աւարտէն ետք միայն

Ներոսները այս անառակ հեքիաթին  
 դէպքերուն մէջ մուտք գործեցին  
 մահանալէ ետք միայն  
 եւ զայն լքեցին  
 ծնելէ առաջ

Ներոսները հեքիաթին  
 — ինչպէս լեզու անծանօթ —  
 բարբառեցան շարունակ  
 ինչ որ երկրի մը մասին  
 ինչ որ երկնի մը մասին  
 ինչ որ գիրքի մը մասին  
 ըսին գողերը բոլոր  
 ըսին բոյրերը բոլոր  
 ըսին գոյները բոլոր  
 չըսին ձայները միայն  
 եւ լռեցին վերստին  
 խօսքը խօսքին՝  
 գալիքին

Անոնք չըսին պարզապէս  
 ինչ որ չըսին  
 ինչ որ չըրին  
 ինչ որ միայն չին գիտեր  
 ինչ որ երբեք չին տեսած  
 կամ պարզապէս երազած

Ներոսները անուղղայ  
 հեքիաթներու հեքիաթին



լոյսի սլէս տաք իրենց կեանքը  
 լիաբերան ապրեցան մինչեւ օրն այն  
 երբ որ յանկարծ իրենց կարգին ինացան  
 որ բացարձակ ժամանակին կշռոյթով ու շարժերով  
 դարեր-դարեր անհունօրէն անհունացող  
 հեքիաթին մէջ կեանք կոչուող  
 որուն աւարտը մեռաւ  
 իր սկիզբէն շատ առաջ  
 իսկ սկիզբն ալ սկսաւ  
 իր աւարտէն ետք նոյնիսկ

չկար ու կար  
 կար ու չկար  
 միմիայն կար  
 իր դարատր պատմութիւնը լուսագրող  
 անսկիզբ ու անվախճան մայր հեքիաթը լուսաձայն  
 տիեզերքներ անկոծող հեքիաթներու հեքիաթին

11 Փետրուար 1998

*ՊԱՐԶԱՊԷՍ ՔԱՆԻ ՄԸ ԿԷՏ*

Սպիտակ է անհունը սպիտակին  
 ուր կան նաեւ քանի մը աստղեր  
 որոնք ամէն օր ա՛լ աւելի կը ճերմկին  
 նոյնիսկ անհաս բարձունքներու ձիւներէն աւելի  
 եւ կ'ըլան աւելի բարձր ու սպիտակ  
 բոլոր-բոլոր ճերմակներէն աշխարհի

Տիեզերքին մէջ սերտուլ  
 կան քանի մը աստղ-փաթիլներ  
 եւ դուն սեւեռաբիբ շարունակ կը դիտես  
 կէտերն այդ սպիտակ՝ աստղ առ աստղ  
 որպէսզի յատակօրէն տեսնես կեանքը  
 որ եղաւ տարօրէն կէտ մը սպիտակ  
 որպէսզի տեսնես կէտ մեծ մայրդ  
 աստղադէմ կէտ հայրդ

• քոյրդ

● շնիկո  
 ● աթոռոյ  
 ● սատիտոյ  
 ● թուղթերոյ  
 եւ կինոյ որ  
 եւ զաւակոյ որ  
 եւ հոմանոսիոյ որ  
 եւ ընկերներոյ ու բարեկամներոյ որ  
 Չեռք կ'ընես կէտին որ երազներու ծովն է  
 եւ կէտի մը  
     որ երկինքն է  
 եւ կէտի մը  
     որ սէրն է  
 եւ կէտի մը  
     որ սահն է  
 եւ կէտի մը  
     որ հրեշտակն է  
 եւ կէտի մը  
     որ սպիտակ ցանկութիւններու  
     ծաղկանոցն է յայտուցեալ  
 եւ կէտի մը  
     որ պարզապէս դուն ես  
     յամառօրէն կեցած հոն  
     ժամանակի ու խոհի  
     անդունդի եզրին  
     առանձինն  
 եւ որ տակաւին սենտաբիբ կը խուզարկէ  
 միսիայն քանի մը սպիտակ աստղ-կէտեր  
 կենքի անաւարտ յայտնաւորքէն

23 Փետրուար 1998

*ՏԽՈՒՐ ՌՈՆՏՕ*

Անկեղծ էիր դուն քեզի հետ եւ որոշեցիր կեանքիդ մնա-  
 ցած օրերը անցընել ծովափին՝ ափքներուն դիմաց ծոյլ-ծոյլ  
 նստած եւ անվերջ դիտել խանգարուած ալիքները ժամանակի  
 պատկերասփիւռին...

Յաջնող է թուլութիւնն այս երկար, որ սակայն նախընտրելի է ցափն դիմաց դար-դար դարեր նստելէ եւ...

Անկեղծ էի ես ինձի հետ եւ որոշեցի կեանքիս մնացած օրերը անցընել ծովափին՝ խոհերուս ալիքներուն դիմաց ծոյլ-ծոյլ նստած եւ ժամանակին դուրսըով քանդակել ժայռ մը դատարկին մէջ, դատարկ ու լքեալ օդին մէջ, հալածելով քնայրոտ մտածումս այն,

որ իր տէրն ու վայրը երբեք չի փոխեր եւ որ սակայն կը թոյլատրէ ինձի յտակ ժամու մը, երբ կարօտներուս լոյսը

թափանցիկ ու թեթեւ է ծայր աստիճան՝ տեսնել իր օրերու թանձր ստուերները եւ անոնց վրայ գնդատեղներ նետել: Ասիկա, անտարակոյս, ցաափի է արտակարգօրէն, ավայել նախընտրելի է ցափն դիմաց ծոյլ-ծոյլ նստելէ եւ անելի նախընտրելի՝

նոյնիսկ ցաւն:

Աւանձին էի՝  
Աստուծոյ պէս,  
եւ դուրս՝ իմ կեանքէս:

Որոնեցի աթոռ մը դատարկ,  
կեանքի բաժանցներուն չկորսուած  
լոյսի պէս մաքուր մէկ-երկու բարեկամ,  
եւ որոնումս այս ցաւնող էր արտակարգօրէն,  
բայց նախընտրելի է ցափն դիմաց սրբազան ծուլութեամբ  
ծոյլ-ծոյլ նստելէ եւ նոյնիսկ անելի ու ա՛լ անելի նախընտրելի...  
...նոյնինք ցաւն:

Պէրուք, 19 Դեկտեմբեր 1998

**ՏՈՒՆԸ**

Տունը որ նման էր մոգերու թարաքին  
տունը որ կ'երգէր փաթիլները յամիկին  
տունը որ կ'օրօրէր աստղերը հեթաթին  
տունը որ կ'ուշուներ շողերը աչքերուս  
եւ ամէն առտուս կը կամէր գիծերը պատկերիդ  
ցարդ կը յիշէր թե՛ սիւ ու զիշեր  
ամէն անգամ որ իր խոշտանգուած սեմին  
կը փշէ սիւրբ լուսահմայ դէմքիդ

Եւ ախտոյն շերտութիւնը մտերիմ  
յանկարծօրէն կը լիանայ  
ջորիներու բոժոժներուն  
նսկի-նսկի սաղմոսներէն

Տունը որ մնաց  
բոցերուն մէջ յիշողութեան  
պիտի սպասէ թե՛ տիւ ու գիշեր՝  
ինչպէս դարձին հաւատարիմ ծիծեռնակներուն  
եւ ամէն անգամ որ յօղն աչքերուդ  
երազ-երազ սէր ու արեւ կաթկթի  
բակի թաղարներուն մոռայ հողին

պիտի դառնան անցեալի բիւր ծագերէն հեռաւոր  
արքայատկեր մանուկներու հրաշագոյն երամներ  
եւ այգիին ու տան շէմին վիրաւոր  
ցուպերն սիրուած հազար գարուն  
եւ հազար տօն պիտի ծաղկին

*Պէրուք, 7 Մայիս 1987*

*ԱՌԱՒՕՏԷ ԱՌԱՒՕՏ*

*Մ'էյրէ մեծ մօրս յիշատակին*

Ամէն գիշեր  
մեծ մայրս անդադար կը պատմէր  
մեծ հօրս աշխարհագէտ հպարտ ջորիներուն  
եւ երկու թթենի ունեցող Այնթապի մեր տան մասին  
որուն ստերուն ճնճողակները նազպարեր կը գծագրէին  
եւ քրքրաձայն կը դարպասէին հրաշք թաղարները բակին  
որ օր մը արշալոյսը իր վերջին ջրվէժները մոռցաւ  
եւ վարդենիները դալկացան աշնան հովերու նման՝  
տարագրութեան պատուհասը ազդարարող  
թուրք մունետիկին մահերգակ ձայնէն

**Ամէն առտու**

մեծ մայրս շարունակ կը պատմէր  
 մեր այգիին ոսկեփայլ ողկոյզներուն ու մեղուներու պարին  
 եղնիկի աչք պիտակներուն ու հազարան բլբուլին մասին  
 որ այս առաւօտ ծնաւ արեւուն թափանցիկ շողերէն  
 մեր բակի ծիրանի ծառէն թառեցաւ պատուհանիս  
 եւ սկսաւ ողկոյզ-ողկոյզ հեքիաթներ հիւսել  
 մեր այգիին արեւ խաղողներուն մասին  
 գոր յաջորդ շաբաթ պիտի ծախեն  
 եւ վերամուտի ուրախ առիթով  
 մեզի համար նոր զգեստներ  
 պիտի բերեն քաղաքէն

**Ամէն իրիկուն**

մեծ մայրս միշտ կը պատմէր ու կը պատմէր  
 մեր այգիին ամենամեծ թզենիին տակ թաղուած  
 արեւ չտեսած կարաս մը դեղին ոսկիին մասին  
 որ վաղը պիտի յայտնուի մեր բարձերուն տակ  
 եթէ այս գիշեր կանուխ ու խելօք քնանանք

**Սակայն**

դեռ արադաղը չկանչած  
 սատանայի կերպարանքով հրէշներ եկան  
 խոշտանգեցին ծառերն ու այգիները հեքիաթին  
 պատերուն վրայ տաք-տաք կարմիր հետքեր թողուցին  
 եւ մարդակեր մոնկոյներու նման զամուռեցան մեր  
 դաշտերուն

կիսաբաց ձգելով շրթները մանուկներուն  
 որոնք կարծես կը փորձէին երգել  
 «Առաւօտ Լուսո»ն

**ՄԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ**

Պէյրուս, 16 Մարտ 1992

Ի. ՍԻԼՈՆԷ



Վկային առանցքը կը կազմէ Փիւլգրո Սփինայի (գիրքի հերոսը) ախարկը վերադարձը Բախիւնայ հարաւոր, ուր կը ծրարէր «աշխատի» ժողովուրդին կեանքին մէջ «չեղարբբում» յառաջացնելու նպատակով: Հանրածանօր հակաֆաշիստ գործիչ մըն է ան, որ Մուսոլինիի կառավարութեան կողմէ «վտանգաւոր անձ» հռչակուած ու փախուստ տուած է: Այժմ՝ ռուսիկանուրի մը վերադարձը կը փնտռէ զինք: Ան, ինչպէս ինք կ'ըսէ, «Հայրենիք» վերադարձած է քննական օդ շնչելու եւ իր յոռիքը անգամ մը եւս հուլիսի հողին վրայ գրաւու համար»: Փիւլգրո արկածախնդրական կեանք մը կ'ապրի զատուած մէջ՝ Տոն Փառոյ Սփատա կղերականի մը տնտեսով: Այս անուանով ալ, առանց «կեղծութիւն» տեղեկ պահելու, զազտնի կերպով կը սկսի իր աշխատանքին, առանց գիւղացիներուն կասկածին պատճառ դառնալու:

Հետախնդրարար մը քննարկական վկայ մը արդարեւ: Ստորեւ տրուած պատկերը «Երական» մարզում՝ Փիւլգրո Սփինայի եւ գաղտնի կազմակերպութեան շրջանային Բարտուղարի մը Պաղտիստիայի նախապէս որոշուած հանդիպման մասին է, որ տեղի կ'ունենայ Հոտի անշուէ Եկեղեցիներէ մէկուն մէջ: Գիրքը կը բաղկանայ 29 գլուխներէ: Այս մէկը՝ 17րդ գլուխէն վերջում փութը հատուած մըն է:

Մ.Շ.

«ՀԱՅ ՈՒ ԳԻՆԻ»

... Այդ յետմիջօրէին Փիւլգրո պիտի Հանդիպէր կուսակցութեան շրջանային քարտուղարին՝ Պաղտիստիային: Հանդիպման վայրը Ավենդիէնէ բլուրին կառուցուած փոքր եկեղեցի մըն էր: Երբ Փիւլգրո Հոն Հասաւ, իր ընկերը արդէն եկեղեցւոյ դարձիւն կանգնած, պատին զետեղուած յայտարարութիւն մը կարդալ կը ձեւացնէր: Փիւլգրո տարիներէ ի վեր չէր տեսած զինք: Ան կորաքանակ դարձած էր ու մազերը ճերմկած էին: Բանտը ճերացուցած էր զինք: Փիւլգրո, յայտարարութեան մօտենալով, անոր կողքին կանգնեցաւ վայրկեան մը, ապա ծոցաւ թուղթին վրայ՝ կարծես կարճատես ըլլար, այսպէսով

Պաղղիփայլիան կրնար նշմարել զինք. յետոյ՝ շէնքէն ներս մտաւ: Եկեղեցիին ծանօթ չէր: Զոյգ շարուած կամարները զայն երեք մասերու բաժնած էին: Կամարները յենարան ունէին Հին սիւներ, որոնք յատակէն վեր ցցուած էին, առանց պատուանդան ունենալու ու զարդարուած էին տարբեր սիւնազուլաներով: Քարաշէն յատակը զրեթէ անրողջութեամբ ծածկուած էր զերեզմանաքարերով: Եկեղեցւոյ յետամասին մէջ կեդրոնական խորանը կար, որ քարէ պարզ դամբանի մը կը նմանէր՝ իր խորքին գտնուող փայտակերտ խաչելութեամբ ու չորս մտնակալներով: Եկեղեցին մութ էր ու զրեթէ անայի: Երկու կիներ կային միայն սուրբ խորանին առջեւ, ծունկի եկած լուսաւոր լամբի մը տակ: Փիէզրօ մուտքին մօտ կանգ առաւ՝ սուրբ ջուրով լեցուն ամանի կողքին: Երբ Պաղղիփայլիան ներս մտաւ, ան դանդաղօրէն եկեղեցւոյ մէջ շրջազայլ սկսաւ: Պաղղիփայլիան վերջապէս մօտեցաւ Փիէզրոյին:

«Անցեալ ամիսէն ի վեր քիչ մը դրամ ունիմ քովս քեզի Համար», ըսաւ Պաղղիփայլիան ցած ձայնով: «Ունիմ նաեւ նոր անցագիր մը, արտասահման երթալու Համար»:

«Առողջութիւնդ ինչպէ՞ս է»:

«Այս վայրկեանիս անցագրի պէտք չունիմ», ըսաւ Փիեզրօ, «նորէն արտասահման չեմ ուզեր երթալ»:

«Ատիկա քու գիտնալիքդ է», ըսաւ Պաղղիփայլիան, «ինչպէ՞ս գիտես, այդ մէկը իմ գործս չէ: Ան կու գայ «Արտասահմանի կեդրոն»էն: Ֆենիգոդերոյին Հետ անցագիրդ կը դրկեմ: Ըրէ ինչ որ կ'ուզես: Ո՞վ էր Փոսայէն վերջին անգամ լուրդ բերող անձը»:

«Անունը Պիանգինա է: Գինեպանուհիին աղջիկն է»:

«Կազմակերպութեան անգամ է: Շարժման ե՞րբ միացաւ»:

«Պաշտօնական անդամուհի մը չէ ան, բայց կարելի է նոյն ձեւով իր վրայ վստահութիւն ունենալ: Իմ ով ըլլալս չի գիտեր ան եւ ոչ ալ Հոս գալուս բուն նպատակին ծանօթ էր»:

«Վտանգաւոր չէ՞ ատիկա»:

«Ան գիտ մատնել պիտի չկարենար, նոյնիսկ եթէ իմանար իմ ով ըլլալս»:

«Ատիկա քու գիտնալիքդ է: Իմ գործս քեզի բան սորվեցնել չէ: Հետը յարաբերութիւն ունեցա՞ծ ես»:

«Ո՛չ»:

«Ինչպէս գիտես, ատիկա ալ քու գիտնալիքդ է եւ ոչ թէ իմ: Աղջիկը խօսեցաւ Տոն Փաղօ անունով որոշ կղերականի մը մասին, յեղափոխական մը, որ շեռներուն մէջ ըլլալ կը կարծուի: Կը ճանչնա՞ս զինք»:

«Ո՛չ», ըսաւ Փիէզրօ:

«Պէտք է սիրաշահիս զինք ու շարժման մասնակից դարձնես: Կրնայ օգտակար ըլլալ քեզի»:

Լուսարար մը դուրս եկաւ իրենց սենեակէն եւ երկու մտմ

վառեց աւազ խորանին վրայ: Վարդապետ մը, սրբազան պատարագի իր զգեստներով, զանգակի զօղանջէն անմիջապէս ետք, մէջտեղ ելաւ ու աւազ խորանին առաջին սանդուխին վրայ կանգ առաւ՝ աղօթելու:

Իրան սեմին լսուած ոտնաձայները աւետեցին քանի մը Հաւատացեալներու մուտքը եկեղեցիէն ներս: Մայրապետներ էին: Իրենց մատներուն ծայրերը թաթիւեցին սուրբ ջուրին մէջ: Խաչակնքեցին եւ արագ քայլերով դէպի խորան յառաջացան:

«Գործ դտա՞ր», Հարցուց Պաղղիփայլիան:  
«Փիղացիներուն մէջ դժուար է», ըսաւ Փիէղրօ: «Անոնք աւելի մօտ կը զգան ճիտագինօ տա Ֆիորէին, քան կրամչին(\*): Այս քուրը նորաձեւական մտահոգութիւնը Հարաւի նկատմամբ՝ քաղքենիական երազանք մըն է»:

«Նկատելով, որ եղած տեղդ թղթակցական կապի Հնարարութիւն չկայ», ըսաւ Պաղղիփայլիան, «Արտասահմանի կեդրոն»ը խնդրեց ինձմէ, որ անմիջապէս պատասխան մը ստանամ քեզմէ, քաղաքական վերջին որոշումին մասին: Ինչպէս գիտես, աւելի ձեռակերպութիւն է, քան որեւէ ուրիշ բան»:  
«Ձեռակերպութիւններու վարժ չեմ», ըսաւ Փիէղրօ: «Այս մէկը դուն կրնաս Հասկնալ»:

«Ի՞նչ Համայնավար կուսակցութեան մեծամասնութեան Հետ Համաձայնութիւնդ յայտարարելով, գիտենք, թէ ոչ ոք կրնայ վերադրել քեզի նուազագոյն անորոշութիւնը», ըսաւ Պաղղիփայլիան:

«Ի՞նչ կուսակցական Հին ընկեր մըն ես ու ամէն մարդ քեզ կը յարգէ ու կը գնահատէ»:

«Իրականութիւնը եթէ կ'ուզես», ըսաւ Փիէղրօ, «չեմ գիտեր, թէ Հարցը ինչի՞ մասին է: Եթէ այդքան դժուար է ինձի Համար գիղս ճանչնալը, թողունք իմ շրջանը, ինչպէս կրնամ օգտաշատ գաղափարներ ունենալ ռուսական երկրագործական քաղաքականութեան մասին. Համաձայնի կարգ մը կարծիքներու Հետ եւ կամ չՀամաձայնի: Լուրջ պիտի չըլլար այս մէկը: Ասիկա դուն կրնաս ըմբռնել»:

«Պիանզինան երեք զեկոյցները բերա՞ւ քեզի»:  
«Այո՛, բայց դեռ չեմ կարդացած»:

«Ե՛րբ պիտի կարդաս: «Արտասահմանի կեդրոն»ը կը պնդէ կարծիքդ ունենալ կարելի արագութեամբ»:

«Ձեմ գիտեր ե՛րբ պիտի կարենամ ամբողջութեամբ անոնց վրայ աշխատիլ», ըսաւ Փիէղրօ: «Ձեմ գիտեր նաեւ, թէ պիտի կարենա՞մ Հասկնալ զանոնք եւ արժէք ներկայացնող կարծիք մը յայտնել: Ես այստեղի կացութեամբ աւելի մտահոգուած եմ»:

\* Իտալիոյ համայնավար կուսակցութեան հիմնադիրներէն (Մ.Շ.)




Ապա, մեծ ճիգով մը անկցուց.  
 «Պիտի չուզէի սուտ խօսիլ քեզի: Քուղթերը այրեցի: Անխոհեմ ու վտանգաւոր պիտի ըլլար զանոնք հոս բերելս: Եւ անկեղծ ըլլալով, Հետաքրքրուած այ չէի»:  
 «Ձեռն անդրադառնար, որ ըսածդ լուրջ է», անկցուց Պաղղիփալիան:  
 «Ուրիշ խօսքով», ըսաւ Փիէդրօ, «ճիշդ չեմ գտներ դատել ըաներ, որոնց մասին ոչինչ գիտեմ: Պիտի չենթարկուիմ որեւէ Համակերպութեան եւ պիտի չդատապարտեմ կամ Հաստատեմ՝ գոց աչքերով»:  
 «Ինչպէ՞ս կը յանդգնիս Պուխարինի եւ ուրիշ դաւաճաններու Հանդէպ մեր որոշած դատապարտութիւնը Համակերպութիւն կոչելի: Ո՞նքնք ես՝ ի՞նչ ես»:  
 «Համակերպութիւն է միշտ մեծամասնութեան Հետ ըլլալը», ըսաւ Փիէդրօ. «գոն ալ այդպէս չե՞ս կարծեր: Պուխարինի Հետն էիր, որքան ատեն որ մեծամասնութիւնը իրեն Հետն էր. եւ տակաւին իրեն Հետ պիտի ըլլայիր, եթէ Հիմա ան մեծամասնութիւն մը ունենար: Բայց ինչպէ՞ս կրնանք Փաշխտ Համակերպութեան դէմ պայքարիլ, եթէ Հրաժարինք մեր քրննադատական իրաւունքներէն: Փորձէ՛ պատասխան մը տալ»:  
 «Ձե՞ս կարծեր, որ Պուխարինը դաւաճան մըն էր»:  
 «Եթէ ճշմարտութիւնը կ'ուզես, վստահ չեմ», ըսաւ Փիէդրօ:  
 «Միակ բանը, որ գիտեմ, Հիմա ան փոքրամասնութեան մէջ է: Եւ գիտեմ, որ կը յանդգնիս իմ դէմ ելլել միայն ասոր Համար: Պատասխան տուր այս Հարցումիս, եթէ կրնաս. իր դէմ պիտի ըլլայի՞ր, եթէ ան մեծամասնութեան մէջ գտնուէր»:  
 «Հեզնանքդ չափ ու սահման չունի», ըսաւ Պաղղիփալիան ինքզինք գապելով:  
 «Հարցումիս չպատասխանցիր: Ճշմարտօրէն պատասխանէ, եթէ կրնաս»:  
 «Եթէ ինձմէ կախում ունենար, կուսակցութենէն Հիմա դուրս նետած կ'ըլլայի քեզ»:  
 Պաղղիփալիան զգացուած կը դողար: Բայց իրենց Հանդիպման վայրը կը զգուշացնէր զիրենք: Երկար լռութենէ մը ետք, Պաղղիփալիան մեկնեցաւ՝ առանց բառ մը ըսելու: Փիէդրօ մնաց իր եղած տեղը, կոնակը սուրբ ջուրով լեցուն ամանին յենած: Եկեղեցական արարողութիւնները կը շարունակուէին: Մտներու տմոյն լոյսը, դէպի խորանը կը լուսարձակէր ամանի ոսկին՝ լուսաւոր թագ մը կազմելով պատարագի վարդապետի սպիտակ գլխուն շուրջ: Արարողութիւնները վերջաւորութեան մը Հասան եւ եկեղեցւոյ մէջ գտնուող սակաւաթիւ Հաւատացեալները սկսան դէպի դուռը շարժիլ: Մայրապետներէն մէկը, խաչակնքելու Համար, սուրբ ջուրին մօտ կանգ առնելով՝ Փիէդրոյին ներկայութիւնը Հաստատեց: Ու իր նայուածքը անոր յառելով.

«Մի՛ յուսահատիր», փափսաց ժպտով մը:  
 «Ի՞նչ կ'ուզես», Հարցուց Փիէդրո:  
 «Համարձակութիւն», կրկնեց մայրապետը, «յուսահա-  
 տութեան մէջ մի իյնար»:  
 «Ո՞վ ես դուն», ըսաւ Փիէդրո: «Ի՞նչ կ'ուզես ինձմէ»:  
 «Մտապնդուէ՛», ըսաւ մայրապետը: «Աստուած երբեք  
 մէկը չի փորձեր իր ունեցած կարողութենէն անդին: Գիտե՞ս  
 ինչպէս աղօթել»:  
 «Ո՛ր»:  
 «Պիտի աղօթեմ քեզի Համար: Աստուծոյ կը Հաւատա՞ս»:  
 «Ո՛ր»:  
 «Պիտի աղօթեմ քեզի Համար: Ան մեր բոլորին Հայրն է,  
 նոյնիսկ անոնց՝ որոնք չեն Հաւատար իրեն»:  
 Մայրապետը անապարեց իր խումբին վերստին միանա-  
 լու: Քիչ ետք Փիէդրո մեկնեցաւ եկեղեցիէն: Գիշերը երեւնալ  
 սկսած էր արդէն:

(ԹԱԼԻՒՄ՝ Մ. ՇԱՐԱՊԻԱՆԵԱՆ)

ԻԿՆԱԶԻՑ ՄԻԼՈՆԷ



**Մ. ՇԱՐԱՊԻԱՆԵԱՆ**

*Փոքր տարիքէն արդարութիւնը պաշտող ըմբոստ մըն էր ան, չէր հանդուրժեր կեղծիքին ու չարաշահութեան...*

*Իր սերնդակիցներու շարքին՝ Սիլոնէ եւ Իտալիոյ արգիւումը գրողն էր ու արդա՛էս ալ մնաց մինչեւ երկրին ազատագրումը, մինչեւ իր յաղթական վերադարձը իր պաշտած ժողովուրդին գիրկը:*

*Համաշխարհային հռչակ վայելող այս իտալացի գրողը, երբ իր ծննդավայրը վերադարձաւ, գրեթէ անծանօթ մըն էր իր համագիտացիներուն, որոնք, երկար տարիներ բռնատիրութեան համատարած սարսափին տակ ապրած ըլլալով, չէին յանդներ անգամ մտածել, թէ կը ճանչնան զինք:*

**ԻՎՆԱԶԻՑ ՄԻՒՆԷ (1900 - 1978)**

*«Աքսորականի կեանքի» ընթացքին, - կը գրէ Սիլոնէ, - մտածումս երբեք չանջատուեցաւ Հայրենիքէս, որովհետեւ*

անոնք՝ որոնք կը սիրեն ու բաժնուած կ'ապրին, ինչպէս կ'ըսէ Ալպէր Քամիւ (1913 - 1960), կրնան ցաւի մէջ ապրիլ, որ սակայն յուսարեկիչ չէ, որովհետեւ գիտեն, թէ սէրը գոյութիւն ունի: Ահա թէ ինչու չոր աչքերով կը տատապիմ աքսորիս մէջ: Բայց կը տոկամ, որովհետեւ օր մը վերջնականապէս...»: Ու այդ օրը եկաւ Սիլոնէին Համար 1944ին, երբ Իտալիան, ուրիշ երկիրներու պէս (Ֆրանսա, Ցունաստան, Եւայլն) դաշնակիցներու օգնութեամբ կըրցաւ ազատագրուիլ բռնապետութեան ծանր ու անմարդկային լուծէն՝ Հազարաւոր զոհեր տալէ ետք Համալսարանային Երկրորդ պատերազմի (1939-1944) տարիներուն:

Իտալիոյ պարագան, սակայն, տարրեր էր միւս երկիրներու ունեցած ընկերաքաղաքական վիճակէն: Քսաներորդ դարու երկրորդ տասնամեակէն սկսեալ, ժողովուրդը, մանաւանդ աշխատատեղական դասակարգն ու մտաւորականութիւնը կ'ապրէին վախի ազդեցութեան տակ:

1919ին՝ Պենիթօ Մուսոլինիի (1883 - 1945) Հիմնած ֆաշիստ մոլեռանդ կուսակցութիւնը, առանց մեծ ընդգիծութեանց Հանդիպելու, Վիթորիօ Էմմանուէլէ Գ. Թազաուրը գահընկէց ընելով տէրը դարձաւ երկրին ու զայն կառավարեց ըստ իր մենատիրական կամքին, մինչեւ իր անփառունակ մերթափառումն ու գնդակահարումը, խալալացի ազատամարտիկներու կողմէ (1945):

Մենատիրութեան այս քսանհինգ տարիներու ընթացքին երիտասարդ գրողներ ու մտաւորականներ, Համախմբուած ժողովրդանուէր ու ազատասէր Հակումներ ցուցաբերող Իտալիոյ ընկերվարական կուսակցութեան շուրջ գրիչով ու բանատը քարոզչութեամբ աննահանջ կերպով պայքարեցան բռնակալ Համակարգին դէմ՝ խափանարարական ու զինեալ պայքար մղող «փարթիզաններու» կողքին:

Այս անհանդարտ ու երիտասարդ մտածողներէն մէկն էր նաեւ Իկնաձիօ Սիլոնէ, բուն անունով՝ Սէզոնտօ Քրանգուիլի, որ ծնած էր 1900ին, Ապրուձի (կեդրոնական Իտալիոյ Հարաւը) չրջանի գիւղերէն մէկուն մէջ: 1916ին՝ չրջանին մէջ պատահած ահուկի երկրաշարժի մը հետեւանքով կը կորսնցնէ իր Հողատէր ծնողքը ու իր փոքր եղբոր հետ կը մնայ որբ ու անտէր: Սիլոնէի աքսորի տարիներուն, փոքր եղբայրը կը մեռնի բանտին մէջ (1932), Ֆաշիստ ոստիկանութեան անմարդկային շարչարանքներուն զոհ դառնալով: Այս դէպքը խոր վէրքեր կը բանայ Սիլոնէի Հողիին մէջ: Փոքր տարիքէն արդարութիւնը պաշտող ըմբոստ մըն էր ան, չէր Հանդուրժեր կեղծիքն ու չարաշահութիւնը, ինչ որ կը տեսնէր իր շուրջը ու կղերականներէ ղեկավարուած Հոռմի իր յանախած վարժարանին մէջ, ուր կղերական դառնալու ղրկուած էր: 1918ին կը հրաժարի կղերական ըլլալէ ու կը նետուի Հոռմի ընկերաքաղաքական բովին մէջ, Իտալիոյ Ընկերվարական կուսակցութեան երիտա-

սարգական շարքերուն անդամակցելով: Ձորս տարի ետք, ընդհանուր ժողովի մը ընթացքին, ճախակողմեան թերումներ ունեցող երիտասարդ ընկերվարականներու իրքեւ պարագլուխ՝ բախումներ կ'ունենայ ղեկավարութեան հետ ու անյաջող փորձ մը կը կատարէ նորակերտ խոսակական նորակազմ Համայնավար կուսակցութեան միանալու ու մօտաւորապէս տասը տարի՝ իրքեւ օրդաններու խմբագիր, կը ջանայ օգտակար Հանդիսանալ իր ընկճուած ժողովուրդին, մանաւանդ իր Համազիւղացիներուն, որոնց Հանդէպ խոր սէր ու Համակրանք կը ցուցարերէ մինչեւ իր մահը:

Եւրոպայի ու այլ ցամաքամասերու Համայնավարութեամբ խանդավառուած գրողներու շարքին, Սիլոնէ քանի մը անգամով կ'այցելէ Մոսկուա, ընկերակցութեամբ Իտալիոյ Համայնավար կուսակցութեան Հիմնադիրներէն Փայմիրօ Թոլիաթիի:

Այս այցելութիւնները, սակայն, խոր բեկումներ կը յառաջանեն գրողի Հոգիին մէջ, երբ ան դէմ-յանդիման կու գայ իրականութեան հետ, որ հետո էր ժողովուրդին բարօրութիւն, արդարութիւն պարզեւելէ, ինչպէս խոստացուած էր շարժման սկիզբի տարիներուն (1917): Իր տեսածը, ժամանակին կարգացածն ու լսածը չէին Համապատասխաներ հոն գոյութիւն ունեցող իրականութեանց: Իր զգացած յուսալաքութիւնը տառապալի էր: Նոյն տառապանքը կը զգար ան նաեւ Իտալիոյ մէջ, երբ իր Համազիւղացին, երկրագործ դասակարգը կը տեսնէր ընկճուած ու նկուն՝ Մուսոլինիի վարած քաղաքականութեան ներքեւ:

Մոսկուայէն վերադարձին, երկրնորանքներու մէջ կը տուայտի երիտասարդ Համայնավարը, գրողը եւ սակայն երբեք չի գաղբիր պայքարելէ, միշտ պատասխանատու պաշտօններ ստանձնելով, յատկապէս մամուլի աշխարհին մէջ: Երեսուն տարեկանին (1930), Հայածական կեանք մը կը պարտադրուի իրեն ու հոս ու հոն պահուցածն է ու թափառական կեանք մը վարելէ ետք, կ'ապաստանի Զուիցերիա ու անկէ կը շարունակէ իր հայրենիքը բռնատիրութենէ ձերբազատելու աշխատանքը:

Տարի մը ետք (1931), իր կապերը վերջնականապէս կը խզէ Իտալիոյ Համայնավար կուսակցութեան հետ ու ինքզինք կը նուիրէ ստեղծագործական աշխատանքի, որուն միջոցաւ կը յամառէր օգտակար Հանդիսանալ իր ճնշուած ժողովուրդին:

«Ժամանակ մը եկաւ, որ գրելը, ինձի Համար, ինքզինքս ձերբազատել նշանակեց անձկութենէ մը», կը գրէր ան, աւելցնելով՝ «գրելը՝ (այդ չըջանին), յուսահատութեան զէմ պաշտպանուելու իմ միակ միջոցը դարձաւ»:

Սիլոնէ իր առած այս որոշումի մասին լայնօրէն կ'անգրադառնայ իրեն ճակատագրակից այլ գրողներու յղացումով Հրատարակուած «Աստուածը, որ ձախողեցաւ» (1944 Լոնտոն,

խմբագիրներ՝ Ռիչըրտ Գրոսմեն և Արթըր Քէսսլեր) անուն Հետաքրքրաշարժ ու լուսարանիչ Հատորին մէջ:

Իկնածիւ Սիլոնէ և վերելք յիշուած երկու խմբագիրներէն զատ սոյն շահեկան գիրքին մէջ ինքնարացատրողական գրութիւններ ունին նաեւ Անտրէ Ժիտ, Սթիֆըն Սփէնսըր, Լուի Ֆիլլըր և Ռիչըրտ Բայթ, որոնք ժամանակին ջատագովները եղած էին Համայնավար շարժումին:

Սիլոնէ աքսորի մէջ գրեց ու Հրատարակեց իր լաւագոյն գործերը, որոնք նոր շունչ ու նոր ուղիներ ընծայեցին իտալական գրականութեան: Իր սերնդակիցներու շարքին՝ Սիլոնէ ևս Իտալիոյ ազդուած գրողն էր ու այդպէս ալ մնաց մինչև երկրին ազատագրումը, մինչև իր յաղթական վերադարձը իր պաշտած ժողովուրդի գիրկը: Օտարութեան մէջ իր գրած գործերն են՝ «Ֆոնդամարա» (վէպ, 1930/33), «Հաց ու դինի» (վէպ, 1937), «Մենասէրներու դպրոցը» (1938, ուսումնասիրութիւն), «Հունալը ձիւնին տակ» (վէպ, 1942), «Եւ ան՝ որ թաքնուած պահեց ինքզինքը» (Թատրոն, 1944) և այլ ուսումնասիրութիւններ, ինչպէս նաեւ իտալացի գաղափարապաշտ գրող Մաձձինիի (1806-1872) տարածած միտքերուն մասին փորձագրութիւն մը, «Մաձձինիի ապրող միտքերը» խորագրով (1939):

Համալիարահային Հռչակ վայելող այս իտալացի գրողը, երբ իր ծննդավայրը վերադարձաւ, գրեթէ անծանօթ մըն էր իր Համագիւղացիներուն, որոնք, երկար տարիներ բռնատիրութեան Համատարած սարսափին տակ ապրած ըլլալով՝ չէին յանդգնիր անգամ մտածել, թէ կը ճանչնան զինք: «Երջանիկ քիչերուն» ծանօթ էր ան միայն, ա՛յն «քիչերուն», որոնք նեղութիւն ու դրկանք ապրեցան, պայքարեցան, ձերբակալուեցան, բանտարկուեցան, ուրիշներ մեռան՝ որ մնացողները ապրին, յանուն նոր կեանքի մը, նոր ընկերութեան մը:

Պատերազմին յաջորդող տարիները, սակայն, Հարթեցին ամէն խոչընդոտ, Հալեցուցին գրողին ու իր Համագիւղացիներու միջև գոյացած ստոյցը ու Սիլոնէ, այս ազգանուէր գրողը, արժանացաւ պատիւներու ու զնահատանքի ո՛չ միայն իր ծննդավայրին, այլեւ՝ ամբողջ Իտալիոյ տարածքին:

Արդարեւ, գրողները կը տարբերին իրարմէ: Նոյնպէս եւ Սիլոնէ, որ անհատապէս կը պայքարի, կը խոկայ ու կը ճգնի, իր ըմբռնած ու ապրած իրականութիւնները երեւան Հանելու ու զանոնք Հանրութեան սեփականութիւնը դարձնելու: Սակայն պատերազմը միաձեւ (եթէ կարելի է այս բառը կենդանացնել Հոս) մտածելակերպ մը կը յառաջանէ որոշ խմբակցութիւններու մէջ, որոնք ընկերաքաղաքական մարզերուն մէջ ստեղծուած նոր կացութիւնները կը ջանան մեկնաբանել, վերլուծել, ու մարդուն Համար չնչելի ու անելի ազատ միջավայր մը դարձնել աշխարհը, որուն տէրն են եւ որուն մէջ կ'ապրին բանտարկեալի մը նման: Մարդը մարդուն ու նաեւ ընկերու-

Թեան միջեւ գոյացած յարաբերութիւնները կը մնան կենսական ու հիմնական առանցքը իրենց մշակած նիւթին, գրականութեան: Ասոր շուրջ կը հիւսուին ընկերաքաղաքական կեանքի պայմանները, մարդ արարածի (կին եւ այլ) հոգեկան ու զգացական տկարութիւնները, դէպի չարն ու բարին թերութիւնները, իր նմանը շահագործելու դիրամիջոցները, որոնք մշտատես միճակներ են կեանքին մէջ, յաճախ պարտադրուած նորաստեղծ ընկերութեան մը կողմէ: Հոս, եկեղեցին, որ դրական թէ՛ միտական դեր ունէր խաղալիք անհատներու ու զանգուածներու կեանքին մէջ: Գեղեցիկ դպրութիւնը, այս պարագային, Հեռու կը մնար գործնականապէս մարդկութեան օգտակար ըլլալէ: Յետպատերազմեան շրջանին, Խալիոյ մէջ եւ այլուր երեւան եկող երիտասարդ գրողները, որոնք ընկերութեան պարտադրած դառնութիւններն ու յուսախաբութիւնները ֆաշիական էին լիովին, իրենց նախորդներուն Հետքերէն չքայեցին, այլ «փողոկեան աշտարակները» քանդեցին ու իջան Հրապարակ, քայեցին դէպի կեանք, իրենց բազուկն ու ձայնը միացնելու բոլոր տանջուողներուն ու պայքարողներուն օգտին, աւելի արդար, աւելի մարդկային ընկերութեան մը նախավկանները դառնալով: Անոնք իրականութեանց կը նայէին ուղիղ՝ առանց անոնցմէ փախուստ տալու: «Ով կը Հետաքրքրուի գեղեցիկ գրեւածներով: Գրականութիւն չէ, որ կ'ուզենք, այլ՝ կեանք», կը պոռային նորերը գրական բեմերէն, իսկ «չաւ գրականութիւնը իրականութեան մէջ տեղադրուած կ'ըլլայ եւ ոչ թէ՛ երեւակայութեան», կը գոչէին դարձեալ անոնք Հրապարակ նետուելով:

Միլոնէ մէկն էր այս երիտասարդ գրողներէն, իր գրականութիւնը նուիրական մէկ նպատակ կը Հետապնդէր - ազատագրումն ու բարօրութիւնը իր ընկճուած ժողովուրդին: Խալիոյ Հարաւի գրողները, ներառեալ Միլոնէն, ընդհանրապէս կը խօսին կրօնական, ընկերային ու քաղաքական Հարցերու մասին: Անոնք կառչած մնացին Հողին, երկրագործին, բնութեան ու միջավայրին բերած բարիքներուն ու անհամար դժուարութիւններուն ու իրենց վէպերով ընկերային բարելաւում մը յառաջացուցին, գիւղացիին ապրած դժնդակ կեանքին մէջ: Կեանք մը, որ յաճախ կը շահագործուէր բարեկեցիկ ու Հարուստ կոչուած դասակարգին կողմէ: Այս գրականութիւնը Հեռու է երեւակայական ըլլալէ, արուեստական չէ եւ ոչ ալ վիպային, այլ իրական կեանքը կը պատկերացնէ եւ սրտամօտ է: Հոս՝ եկեղեցին, իր կղերականներով, միջնորդի դեր խաղացած է՝ այս զրկուածներուն կեանքին մէջ, անշուշտ նժարը միշտ դէպի իր կողմը քաշելով...: Միլոնէ չէր Հաւատար այս միջնորդութեան: Առանց եկեղեցիի ու միջնորդի, բաւին իսկական իմաստով, մաքուր քրիստոնեայ մըն էր ան: Միլոնէի այս դիրքորոշումը վրդովում ու անհասկացողութիւն յառաջացուցած էր կաթողիկէ եկեղեցւոյ շրջանակներուն մէջ: Բայց

ան՝ մինչև իր մահը, մնաց անդրդուելի ու անկախ իր մտածումներուն մէջ: Իտալիա վերադառնալէն ետք, գրեց շարք մը վէպեր ու թատերգութիւններ, որոնք մեծապէս գնահատուեցան քննադատներուն ու իր ընթերցողներուն կողմէ, որոնց թիւը երբեք արհամարհելի չէր եղած: Ան իրարու ետեւէ Հրատարակեց նոր գործեր, ինչպէս՝ «Բուռ մը մորենի» (վէպ, 1952), «Ղուկասին զաղտնիքի» (վէպ, 1956), «Աղուէսն ու ծառաթուփերը» (վէպ, 1960), «Ապահով ելք» (ինքնակենսագրական ձեռնագրուած գործ մը, 1965), «Աղքատ քրիստոնեայի մը արկածախնդրութիւնները» (թատրերգութիւն, 1968) եւ այլ գործեր, բազմաթիւ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, գրական փորձագրութիւններ, որոնցմէ շարք մը մահէն ետք Հրատարակուեցան առանձին գիրքերով, իր Հաւատարիմ կողակիցին՝ Տարինայի գուրգուրալի ջանքերով:

Իր կեանքի վերջին տարին (1978), Սիլոնէ առողջութեան պատճառաւ կը փոխադրուի Չուիցերիա - Հոն՝ ուր աքսորեալ ապրած էր տարիներ առաջ - բուժուելու նպատակով ու Հոն ալ Հիւանդանոցի մը մէջ, նոյն տարին, կը մահանայ: Մարմինը կը փոխադրուի ծննդավայրը ու կառավարական ու եկեղեցական պատիւներով կը թաղուի իր սիրած գիւղին մէջ՝ բազմաՀարիւր յուզարկաւորներու ներկայութեամբ: «Արկածախնդիր սուրբ» մը կը Հռչակուի ան, զինք յարգող ու սիրող, նա՛նչ գնահատող Համագիւղացիներուն կողմէ: Իր մահուան առթիւ իտալական ու արտասահմանեան մամուլը լայնօրէն կ'անդրադառնայ Սիլոնէ մարդուն ու գրողին: Ներկայիս տասնեակներու կը Հասնին իր մասին գրուած մենագրութիւնները:

«Սիլոնէն իրրեւ մարդ երբեք պիտի չհասկնանք՝ եթէ նախ գրող Սիլոնէն չըմբռնենք», կ'ըսէր ուրիշ աշխարհահռչակ մը՝ Թոմաս Ման, Սիլոնէի մասին գրած իր յօդուածներէն մէկուն մէջ: Իսկ «Հաց ու զին» վէպին Փրանսերէն թարգմանութեան առիթով, Ալպէր Բամիւ գովեստով կ'արտայայտուէր այս «ըմբռստ» գրողին մասին.

«Կրասէ» Հրատարակչատունը վերջերս մեզի տուաւ Հրաչայի թարգմանութիւն մը, Իկնաձիօ Սիլոնէի «Հաց ու զին» վէպը: ... Առանց որեւէ կասկածի, գործը, ամէն բանէ առաջ Հակաֆաշիստական է: Բայց պատգամը, որ կը բովանդակէ՝ Հակաֆաշիզմէն անդին կ'անցնի: Որովհետեւ իր Հերոսը, յեղափոխական մը, որ տարիներ աքսորի մէջ ապրած է, կեդրոնացման ջանքարէ մը խոյս տալէ ետք, երբ Իտալիա կը վերադառնայ, տակաւին պատճառներ կը գտնէ նա՛նչ ֆաշիզմը ատելու. նոյնպէս՝ պատճառներ կը գտնէ նա՛նչ կասկածելու: «Հաց ու զին»-ն գրուած է ըմբռստի մը կողմէ. ան կը Հոսի դասական բոլոր ձևերով: Կարճ նախադասութիւններ, պարզամիտ եւ իմաստուն նայուածք մը աշխարհին վրայ, կուռ ու բնական երկխօսութիւններ, որոնք Սիլոնէի գրելաձեւին կու տան ծածուկ Հնչականութիւն մը, որ երեւան կու գայ նոյնիսկ



**Թարգմանութեան ընդմէջէն...»:** (Հատուած - Alger-Republicain, 23 Մայիս 1939):

Հողատէրեր, երկրագործներ, պաշտօնեաներ, կղերականներ, եկեղեցի, գաղափարի Համար պայքարողներ, սէր, միամըտութիւններ, ատելութիւններ, մոլեռանդ կեցուածքներ, անվստահութիւններ, մատնութիւններ, Հալածանքներ, Հայրենասիրական արտայայտութիւններ, խարկանքներ, զոհողութիւններ ու մարդկային զոհեր, Հիմնական տուեալները կը կազմեն Համամարդկային արժէք ներկայացնող այս վէպին - ըստ իս, իր լաւագոյն գործին - որ քաղմիցս կը վերահրատարակուի տակաւին քննադիրով ու տասնեակ մը լեզուներու՝ օրին կատարուած Թարգմանութիւններով:

Քորոնթօ

ՄԱՐԳԱՐ ՇԱՐԱՊԻԱՆԵԱՆ

Ինչպէս բովանդակութեան, այնպէս էլ արուեստի առումով իրականութեան պատկերման, մարդ-միջավայր, մարդ-ընտրիւն, անհատ-հասարակութիւն յարաբերութիւնների հոգեբանական բնութեամբ, Օշականը բերում է գեղարուեստական վերարտադրումի եւ մտածողութեան առումով բացարձակապէս նոր որակ:

...Օշականի պատմութիւններում կան առանձին նախադասութիւններ, արտայայտութիւններ, պատկերներ, որոնք հերոսի հոգեխառնութիւնը բնութագրելուց զատ, պայմանաւորում են այդ պատմութեան ներքին ուժերը, դրանց հաղորդում մեղեգայնութիւն, որ էլ էր նրա պատմութեան գարձանում են առաւել յուզումնային:

Ժամանակաշրջանի ու կեանքի եւ հերոսների հոգեբանական գրանցումների յարաբերման առումով տիրապետող կեանքն է, կեանքի մշտահոյով ընթացի տիրական ազդեցութիւնը:

Օշականը գրում է ժամանակի մէջ, բայց ժամանակների համար:

ԿԻՄ ԱՂԱՔԵԿԵԱՆ



**ՕՇԱԿԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՏՈՅՅՆԵՐՈՒՄ**

«Օշականի Վէպի Տիրական Օրէնք... Օրէնքն է կեանքին»

Քիչ չեն այն գրողները, որոնց գրական առաջին փորձերը արժանացել են ուշադրութեան, առաջին գրքերը՝ գնահատուել իբրեւ գրական այս կամ այն դպրոցի ուղղութեան սկիզբ, ընդհանուր Համակրանքի ու ճանաչման Հետ ձեռք բերել մնայուն բարեկամներ, լիցքաւորել սկսնակին՝ ստեղծագործական բուն ոգեւորութեամբ: Փոյթ չէ, որ այդ գրքերից շատերը Հետագայում մոռացւում են եւ նրանց մասին եղած բարի տպաւորութիւններն ալ խամրում՝ մամուլի դեղնած էջերում:



Կ. ԱՂԱԲԵԿԵԱՆ

Գրականագետ, բնագիտության պատմության պրոֆեսոր Կիմ Աղաբեկյան ծնած է 16 Մարտ 1938ին, Գորիսի շրջանի Թալի (այժմ՝ Հարժիս) գիւղը:

1966ին կ'աւարտէ Երեւանի համալսարանի քանասիրական ֆակուլտետը: 1972ին կը ստանայ քանասիրական գիտություններու քննաժողովի աստիճան, պաշտպանել էտ՝ «Դուրզէն Մահարի» խորագրեալ արտանայտը: 1966-1969 կը պաշտօնավարէ Երեւանի համալսարանի էայ գրականութեան ամպիոնին մէջ՝ իրրու խորհրդակց: 1971ին գաստիտու կը նշանակուի եւ այդ քուակննէն ասդին կը դասախօսէ գրականութեան ուսանողներուն:

Կրթական վերջին երեւ շրջաններուն, «Համագային»ի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկին հրատարակու Կիմ Աղաբեկյան եկաւ Պէյրութ եւ գրական ճիւղերը ասանդէց նոյն հիմնարկին մէջ:

Կիմ Աղաբեկյանի գրչին կը պատկանին բազմաթիւ ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, ինչպէս նաեւ՝ «Դուրզէն Մահարի» (1975) եւ «Նրին դիմանկար» (1983) գիրքերը, վերջինը նուիրուած է Բաղիշ Զովսեանի, Մկրտիչ Սարգսեանի եւ Զօրայր Խալափեանի երկերու լննութեան:

Քիչ չեն նաեւ այն գրողները, որոնց գեղարուեստական առաջին խկ յայտերը դառնում են ուղղակի փորձանք, ուրախութեան ու Հրճուանքի փոխարէն՝ Հեղինակին բերելով յուսախաբութիւն, ընդհանուր ժխտողական վերաբերմունք, դառնութիւններ եւ նոյնիսկ դառնում Հայածանքի պատճառ: Գրծրախտաբար այսպիսի, եւ ասելի կոպիտ ու անարդար մօտեցումների տեղիք տուեց 1902ին «Արեւելք»ի մէջ Հրատարակուած Օշականի «Առաջին արցունքը» պատմուածքը: Օշականի այդ տարիների մտերիմ ընկեր Գէորգ Չագրեանը յիշում է, որ «Յորունկ յուզումով գրուած այդ անդրանիկ գործը» տեղիք է տալիս «ծանր իրարանցումի՝ ուսուցչութեան եւ աղաներու շրջանակին մէջ կու տան-կ'առնեն, եւ որոշում՝ «Արտաքսել

անօթի շունը դարձրեցին: Եւ արտաքսեցին<sup>(1)</sup>: Հետագայում, Օշականն էլ դատութեամբ, աւելի մանրամասնօրէն անդրադատում էր այս դէպքին<sup>(2)</sup>: Ի Հարկ է, գրականութիւնների պատմութեան մէջ նման երեւոյթների կարելի է Հանդիպել ամէնուր՝ նոյնքան տարբեր գրեւորումներով: Կան նաեւ գրողներ, որոնց գրական առաջին փորձերում առկայ են ինչ-ինչ ստեղծագործական սկզբունքներ, յստակեցուած Հայեացք, եւ երեւում է ապագայ գրողը իր ինքնութեամբ: Այսպիսի անխաբ տպաւորութիւն է թողնում Օշականի «Առաջին արցունքը» պատմուածքը<sup>(3)</sup>:

Քաղաքից գիւղ է եկել Վառվառ Հանրմը իր միևնույն տղայի հետ: Մօր եւ տղայի յարաբերութիւնները կառուցուած եւ զարգանում են նրանց ենթագիտակցական շերտերում ծաւալուող սիրոյ-սեռի-մահուան գործոնների դրամաթիկ ելեւէջների տիրական ազդեցութեամբ, որոնք, սակայն, քողարկուած են Հողաի ու Հողատարութեան, սիրող մայր եւ Հնազանդ որդի կործանարար գիտակցութեամբ: Գիտակցութեամբ չկարգաւորուող ենթագիտակցական խօսքերն էլ նրանց կեանքը դարձնում են անխմաստ գոյութիւն, կանգնեցնում ողբերգութեան առաջ, որից դուրս գալու ելքը կայ, բայց գիտակցաբար խոստանալու արամաբանութիւնը չկայ: Ստացում է, որ մօր Հողատարութիւնը ինքնին կեղծիք է, ինչպէս եւ կեղծիք է որդու Հնազանդութիւնը: Մօր ենթագիտակցութեան մէջ տիրապետող ցուցադրուող սիրով վարադուրուած դաժան ու ահաւոր եսասիրութիւնն է, որդու մօտ՝ ինքնուրոյնութեան ի սպառ բացակայութիւնը, ընդվզումի, ճանձրայի իրականութիւնը, գորչ առօրեան բարեշրջելու անկարողութիւնը: Իր ներսում բարախող կեանքի կենդանի զարկերին անհաղորդ մնալը՝ որդու մօտ էլ վարադուրուած է ցուցադրական Հնազանդութեամբ: Նա անկարող է տնօրինել սեփական կեանքը: Մայրը անընդհատ խոստանում է՝ տղայի համար աղջիկ ուզել քաղաքից: Ոոստումները կրկնում են, տարիները անցնում: Գրողը աստիճանաբար, նրբօրէն բացում է առօրեայ յարաբերութիւնների դրաման: Մայրը տղայի մէջ տեսնում է Հօրը, իր մահացած էրկին: Ամէն անգամ տղայի ճակատը, երեսները համբուրելուց յետոյ, նա սկսում է մեծ Հաճոյքով ծխել ու ինքն իրեն երգել, ապրելով էգի ստացած ինքնաբաւ վայելքը: Ոոստումներ այլեւ չկան: Մի երբորդը չի կարող խցկուել նրանց արանքը, կին կը լինի, թէ որդեգրած երեխայ, թէկուզ այդ երեխայի Հայրը իր տղան լինի: Մայրը անկարող է

1.- «Յուսարեր» գ. տարի, 25 Յուլիսի, 1947թ.  
 2.- Օշական, «Համապատկեր», հ.դ. Լջ 85-86.  
 3.- «Առաջին արցունք» պատմուածքի մասին տես «Բագին», 1984 թ. Յունուար-Փետրուար, էջ 57, Ա. կիրակոսեանի յօդուածը

իր սէրը կիսել: Երբորդի մուտքը մայրը կարող է արտօնել միայն իր մահից յետոյ: Տղան մեծացել է մօր փէշի տակ, գորգուրանքի ու համբոյրների մէջ: Հիմա գիւղում վարժապետ է, պատուելի: Գիւղում աղջիկ ունեցող մայրերը փափաքում են նրա գոքանչը լինել, աղջիկները՝ խօսք են նետում, սէր են ակնկալում, իսկ վարժապետը իր անտարբերութեամբ, խուսափումներով պաշտպանում է «իր համբաւը, իր անման, բարի տղու համբաւը» եւ դեկավարում այս ամէնէն վեր, այս ամէնէն շատ իր մօրը սիրտը չցաւցնելու գիտակցութեամբ: Բայց եւ այնպէս, «Հակառակ մօրը զգուշութեան ու Հակառակ իր ջանքերուն, սիրած էր ան»: «Վարժապետը սիրել է Վարդանոյշին: Նոյնիսկ պահեր են եղել, որ նա որոշել է ամէն ինչ թողնել եւ «իր սիրածին Հետ կապուի մշտնջենապէս»: Բայց դրա քաջութիւնը չունէր: Իր այդ արարքով կարող էր մօր սիրտը ցաւցնել: Ի՞նչ պիտի լինի, ոչ սակաւ դէպքերում տրտող, Հարցի պատասխաններից յարմարը, որդեգիր ունենալն է:

Դրամայի մէջ մուտք է գործում Գրիգորիկը... Վարդանոյշի տղան:

Վարժապետի եւ մօր անիմաստ գոյութիւնը աւարտուելու շեմին է: Դրամայի ծանրութեան կենտրոնում կանգնում է Գրիգորիկը, որին վարժապետը գիտէ ծնուելու օրից, գիտի այդ երեխայի կեանքը մանրամասնութեամբ: Նորէն ակնարկներ կան: Գրիգորիկը վարժապետի օգնականն է, «խոչոր, գիտնական, աղուոր տղայ է»: Բայց նորից մայրը՝ «Գացիր, գացիր տէ աստ պապ չունեցող փիւճը ուսկի՞ց գտար: Գրուսայէն բերել կու տամ: Թող կենայ Հիմա»:

Գրիգորիկը Հօր գոյութեամբ անհայր մեծացող տղայի՞, թէ՞ բիջի պիտակով կը շարունակի իր գոյութիւնը:

Ո՞վ գիտէ կեանքի անակնկալները...

Փոխում են մարդիկ, բայց շարունակում է սէր ու սեռի ու մահուան դրաման, որ Հետագայում աստիճանաբար Հարբատանում, Հուրքաւորում է նոր փորձառութիւններով, Հասնում նոր զարգացումների, ստանում ուժեղ դրսեւորումներ: Եւ ապա, Հէնց այս առաջին «Գրական էջի» մէջ ուրուագծում է Սշականի բերած մի կարեւոր նորութիւն եւս: Վարժապետը դառնում է գրողի՝ Հետագայում ստեղծած ըրբուրների պատկերասրահի առաջին գծապատկերը, որին Հետեւում են ուրիշները: Իր բռնադատուած, աղաւաղուած Հոգնկարով՝ վարժապետը մի տարօրինակ քոքուր է, որ անկարող է տէր կանգնել սեփական բախտին, տնօրինել սեփական կեանքը, բայց եւ անմտունչ տանել միջավայրի արհամարհանքը, պատրաստ՝ կնոջ, այս դէպքում մօր, պատուէրով զնալ ամէն կարգի գոհողութեան: Քոքուրներ ծնում են, քոքուրներ եւ դառնում են: Մատ են մեղք քոքուրները:

Ահա այսպիսի կամ, Համարեա՞ այսպիսի, տպաւորութիւններ է թողնում, ժամանակի գրականութեան մէջ, ասելիքի

Թարմութեանը ու նորութեանը «առանձնացուող Օշականի առաջին իսկ «Գրական էջ»ը:

1910ական թուականներին, պոլսահայ իրականութեան մէջ մեծ Հեղինակութիւն վայելող «Ազատամարտ»ի կիրակնօրեայ Համարներում լոյս էին տեսնում Օշականի գիւղի մասին գրուած պատմութիւնները, մնայուն տպաւորութիւններ թողնելով ընթերցողներին վրայ:

Գուրգէն Մխիթարեանը վերապրելով այդ օրերը, Օշականի պատմութիւնների թողած ազդեցութեան մասին գրում է. «Նոր էին այս մարդիկը, նոր էր այս շունչը, նոր Հողին Հուրը, Հովերուն ձայնը, կնիւներուն շունչը, երկինքին կապուտը, ծովուն ու լիճին իրկնային ծփանքները, եւ այս բնութեան մէջ ծաղկած Հեթիաթները Հայ կէս-գաւառէն, որ Իզմիթի ծոցին շուրջն է կազմուած: Նոր էր փլիխտփայութիւնը, ճակատագրին Հետ եւ անոր ստուերին տակ Համակերպած մարդոց Հոգին<sup>4</sup>»:

Այս ճշմարիտ գնահատականը մեզ յուշում է մի շատ նուրբ խնդիր: «Սոնարհները» շարքը բացւում է գրողի 1902ին Հրատարակուած «Առաջին արցունքը» գրական երախայրիքով եւ աւարտում 1924ին լոյս տեսած «Մահապազ»ով: Եւ սակայն, ինչպէս Հաստատում է Օշականը, «Քսան տարիներու անջրպետը շատ բան չէ փոխած այդ պատմութիւններուն ներքին բաղադրութիւնէն»<sup>5</sup>:

Գ. Մխիթարեանի կարծիքը անվարան կարելի է տարածել ամբողջ շարքի վրայ: Իսկ պատմութիւնների ամբողջական շարքն էլ, իբրեւ գեղարուեստական փաստ, Հաստատում է գրողի վերջին շարքի կարծիքի իրաւացիութիւնը: Եւ, իսկապէս, «Սոնարհները» ժողովածուն ամբողջացնող պատմութիւնների մէջ ներքին բաղադրութեան իմաստով, Համարեա՛ թէ փոփոխութիւն չկայ: Կը նշանակէ Օշականը Հէնց առաջին իսկ «գրական էջով» ո՛չ միայն նորութիւն ու թարմութիւն է բերում, այլեւ ուղղակի յեղաշրջում է կատարում մեր գրականութեան մէջ:

\*  
\*\*

1998ին, Անթիլիասում, Հրատարակուել է Օշականի երկերի մէկ Հատորը՝ Պօղոս Մնասեանի խմբագրութեամբ: Հատորն ընդգրկում է «Սոնարհները», «Սորհուրդներու մեհեանը», «Մահուան ծաղիկները», «Երբ պատանի են» շարքերը: Նման յաջողականութիւնը խիստ կարեւոր է, տրամաբար

4.՝ Գուրգէն Մխիթարեան, Քառորդ դար գրականութիւն, Կահիրէ, 1946 թ. էջ 161

5.՝ Տես «Համապատկեր Արեւմտահայ գրականութեան», հ. 10, էջ 108, 1982, Ամբիլիաս

նական ու արդարացի: Այս կարգի դասաւորումով առաւել ամ-  
րողական է դառնում գիւղին եւ նրա մարդկանց նուիրում  
Օշականի երկերի թողած տպաւորութիւնը, զգացում, աւելի  
չօշափելի են դառնում գրողի բերած նորութիւններն ու  
դեղարուեստական մտածողութեան առանձնայատկութիւննե-  
րը:

\*  
\* \*

Ինչպէս բովանդակութեան, այնպէս էլ արուեստի առու-  
մով՝ իրականութեան պատկերման, մարդ-միջավայր, մարդ-  
բնութիւն, անհատ-հասարակութիւն յարաբերութիւնների հո-  
գեբանական քննութեամբ, Օշականը բերում է գեղարուես-  
տական վերարտադրումի եւ մտածողութեան առումով բա-  
ցարձակապէս նոր սրակ:

Նոյն Գուրգէն Մխիթարեանը գրում է. «Մինչեւ այդ՝  
ունէինք դաւառը մեր գրականութեան էջերուն: Ունէինք  
Հրանդին պանդուխտները: Թրկատինցիին լուռ ու սուր ցաւե-  
րու կծիկները, Ջարդարեանի հեքիաթները, Գեղամին Մուշէն  
Հեծծիւնները»: Գ. Մխիթարեանը իր այս շահեկան յօդուածում  
թուարկում է այն բոլոր նորութիւնները, որ բերում է Օշականը  
եւ մասնաւորապէս ընդգծում, որ Օշականից առաջ ոչ մէկը  
այնպէս չէ մօտեցել գիւղացուն, չի նայել պատուհաններից, չի  
պատմել տան ներսում հիւսուող դրամայի մասին, որ Օշականը  
առաջինը տեսաւ եւ պատկերեց, առաւելապէս, սեռերու բա-  
խումը, այրերու եւ կիներու հրեղէն վէպերը, սխրագործու-  
թիւնները, սրտաշարժ, անհունօրէն տրտում, մեկուսի կեանքե-  
րը, անոնց ծաղկումն ու ապա խամրումը, կործանումը սեռա-  
յին զսպանակներէն մղուած, ճակատագրի թափին տակ<sup>61</sup>»:

Գուրգէն Մխիթարեանի յօդուածից քաղուած այս մէջբե-  
րումը կատարում ենք մի նպատակով: Եղել են մարդիկ, որոնք  
ժամանակին ճիշտ դիրքերից են գնահատել Օշականի գրակա-  
նութիւնը: Բայց ցաւ ի սրտի, եղել են եւ մարդիկ, որոնք  
Օշականի լեզուն համարում էին «կամայատկերէն», նրա ստեղ-  
ծագործութեան մէջ չէին տեսնում, աւելի ճիշտ՝ չէին ուզում  
տեսնել որեւէ նորութիւն, որեւէ արժանիք: Նրանցից ամէնից  
չափ զարմանք է պատճառում մեծափաստակ Ջօպանեանի վե-  
րաբերմունքը: Գրականութեան այդ մեծ նախանձախնդիրը,  
նուրբ ճաշակի եւ լայն իմացութիւնների տէր մարդը, որ մեր  
գրականութեան մէջ մէկ փակուած ջրհոր չէ, որ բացել է,  
պարզապէս չի ուզում տեսնել Օշականի գրականութեան ար-  
ժէքը: Կողքից յուշուած անազնիւ արա՞րք, անազնիւ մօտեցում  
չասելու համար, ասենք, որ խորապէս անարդար է Ջօպանե-  
անի մօտեցումը եւ չի բխում իրեն այնքան հարազատ

61.՝ ՏԵՄ ԱԿ. գիրքը, էջ 160-161

Հայ գրականության շահերից: Պատճառները անյայտ են, դարձանքը՝ մնայուն եւ ասպնջուցիչ: Ինչ էլ որ լինէր, Զօպանեանը, յանուն գրականության կարող էր բարձր կանգնել մանր քէներից, անմական կրքերից:

Եւ այդ ե՞րբ է եղել, որ զեղեցկութիւնը, գեղարուեստական բարձր արժէքն ու նուաճումը, այս մեղաւոր երկրի վրայ, ճանաչուել, ընդունուել է միանգամից: Գուցէ եւ սա բնական է այնքանով, որ մաքուր աղամանդի ազնուութիւնն էլ Հաստատում է ինչ-ինչ փորձաքննութիւններից յետոյ:

\* \* \*

Օշականի, ինչպէս բոլոր երկերի, այնպէս էլ «Սոնարհները» շարքի պատմութեան հերոսները իրական մարդիկ են, ճշգրիտ Հասցէներով, Հայրերով, պապերով: Ստուգապէս ճշմարիտ են եւ նրա պատմութեանում կատարուող գործողութիւնները: Գրողը, գիւղում աշխատելու տարիներին, «... Սորունկ գագցումներով կապուած էր բոլոր գրկուածնրուն: Կը խօսեցնէինք մեր գիւղերու բոլոր քոքուրները, կէս-խենթները, կը խմէինք անոնց Հետ, ընտանութիւն շահելու Համար»,- գրում է Օշականի մտերիմ Գէորգ Ջազրեանը<sup>17</sup>:

Երեւի Հէնց այդ Հանդիպումների ընթացքում, քոքուրների՝ զոդոզացող շուրթերով ասուած պատասխան կենաց խօսքերում, կոտորուած ժպիտների մէջ, անկենդան, բայց եւ անտրոշ կարօտներից պղտորուած աչքերի, շուար ու շփոթ Հայեացքների, պարզ ու անմիջական, ափի մէջ մարդկանց պարզուած Հոգիների դատարկ տարածքներում գրողը տեսնում, յայտնաբերում է այդ արհամարհուած մարդկանց անծիր տխրութիւնը, անապի ցաւերն ու մրմուռները, փոքր, աննշան ուրախութիւնների ետեւում ծուարած սիրոյ զոդերն ու սարսուռները, եւ մանաւանդ, կնոջ մասին ունեցած նրանց գունագեղ երազները, որոնք ինչ-ինչ պահերի էլ վերափոխուում են իրական, ծանր ողբերգութիւնների: Օշականը Հետո է սպաւորութիւնների եւ տրամադրութիւնների քմայքներից, արուեստ խաղալու, նիւթի մատուցումը Հետաքրքիր դարձնելու յօրինութեանցից:

Նրա արուեստը Հուրքաւորուած է շարժումներով լեցուն իրականութեան վարար, տաք շնչառութեամբ, կենդանի գոյներով, ճշգրիտ պատկերներով, փաստերին, երեւոյթներին շունչ ու ոգի Հաղորդելու վարպետութեամբ, ընկալումների խորութեամբ, անվրէպ դիտողականութեամբ եւ այդ ամէնի վրայ տիրականօրէն բազմած ստքի դաջուածքով:

Փոյներն ու խաղերը, նուրբ կամ կոպիտ շարժումները, խօսքի տխուր ու թախծոտ ելեւէջումները, ասպրումների

7.- Տես «Յուսարեր», դ. տարի, 1947



ծանծաղ, երբեմն կտրուկ դրսևորումները, իրենց վիճակին, թշուառութեանն ու խեղճութեանը, Համատարած արհամարհանքին ընտելացած, պարզապէս անզիտակ, ներքին տառապանքները թնթեւ վարքագծով շղարչելը գալիս են իրենք իրենց, բնականոն ու անխարդախ եւ միշտ յուզախառն, թաթախուած՝ Համակող, պահին ու դրութեանը, դէպքին ու դիպուածին, կացութեանն ու հոգեխառնութեանը Հարազատ ինչ որ թովիչ, նուրբ, Հոգեպարար մեղեդայնութեամբ:

Քոքուրները նման են իրար, Հարազատ: Նրանք բոլորն էլ ճակատագրի կողմից ապտակ ստացած, աշխարհից մերժուած բախտազուրկներ են: Բայց եւ քոքուրները խորապէս տարբեր են իրարից: Մէկի մէջ կարելի է տեսնել ընդհանուրը, ընդհանուրից որոշակիորէն առանձնացնել մէկին: Հէնց այս տարբերութիւններից են հիւսում Սշականի դաժանօրէն գեղեցիկ եւ գեղեցկութեան պէս դաժան գեղարուեստական պատկերները: Քոքուրները իրենց խեղճութեամբ ընթերցողի մէջ առաջ են բերում ազնիւ, բիւրեղացած, մաքրագործուած տրիբութեամբ լեցուն մի իւրատեսակ խղճահարութիւն, որ ածանցւում եւ ընկալւում է իբրեւ ճակատագրի փոխտփայութիւն:

Ահա Տոգսանը, Պաղտոն, Տոպիճը, Համանուն պատմութեանը հերոսները:

Տոգսանը մուրացիկ որբուկ է, որ չի էլ յիշում, թէ երբ են Հեռացել իր ծնողները «այս ցաւի աշխարհէն»: Նա մեծացաւ «փողոցէն ծող շան լակտի մը պէս»: Գիւղացիների՝ նրան աշխատանք տալու բոլոր փորձերը ապարդիւն անցան: Ամէն անգամ նա լքում էր աշխատանքը եւ անյայտանում օրերով ու նորից յայտնւում: Փողոցում մեծացած տղան նորից յայտնւում էր փողոցում: Բայց մի օր Պետիկ տէտէն ասաց. «... Սա խպանը կը տեսնաս, դատարկ կենալուդ եկուր փորէ, մինչեւ Պեթ-Քարը արտ բանաս նէ՝ քեզի կը կարգեն»: «Կը կարգեն» խոստումը զօրաւոր զգացում էր արդէն, որ նրան կտրեց փողոցից, անցեալից: Կեանքը դարձաւ Հետաքրքիր, ապրելը իմաստաւորուեց, կապուեց աշխատանքին: Փորելու Հետ երազների մէջ պատկերների կենտրոնը «կնիկ մը կար ճերմակի վրայ...»: Պատկերների սանձարձակութիւնը «խախտեցին Տոգսանի արդէն խարխուղ միտքը, ու անխելքը խենթացաւ»: Աշխատեց տարիներով, խոպանը ուր որ է արտ կը դառնայ: Ինչպիսի եռանդով նա խնդրում է տէտէին՝ դալ, տեսնել արտը: Տէտէն խոստանում է. «Տոգսանը կրակ դարձաւ ու յանկարծ Սարին ծայրէն ցաթեց ճերմակի վրայ կէս-գոց ծիծերով կնիկը՝ իր տղոց ցոլքերուն մէջ ժպտելով»:

Ինչպէս է նա մղկտում, տաքնապում, մտահոգում, իր վախճանից մի օր առաջ տէտէի առողջութեամբ: Տաս տարի է խոպանը փորում է, վերջացնելու մօտ է, շտապում է Հասնել քարին: Իսկ եթէ Պետիկ տէտէն մեռնի...

**Բայց յաջորդ օրը ժայռը փլուում է Տոգասնի վրայ:**

Պաղտուն - նոյն որբի կեանքով, անուրախ մանկութեամբ եւ պատանեկութեամբ մեծացած տղայ է, մայրական Համբոյրի քողցրութիւն չճաշակած, գուրգուրանքի ու սիրոյ կարօտ: Թուում է, թէ Հէնց այդ կարօտը, չճաշակած սէրերը յագեցնելու վսեմագոյն ցանկութեամբ է պայմանաւորուած նրա կենսա-խիւղ հոգեխառնութիւնը:

Նա շարժուն է, յանդուգն ու համարձակ: Ուշադիր է իր Հազած-կապածին, սանրուածքին նկատմամբ: Ապրում է այն-պէս, առանց վաղուայ հոգսի, զուարթախոհ ու կենսուրախ: Ներկարար է, պոյաճի, ինքն է Հայթայթում իր օրուայ ապրուստը: Հաճելի ու մտերմիկ ինչ-որ բան կայ նրա մէջ: Նկատում են: Կօշիկ ներկողից դառնում է տան ծառայ՝ տանտիրոջ աղջիկներուն զուարթացնելու պարտականութեամբ, որ կատարում է գերազանց կերպով: Սիրահարում է տանտիրոջ կրտսեր, յաճախ կրկնուող ընկնաւորութեամբ տատապող աղջկան: Որբի սէր: Շատ Հարուստ, գորովանքով, փափկութեամբ նկարագրաւոր, կորցնելու կասկածներով ահազնացող, ջերմ, սրտալի, ինքնատիպ մի սէր: Իր մտքի մէջ, հոգու ու սրտի խորքերում հիւսում է յոյսերով ու յոյսերով խմորուած անուշ ու գեղեցիկ երազներ՝ սիրատենչ ու սիրաշունչ: Ամբողջովին ապրում է այդ երազներով, այդ ընտանիքի համար դառնում ցանկալի, անհրաժեշտ ու ընտանի ներկայութիւն: Դիմում է յանդուգն քաղերի՝ իր երազներն իրականացնելու: Աղջիկը խաղում է նրա երազների Հետ, մերժումի ու համաձայնութեան երկբայութեան: Յուսադրող ժպիտ, մերժումի կուպտութիւն: Մերժումի շնչոտեր, բայց եւ Հարազատանալու, նրա գուրգուրանքին ընտելանալու աղջկային փառասիրութիւն: Ձմրան մի օր էլ աղջիկն ուզում է մեծաղիկներ ունենալ: Պաղտուն սիրահարի նուիրուածութեամբ բարձրանում է ձիւնոտ լեռները, մահաշունչ անդունդների եզրերից (պտունկներից), քարափների ծերպերից՝ քաշում, փնջում է ծաղիկները եւ ձիւների պաղն առած, մահազուշակ սարսուռներով դողացող մարմինը փլուում է տան շնմին: Աղջիկը գրկում է նրա մեռած մարմինը, հրեղէն արցունքի միջից, դառնօրէն ուշացած, սէր պարգեւելով տարաբախտ Պաղտոյին, իրեն յաւերժական յիշատակ պահելով՝ այս պազ աշխարհում անգտանելի, այդքան վարար ու տաք, այդչափ շքեղաշուք, որբի սրտից բխած անթիրա սէրը: Հնարաւոր է, որ սիրոյ այս արկածը աղջկան դարձնի մի իւրօրինակ քոքուր: Մտածումը չի կարելի ընդունել միանշանակ: Այս կարգի մտածումի ձեւաւորման մէջ նշանակալից է Պաղտոյի կերպարի նկատմամբ եղած Համակրանքը նաեւ: Կայ եւ շատ նուրբ մի մեղաւոր զգացում՝ երկբայութիւն կայ Պաղտոյի արարքի մէջ: Վճռականութիւնը, աղջկայ սէրը նուաճելու կա՞մքը, թէ ընդհանրապէս, կնոջ քմահաճոյքին

Հլու Հնազանդ ծառայելու քոքուրային պատրաստակամութիւնը Պաղտոյին տարան այդ անձնագրահանութեանը Հարցադրումը, թուով է աւելորդ, քանզի երկու պարագաներում էլ Հերոսի վախճանը իր մէջ կրում է սիրոյ ու նուիրումի գեղեցկութիւնը:

Այլ է Տոպիճը, եւ ուրիշ՝ նրա ապրած ողբերգութիւնը: Տոպիճը անցել է գրեթե ամբողջ ջաշկութեան միջով՝ քէֆեր, ուրախ ժամանցներ, մայրական սէր ու գորով, յանդուգն ու յաղթական կռիւներ՝ թուրքի, այլանացի աւազակների, վրացի ապստակների դէմ: Յարգուած ու սիրուած անուն, Հռչակը տարածուած էր գիւղից էլ անդին: Թշնամիների սարսափն էր, իւրայինների Հպարտութիւնը: Ապրում էր մօր եւ կնոջ հետ եւ տունը լցուած էր սիրով:

Մայրը կարծես կանխազգարով որդուն վերապահուած ճակատագրի դառնութիւնը, մեռնելուց առաջ պատուիրեց. «Տղա՛ս, օղին տունը պը խմես»: Պահեց մայրական պատգամը: Տունը նորէն լցուած էր սիրով: Ամէն անգամ նա տան շեմից ձայնում էր.

- Կնի՛կ, ըրախի մը լից:

Բայց յետոյ եկան սեւ օրեր: Տոպիճը մոռացաւ մօր պատգամը: Ոմում էր դրսում, կռիւներ, Համբաւի վարկաբեկում: Կռիւները մտան տուն: Մեծում էր կնոջը՝ անխնայ, ամէն օր, եւ մի օր էլ տանը չգտաւ այնքան սիրելի կնոջը: Վերջինս Հեռացել էր Պոլիս: Լուրեր էին գալիս՝ նաեւ անպարկեշտ: Նա թողեց գիւղը: Զբաղում էր ձկնորսութեամբ, ապրում՝ Հիւղակում, կիսում՝ բախտագուրկների ընկերակցութիւնն ու ճակատագիրը: Եւ մի օր էլ լսեց Հանդից գիւղ դարձող, տաւարների վզից կախուած «միօրինակ, բայց լացի պէս տրտում բոժոժիկներուն երգը...»:

Նա յիշեց մահացած մօրը, Պոլիս Հեռացած կնոջը, փլուած Հայրական տո՞ւնը, իր աւերակուած երջանկութիւնը: Խորաշափե՞ց իր մեղքերը, Համազրե՞ց անցած կեանքի շիտակ ու խոտոր ուղիները, թէ Հոգու խորքերից բարձրացած տառապանքի ծուխն ու մութը մշուշեցին նրա մտքերը: Ո՞վ գիտի երակներում եռացող, կատաղի Հոսքով ընթացող արեան խորհուրդը:

«Կենդանիները տուն կ'երթային», իսկ ի՞նքը... առանձնացաւ ընկերներից, ձեռքն առաւ շիշն ու գաւաթը, օղիի դառնութեան մէջ խեղդելու Հոգու կակիճը, կոկորդում խմորուող Հեծեծանքը: Թիկունքից ձայն լսեց: Դարձաւ, ճանաչեց կնոջը, եւ քանի որ «կարօտը սաստիկ էր, սիրտը՝ ազնիւ», շիշն ու գաւաթը մեկնելով նրան, Հին ու բարի ժամանակների սովորութեամբ մրմնջաց.

- Կնի՛կ, ըրախի մը լից:

Ողբերգութեան մէջ կայացած Հաշտութիւն, թէ նոր

ողբերգութիւնների սկիզբ: Ո՞վ իմանայ կեանքի խորհուրդը: Բայց երկու պարագաներուն էլ, երկուստեք կործանուած ճակատագրեր, որ նորակերտել բնաւ չի լինի, բնա՛ւ չի լինի:

\*  
\* \*

Ինչքան էլ ընդհանուր՝ քոքուրներից իւրաքանչիւրը ապրում է իւրովի ողբերգութիւն, նրանք չեն կորցնում իրենց ինքնատիպութիւնը: Արհամարհում, ծաղրում, ծիծաղում են նրանց վրայ եւ շահագործում նաեւ: Նրանք իրենց մատուցած ծառայութեան Համար պահանջատր չեն՝ օրահաց, տարուայ մէջ իրենց մերկութիւնը ծածկելու Համար մի քանի կտոր լաթ: Նրանց գերագոյն բաւարարուածութիւնը Հարսների քաղցր նայուածքն է: Բաւականութիւն են ստանում նաեւ տանտէրերի փափուկ, մեղմ վերաբերմունքից:

Քոքուրները զարնան Հետ բարձրանում են սարերը, ապրում Թաւտանների մէջ, օգտւում այգիներից, միասին կատարում գողութիւն, միասին էլ վայելում աւարը: Նրանց պատմութիւնների, ստերով ուռնցուած յիշողութիւնների, երազների կենտրոնում կանգնած է կինը: Կնոջ շուրջն են պտտւում նրանց բոլոր կարգի մտորումները:

Յրտերն ընկնելուն պէս, սարից դիւղ դարձող Հօտերի ետեւից՝ նրանք իջնում, մօտենում են գիւղին: Նրանք յաւիտենական փնտրումի մէջ են, քայլում են իրենց երազի ետեւից: Բայց զարմանալի կերպով գտնելուց յետոյ Հեշտութեամբ կորցնում են այն («Մաղաքը»): Այս պատմուածքի Հերոսին չարաչար խաբում է ազան:

Մի ուրիշ ողբերգութիւն է տեղի ունենում Աղբարիկի Հետ («Աղբարիկը»): Տէր Հայրը կին գտնելու սուտ խոստումներով խաբում է այդ թշուառ մարդուն եւ Հասցնում մահուան դուռը: Այստեղ մի շատ նուրբ խնդիր կայ: Աղբարիկը իր տեսլականի մէջ ստեղծել է ապագայ կնոջ կերպարը եւ ամբողջովին կապուել նրան, ուրիշ կին պէտք չէ, նա չի դաւաճանի էղսա ապային: Ինչքան անմիջական ու յուզախառն է Հնչում նրա բողոքի ձայնը.

- Տէր պա՛պ, տէր պա՛պ, քոչակ չեմ ես, խասկացա՞ր, դիմ սիրտ ծեղկեցին, էլ ուրիշ կնիկ խարամ թող ըլլի: Խարամ, խասկացա՞ր:

Քոքուրները կանանց միջավայրում իւրային են, նրանց ներկայութեամբ կանայք ազատօրէն խօսում են ամէն ինչի մասին, առանց կարկամելու ու կարմրելու: Նրանց երազածը կինն է, բայց իրերի բարեյաջող ընթացքին, յայտնի չէ նրանց դրսեւորած վերաբերմունքը: Հաւանականը՝ կը նստի կնոջ Հետ ծունկ ծնկի, չի մշակի նրան, բայց կը զգայ իր ինքնաբաւ վայելքի երանութիւնը, որ միշտ էլ դրսեւորւում են տարբեր

ձեւերով ու կերպերով: Ասացինք, որ ունենալով ընդհանրութիւններ՝ նրանք չեն նմանում իրար, բոլոր դէպքերում պահում են իրենց ինքնությունները եւ չեն կաղապարում: Այստեղից էլ նրանց գրական կերպարների, հոգեկարների, սպորտի ու տառապանքների դրսեւորման կերպերի ու եղանակների այլաձեւ տարբերակները, որոնք էլ պայմանաւորում են Օչականի՝ քոքուրների (մասին) համար ստեղծած պատկերասրահի բազմազանութիւնը: Քոքուրները միայն խելապակասները, մտածումի ու դատումի անկարող խեղճերը, ինչ-ինչ թերութիւններով ծնուածները չեն:

Քոքուրութիւնը հասարակութեան մէջ միշտ էլ առկայ է, հասարակութեանը մշտապէս ուղեկցող երեւոյթ է:

Դիպուածները, արկածները, տառապանքին դիմակայելու անկարողները, ցաւի մէջ մոլորուած, շփոթ ու շուար, վիճակից դուրս գալու ելքեր չգտնող յուսահատները, ակտայարոյց գայթակղութիւններին ընտելանալը, ինքնություններին սպանող սովորութիւններին ու բարբերին ստրկանալը... մարդուն դարձնում են քոքուր:

Յիշենք նորից «Տոպիճը», «Թիւրքմէնին աղջիկը», «Հօրքուր Վարդանը», «Շահապալը», «Սենթ-Սողմէն», եւ այլն:

Ինչքան էլ մշուշուի Աչրիսի գիտակցութիւնը («Թիւրքմէնին աղջիկը»), այդ միգամածութեան միջից միշտ յատնելու է թիւրքմէնի աղջկայ մարմնի ճառագող ճերմակութիւնը, համակող գեղեցկութիւնը... եւ Հօր մահակի «գաստիարակիչ», կործանարար հարուածը: Ընտանեկան բամբասանքների, աննշան գտնութիւնների, Հօր կոպիտ միջամտութեան ու կամքի աներկր թելադրանքներով պիտի կանխորոշուի Շահապալի («Շահապալ») դաժան ճակատագիրը: Եռայլ ու չքեղ պալատում, նոյնքան չքեղ ու շալլ մարդու Հետ ամուսնութեան դատապարտուած Սողմէն («Սենթ-Սողմէն») միշտ չիչելու է իրենց տան դիմացի բակի դռան ճեղքից իրեն նայող աղքատ տղային: Հոսող ու առատ հարստութիւնը անկարող է մթնազնել մանկութ օրերի նրա առաջին սիրոյ չքեղ զգացումը:

Առանձնայատուկ մի հնայք ունի այս պատմուածքը: Միջավայրի եւ Հերոսուհու ներհոգեկան խմորումների համադրական դրսեւորումը իր Հետ բերում է մի թաքուն տազնապ, որով հիւսում է լինելիք ողբերգութիւնը: Սողմէն գեղեցկագոյնն է գեղեցիկների մէջ. «Այդ կազմով աղջիկները ընդհանրապէս ջուրին կամ շուանին զոհ կ'երթային կամ առազաստի գիշերը կը խեղդուէին»: Գեղեցկութիւնը ինքն է պայմանաւորում վախճանի ողբերգութիւնը: Գիւղն ու գիւղացին ունեն այդ փորձառութիւնը: Մարդիկ, իրենց յիմար միջամտութիւններով գեղեցկուհու ճակատագիրը դնում են ողբերգական ընթացքի մէջ. «Ու մանկութեան աստուածը, ա'ն՝ որ օրրաններէն կը կամարէ մեր սէրերը, ա'ն՝ որ փողոցներուն վրայ, մեր տղայութեան միամտութեանը մէջ կը պահէ նուիրական զգացումը, ու

քով քովի կ'ապրեցնէ իրարու Համար գրուած սրտերուն քերթուածը, անիկա իր վրէժը կը լուծէր, աշնան իրիկունով, սրբազրելով մարդերուն յիմարութիւնը, դարձնելով տղոցը երջանկութեան պահը, որ գողցուեր էր անոնցմէ»: Ճակատագիրը սրբազրում է մարդկանց սխալները: Ճակատագիրը այդ սխալների Համար պատժում է մարդկանց: Ինչպէս է Հեքիաթը միաշխուտում իրականութեանը եւ իրականութիւնը՝ Հեքիաթին: Անցեալի յուշերը իրենց լոյսերով մեղմացնում են ներկայի արնածոր վէրքերի ցաւերը, մի տեսակ փափկութիւն խառնում դաժանութեանը, մաքրագործում վիրաւորանքը, ցրտից, սառնութիւնից դողացող Հոգին պարտւում ջերմութեանը:

Ի Հարկէ, ցանկալի չէ, որ պատմուածքների մեծ մասը աւարտում է, թէկուզ տարարնոյթ, բայց միանման ողբերգական վախճանով: Այս առումով առանձին Հետաքրքրութիւն է ներկայացնում, Զօհրապին նուիրուած, «Մատնաղէլ Եւա» պատմուածքը: Իր սիրուն Հաւատարիմ այդ չքնաղ աղջիկը ճաշակել է արգելուած պտուղի Համը եւ դառնութիւն թքել: Նա իր վիրաւորանքը, ցաւն ու մորմոքը չի արդարացնում իր անմեղութեամբ եւ դիմացինի մեղաւորութեամբ: Ինչպէս աւանդաբար կատարում է նման դէպքում: Եւան իր տառապանքը կրում է իր մէջ, իրմով Հաստատում մեղքով արատաւոր աղջկայ անմեղութիւնը, անպատուած (մարդու) պատուի պատուախնդրութիւնը, մրտուած անուան մաքրութիւնը, աղարտուած կեանքի անաղարտութիւնը: Ի դէպ, Օշականի պատմուածքներում կան առանձին նախադասութիւններ, արտայայտութիւններ, պատկերներ, որոնք Հերոսի Հոգեխառնութիւնը բնութագրելուց զատ, պայմանաւորում են այդ պատմուածքների ներքին ուժիւնը, դրանց Հաղորդում մեղեդայնութիւն, որ ելեւէջումների պատումը դարձնում են առաւել յուզումնալից: Այս դէպքում. «Աղջիկներուն է՛ն անուշն էր ան, եթէ ոչ է՛ն աղուորը» կրկնուող տողը բանաստեղծութեան, մաքրութեան, անաղարտութեան լոյսով է ողողում ողջ պատումը:

Այլ է պարագան «Սենթ-Սողմէն» պատմուածքում: Այստեղ այդ պարտականութիւնը կատարում են մի քանի բեւեռացուած նախադասութիւններ: Պատումից բարձրանում է Հատաչանքի բազմաձայնութեամբ յորդացող, գեղեցիկի կործանման, մահուան խորհուրդներով, ճակատագրի դաժանութեամբ, կեանքի դառնութիւններով, կորած սիրոյ ողբերգութեամբ, տագնապաշատ, խորունկ ու խորհրդաւոր զգացումներով ու սպրումներով ապեցուն մի խոտվայոյղ սիմֆոնիա: Ուղղակի ապշեցուցիչ է Օշականի գրչի ուժը, դունազեղութիւնը: Այս պատմուածքը գլուխ-գործոց է, ո՛չ միայն Օշականի ստեղծագործութեան, այլեւ՝ ընդհանրապէս պատմուածքի ժանրում:

Օշականի բոլոր պատմուածքները լայն ու խոր ընդգրկումներ ունեն: Հերոսների Հոգեբանական տատանումները, դրանց գեղարուեստական դրսևորումները լայնօրէն չփութ են կեանքի սոցիալ-տնտեսական խնդիրների հետ: «Պատալին անէծքը», «Գոլոն» գրուած են մեծ ցաւով, ներքին յուզատուժեամբ: Անարդարութեան, նենգ մարդկանց դաւերի, խարդաւանքների դէմ անզօր ու յուսահատ պատառի վերջին ապաւէնը Հաւատի տունն է.

- Կապուտաւո՛ր, դուն Հախէն եկուր: Չաւկիս արեւուն դուն դատաւոր եղիք,- աղաղակում է նա:

Անարդարութեան դէմ բողոքի այս զգացումը ակամայից յիշեցնում է նոյնօրինակ վիճակում յայտնուած Բակունցի Հերոսներից մէկին, որ գողի ձեռքը չչորացնելու, նրա աղօթքը ընդունելու համար սպանում է պատեղ եկեղեցու դուռը:

Գոլոն («Գոլոն»), այդ հրաշալի Հողագործը, ապրելու եւ թոռներին ապրեցնելու վերջին յոյսը կորցրած, մեռած Հարազատների կանչերը ականջում, փոքրիկ թոռանը զրկած՝ նետում է մահուան անդունդը. «Մերունին կ'իջար, քարերը կը Հառաչէին», իրօք պատմուածքի էջերից Հառաչանքի ծուխ է բարձրանում:

\*  
\* \*

Ինչպէս նկատեցիք, Գոբուրները տարրեր են նաեւ ծննդաբանութեամբ: Կարող ենք անվարան հետեցնել, քնական ու ստացական Հիւանդութիւնները, ճախորդութիւնները, փորձանքները, դիպուածներն ու արկածները, նենգութիւններն ու դաւադրութիւնները, պատահարները, դառնութիւններն ու դաժանութիւնները, հիասթափութիւնները, ցաւն ու տառապանքը, քէնն ու նախանձը, փառամոլութիւնն ու ընչաքաղցութիւնը, վերելքն ու անկումը, սէրն ու ատելութիւնը, ատաղնորդամոլութեան կիրքն ու նիւթի տենչը, կեանքի մատուցած անակնկալները... Հոգեբանական ստրեսները մարդկային Հասարակութեանը յաւերժօրէն ուղեկցող երեւոյթներ են: Եղել են, կան ու կը լինեն յաւերժօրէն կին երազողները: Եղել են, կան ու կը լինեն կնոջ քմահաճոյքներին պատրաստակամ ծանայողները: Միշտ էլ անպակաս են լինելու կնոջ, կիսատ Համբոյրների, անկատար սէրերի, չկայացած վայելքների շուրջ սուտ ու պարճնկոտ պատմութիւններ յօրինողները, «երկնքից ընկած կնոջ» Համար կոտորները... միշտ էլ լինելու են քոբուրները: Ուրեմն, յաւերժական են քոբուրները եւ քոբուրութիւնը, ճիշտ այնպէս, ինչպէս Քաջ Նազարն ու Նազարականութիւնը: Դեռ անլին. բոլոր մարդկանց մէջ էլ քոբուրութիւն կայ, բոլորի մէջ էլ մի ինքնատիպ քոբուր է նստած:

Այնպէս որ, «Օշականը իր քոբուրները գրեց քոբուրների Համար» բանաձեւումը չպիտի ընկալել նեղ իմաստով: Նա

Հրաշալի գիտէր, որ ինքը գրել է մեծ լսարանի, ընթերցողների լայն շրջանի, գրել է ընդհանրապէս մարդկանց մասին՝ մարդկանց Համար: Սա է ճշմարտութիւնը:

Ժամանակաշրջանի ու կեանքի եւ Հերոսների Հոգեբանական դրսևորումների յարաբերման ատումով տիրապետող կեանքն է, կեանքի մշտաճողով ընթացքի տիրական ազդեցութիւնը: Օշականը գրում է ժամանակի մէջ, բայց ժամանակների Համար:

Կային, ի Հարկէ, մեր գրականութեան երախտաւորները, որոնք ժամանակին զգացին Օշականի բերած գրական նորութեան յեղաշրջող նշանակութիւնը:

Հրանդը, կարդալով «Համարը» վերնագրով պատմութեանը, անմիջապէս նկատել է «...որ վերջապէս պոլսեցիներուն ժանեսակները ու կոյսերը կը Հալածէր Հայ գրականութենէն, իրաւ կեանքը, մարդկային իրաւ տրաման բերելու անոնց տեղը»: Բութէն Սեւակը այնքան էր ոգևորուել, որ «Թիւրքմէնին աղջիկը» կարդացել եւ Հպարտութեամբ թարգմանել էր կնոջը, եւ «... կը յայտնէր երախտազիտութիւն իրենց մատուցած վայելքին Համար»:

Այս գնահատումների կողքին եղել են եւ դիտողութիւններ: Օրինակ, մարդիկ գտել են, որ «Շահապազ»ի Հարս Շողիկի ապրումները Հարազատ չեն Հայ գիւղացի կնոջը: Գտել են նաեւ, որ ընդհանրապէս վկայակոչուած բարքերը բաւարար չեն: Ինչպէս նկատում ենք, երկու դիտողութիւններն էլ ասանցրած են գրականութեան գնահատման ականդական չափանիւններից, որոնք այնքան էլ յարմար չեն Օշականի երկերը արժեւորելու տեսակէտից: Ինչ վերաբերում է առաջին Հարցադրմանը, պէտք է ասել, Հարս Շողիկի Հոգեբանական դրսևորումները, ապրումները, այս կամ այն դէպքի ու դիպուածի նկատմամբ ունեցած վերաբերմունքը, պահուածքը պայմանաւորուած են շարադրանքի ներքին տրամաբանութեամբ եւ դրամայի զարգացման մէջ խաղում են վճռորոշ դեր ու խորապէս Համոզիչ են:

Երկրորդ Հարցադրումը, ճիշտն ասած, զարմանք է յարուցում, որովհետեւ պատմութեանը բոլորն էլ բացւում են բարքերի, սովորութիւնների նկարագրութեամբ, եւ վկայակոչում են այնքանով, որքանով նպաստում են Հերոսների Հոգեբանութեան կազմաւորման ընթացքին եւ ընդգծուած նշանակութիւն են ստանում զարգացող դրամայի վրայ ունեցած ազդեցութեամբ: Կերպարների Հոգեբանական բացայայտումները առաջանում են Հերոսների բնազդների, գործելակերպի ու վարուեցողութեան արկածայնութեան, սիրոյ ու սեռի եւ այլ զգացումների Համադրութեամբ: Գրողը բարքահաւաք կամ ազգագրագէտ չէ: Նա օժտուած է, արուեստ կերտելու ատումով այնքան էական, չափի գերազոյն զգացողութեամբ: Մի փոքր շնորհ կամ խախտում այս պարագային, շեղում ու



խախտում է, ինչպէս Հերոսի, այնպէս էլ գործողութեան ծանրութեան կենտրոնը: Նշուած դիտողութիւնները աւելի շուտ եւ աւելի շատ խօսում են Օշականի արուեստի առաւելութիւնների մասին: Պատմութեանը սիւժէները զարգանում են ո՛չ միայն բարքերի ուղեկցութեամբ կամ Հարեանցի նկարագրութեամբ, այլեւ՝ ուղղակի դրանց տիրական ազդեցութեամբ: Ընթերցողը տեսնում եւ զգում է Հայրապենց աղբիւրը, օրօրուող ուռենիները, մի քիչ անդին՝ ժամը, գիւղի կենտրոնում ընկած կոնդը, դրանց մօտ խմբուած մարդկանց, անհաղորդ բակերի լուռ հաղորդակցութիւնը, գիւղից դուրս ձիթենու այգիները, թիթաստանները, չքնաղ թաւուտները, Հայ եւ թուրք գիւղերի սահմանագիծը, մթնոլորտում տարածուած թուրքի ահը, անտառ, լեռ ու արօտ տանող կաճանները: Եղել են նաեւ Հալաճանքի տարիներ. «1930ին մարդիկ վիպող Օշականը նախատելու Համար կը յիշէին «Սոնարհներ»ի Հեղինակը»: Անմիջապէս նշենք, որ այդ մարդկանց ելակէտը բնաւ էլ գրականութիւնը չի եղել: Նրանք գրականութիւնից Հեռու, գրականութեան բացարձակապէս հակադիր նկատառումներով էին առաջնորդում:

\*  
\* \*

Օշականի Հերոսները, ինչպէս նշել ենք մի քանի անգամ, կոնկրետ ժամանակի մէջ ապրած մարդիկ են, որոնց Հետ Հանդիպել, գրուցել է գրողը, ճանաչել նրանց:

Բայց նրա արուեստն ունի մի զարմանալի առանձնայատկութիւն, որի շնորհիւ պատմութեանը ճեղքում են այդ կոնկրետ ժամանակի տարածքը եւ ձեռք բերում «գաւերժական ժամանակի» մէջ մտնելու անձնագիր: Նրա Հերոսները իրենց Հոգեբանութեան ներքին շերտերում կրում են անցած ժամանակների նստուածքը: Դա ո՛չ միայն փոխանցուել է բարքերի, սովորութիւնների, կենցաղի, դրոյցների միջոցով, այլեւ ուղղակի մարդու ներսում գործող եւ ճակատագրով պայմանաւոր մարդկային գենի յիշողութիւնն է: Կեանքը ինքը Հերոսների բաղադրութիւնը սրբազրում է կոնկրետ ժամանակի երկրորդական, անցողիկ նշաններից, կարեւորը, առաջնայինը, որոշակին ու զտուածը ներծծւում է նախորդի մէջ, պայմանաւորում զարգացման ուղղութիւնը: Այստեղ առանձնայատուկ դեր է խաղում կեանքի նկատմամբ ունեցած Հաւատարմութեան օշականեան անխաբ սկզբունքայնութիւնը:

Այդ ե՛րբ չեն եղել խենթ-Սողմէնները, Եւաները, Ծաւ-պաղները եւ միւսները: Նրանք եկել են Հեռու-Հեռուներից եւ գնում են դէպի Հեռուները: Նրանք եղել են եւ կան ամէնուրեք:

Կարեւորը նրանց տարազաւորումն է արուեստի մէջ, որն էլ անում է Օշականը մեծ վարպետութեամբ: Ժամանակները բեկւում են նրանց մէջ եւ նրանք դառնում են բոլոր ժամա-

նակների Համար Հարազատ մարդիկ: Առաջին իսկ գրքով Օշականը մեր գրականության մէջ բացեց նոր ճանապարհ եւ գնալով գրաւեց նոր տարածքներ:

ԱՀա Օշականի Արեւմտահայ գրականության մէջ Հրատարակած «առաջին գրական էջի» եւ պատմութեան ատարածքների առաջին «նոնարհները» գրքի նշանակութիւնը եւ թողած սպաւորութիւնը, տասնամեակների հետուից:

\*  
\* \*

Ինչպէս Օշականի գեղարուեստական մտածողութեան ինքնատիպութիւնը, այնպէս էլ նրա մարդկային քնաւորութիւնը ճանաչելու եւ պատճառաբանելու իմաստով, առանձնաշատուկ նշանակութիւն ունի «նորհուրդներու մեհեան», «Մահուան ծաղիկներ» հեքիաթ-պատմութեան շարքը: Այստեղ հեքիաթ ու պատմութեան թաւերը օգտագործուած են թէպէտ, ոչ ճշգրիտ իմաստով: Իրանք աւելի շուտ Հակուած են դէպի ազատ բանաստեղծութիւն: Իրականում ներքին բովանդակութեան եւ գեղարուեստական կատարումի առումով, պատմութեան շարքերը կազմում են Հատուածայնութեամբ գրուած վիպական մի ամբողջութիւն: Ճիշտ այնպէս, ինչպէս առանձին բանաստեղծութիւններով, բանաստեղծութիւնների շարքերով ամբողջացող պոեմները, որոնց օրինակները քիչ չեն մեր գրականութեան մէջ: Օշականը պատրանք է ստեղծում, թէ ինքը յետագարձ Հայեացքով վերապատմում է մանկութեան օրերին լսած հեքիաթները: Թուում է նաեւ, թէ ինքը հեքիաթների միջից ստեղծում է իր հեքիաթները: Մինչդեռ իրականում նա ուղեգծում է իր հոգեխառնութեան կազմաւորման ընթացքը: «Վաղանդի հեքիաթ» վերնագիրը կրող երկի մէջ Օշականը յիշում է իրենց Հողաչէն մեծ սենեակը՝ սեւ գերաններից կախուած մրգերի բոլորակները, դրան մօտ դրուած կաղանդի սեղանը՝ եօթը լեցուն ամաններով: Թաղի իր տարեկիցների հետ՝ չրջապատած օջախի մօտ նստած կոյր Հորաքրոջը, լսում էին նրա պատմած աննման հեքիաթները, լցում խանդավառութեամբ: Այդ հեքիաթները պատում էին սիրոյ, մահուան, ոգիների, կնոջ առեղծուածի, գեղեցիկի ու ազգային ցաւի շուրջ: Նրանք հեքիաթների աշխարհից իրենց մէջ էին ներառում Հունտեր, որոնք ծլարձակում են նրանց մատաղ Հոգիներում, նպաստում քնաւորութեան կայացմանը, Հրդեհում երեւակայութիւնը, խորհրդաւորութեամբ իմաստաւորում արտաքին աշխարհը, պայմանաւորում աշխարհընկալման, աշխարհաճանաչման ակունքները, խղճի ու խառնուածքի բաղադրութեանը, խմորում բազմաբնոյթ հետաքրքրութիւններ եւ Հունաւորում դրանց ուղղութիւնը: Նրանք ապրում են հեքիաթների աշխարհում, փորձում այդ աշխարհի չափումներով Հաւասարակշռել իրենց ներաշխարհը, այդ աշխարհով

զրահաւորել իրենց միտքն ու զգացումը: Հեքիաթները շահախուժ են կենդանի կեանքի մասին ունեցած պարզ ընկալումների եւ բնաւորում մանուկ հոգիների, նոր-նոր ձեւաւորող մտքի ու մտածողութեան մէջ:

Ընթերցողը ո՛չ միայն Հեքիաթն է ունկնդրում, այլև զգում է ապրումի խորհուրդը, լսում՝ թողած տպաւորութիւնների, ներհոգեկան անդրադարձումների ձայնը:

Ստացած Հոգեբանական ազդակները Հարեանում եւ ապա խմորում են մասնաւոր զգացումների Հետ՝ տիրական, գուցէ եւ որոշիչ, ազդեցութիւն թողնելով Հոգեխառնութեան կազմաւորման ընթացքի վրայ: Ստեղծագործական ներշնչանքի պահին արտաքին ազդակներն ու ներհոգեկան ապրումները, կրքերը, մղումները, բան ասելու պահանջը, ըղձանքը միախառնում են իրար, շահախուժ, ետում այնպէս, որ չասելը դառնում է անկարելի, Հրամայական պահանջ, լիցքաթափուելու պարտադրանք: Գրողը բռնում է երկունքի ցուրտ, տազնապներով ու սարսուռներով: Այդ սարսուռների միջից մահուան Հարեանութեամբ են ծնում «Սորհուրդներու մեհանը», «Մահուան ծաղիկները»: Օշականն այս շարքերը գրել է ծանր պայմաններում: Նա դատապարտուած էր մահուան: Մի քանի անգամներ նա խուսափել էր ստոյգ մահերից: Մահը ուղղակի կրկնակոխ Հետեւում էր նրան: Պոլսում տեղափոխուած էր Թաքստոցից Թաքստոց, Հանդիպում արտառոց արկածների, բայց ամէն անգամ մի Հնարամտութեամբ փրկուած: Այս առումով նրա կեանքը մի ինքնատիպ վէպ է: Այդ տարիներին մահը նրա կեանքի ուղեկիցն էր<sup>(8)</sup>: Մահը իր մէջ իր կողքին, մահը՝ ամէնուր: Իր ժողովուրդը՝ մահուան ու արեան ծովի մէջ: Սիրոյ պատկերները ամէնուր Հիււում են, ցեղի բոլոր լոյսերն ու քաղցրութիւնները կլանող դժոխքի բացուող ուրուազծի Հարեանութեամբ: Այդ դաժան ցաւի, սեւ տառապանքի օշականեան զգացումը, ծանր մտորումները, բախտի այդ օրինակ խաղերի, ճակատագրի դաժան Հարուածների եւ սրանց կողքին սիրոյ մրցակցութիւն, էգերի խանդ, ապրելու, չձերբակալուելու միջոցների փնտրումը, գոյութեան պաշտպանութեան ծրար: Սիրոյ մերձեցումի աստուածային խորհուրդը ժահրով լցնող սրբապիղծ երրորդի անժամանակ յայտնուելու տազնապներ, անցեալի մէջ արմատներ գտնելու Հոգու տառապանք, եւ այս ամէնը մտքի Թանձրոյթով շահախուժած՝ ազգային ցաւի ու մեծ երազի Հետ: Ազգի որդիները, կանայք, բիւրաւոր մեռելները, նոյնիսկ անգին՝ մահուան Թաքաւորութեան մէջ, ցեղի մեծ երազի Հետ են: Առանց այդ երազի մահն ու սրբազան մեռելները անգամ անիմաստ են ու

8. — Տես «Համապատկեր Արեւմտահայ գրականութեան», հ. 10 էջ 118ի տողատակը

անխորհուրդ: Հեթաժները սիրոյ ու տառապանքի լոյսով ու ցաւով հունցուած քերթուածներ են:

Եւ ինչպէս «նոնարհները», այնպէս էլ այստեղ բարոյական ոչ մի դաս, խորհուրդներ տալու, բարոյականութիւնը քարոզի վերածելու ոչ մի նշան կամ ակնարկ, ոչ մի միտուածութիւն, այլ կենդանի կեանք՝ իր մեղքերով ու մեղկութեամբ, սպասումներով, սարսուռներով, կորսուելու ափսոսանքով, մաշկ սառնասրտորէն բնդունելու փիլիսոփայական անտարբերութեամբ, գոյութիւնը ապահովելու կըքերով, սպասումի ու սիրոյ լուսեղէն երազներով:

\*  
\* \*

Ինչպէս ժանրային, այնպէս էլ, նիւթի բացայայտման առանձնայատկութիւններով, վերոյիշեալ գործերին Հարազատ է «Երբ պատանի են» վիպակը:

Գիւղի, Հանգ ու լեռների ընդհանուր Համապատկերի մէջ բացում է սիրոյ մի շքնաղ պատմութիւն, ուր ամէն ինչ շնչում է բանաստեղծութեամբ: Գրողը բացում է, անկեղծութեամբ խօսում իր սէրերի, անցած-գնացած, բայց գեղեցիկ յուշ ու յիշատակ թողած Հանդիպումների մասին:

Եւ նա պատանեկան խանդավառութեամբ բացում է իր Հոգու ու սրտի դռները, տեսանելի դարձնում Հայրենի եզերքի գեղեցկութիւնները, գիւղի բարքերն ու սովորութիւնները, սիրահարների թախիծն ու տրտմութիւնը, զկայացած սէրերի տառապանքը, կորած երջանկութեան ցաւն ու մրմուռը, շուանի վրայ եւ կամ ջրհորում իրենց կեանքը վերջակէտած գեղեցկուհիների ողբերգութիւնը: Դէմոք բացում են դէպի լիճ տանող կածանները, որոնցմով քայլողները տխրութեամբ լսել են ու իրար պատմել լճի գեղեցկակուլ գաղտնիքները: Ուրիշ են լեռ տանող կածանները, որոնք ընդհատում են՝ աղբիւրի շրթին, փոսերի սրտին. «...Ուրկէ վար սէրն ու մեղքը, գաղտնիքն ու աւանդութիւնը գրկուած կը պառկին»: Գարուն է, զարթօնք: Գիւղացիները լեռ են բարձրանում՝ աղցան փետտելու: Կածանները ժպտում են, լցում ուրախութեամբ: Երիտասարդ աղջկազարդ ծաղիկներ, զարդարուած փնջեր, նրբենի Հասակ, ոլորաններից կամաց-կամաց Հուրքաւորուող երգը Հարսների: Աղջկայ ետեւից քայլող սիրահար: Դանդաղ քայլք, Հեքոտ երգեր, ետացող սրտերը Հարսների, պատառտուած սիրտը պատանու: Անտառը, խոտերը, ծառերը, աղբիւրները, շնկշնկացող Հովերը, երբեմն Հեռուից եկող «թելը երգին, որ շուքերուն մէջ ոսկի կը մանէ, երազ կը մանէ ու սիրտ կը վառէ...»: Իրար մէջ պղտորուած նայուածքներ, «այտերի Համին, արցունքի Համին» վարժուած սիրահար, շփոթ ու անփորձ, նշանուած աղջիկ. «ոտքերի տակ դերեզման, սարսափ երկնքից»:

Մաքրութեամբ, նրբութեամբ զուգակցուած խօսք ու լուսութիւն, Համբոյր ու շոյանք: Սիրով շնչող, սիրով լցուած բնութիւն: Սիրոյ Հանդէս է, զգացմունքների Հրավատութիւն: Վարդավառ է: Աղջկայ թաց մարմինը Հրդեհում է ու Հրդեհում: «Մոայլ մտմտանքների մէջ թաղուած Հայ գիւղը» զրբնգում է կեանքի աշխուժից, լցուել է տաք շնչառութեամբ, նշանաւորում է Հարսների դարձը: Բակերում օջախներ, եռացող կաթսաներ, կանայք, երեխաներ, «Հազարալեզու ծեր բամբասանքը», արդար Հպարտութեամբ անարատ աղջկայ դարձը դիմաւորող ոսկեճամուկ գօտին կապած մայր: Մերունիններ՝ յոգնած ոսկորներով: Դարձի Կիրակին նոր Հարսներով եւ նրանց մէջ «ոսկի աղջիկը՝ խղճուկ մեր թաղին»: Միկանում է զրոյի խօսքը, սրտի Հզօր պոռթկումի մէջ տկարանում է միտքը, Հուրքաւորում, Հրդեհում եւ զգացմունքները, որոնց կողքին բարձրանում է նաեւ դժբախտ ճակատագրերի տխուր մեղեդին: Գրողի խօսքը, բոլոր պարագաներում, ընդգծում է արտակարգ պատկերաւորութեամբ: Փոխաբերութիւններ, մակդիրներ, պատկեր-կերպարներ, պատկերաւոր արտայայտութիւններ, պատկեր՝ պատկերի կողքին, անձանձիր ու Համակող:

Սշականք բերում է պարզ, տաք, բնութեան ու մարդկային զգացումների զունախաղերով Հարուստ մի աշխարհ՝ լցուած պատանեկան Հոգու Հրճուանքով ու անախ տխրութեամբ:

Եւ պատանեկան Հոգու Հրդեհներով շտապունած այդ աշխարհը իր կածաններով, լճով, լեռներով, աղբիւրներով, ու անձրեւներով, սէրերով ու դառնութիւններով, անցողիկ ուրախութիւններով ու մնայուն տխրութիւններով դառնում եւ ճանաչելի ու Հարազատ:

Նրա ստեղծագործութիւնների մասին խօսելիս, ինչպէս միշտ, այս դէպքում էլ թւում է նայում եւ կեանքի կենդանի Համապատկերին, ուր տեսանելի է եւ անտեսանելին, ակնյայտը եւ թաքունը, կեանքի քաղցրութիւնն ու աղիութիւնը, ժպիտն ու լացը, ծիծաղն ու խռովքը, լուրջն ու անլուրջը, ողբերգականն ու կատակերգականը - մի ամբողջ աշխարհ՝ բազմազոյն ու բազմազան, բազմադէմ ու բազմակերպարանք՝ սիրոյ սպասումներով ու տազնապներով, խոհերով ու խորհուրդներով, կորուստներով ու յայտնութիւններով, անէծքներով ու օրհնութիւններով:

Հասուն տարիքում, յետադարձ Հայեացքով մտնել պատանութեան սեռի խռովքով ծփացող ու տրտմութեամբ լեցուն տարիքի մէջ, ապրել զգացումների այդ անմիջական Հրավատութիւնը, առաջին սիրոյ անկրկնելի, անգտանելի բերկրանքը, զգալ այդ քաղցրութիւնը, այդքան վարար, Հզօր ու յորդացող յոյզերով Հիւսել պատանութեան տարիքի անխառն սիրոյ երգը, փրկել այն յուշերի ծխածածկոյթից, այդքան պարզ ու յատակ, այդքան անկեղծ ու բնական, արդէն ինքնին չքեղաչուք

բանաստեղծութիւն է, մտքի ճախրանք ու զգացմունքների բիրենդացում:

Գրողը պատանու արտի մի զարկի, Հոգու խորքերից եկող մի ձայնի, աղջկայ այտերին յայտնուած շիկնանքի, դէմքին ծաղկող յուզմունքի մէջ զգում է ջաշել մարդկանց արտերի տրոփիւնը, Հոգիների շտապումը եւ ջերմութիւնը, յոյզերի գոյներն ու խաղերը, Հրճուանքն ու թախիծը: Օշականը մի Համբոյրի մէջ բացում է պատանեկան սիրոյ յաւերժական խորհուրդը ու այդ ամէնը տալազում բանաստեղծութիւն մաքրագործուած պատկերներում:

Եւ միթէ սա չէ արուեստի Հրաշքը: «Երբ պատանի են» վիպակում Օշականին ճանաչում ենք մի այլ կողմից: Այստեղ մենք տեսնում ենք կենսասէր ու կենսախինդ, անմիջական, անհունօրէն պայծառ ու քնքուշ, ցեղի ցաւերով տառապող, բայց եւ կեանքին անսահմանօրէն սիրահարուած մեծ գրողին:

\*  
\* \*

«Ոննարհները»ի առիթով Օշականը մտորում է, որ իր պատմուածքները չեն յաւակնում սեւեռել Հայ գիւղը ամբողջութեամբ եւ ոչ էլ ձգտում են տալ նրա ամբողջական Հոգեբանութիւնը, բայց «Այնպէս՝ ինչպէս կան այդ մարդերը այդ վիպակներում մէջ, Հեռու չեն սակայն Հայ գիւղին ընդհանուր բարեխառնութենէն»:

Ճշմարիտն ասած, մեր շարադրանքի ընթացքում յաճախ ենք դայթակողութիւն ունեցել Օշականի այս կամ այն երկը գուգահեռել, Համադրել Բակունցի, Զօրեանի այս կամ այն երկի Հետ, Հերոսների ապրած դրաման դիտարկել ինչ-ինչ գուգահեռների վրայ, նրանց Հոգեխառնութեան մէջ տեսնելով Համանման եւ ընդհանուր երեւոյթներ, մտածումի եւ վարուելակերպի ընդհանուր շփումներ: Բայց միշտ էլ խուսափել ենք յօդուածի ծաւալի մեծացման պատճառով: Այդ կարգի խնդիրներ, անշուշտ, կան եւ դրանք առանձին ուսումնասիրութեան նիւթ են:

Բայց որ Օշական ընթերցողը ո՛չ միայն վերապրում է իր մանկութիւնն ու պատանեկութիւնը, անցեալ դարձած իր կեանքի էջերը, այլեւ մտովին տեսնում է իր գիւղը, գիւղի մարդկանց, ակամայից արուած Համեմատութիւններն անգամ Հաստատում են շատ ընդհանրութիւններ: Դա ակնյայտ է: Այդ այդպէս էլ պէտք է լինի, այլ կերպ անհնարին է, որովհետեւ մեծերը միաւոր չեն, մեծերը մաս չեն, այլ ամբողջ են: Ամբողջ է Օշականը, եւ ամբողջ է նրա ստեղծագործութիւնը, վիպական աշխարհը:

Պէյրութ, 1999 Մայիս ԿԻՄ ԱՂԱԲԵԿԵԱՆ

Թ. ԹՈՐԱՆԵԱՆ

ՎԵՐԱՊՐՈՂ ԱՐՉԱԿԱԳԻՐԸ՝  
ՄՄԲԱՏ ՓԱՆՈՍԵԱՆ



Բ.- «ՈՐ ՄՐՐԿԱԻ ԷԻՆ ԶԱՏՈՒՎՄ» վէպ, «Անի» ամսագրի  
Հրատարակութիւն, 1958 Պէյրութ:

Ահա ծաւալուն վէպ մը, ուր իր ուժը կը փորձէ Փանոսեան, պարագրերու համար մեր խորունկ ցաւը, որ ծնաւ ոչ թէ մոխիրներէն, այլ՝ Եղեռնի կրակներէն, կրակուած աւազներու բնակիչ դարձնելով մեր բազմահազար որբերը, որոնցմէ հազարներ եթէ Հնձուեցան համաճարակներէ, ոմանք եթէ արաբացան, քրտացան, թրքացան, ապա ոմանք ալ մղեցին իրենց հայ մնալու կոխը եւ... յաջողեցան:

Մուրատ կը կոչուի այս վէպին հերոսը: Տիգրանակերտցի առեւտրականի դուստի, որ հօրը խորհուրդով մեկնած էր ուսանելու, որ «մարդ դառնայ»: Վերադարձի ճամբուն վրայ կը լսէ մեծ Աղէտին մասին ու կը դառնայ աստանդական:

Եփրատի ջուրերուն շնորհիւ կը փրկուի ստոյգ մահէ... Ահա վերջապէս վէպ մը, որ շուտով եւ այնքան անտեղի-

օրէն մոռացութեան տրուեցաւ թէեւ, բայց ուր Հայուն մասին կը խօսին ոչ թէ Հայերը, այլ՝ արարները...: Շէյխ Ռալաֆն է խօսողը, Ռալէտ աղան, Հասանը...

Արարները կը տեսնեն մարդկային խլեակները, որոնք թուրք ասիկներու կողմէ մարակուած, յոգնած, գրեթէ վերջացած կը Հասնին արարական անապատ...

Մուրատ կ'իյնայ Շէյխ Ռալաֆին մօտ: Սկիզբը ձիապան է, ապա՝ Հովիւ ու... ի վերջոյ, վերակացու, աջ բազուկը Շէյխ Ռալաֆին:

Մուրատ կը յիշէ երկրի սովորութիւնները, ընկոյզ խաղալու պատմութիւնը...: Տարագիր, ցնցոտիներ Հազած Հայ աղջիկներ ապաստան կը գտնեն Շէյխ Ռալաֆի ցեղախումբին մօտ, եւ իբրեւ երախտագիտութիւն՝ Հայերէն կ'երգեն ցեղապետին ներկայութեան:

Մուրատ կը սիրահարի Հասանի կնոջ... ու թափ կ'առնէ վէպը, տեղ-տեղ չկարենալով Համոզել ընթերցողը, այս յատուկ պարագային մէջ:

Ուժեղ են Հեղինակին գծած պատկերները, թէեւ Փանոսեան պատկերամուկ մը չէ: Հետաքրքրական են յատկապէս արեւի խաղերուն նուիրուած պատկերները, որոնք մէկ կողմէ եթէ կը յիշեցնեն մեր ժողովուրդին անցեալի արեւապաշտութիւնը, միւս կողմէ՝ յիշել կու տան Արմէն Դարեանի արեւին տուած պատկերները, որոնք օր մը կրնան յատուկ ուսումնասիրութեան մը նիւթը կազմել - այնքան նկարագրեղ են եւ ուսանելի:

Պօսինք օրինակներով, որպէսզի Համեմատելու իրաւունք ունենանք.-

Սմբատ Փանոսեանի «Որ մըրկաւ էին զատուած» վէպէն երեք տարի ետք՝ 1966ին լոյս տեսաւ Արմէն Դարեանի «Մեր Հացը» անուն պատմուածքներու Հատորը:

Ահա այդ Հատորին «Չաւակի մը Համար» պատմուածքէն արեւի պատկերներ.

«Արեւին առաջին շողը նախ կ'իյնայ դիմացի պատին, կը կորսնցնէ իր Հաւասարակշռութիւնը եւ կը սահի մինչեւ մայթը: Հոն՝ կը դանդաղի, կը սպասէ, որ քիչ մը Հանդարտի երթեւեկը, յետոյ՝ կը կիսէ փողոցը երկուքի, կը նետէ ձեռքը ցուցափեղկին ու կը մագլցի, կը շոյէ գիրերը Նիկողոսի անուանատախտակին եւ կ'երկարէ լեզուն ներս.

- «Բարի լոյս, դրացի»:  
Ցետոյ.

«Փողոցին արեւը կը փաթթուի տղեկի մը սրունքին ու կրակ կու տայ անոր կարմիր գոգնոցին. կրակը կը մօտենայ խանութին: Կը բռնկի բան մըն ալ Նիկողոսին մէջ»:

Այսքան:  
Հիմա տանք արեւանկարներ Սմբատ Փանոսեանէն.  
«Մինչդեռ արեւը կծու բանի մը պէս կ'այրէր իր կրնակը...»



«Արշալոյսէն, արեւին սկաւառակին մէջէն կարծես ծնունդ առած, կը շարժէր սպիտակ լաթ մը, հրացանի մը փողին»:

«Մուրատը զարմացած, բայց սիրտը խաղաղեցնելու առիթ մը փնտռելով, ձիուն սանձը քաշեց ու նայեցաւ յետմիջօրէի արեւին սփռած սպիտակ լոյսին, որ կը ճառագայթէր մարդոց մանգաղներուն վրայ»:

*Պատկեր մըն ալ մէջքերենք «Աէրը որ գին չունէր» վիպակէն.*

«Էննազագաթէն փախչող արեւաշողը դպաս վայրի տանձնիի բունին, ապա փաթթուեցաւ բարձր ճիւղերուն՝ անդունդ ինչպէն առաջ: Կաթնալոյսը քիչ-քիչ սարալանջէն վար դարձաւ լուսափունջ մը՝ կածանին վրայ ծած Հսկայ ժայռակոյտի գլխուն: Ապառաժին տակ, կիսամութին մէջ, մէկը շարժեցաւ: Ձոյգ մը լեռնային մոյկեր ինկան մէկէն լոյսին տակ: Հրացանի կոթի նմանող կեռ գաւազանի մը ծայրը խելօք չունի պէս կը Հանգչէր մոյկերուն քով» (տպուած 1968 թուին):

*Արդարեւ, Գարեանի ու Փանոսեանի արեւապատկերներով կարելի է Հատոր մը կազմել: Պիտի գտնուի՞ այդպիսի մէկը...*

*Մուրատին արար կնոջմէն՝ Սալմէն ծնած որդին՝ Աքսորը, Հայաստան կը մեկնի: Մենք այս տղուն կը Հանդիպինք Փանոսեանի «Ձանձն իմ փառաւորեալ» վէպին մէջ, որ լոյս տեսաւ 1899ին: Առաջին վէպէն ուրիշ Հերոսներ ալ կան վերջին այս գործին մէջ, որոնցմէ մէկը՝ դարձեալ Մուրատն է եւ ուրիշ մը՝ քոյր Հէլէնը:*

«Որ մըրկաւ էին զատուած» վէպը Հետաքրքրական ու Հաւաստի տեղեկութիւններ կու տայ արար պէտէփներու կեանքէն, սովորութիւններէն, մարդասիրութենէն, կեանքը փիլիսոփայօրէն ընկալելու յատկութենէն:

Բայց կայ աճապարանքին կնիքը: Ունէր ժամանակ վերանայելու, քանի որ տեղ-տեղ վէպը անհամոզիչ է: Ափսոս, որ չէ վերանայուած:

Սակայն, այս գործը կը մնայ առաջինը, որ կը խօսի մեզ ընդունող արար ժողովուրդին մասին, առաջիններէն մեր որբերուն յետ-եղեռնեան կեանքը նկարագրող:

Սմբատ Փանոսեանը չպատկանեցաւ քաղաքական որեւէ կուսակցութեան, բայց ահա Հասուն տարիքին գրեց երգիծական վիպակ մը, ուր կրակ ու բոց ժայթքեց Հայ քաղաքական կուսակցութեան մը վրայ:

Այդ երգիծավէպը, ոչ այդքան ծաւալուն, անակնկալ մըն էր իրմէ գայով:

Եթէ յիսուն տարեկանին գրեց նման երգիծավէպ, ապա արդէն աւելի Հասուն տարիքի մը՝ ութսունի դուռներուն, գրեց

պահարակող վէպ մը՝ այս անգամ քաղաքական այլ կուսակցութեան մը ղեկավարներուն դէմ:

Բայց եկէք չամբաստանենք զրոգը: Ջրսնք երկու քաղաքական կուսակցութիւններու դէմ գրեց: Այլ ըսենք, որ Սմբատ Փանոսեան իր յիշեալ վէպերուն մէջ անդրադարձաւ Հայ քաղաքական երկու կուսակցութիւններու գործունէութեան, նկարագրեց դերերը կուսակցապետերու, տուաւ անոնց կենդանագիրը այնպէս՝ ինչպէս ինք տեսած, զգացած ու վերլուծած էր: Այդքան:

Գ.- «ՀԱՅԿԱԿԱՆ ՎԷՐՔ» կոչուեցաւ այդ վէպերէն առաջինը, որ իբրեւ թերթոն Հրատարակուեցաւ Պէյրութի Հայ Համայնավար օրգան «Յառաջ» շաբաթաթերթին մէջ, 1968 թուականին: Յախուռն էր վէպը եւ պէտք է ըսել յախուռն ու բովանդակալից էր «Յառաջ» շաբաթաթերթը:

Եւ ահա «Յառաջ»էն ծնաւ Փանոսեանի երգիծավէպը՝ «Հայկական վէրք»ը:

Բոլոր անոնք, որոնք Հետեւած էին Սմբատ Փանոսեանի գրականութեան, կանուխէն զգացած էին, որ այս Հեղինակը կը պատկանէր մեր գրողներու սակաւաթիւ այն Հոյլին, ուր Հիւմորի զարգացող զգացում մը կար:

Բայց ահա «Հայկական վէրք»ը Հիւմորէն աւելին կու տար: Երբ Հիւմոր կ'ըսենք, անպայման կը յիշենք Արամ Հայկազի պատմութիւնները, Սմբատ Փանոսեանի Հէնքը նոյնն էր: Նախազարդերը տարրեր էին:

Ահա կ'արտագրենք որոշ միտքեր, որ դուք դատէք. «Երեսունեօթը տարի առաջ, Առաքեալը կ'արձանագրէր տուֆ քարին վրայ, երկաթագիր՝ թէ «Դաշոն անելիք չունի այլեւս:

«Մտիկ չըրին իրենց Առաքեալին՝ դեղին մարդիկ դադրեցան զինք յարգելէ, արհամարհանքով երեսին տուին.

«- Դաշոն քաջ, առասպելական Հերոս էր. փափախը գլխին, դաշոյնը գօտիին մէջ, Հեծած սալտակ իր Հրեղէն ձին՝ արշաւեց լեռներն ի վեր, եւ խլեց յաղթանակներ բազում՝ Գորշ Գալլին գորշ վաշտերուն դէմ: Անիկա եղաւ մեծ դաշնակիցներուն փոքր դաշնակիցը...»:

Այս վիպակին յոյս ընծայումը ոչինչ աւելցուց Սմբատ Փանոսեանի գրական անունին վրայ, քանի որ ինք Հրատարակագիր չէր, այլ՝ զեղարուեստական արձակի Հասուն կրողը:

Դ.- «ՄԷՐԸ ՈՐ ԳԻՆ ԶՈՒՆԷՐ» - Պատմութիւններ եւ վիպակներ, 1968, Պէյրութ, տպարան «Մեւան»:

Մասն առաջին - Անոնք, որ արտայայտուիլ չգիտցան: 433 էջերու վրայ տարածուող պատկանելի գիրք մը թէ՛ ծաւալով, թէ՛ մշակուած նիւթերու բովանդակութեամբ ու մատուցումի եղանակով:

Արդարեւ, Փանոսեանը այս հրատարակութեամբ ո՛չ միայն միանգամ ընդմիջտ Հաստատեց իր գրազէտ ըլլալու Հանգամանքը, այլեւ ցոյց տուաւ իր արձակագիրի վարպետութիւնը, նիւթերու կողմէ ոչ թէ գրաւուելու, այլ նիւթերը գրաւելու ճաշակը:

«Ճակատին գիրը»: Առաջին պատմուածքն է դիրքին: Եթէ յատկապէս նկատի չունենանք Վախտանգ Անանեանը, մեր գրականութեան մէջ քիչ անգամ լոյսին բերուած նիւթ մըն է այս, ուր կը վերբերուի կենդանիներու ինքնազգացողութիւնը: Արտ Հերկոզ, բարիք մատուցող արջաուր մորթելու կը տանէ- ին... անոր Համակերպումը... կարծէք Փանոսեանը կու տայ ոչ թէ կենդանիի մը, այլ՝ մարդու մը զգացումները:

«Մորթը»: Այս եւս կենդանական աշխարհէն է: Ահա խրրուիլակ դարձած հորթուկը դրուած մայր կովուն դիմաց, որ կաթ կու տայ, որ գիւղացին մածուն պատրաստէ, պանիր պատրաստէ: Կովը բաժին չունի այդ կաթէն, մածունէն, պանիրէն: Միայն կու տայ՝ մտածելով հորթուկին...

Միտքս կ'երթայ Հայոց Արշակ Թագաւորին, իշխան Մամիկոնեանին, Դրաստամատին:

Միտքս կ'երթայ Արարատին, Երեւանի դիմաց:

«Ուտային քով»: Ճանճի եւ սարդի պատմութիւն, ծարաւ մնացած ձիւ պատմութիւն: Հեղինակը իր նիւթին մէջ է միշտ, ո՛չ միայն մարդկային, այլեւ՝ կենդանական աշխարհի հոգիները պեղողի եւ խորացնողի Հանգամանքով:

Գէորգ էմիլը պիտի ըսէր.- «Վա՛յ ապակուն»: Այսինքն՝ վայ դիւրաբեկ եղողին: Հոս աւելցնենք՝ վա՛յ ոստայնին մէջ ինկողին, որովհետեւ քաղաքական աշխարհի սարդերը, որոնք ոստայն կը Հիւսեն, ո՛չ միայն դարաւոր փորձ ունին, այլեւ թունաւոր են:

Տարածուած միտք է, որ գրողները քաղաքականութենէ չեն Հասկնար: Բայց գրողը, մանաւանդ արուեստագէտ գրողը չ'ազդողակեր իր քաղաքական տեսութիւնները. Հասկցնել կու տայ: Պարսպ տեղը չէ, որ ըսուած է. ով ականջ ունի լսելոյ - լուիցէ:

«Վացը» լրումն է չարքին: Եունի մը լացն է՝ վաղածամ մահացած իր տիրուհին կորստեան առիթով: Ենիկը Հետեւած է թաղմանական թափօրին եւ գիտէ տիրուհին գերեզմանը: Ամէն օր գերեզման կ'երթայ եւ կ'ողբայ անոր մահը: Սը մըն ալ ճամբան, ինքնաշարժի մը անիւներուն տակ մնալով՝ ծանրօրէն կը վիրաւորուի, բայց քարչ տալով իր արիւնջուայ մարմինը մինչեւ իր տիրուհին հողակոյտը, հոն կը փչէ վերջին շունչը...

Այցելու մը, սատկած շունը տեսնելով.

«Անցորդը քայնց շունին դին ու շարտեց գերեզմանատան դուռէն Հեռու, մըթնըթալով.- Կեղտոտ անասուն, տեղ չէ գտած սատկելու...»:

Ինչպիսի՞ եզրակացութիւն:

Կը յիշենք կարդացած ըլլալ վաղամեռ արձակագիր մեր բարեկամին՝ Յակոբ Սահակեանի մէկ պատմուածքը, ուր ան խօսած էր անօթութենէ մեռած պաասանի մը մասին: Երբ տակաւին Հոգին շաւնդած տղեկը բժիշկին կը հասցնեն, այս վերջինը քննելէ ետք ծանր, մահաշունչ հիւանդը, կ'ըսէ. - Ոչինչ, շատ կերած է եւ ստամոքսի անհանգստութիւն ունի»:

Որպիսի ախտաճանաչում:  
«Ճամբորդ կայ» պատմուածքը այս բաժինին հինգերորդ եւ վերջին գրութիւնն է, ուր կը խօսուի ճարպիկ շարժավարի մը շահատակութիւններուն մասին այնքան կենդանի եւ համոզիչ գոյներով, որ կարծէք մարդը ձեր դիմացն է:

Բոլոր պատմուածքները գրուած են Լաթաքիոյ մէջ՝ 1946-1947 տարիներուն:

Այս քաղաքին մէջ գրական մթնոլորտ. պիտի նմանէր ձիւնապատ լեռ մը փնտռել խաղաղական ովկիանոսի խորութիւններուն մէջ:

Բայց մշակուած գրականութիւն, խնդրեմ, ահաւասիկ Սմբատ Փանոսեանի գրականութիւնը:

Այս Հատորին երկրորդ մասը իրրեւ ենթախորագիր ունի. - «Նկարներ, որ չըջանակ չունէին...» խօսուն ձեւակերպումը:

Եւ, «Աղջնակը շուքին մէջ» գրութիւնը առաջին պատմուածքն է այս բաժինին:

Որք մնացած Հագի տասնամեայ աղջնակի մը պատմութիւնն է այս, որ պաշտօնեայի մը սպասուհին է...

- Զաւակներու Հայր, գուն...

Ողջ ըլլար, ականջը խօսէր Գրիգոր Զօհրային, որ լաւ կը հասկնար սպասուհիներու վիճակը:

«Կնդակախաղը» յաջորդ եւ յաջողած պատմուածքն է, ուր կը տրուի պատմութիւնը կոյր հօր մը, որ իր զաւակները գնդակահարողի դաշտ կը տանի:

Պատմուածքին մէջ կոյր մը բանալիներ կը վաճառէ: Կոյր աղջնակ մը տանիքին ծաղիկները կը ջրէ:

Նիւթերու այլազանութիւն: Հեղինակը, այս անգամ կը պեղէ Հոգեկան աշխարհը կոյրերուն եւ անկէ լոյս կը ցայտեցնէ:

Մեզի Համար լոյսին կու գայ Հոգեբան գրողը, որ Սմբատ Փանոսեանն է:

Բայց զարմանալիորէն գիտակցական իր բովանդակ կեանքը արեւմտահայոց մէջ սնուցած գրագէտը յամախ կը գործածէ արեւելահայ դարձուածքներ:

Կը սիրէ բազմիցս ըսել չորացած, փոխանակ ըսելու չորցած:

Կը սիրէ ըսել կ'նկնէ, փոխանակ կ'նկնէ ըսելու:

Տակաւին կ'ըսէ վախեցած. վախցածի փոխարէն, Հագ-նրած, Հագուածի փոխարէն:

Եւ նման իսկ մը բառեր ցանցնուած քիչ մը ամէն տեղ՝ իր

**վճիտ Հայերէնին մէջ:**

Սմբատ Փանոսեան կը սիրէ պեղել մարդկային Հողին եւ յաջող ելք մը գտնելու համար իր պրպտումներուն կը դիմէ մարդկային կեանքի բոլոր խաւերուն, կենդանական աշխարհին՝ արջառ, ձի, կոյրեր, վարորդ, գերեզմանափոր...

Ահա «Պատուհաս» պատմուածքը: Գերեզմանափորի մը պատմութիւնն է, որուն քսակը կ'իյնայ գերեզմանի փոսին մէջ աշխատանքի պահուն: Հոն մարդուն օրապահիկը կար: Մեծ դժուարութեամբ լուրը կու տայ Հողակոյտին տիրոջը, որ չի հաւատար եւ կը վտարէ գութ Հայցող գերեզմանափորը եւ ի վերջոյ կը համաձայնի, որ քացուի Հողակոյտը, եթէ բանուորին ըսածը սուտ չէ:

Մինչ այդ, մեծահարուստը ինք կը մեռնի եւ պէտք կ'ըլլայ զայն թաղել նոյն փոսին մէջ:

Դրամապանակը կը գտնուի...

Ուշ գտնուած արդարութիւն...

Եւ որքան կորսուած արդարութիւններ կան, որոնք երբե-  
ւիցէ չգտնուին պիտի...

Պատկեր մը տանք այս պատմուածքէն եւ յետոյ պատկեր մը մելգոնեանցի ուրիշ գրողէ մը.- «Աչունը դպիւր էր ամէն բանի: Ու երկինքը յետմիջօրէի վրայ կը ծուր անձրեւաբեր իր ամպերու բնուովը: Պղտոր լոյս մը նստեր էր Հողին՝ մարդոց քիթին, քիչ մը վերէն իջնելով՝ բնութեան տալու համար, յոգնած մոայլութեան մը տպաւորութիւնը: Արեւը, Հազիւ աչք մը նետած՝ կը կծկուէր ամպերու ետին, երեկոն արագացնելով:

«Մինչ ես, թմրած ոտքերով, սակայն փութկոտ՝ անձրեւէն չընկուելու մտահոգութեամբ կ'աճապարէի դէպի տուն»:

Այսպէս գրած է Լաթաքիա ապրող մելգոնեանցի գրողը:

Բայց տեսէք թէ ինչպէս կը գրէ Շիքակօ ապրող մելգոնեանցին՝ Հայկ Ալլահաբեկեանը.

«Շիքակօն՝ Հարազատօրէն ամերիկեան մեծագոյն քաղաքներէն մէկն է: Նիւ Եորքը՝ իր տնտեսական վարկը եւ գերարուեստական հմայքը անուցանող Հրեային պէս, անարմատ եւ անբնական վիշապ մըն է: Իր աշխարհահայեացքով՝ աւելի կը պատշաճի երկրագունդին, քան թէ Ամերիկային: Սան Ֆրանսիսկոն՝ ծերացած եւ թոյրովին սպառած, քայց եւ այնպէս իր վայելչութիւնը պահած կին մըն է: Քաղաքէ աւելի խաղալիքի կը նմանի: Տիթրոյթ՝ եթէ ինքնաշարժ շարտադրէր՝ արդեօք ինչպէ՞ս իր գոյութիւնը պիտի պահէր: Պոսթըն՝ իր մաքրակրօնական գոհացումներէն պատրանաթափ, փիլոսոփայութիւն արքեպիսկոպոսի մը երեւոյթը ունի: Տալլաս՝ զինք ստեղծող նախամիլիոնատէրներուն պէս թեթեւսովի ու ծանծաղ քաղաք մըն է - թեքսասի Հարուստները որքան կը յիշեցնեն քարիւղի արաբ իշխանները: Ուաշինկթըն՝ տգեղ կիներու պէս, եթէ իր ուժին չպարը հրաշքով վերնայ, կասկածելի է, որ կարենայ արուէ մը տենչացուիլ, նոյնիսկ վճարելով: Բո-

լոր ծրագրուած քաղաքներու նման ձանձրանալի եւ ճնշող մթնոլորտ մը ունի:

«Բայց Շիքակոն կը մնայ եւ պիտի մնայ Ամերիկայի բազմազան եւ այլազան բնազդը, անոր ինքնատիպ մշակութային կառոյցը Հարազատօրէն արտացոլացնող մեծագոյն քաղաքը: Թերեւս վերջին եւ միակ մեծագոյն քաղաքը»:

*Բաղդատութիւնը ձեզի կը թողունք, առանց որ յենիք ֆրանսերէն ասացուածքի մը.- «Սիրոյ մէջ բաղդատելը չսիրել կը նշանակէ»:*

*Յաջող պատմուածքը, որ ունի «նեղ օրերու բարեկամ» վերտառութիւնը, երկրագունդի բոլոր անկիւններուն վրայ ամէն օր կրկնուող երեսոյթ մըն է, երբ ունեւորը օգնութեան փութալ կը մերժէ շատ մօտիկ մարդու մը, իսկ սովորական բարեւասացութիւն ունեցող մը պատրաստակամութիւն ցոյց կու տայ օժանդակելու իր գիմացիին:*

*«Թովմաս Ծերունի» այն տիպական պատմուածքներէն է, որ արարը օգնութեան կը Հասնի Հայուն: Հոս կը ծեծուի նաեւ այն Հարցը, ուր Հայը դուրս կու գայ վախկոտ ու ճնշուած թուրքին զուլումին պատճառով - լրտեսութեան յանցանքով բռնուած Հայեր կան: Իսկ արարը դրացին կը պատմէ անզլիացի գորավարի մը մասին, երբ իրմէ կը խնդրուի օգնել Հայերուն.- «Զինուորներս թէյ կը խմեն, չեմ կրնար ձեզ պաշտպանել»:*

*Ճնշուած արարն է, որ օգնութեան կը Հասնի ճնշուած Հայուն:*

*«Մասն երրորդ - Փոքր մեղքեր, որ ծնած էին Հոգերէ...»*

*Առաջին պատմուածք՝ «Պարզ պատմութիւն»:* Աւելի ճիշդ կ'ըլլար ըսել՝ պարզունակ: Կարծէք Փանոսեանը չէ այս պատմուածքը գրողը, ուր կան յառաջդիմականի, աստրիի, եաՀուտի, խարբերայ ոսկերիչի, կաթողիկոսի, կին բարեկամի Հարցեր:

*Կիրակիի պազար մը, ուրկէ բացակայ է արուեստը: Կեանքին մէջ պաշտօնեայ մնալով տեղ չհասնողի պատմութիւն է «Մ ու ո բախտ» վերնագիրին տակ տրուածը, երբ.*

*«Իսկ յետո՞ւ, ո՞ր գոյ աւազակը, որ կը ճանչնաս, մնաց իր տեղը. բոլորը վեր բարձրացան եւ լեռ կը կլլեն, քու չուքիդ տակ մնացողներն իսկ քեզ չուքի մէջ թողուցին ու ելան վեր: Իսկ դուն մնացիր ժամանակին թզուկը, որպէսզի բոլոր գողերն ու չուքերը վրադ խնդացնես...»:*

*Արեւելքի կիներուն դարաւոր գանդատն է: Գողութեան անվարժ մարդը Համեստ ալ պիտի ասարի: Ձի կրնար գողնալ: Վերջ: Տուն մնայ աղջիկներ, երբեմն, կէս-կատակ կ'աղաղակեն.- Ասկէ ետք ամէն միջոցի պիտի դիմեմ, որ ամուսին մը գտնեմ: Ձեմ կրնար: Գտնողը պոռալու պէտք չունի: Կը գտնէ: Գողցողն ալ կը գողնայ»:*

Լաւ գրուած պատմուածք մըն է «Մուռ բախտ»ը, բայց բախտին հաւատալն ալ ծուռ երեւոյթ է:

«Վողրոպտուած գրագէտը»: Բայց մեր բոլոր գրագէտները այս կամ այն ձեւով կողոպտուած են: Անշուշտ թէ նկարագրուածին պէս, ահաւոր դժուարութիւններու կը հանդիպիս, երբ կ'ուզես թերթ հրատարակել: Հապա գիրք հրատարակել...: Եթէ ելլենք հայ գրողներու տուները խուզարկենք, հոն չե՞նք գտներ քառասուն տարի առաջ հրատարակուած գիրքերու կապոցներ...

Ընթերցողներու մեծագոյն տոկոսը քար մը քաշած են իրենց գլխուն ու յաւիտենական քուն մտած գերեզմաններու մէջ: Եթէ կրնաս, պարասրահ հրաւիրէ ողջերը. տես թէ առանց տոմս իսկ ունենալու ինչպէս կը խուժեն Փրանսայէն բերուած ամենամոտայիկ հագուստներով պճնազարդուած...

«Մասն չորրորդ - Արշալոյսի շողեր, որ մնացին հորիզոնին ետեւ...»

Վերապրումի խոհեր կը փնջէ «Մնաք բարով...» առաջին պատմուածքը այս բաժինին: Երբ մարդ տարիք կոչուող աստիճաններէն վեր բարձրանայ ու գիտակցի, թէ այս բարձրանալը զինք ոչ թէ երկինք կը տանի, այլ կը մտեցնէ Հողին. այլ խօսքով՝ այս բարձրանալը իջնել կը նշանակէ, կ'երեւի թէ կը նայի իր անցած ճամբուն եւ կը յանձնուի յուշերու ամպածրարին, ուր ճառագայթներ ալ կան անպայման:

Փանոսեան ներկայ եղած է իր ապրած քաղաքին մանկապարտէզի մէկ Հանդիսութեան եւ վերապրած իր դպրոցականի կեանքը:

Այս սերունդը մանկութիւն չունեցաւ: Բայց նոյնիսկ այդ մանկութիւնը Հեռուներէն մեզ կը կանչէ՝ մանկութիւն ըլլալու իր Հանգամանքով:

Եիրազր գրած է, չէ՞.- Մէկից մի Հաց, մէկից մի սոխ գողանում, գնում էինք Արփաչայում լողանում - անդիսութեամբ բախտաւոր:

Այդպէս է:  
«Ո՛րն էր գիրը», պատմուածք Մելգոնեանի կեանքէն:  
Վեց աղջիկ, քսան մանչ. Մելգոնեանի առաջին չրջանաւարտները, ճաշով մը կը պատուեն զիրենք: Գիւղի մը ծառերու շուքին է ճաշը:  
Այդ օրէն 36 տարիներ ետք՝ 1966ին գրուած պատմուածքը՝

«Ջրերի վրայ գլուխը կախած» կ'երգեն աղջիկները:  
«Մայր Արաքսի ափերով քայլամուրը գնում եմ» կ'երգեն տղաքը:

Դպրոցական սիրոյ մը պատմութեան վերլուչն է, անուշ որ կ'ունենայ լեղի վախճան մը, որ չի հասնիր իր լրումին:  
Ամէն ինչ Հեզասահ է, բայց յանկարծ էջ 184ի վրայ՝

«Մտիկ տուի դժգոհ եսիս»: Կ'ըսուի՞ մեր մօտ: Փանոսեանը կը սիրէ նման խօսքեր գործածել:

«Մասն Հինգերորդ - Սէրը, որ գին չունէր...  
Լեռներ, լեռներ Ալաուի,  
Պասակ' ջուրի, կանսանչի,  
Ժողովուրդին նախնական...»

Ահա վիպակ մը, ես պիտի ըսէի վէպ մը՝ առանց մտածելու գրուածին ծաւալին մասին: Արդեօք վէպը բնորոշողը գրութեան մը ծաւալն է, մանաւանդ մեր օրերուն, երբ կը գտնուինք Չէրոզ դարու սեմին:

Երբ կայ դէպքերու վիպայնութիւնը, երբ ներկայ են բազմաթիւ նկարագիր ունեցող Հերոսներ, երբ հոն ներկայ է բնութիւնը, կենդանական աշխարհը, փոխյարաբերութիւններ, դարաւոր սովորոյթներ, հոգեկան բարդ տրամադրութիւններ... էջերո՞ւ հաշուով վէպ պիտի կոչենք գիրքը:

Քանի՞ էջոց գիրք մըն է Հէմինկուէյի «Մերուկն ու ծովը» գործը: Ուրեմն պատմութեան էջ: Կրնանք ըսել, մէկ գործող անձ կայ հոն, եթէ տղեկը նկատի չունենանք: Բայց այդ մէկ անձը ամբողջ աշխարհ մըն է ու գործը տարօրէն վիպային. եւ ուրեմն՝ վէպ:

«Սէրը որ գին չունէր» վէպը հայ գրողի մը կողմէ գրուած առաջին ծաւալուն գործն է ալաուիներու մասին: Գրուած վարպետութեամբ, բնութեան ու մարդոց նկարագրին մասին լայն եւ հիմնական ծանօթութեամբ:

Ճիշդ է, որ գրողը իր մէջ կը կրէ իր մանկութիւնն ու պատանեկութիւնը, այդ տարիներէն յաճախանքի պէս ամէն օր վերայայտնուող մեր տարագրութիւնը, բայց ինք կ'ապրի նաեւ մեր ներկան, ի՞ր ներկան, որ անցաւ Սուրիոյ ծովափնեայ շրջաններուն մէջ, կուշտին՝ երկարաձգուող Կիլիկիոյ, ուր արար ու ալաուի գիւղացին ժայռէն հաց ստացաւ՝ արիւն-քրտինք մտնելով դար ու դարեր, ու այսօր այլ:

Աշխատանքի բերումով՝ ոչժիւ քննիչ Փանոսեանը տասնամեակներով չափեց ծովափնեայ լեռներու վրայ թառած գիւղերը, ուր հողը կը պակսէր, ուր ջուր չկար, բայց ուր գիւղացին կը ստեղծէր իր կեանքը եւ հակառակ տառապագին կենսաշահոյթի, ունէր իր տօնական օրերը, իր պարերն ու երգերը:

Այո, գուցէ շատ մը երգեր տխուր էին, բայց կար սէր, սիրոյ հասնելու նոյնպէս դժուարին ուղի, որ մերթ կը վերջանար մահով, երբ սիրոյ Հերոսը՝ տղան, աղքատ էր ու սիրող ու սիրուած աղջիկը՝ աղայի դուստր:

Ձմէջբերնէնք այստեղ արձակագիր Սիմոն Սիմոնեանի 1978 թուականին տպագրուած, բայց ըստ իր պատուէրին իր մահէն ետք հրատարակուած «Անժամանդրոս» վէպին փոքր մէկ հատուածը, որ մեծ սիրոյ ջատագովումն է եւ ունի խտացած պատգամի, թեւաւոր խօսքի ուժ:



«Ինչ լաւ բան է մտածել, որ դուն կաս այս աշխարհին վրայ: Երջանկութիւն է մտածել, որ կ'ապրինք նոյն ժամանակի մէջ եւ նոյն մոլորակի վրայ: Միասին ճամբայ ելած ենք անհաշուելի ժամանակներ առաջ, միասին քայլած անհունութեան մէջ եւ միայն բռնաբեր մը տարբերութեամբ իրարմէ բաժնուած:

«Իրարմէ բաժնուած»:

«Ոչ»:

«Դուն միշտ եղած ես ու կաս իմ մէջս, իմ մտածումներու եւ էութեանս մէջ: Ինծի այնպէս կը թուի, թէ մենք երբեք չենք բաժնուած իրարմէ»:

«Մենք իրարու միացած ենք, երբ բաժնուած ենք իրարմէ, եւ իրարմէ պիտի բաժնուինք, երբ միանանք իրարու»:

«Ես քեզ չեմ որոներ, որովհետեւ դուն կաս իմ մէջս: Դուն ինծի հետ եղած ես նոյնիսկ քու առաջին երեւումէդ առաջ, ինչպէս բոլոր արշալոյսներէն առաջ՝ արեւը»:

**Գուցէ կրկնուած պատմութիւն է: Բայց կ'արժէր Փանոսեանին այս գործը ունենալ թարգմանաբար՝ արարելէն լեզուով: Այդ գործին թարգմանութիւնը արարը քիչ մը եւս պիտի մօտեցնէր Հայուն:**

**Գունազնդ լեզու մը, պատկերաւոր, ինչպէս Սուրբոյ ծովաիննայ սարերը, ու գրաւիչ՝ պատմութիւնը Սլէյմէն չըլուի, որ կը սիրէր Ալիան: Եւ ահա այս աղջիկը, Հակառակ իր կամքին, Հարսնութեան կ'երթար Տիապ աղային, որ արդէն եօթնասուն տարեկան էր եւ Ալիան պիտի ըլլար իր կանանցին թիւ հինգ Հարճը:**

Արաքական կեանքէ առնուած վէպ մը վերջապէս, որ կու գայ գանակ մը աւելցնել մեր տարագիր գրականութեան վրայ: **Վէպը ունի մեկտրամաթիք վերջաորութիւն: Ալիան Հարս կ'երթայ...: Հարսնետրոնները պիտի անցնին դարաւոր այն տանձնիին մօտէն, որ կը բարձրանայ ձորի մը պոռնկին եւ ուր Սլէյմէնն ու Ալիան իրենց սիրոյ դաշինքը կնքած էին առաջին Համբոյրով:**

Մտին վրայ է Սլէյմէնը, սրտատրոփ կը սպասէ ձիուն վրայ եկող Հարսին. ու մինչ բնթերցողը կը սպասէ, որ հերոսը նետուի ձիուն վրայ ու միավարէ իր սիրեցեալին հետ, ահա երեքը մէկ կ'իյնան ձորը...

«Անօթ քեզի, խենթ տղայ...»ով կը փակուի այս գիրքը: **Հոգեբանական տարօրինակ պատմութեամբ մը, ուր իբրեւ թէ երեւակայութեամբ կը խօսուի մեր ջարդերուն մասին, նրբ Անժէլի կեանքին մասին: Իրական վէպ մը այս եւս, իրականէ աւելի՝ զգացական գուցէ, բայց որ հիւսուած է ոստայնակի այն վարպետութեամբ, ինչ վարպետութեամբ Հայոց լեռնաշխարհի դուստրերը կը հիսէին գորգեր:**

Ժիրայր, Նատիտ, Անժէլ հերոսները կը գրաւեն մեզ: Մէկը իր նուիրումով, միւսը՝ իր գուարթախոհութեամբ կը դառնան

**մեր առօրեային հետ կապ ունեցող, մեզի հետ ապրող մարդերը: Ժիրայրն է:**

«Ապրիլեան արեւը փողոցները լեցուցած է ջերմութեամբ: Կապոյտ, կապոյտ երկինք մը, որ կը հասնի մինչեւ դիմացի լեռնաշղթան եւ հոն դանակէ կտրուած՝ կը դառնայ ուղիղ գիծ մանիշակագոյն ֆոնի մը վրայ: Ընենթ միտքէ մը քշուած, գերազրգիւ, վճռական՝ ես կը նետուիմ առաջ: Կը զարնուիմ անցորդներու. աղջիկ մը ետին դարձած կը նետէ. «Ապր՛ւշ»: Բայց ես ժամանակ չունիմ: Կ'աճապարեմ. կարծես ուշացած ըլլամ նոր ժամադրութեանս...»:

**Այստեղ խօսողը Արեւելքի մէջ ապրող տղան է: Ձայն մը տանք Արեւմուտքի մէջ ապրող ուրիշ գրողի մը՝ Մովսէս Պաքճեանին, որ իր «Կեռասի ժամանակէն վերջ եւ առաջ» գիրքին (տպուած Փարիզ 1988) մէջ կը գրէ.**

«Նոր հասած պոժուէ ունինք.- յայտնեց սպասեակը, արձանագրեց պատուէրը ու, խոնարհիկ ձեւացնելով՝ հեռացաւ:

«Նոյն ճաշարանն էինք, «Աննախատեսելի» նոյն հացատունը: Դիմացի կնոջ հետ բառերը կ'ենթարկուէին յատուկ դիագնոստիկան, վայրին անունը ամէն անգամ ալ կը ստանար մասնաւոր ուշադրութիւն: «Լ'էմփրէվի...»: Միծաղելի էր պարզապէս: Ի՞նչ տեղի կ'ունենար հոն՝ որ կրնար դուրս նկատուիլ սովորականի հանգամանքէն: Նոյն յաճախորդներն էին, նոյն ճաշացուցակը, նոյն համեմները: Ի՞նչ էր ներշնչման ակը անուանակոչումին անոր հեղինակին: Քիչ անդին, մէջընդմէջ կ'իջնէին, կը զոհացնէին գաւաթներ ու, քիչ մը թեթեւցած՝ կը վերադառնային իրենց դիրքերուն, նոր յաճախորդներ սպասելով: Ձանազան ու գոյնղզոյն այդ հեղուկները, ինչպէս ամէն տեղ, պերճադիճներու նման, կը զործածուէին մէկ նպատակի: «Աննախատեսելի...»: Հեռաւոր, շատ հեռաւոր տեղ մը, աննշան փողոցի մը մէկ խուլ անկիւնը, հնակարկատ մը իր խանութը էլիզէ կոշած էր: Երկու հաստատութիւնները, առանց ոչինչ կորսնցնելու, կրնային փոխանակել իրենց անունները ու ոչինչ պիտի փոխուէր: Ո՛չ առաջինին պիտի դիմէին մարդիկ իրենց մաշած կօշիկներուն համար, ոչ ալ երկրորդին՝ սոված երախ գոհացնելու»:

**Երկու գրող, երկու պատկեր, մէկը Արեւելքէն, միւսը՝ Արեւմուտքէն:**

**Մենք՝ առաջին «ճաշարանը» Հաւնեցանք, երկրորդին գրական պատկերը դնահասելով Հանդերձ: Հեղինակը սիրոյ մէջ իսկ իր անցեալին հետ է: Ձի կրնար բաժնուիլ, ուր ալ երթայ:**

**Սր մը, Փարիզի մէջ, մեր յայտնի նկարիչներէն երկու հոգի՝ Գառզուն ու Ժանսէմը, նոյն բառերով նոյն խօսքը ըսին մեզի.- Տասնամեակներէ ի վեր, այստեղ, Փրանսայի մէջ, Փրանսուհիներ կը նկարենք, բայց երբ լաւ նայինք մեր նկարածներուն, կը հաստատենք, թէ անոնք ըլլալը զայուհիներ են...»:**

*Այդպէս ալ Մմբատ Փանոսեանը տեսէք, երբ սիրոյ գեղում պիտի ունենար, ինչ կը մտածէ (էջ 433).*

*«Հայ ապրինք եղբայր մարդկութեան մէջը...»*

*«Կը քալեմ ինքնամոռաց եւ այդ երգը ահա կու գայ շրթունքիս կը թափի: Մէկէն ոտքերս կանգ կ'առնեն ճամբուն մէջտեղը: Կը նայիմ չորս կողմս. կանաչութիւն, կանաչութիւն: Ինծի կը թուի, թէ հեռուն. տեղէ մը բարձրացող ծուխը կը բերէ քիթիս բարկ բոյրը մայրենի գիրկէն դուրս բերուած թուն-րահացին: Լաւաշ հացերը մօրս թեւերուն վրայ մեծցած, խո-չորցած, որ կը ծածանին կարմիր դրօշի նման, կարծես եղեռ-նին արիւնով ներկուած...»:*

*Մինչդեռ քիչ ետք պիտի պոռար գրեթէ.*

*«- Սպասէ, Անժէլ. սպասէ... եկայ... սպասէ. հոգիդ սի-րեմ...»*

*Ահա այդպէս: Նոյն չէի՞ն Վահրամ Մովսէսին հերոս-ները: Նոյն մարդը չէ՞ր Լոնտոնի մէջ ապրող հնակարկատը, որուն կրպակը ունէր փողոցին 790 թիւը եւ որ կը կոչուէր «Անկլո-արմինիւրն պապ»:*

*Նոյն հողեմի՞նձակով չէի՞ն ապրեր Մովսէսին հայր բոլոր բեկորները. այսինքն՝ մենք, որ կը գրենք, մենք՝ որ կը կար-դանք կամ չենք կարդար, չենք լսեր կամ կը լսենք այս էջերը:*

*Սապէս սկսած էր այս գիրքին վերջին վիպակը՝ «Ամօթ քեզի, խենթ տղայ...»:*

*«Ոմանք ուզեցին Բախտը նմանցնել յուշիկ քայլող պա-րիկի, որը մէկ Հպումով կ'երջանկացնէր մարդս: Ուրիշներ անոր տալ ուզեցին երկնային շնորհքի պատրանք - Աստուծոյ սիրտէն հեղած: Տակաւին փնտռեցին շատեր անոր հետքը մրուրին մէջ փրփրոտ գինիի բաժակին: Քիչեր, շատ քիչեր չալտեցին բախտը հեռու իրենցմէ - որովհետեւ իմացական ու զգացական աշխարհին խորթ էր անոր գոյութիւնը:*

*«Մինչդեռ ես կարօտ էի անոր: Կ'ուզէի ապրիլ՝ պարզա-պէս գոյութիւնս արդարացնելու գնով: Ո՛չ մեծ մարդ կ'ուզէի դառնալ եւ ոչ ալ Հարստութիւն դիզել - անգործ էի. որբու-թեան տիրակալութենէն ձերբազատուած՝ ինկած կեանքի թո-հուրհին մէջ - ես քշուեցայ Հոս ու Հոն. վեց ամսուան բնակա-րանիս չվճարուած վարձքին ամօթանքը կը խեղդէր զիս: Ահա թէ ինչո՞ւ Հաւասարակշռութիւնս կորսնցուցի. երեքաց ինք-նավստահութեանս պատուանդանը ու շրջեցաւ. իրենց հետ անկումի մատնեց պատանութեանս սլացիկ արձանը - եւ եղաւ դէպքը. ես պարպեցի որսի հրացանը փորիս եւ ինկայ արիւն-լուայ...»*

*«Իրակա գտած է ծեր գիւղացի մը, որ էշով կ'իջնէր լեռ-նէն դէպի քաղաք»:*

*Ահա թէ ինչու.- Ամօթ քեզի, խենթ տղայ... կ'ըսէ մեր հե-րոսին՝ նրբա Անժէլը:*

*Կեանքին վրայ տարբեր նայուածք ունի արձակազիր*

Գէորգ Աճեմեանը, որ իր 1956ին Պէյրութ Հրատարակած «Անկարելի պատմութիւն» գիրքին մէջ կը գրէ.

«Ապագայ չունեցող տղոց մտածումներ են ասոնք: Տղաք, որոնք Հաշտուած են կեանքի դառնութիւններուն հետ, եւ չեն փորձեր իրականութենէն խուսափիլ: Ապագայ չունեցող այս տղաքը կը Հաւատան անկարելին, որովհետեւ իրենց կեանքը անկարելի կեանք մըն է արդէն:

«Գացէք ըսէք այս աշխարհի խուճապահար անցորդներուն, ու բոլոր անոնց, որոնք քիչ մը մարդ են, թէ պատմութիւններ կան՝ տարօրինակ պատմութիւններ՝ անկարելի, բայց իրական: Իսկ հերոսներն այս պատմութիւններուն անչափահաս տղաք են միայն: Այո՛, տղաք»:

Աճեմեան ձեռնոց կը նետէ աշխարհին. անկարելին կարելի դարձնելու ճիգին մէջն է եւ ճիշդ կ'ընէ, հետու ճակատագրապաշտութենէ:

Ձէ՞ որ մեր աննման Պարոյր Սեւակն ալ գրեց. «Երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում Հնար»:

Ուրեմն ինչ է, ազգովին խենթենա՞նք: Եթէ պէտք է՝ այո՛: Կ'անցնիմ Սմբատ Փանոսեանին Հրատարակած Հինգերորդ գիրքին, զոր անուանած է՝

Ե.- «ԱՄՔ ԿՈՄԻՏԱՍ ԿՈՒՏԻՆԱՅԻՒ» - Պէյրութ, 1970, տըպագրութիւն՝ «Համազգային»:

Մի ըսէք, թէ սկիզբէն ձեզ նախատրամադրել կ'ուզենք, երբ այնքան վէճեր ծաւալեցան այս գիրքին շուրջ. այլ պարզապէս կ'ուզենք ընթերցողի մեր տպաւորութեան Հաստատումը արձանագրել այստեղ - շատ գիրքեր գրուած են ու տակաւին պիտի գրուին Կոմիտասի մասին՝ Շահնուրէն սկսեալ մինչեւ Աթայեան եւ Յակոբ Ասատուրեան, բայց ահա գիրք մըն ալ գրած է Սմբատ Փանոսեանը. լաւ է որ գրած է:

Հեղինակը այս գիրքին մէջ գրած է իր Հոգին, այսինքն՝ Հայկականութիւնը: Այս գիրքին մէջ կայ մեր որբութիւնը, մեր անվերջ տառապանքը, մեր մահը՝ եթէ կ'ուզէք, բայց նոյնիսկ եթէ ամբողջ աշխարհը, բոլոր մոլորակները չուզեն, Աստուած ալ չուզէ, կայ մեր Յարութիւնը, յաւերժօրէն կենդանի մեր երգը, որ ձայնի ալիքներով եւ «Կոմիտասի ձայնալուրով» օր մը Հնչած է մեղեդիաբար ու տարածուած տեսանելի եւ անտեսանելի, անսկիզբ ու անվախճան տիեզերքին մէջ:

«Բարի երթ, վարդապետ, ու առողջ վերադարձ...»  
Իսկ Կոստան Զարեանը իր մէկ բանաստեղծութեան մէջ պիտի ըսէր.

- Բարի ճանապարհ, վարդապետ, վերադարձ բարի...»:  
«Առաւ ծաղկեփունջը, բայց միեւնոյն անտարբեր շարժումով նետեց զայն ծովը ու մնաց ներկային մէջ բացակայ» (էջ 6):

Փանոսեան կու տայ նախ մեկնումը վարդապետին, Պոլիսէն՝ Քրանսա, ապա սկուտեղի մէջ գոլորչին վրայէն բարձրացող սուրճի հանգոյն՝ Գողթն գաւառը...

«Մայրը՝ Թագուհին, զսեց Սողոմոնին «Սուրբ-Սուրբ» երգելը Բէօթաշիոյ Հայոց եկեղեցիին մէջ: Հայրը՝ կօշկակար Գէորգ, լսեց, յուզուեցաւ»:

Սողոմոնը ջրկիր տղայ էր կամ մանր գործարքներու աշկերտ: «Որո՞ւն Հոգը, որ ան ապագայի փայլուն ձիրքեր կը ծրարէր Համեստ Հագուստին մէջ կամ փոքրիկ Հոգիին խորը...»:

Փանոսեան ուղղակի սքանչելիորէն կը ներկայացնէ Գէորգ վարդապետի ու պատանեակ Սողոմոնի ճամբորդութիւնը Բէօթաշիայէն մինչեւ Ս. Էջմիածին: Կարծէք գիրքին Հեղինակը ընկերացած ըլլար այս գոյգին լեռնէ լեռ, գիւղէ գիւղ անցքին, գաղտնօրէն պահուրտած ըլլար քիւրտ ջորեպանի ետին, ականջ տուած ըլլար անոնց խօսակցութեան, գրի առնէր տեղանունները եւ վտանգի պահուն պատրաստ ըլլար պաշտպանելու գիրենք:

«Սողոմոնին երգը.- բառերը թրքերէն էին, բայց անոնց վրայ բեռցուած եղանակը Հայ մօր մը վիշտը կը ցոլացնէր. տառապող, որդեկորոյս, տէր-տիրական շունեցող մօր մը աղապատանքը, որ ուղղուած էր առ Աստուած...»:

Նոյնպէս սքանչելի է, իր բնականութեանը մէջ, Նրիմեան Հայրիկ-Սողոմոն Հանդիպումը: Վանեցի վարդապետին ծառայութիւնը կաթողիկոսին, Նրիմեանին լացը:

Հապա ի՞նչ ըսել Զօպանեան-Կոմիտաս կրկնակի Հանդիպումներուն, երբ առաջինին Հակասող խօսք է երկրորդը: Այսինքն՝ առաջին Հանդիպումին Զօպանեան կը յանձնարարէր Կոմիտասին, որ ան Պոլիս երթայ: Հոն կայ միջավայր, աշխատանքի դաշտ, պարարտ ու պատրաստ Հող՝ Հայ երգի ծաղկումին նպաստող: Ջերմ չէ՛ առաջարկին նկատմամբ Հայր Կոմիտաս: Բայց երբ կու գայ Պոլիս, կը բռնկի ինք, կը բռնկի պոլսաւայր, շուրթին՝ Հայ երգին արբեցնող ջերմութիւնը...

Երկրորդ Հանդիպումին, Զօպանեան չ'ուզեր, որ Կոմիտաս մեկնի Պոլիս: Համաշխարհային Առաջին պատերազմին գարշահանչիւն ձայնը սկսած էր սիրտ ճանկատել, շուտով իր ճանկերը Հասցնելու Համար մեր աննման Կոմիտասի ուղեղին ու ամբողջ ժողովուրդի մը, որ գիտցած էր շարունակել իր Հայկականութիւնը:

Կոմիտաս զսեց Զօպանեանի խոհեմ խորհուրդը եւ...գիտէք...

«Պոլիս: 1910: Դեկտեմբերը փակած էր սրահին դուռն ու լուսամուտը: Ան «Փարուն»ը պիտի երգէր: Թիֆլիսը գրաւուած էր:

«Պոլսոյ մէջ բեմահարթակէն քիչ անդին, վարը բազկաթողին վրայ փքուած նստած էր Թալաթ պէյը: Մէկ երեսը կը

նայէր երեսփոխան Զօհրապին եւ ժպտուն էր, միւսը՝ կը նայէր քովը նստած էնվէր փաշային, խիստ մաղձոտ էր: Երբ երկու երեսով կը դառնար դէպի բեմը՝ ծիծաղկոտ էր: Կը սպասէր արդեօք թրքերէն «էնտիմ չինար պաշընտան»ի պէս խաղի մը...»:

*Հարազատ պատկերը թալաաթին: Հոն էր նաեւ գիրքին Հեղինակը, մանրագնին նկարելու համար այս բոլորը:*

*Ոչնչու հաճելի ու ճշմարտապատում՝ խօսակցութիւնները ընդմէջ Զօհրապին, Վարուժանին, Ռուբէն Սեւակին, Սիամանթոյին ու Կոմիտասին միջեւ:*

*Սմբատ Փանոսեան ներկայ եղողի պէս կ'արտաբերէ «Հոն եղած միջոցին իր լսածները». միայն իր մասին խօսք չկայ:*

*«Ամպերը պրկած էին երկնակամարը: Ուր որ է անձրեւ պիտի ըլլար»:*

*Բայց, ահա՛ն, ոչ թէ անձրեւ տեղաց դաշտերու վրայ, այլ կարկուտ՝ մեր ժողովուրդի գլխուն...*

*Մինչ այդ աննախընթաց տօնակատարութիւն Հայ գիրքերու գիւտին եւ տպագրութեան դարադարձերուն: Ու կու գայ հարցումը Կոմիտասէն.*

*«Պէտք էր, որ աւազակներէ բնակուած վայրին մէջ փերեզակը պոռայ իր ապրանքներուն գովքը, աւազակներու ուշադրութիւնը իր վրայ հրաւիրելով»:*

*Կը տանին Կոմիտասը...*

*Թալաաթ պէյ չէր առարկած Կոմիտասի վերադարձին...*

*- «Թող ապրի մարդը առանձին... քանի որ Հայը պիտի վերցուի աշխարհի վրայէն, այդպէս է կամքը Ալլահին - Կոմիտաս է ֆէնտին կը դառնայ օսմանցի երգահան. ատկէ կը շահի մեր մշակոյթը...»:*

*Անհամբեր մի ըլլաք, մեր բոլորին փոխարէն թող պատասխանէ Կոմիտաս.*

*«Ըսէք այդ մարդուն, որ մեծ սրիկայ է... գացէք, շուտ ըսէք... այդ սրիկային, որ իր ներումը դատապարտութիւն մըն էր... երանի անոնց, որ նահատակուեցան... մէկ անգամ մեռան... իսկ այդ շունը զիս բազում անգամներ խաչը պիտի հանէ...»:*

*Ինչ լաւ է, որ Սմբատ Փանոսեանը, ունկնդիր իր արեան ձայնին, գրած է այս գիրքը:*

*Ձ.- Որոշ գրողներ, սկսելէ առաջ լայնածաւալ վէպի մը՝ մուտքով մը կարծէք կու տան ամփոփումը իրենց հրամանայինքին, որպէսզի, ընթերցողը կրէ գործը երկու անգամ կարդացածի տպաւորութիւն. Հոգ չէ թէ բազում գաղտնիքներ աչքկապուկ խաղան վէպին Հարիւրաւոր էջերու բաւիղներուն, լեռներուն ու ձորերուն մէջ:*

*Արդեօք այդպէս չէ՞ ըրած Տոսթոնսկին, իր «Քարամազով եղբայրներ»-ու յառաջարանին մէջ, զոր վարպետ թարգմանութեամբ Հայութեան ընծայեց մելգոնեանցի ուրիշ գրող մը՝ Կարպիս Սարկաւազեան-Սուրէնեանը՝ 1970ին:*

*Ահա Տոսթոնսկիի յառաջարանը.*

«Սկսելով կենսագրութիւնն իմ Հերոսի՝ Ալեքսէյ Ֆէոդորովիչ Քարամազովի, որոշ տարակուսանքի մէջ եմ գտնում: Այսինքն՝ թէեւ Հերոս եմ կոչում Ալեքսէյ Ֆէոդորովիչին, բայց եւ այնպէս ինքս գիտեմ, որ նա բնաւ էլ մեծ մարդ չէ, ուստի եւ նախատեսում եմ այսպիսի անխուսափելի Հարցեր՝ ինչո՞վ է ուշագրաւ ձեր Ալեքսէյ Ֆէոդորովիչը, ինչո՞ւ էք նրան ինտրել իբրեւ ձեր Հերոսը: Ի՞նչ մի բան է արել նա: Ո՞ւմ եւ ինչո՞վ է յայտնի: Ինչո՞ւ ես, ընթերցողս, պէտք է ժամանակ վատնեմ նրա կեանքի փաստն ուսումնասիրելու համար:

«Վերջին Հարցը ամէնից անլի բախտորոշն է, որովհետեւ մէկ պատասխան կարող եմ տալ դրան. «Գուցէ ինքներդ տեսնէք՝ վէպը կարդալով»: Է՛հ, իսկ եթէ վէպը կարդան ու չտեսնե՞ն, եթէ Համաձայն չլինե՞ն, թէ ուշադրութեան արժանի է իմ Ալեքսէյ Ֆէոդորովիչը: Այսպէս եմ ասում, որովհետեւ ցաւ ի սիրտ նախատեսում եմ այդ: Ինձ Համար նա ուշադրութեան արժանի է, բայց խիստ տարակուսում եմ՝ կը կարողանա՞մ արդեօք այս բանն ապացուցել ընթերցողին»:

*Եթէ Հանճարեղ գրողը վերի Հարցադրումովը կը ներկայանայ մեզի, հասկա ի՞նչ պէտք է ըլլայ դիրքը ոչ Հանճարեղ գրողներու...*

*Ահա անոնցմէ մէկը եւս՝ Սմբատ Փանոսեան, որ իր վերջին տպագիր վէպը, որ կը կոչուի «Ջանձն իմ փառաւորեալ», սկսած է, իր բառով՝ «Միջնարար»ով մը, ուր կայ կմախքը իր վէպին:*

*Մուտք գործելով վէպէն ներս, կամաց-կամաց, սաստնցի մեր փոռապանը պիտի ըսէր յուշիկ-յուշիկ, մենք պիտի տեսնենք Հանդերձաւորուիլը այդ կմախքներուն, որոնք այնպէս մեծ բան մը պիտի չըսէին մեզի:*

*Փանոսեան այսպէս կը սկսի իր միջնարարը.*

«Ջանձն իմ փառաւորեալ»ի անունով Հանգանակութեան ելած չորսերը ոտքով քալած պէտք է ըլլային երկար, երկար ճամբայ: Կէսօրուան մօտ էր: Ցողներ էին: Ճամբան երկրաչափական ուղիղ գիծ չէր ունեցած. զիկզակուող, անկիւնադարձ, ելլող-իջնող աստիճաններ, բակ, բացատ, տարտղնուած, երեսի վրայ ձգուած տուներու արանքը մտած ծառուղի եւ արահետ - ահա այն ճամբաները, զորս ոտքի տակ առած էին չորսերը, Հանգանակութիւնը արգիւնաւորելու համար»:

*Բայց եթէ այս վէպը գրէր Եղուարդ Պոյաճեանը, ահա պիտի սկսէր այնպէս՝ ինչպէս իր 1948ին Հայէպ Հրատարակւած «Հողը» գիրքին մէկ պատմութեամբ սկսած էր, որ ահաւասիկ.*

«Այնճար գէշ տեղ մըն է. հիմնուեցաւ գէշ Թուականի մը եւ մարդիկ ունեցան Հոն շատ գէշ բախտ:

«Աչքեր Հոն լեցուեցան արցունքով, ականջներ բամբասանքով, կուրծքեր ուզեցին ուռիլ, լայննալ, բացուիլ. չկրցան: Եւ օրերը խառնուած սեւ գիշերներու՝ զանոնք կծկեցին, կզպեցին՝ եւ բանալին նետեցին ծանծաղ ջուրի մէջ, տիղմի, ճահիճի: Ոտքեր՝ դժուար քայլեցին Հոն, իրենց հետ կապար տարին, քայլեցին ուղեղին չուզած ճամբով եւ ուղեղը հաւաքուեցաւ ինքն իր վրայ ու բերանէն աւելի պինդ՝ թէ՛ բաներ ըսաւ, հայհոյեց:

«Ես այնճարցի եմ: Հայհոյած եմ ուղեղիս ու ջղայնութեանս գերաստիճան գորութեամբ՝ բախտին գէ՛մ, զիս շրջապատող պայմաններուն դէ՛մ, անհասանելի ամէն բանի դէ՛մ:

«Աղօթած եմ ու զղուած: Անցած եմ Ապու Ալիի զինեասան բովէն...»

«Այնճար գէշ տեղ մըն է: Գեղեցիկ էր հինաւուրց ձէպէլ Մուսան, հին տեղը, հին կեանքը, հին տունը: Հոն մեծ մարդիկ կային, մեծ ժողովուրդ կար. բլուր, կանաչութիւն ու արեւ կար Հոն: Կային հոն ապառաժուտ տեղերէ կանչող լեռնային պրոնգէ աքաղաղներ: Մեր լեռը կը հսկէր ծովու մը վրայ, խառնրածքներու վրայ, նկարագրի վրայ: Մեր լեռը կը մեծցնէր մեզ, ան միայն ուժ էր ու կենդանութիւն»:

*Պօյանեանի վերջին տողերը կարդալէ ետք, վստահ եմ ներեցիք իր հայհոյանքին, ինչպէս որ մենք ներած ենք մեր մեծ հօր բոլոր հայհոյանքներուն, որոնց թիրախը հայոց մեծ Եղեռնը գործադրող թուրքը եղած էր: Բայց տեսաք, թէ Պօյանեան գրողը ինչպէս պիտի սկսէր այս վէպը, եթէ ինք ըլլար «Չանձն իմ փառաւորեալ»ը գրողը:*

*Դուրս բաց է. մտնենք ուրեմն «Չանձն իմ փառաւորեալ»ի բաց դուռնէն...*

*Վերի անունով հանդէս բերուող կազմակերպութեան անդամներէն, չըսելու համար ղեկավարներէն չորս հոգի - երկու այր եւ երկու կին, ելած են հանգանակութեան: Այս փաստը «Միջնարար»ով տրուածն է:*

*Առաջին մաս - արարուած առաջին.*

*Ըսած եղանք տեղ մը, որ Փանոսեանի առաջին վէպի Հերոսներէն մէկ քանին պիտի գտնենք իր այս գործին մէջ. քանի որ այս Հեղինակը, շատերու պէս իր մանկութիւնը չալկած կը տանի իր բոլոր օրերու կածաններուն, դերբուկ ճամբաներուն եւ սսֆայտածածկ պողոտաներուն վրայ:*

*Այստեղ կը յիշատակուին Զամ-Զամ ցեղին շէյխն ու անոր վրանները, «Որ մըրկաւ էին զատուած» վէպին գլխաւոր Հերոս Մուրատը, քոյր Հէլէնը ու տակաւին ուրիշներ: Այո, ասոնք բնմին վրայ են Չժական թուականներու, քանի որ կատարելիք գործ ունին - Որբահաւաք:*

*«Հարիւրաւոր, հազարաւոր որբեր կը լեցնէին որբանոց-*



ները, կը յորդէին դուրս: Քաղհանուած՝ անապատի այս ու այն կողմերէն, շատերուն կը պակսէր անուն ու մականուն, ճշգրիտ տարիք կամ հարազատի հետք» (էջ 20):

**Նմանօրինակ տողեր պիտի գրէր Անդրանիկ Մատուկեանը:**

**Գիրքին նոր հերոսներէն մէկը անապատէն բերուած Թաղաորն է, որ Թիւտոր պիտի ըլլայ առեւտրական հրապարակին վրայ, բայց որ Թիւտոր չեղած, ի ճնէ արծաթամոլ, պիտի գողնայ տարագրութեան մահերը յաղթահարած իր մօրաքրոջ յիսուն ոսկին՝ անոր յանկարծամահ ըլլալուն պատճառ դառնալով:**

**Ձէ՞ք գիտեր.** - «Մարդ կայ ելել է շալակն աշխարհի, մարդ կայ, աշխարհն է շալակած տանում»:

**Թիւտորը մեռելներու վրայ բարձրացող մըն էր:**

**Թիւտոր, Միշէլ Ազմարիին պաշտօնեան է: Աչքը անոր կնոջ՝ Էմիլիին վրայ:**

**Այս վէպին երկրորդ նոր հերոսը Վաղարշ Արշակունին է. դարձեալ անապատէն եկած տղայ մը, որ մահուան շոր ֆրճորէն ազատուած է Թաղաորի կողքին, բայց հակապատկերն է անոր - պահած ազգային ինքնութիւնը ու նուիրուած մարդ է, տեսակ մը ցեխի մէջ ինկած ոսկի, որ վէպի աւարտական էջերուն վրայ պիտի յուսահատի եւ դիմէ անձնասպանութեան:**

**Երբեմն, ոչ, յաճախ, հեղինակներ կը յուսահատին կեանքէն, վէպ մը կը հեղինակեն, իրենց հերոսները անձնասպանութեան կը մղեն, բայց իրենք չեն ըլլար անձնասպան...**

**Վէպին հերոսին անձնասպանութիւնը բաւարար է:**

**Անշուշտ, այս վէպին մէջ անթերի մանրամասնութեամբ հեղինակը կը նկարագրէ տարագիր Հայութեան քէմփերու կեանքը. նոյնքան լաւ, որքան «Որբը տուն շինեց» դիրքին հեղինակը:**

**Փանոսեանի մաքուր Հայերէնը երբեմն կէտկիտուած է այսպիսի բացատրութիւններով - «ներքին ոչ մէկ թշնամի իրաւունք չունէր» - այսինքն՝ գործածած է կրկնակի ժխտական, բան մը, որ մեր լեզուին մէջ ընդունուած չէ: Մէկ անգամ չէ, որ հեղինակը կը դիմէ կրկնակի ժխտականի: Այս մէկը էջ 48ի վրայ: Նոյն էջին վրայ կը գրէ. - «Մէջտեղէն վերացնելով» - մենք պիտի ըսէինք՝ վերցնելով:**

**Երբ կ'անցնինք վէպին երկրորդ մասին - Արարուած երրորդին, կը Հանդիպինք այսպիսի բառերու - Սեւացած, սեւցածի փոխարէն, մեր տանը, մեր տունին մէջ ըսելու տեղ, ինծի ալ նկատեցէք, գիտ ալ նկատեցէք ըսելու փոխարէն: Նման զարտուղութիւններ խնայել կարելի էր: Բազմաթիւ են նաեւ գիրքին տպագրական սխալները: «Մելիտինեցի» մրցանակին արժանացած գիրքին մէջ այդքան սխալ...**

**Գնանք կ'ըսէ հեղինակը՝ երթանքի փոխարէն, կը գործածէ թողնելինը (էջ 289), կայթռելը, փոխանակ կայթելին,**

ընդլայտաթելը (էջ 308), փոխանակ ըսելու ընդառաջել: Իսկ սա-  
մոթկեցաւ բառը չգտայ ձեռքիս տակ եղած բառարաններուն  
մէջ: Կ'երեւի տպագրական սխալ է ու պէտք է ըլլայ սահմոկե-  
ցաւ:

**Տակաին բազում անգամներ կ'ըսէ - Պիտի յիշես ինձի -  
պիտի յիշես զիսի փոխարէն:**

Մի տանջեր դուն քեզի - պէտք է ըլլայ քեզ:

Կ'ըսէ պտուկ. մինչ պտունկ է բառը:

Որդս չի տանջեր ինձի - Պէտք է ըլլայ զիս:

**Բայց Փանոսեան բառակերտումի օրինակներ ալ ունի -**  
մեղուահալած, ձորաքեր ճամբաներ, երկկիւնեան Հարեմ, ինք-  
նանկախ, գոլորաշունչ, շնչազուսպ Հեւք, գետնասող, ցնցա-  
պատ, առնագուրկ ոչնչութիւն:

**Նման բառեր առաւել կամ նուազ յաջողութեամբ կը  
զարդարեն Հեղինակին խօսքի արուեստը:**

**Բայց որքան զիտեմ ճիշդ չէ, երբ կը գրէ. - Էրիկը կորսն-  
ցուցած կ'իմը պէտք ունի կարիքի: Տարբեր է՝ եթէ գրէր. -  
կ'ըլլայ կարիքի մէջ:**

**Վէպը ունի բազմաթիւ Հերոսներ: Վերը յիշուածներուն  
վրայ աւելցուցէք անունները Բարձրիկեանին, Անգինէին,  
Վարսենիկին, Պայծառին, Աքսորին, եւ տակաւին մեծ թիւով  
չիշուածներու, որոնք փոխն ի փոխ կը բարձրանան բեմ ու  
վար կ'իջնեն բեմէն, տեղ մը սիրահարելով իրենց ընկերոջ  
կնոջը, տեղ մը գողութիւն կատարելով, տեղ մը արկածահար  
իյնալով, տեղ մը իյնալով իրենց սիրած կանանց գիրկը եւ այս-  
պէս շարունակ. մինչ վարժարանի մը վերակառուցումը, Թափ  
առնելու փոխարէն՝ կը դանդաղի, սիմենթը կը տարուի Հոգա-  
բարձուի մը պատշգամը նորոգելու, երկաթին դրամը կը  
գրպանուի եւ այսպէս շարունակաբար:**

**Միչէլ Ազմի յանկարծամահ: Պատճառը իր Հայ պաշտոն-  
եան է՝ Թխտորը...**

**Արշակ Մեղայեան մըն ալ բուսած է վէպին մէջ. մէկը,  
անծանօթ անցեալով, որ Ք. որբանոցի աղջկանց բաժինին մէջ  
պաշտոնավարելով՝ կ'առնէ կուսութիւնը որբերէն Սիրուն  
անունով աղջկան մը:**

**Այստեղ օգտագործուած բոլոր անունները շինծու են -  
Ռամիկեան, Թուլայեան, Բարձրիկեան, Քաչեան, Կորկոտեան  
վարժարան, «Արշալոյս» օրաթերթ եւ բազում ուրիշ անուն-  
ներ:**

**Ըսինք առաջին էջերուն վրայ, Թէ Սմբատ Փանոսեան իր  
«Հայկական վէրք» երգիծավէպով փորձած է երգիծանկարել  
Գաշնակցութիւնը: Իսկ «Ձանձն իմ փառաւորեալ» վէպով՝  
նամկավարները:**

**Բազմաթիւ բացասական Հերոսներու կողքին կան նաեւ  
դրական Հերոսներ Հեղինակին. քննադատած կազմակերպու-  
թեան մէջ, որոնք սակայն իրենց ուժերէն վեր կը գտնեն**

**Կազմակերպութեան պատկերը փոխելու Հարցը:**

Սմբատ Փանոսեան բազմաթիւ դերակատարներ փոխն ի փոխ մատուցելու եւ պատմութեան երկարող շղթան ամրակապելու փորձառութիւնը ունի, թէեւ տեղ-տեղ այդ օղակները ունին լրիւ փակուած ըլլալու թերութիւնը. այսինքն՝ լրիւ Համոզիչ չեն: Հեղինակը, բոլոր դէպքերը, որոնցմէ ոմանք իր իրապէս սուր երեւակայութեան արդիւնքն են, չէ կրցած դարձնել լրիւ Համոզիչ պատճառ՝ գուցէ կեանքի իրողութիւններուն աւելի հզօր ըլլալն է, ահաւորին յամառ գոյութիւնը, որ կը սարսափեցնէ ընթերցողը, ըսել կամ խորհիլ տալու Համար ենթակային, որ մի՞թէ նման եղելութիւն կրնայ ճիշդ ըլլալ կամ գոյութեան գալ...

Փանոսեանի այս վէպին մէջ քիչ չէ թիւը ասացուածքի բնոյթ ստացած սեղմ ու պատկերաւոր միտքերու: Այսպէս.

«Տէր չունեցող կիներ կը նմանի գարնան ծաղիկի, հաւնողը իր խայթոցը իրել կ'ուզէ նեկտարին մէջ եւ ցաւ կը պատճառէ ծաղիկին» (էջ 413):

«Աղջիկ մը երկու աչքերով կոյր կը նկատուի, այրի կիներ՝ չորս աչքերով՝ բայց անհաւատ մը... բաժն են» (էջ 414):

«Գեղեցկութիւնն ալ կը նմանի գարնան թիթեռնիկին, օրը կարճ կ'ըլլայ»:

Ռամիկեան թիւտոր, որ Վաղարշակ Արշակունիի Զամ-Զամէն ազատած ընկերն է, կ'ըսէ անոր.

«Ինձմէ քեզի մեծ եղբօր իրատ՝ երբ չես կրնար ուղղել ուղտին սապատը, եղիր դուն ալ սապատաւոր, լրացաւ զնաց, փիլիսոփայութիւնը մէկ բան սորվեցուցած է մարդուն – յարմարիլ»:

Վէպին մէջ անշուշտ վիպային, չէր կրնար ըլլալ ոչ-վիպային – կայ Հնարք մը մարտարօրէն օգտագործուած – Գարբիէլ Հրեշտակապետին ոսկիի կարասով կաշառուիլը...

Կաշառողը թիւտոր Ռամիկեանն է, որ կ'ուզէ աւելի երկար ապրիլ եւ Գարբիէլը զրկել ուրիշ Հասցէներու: Փանոսեան յաջողած է այս խաղին մէջ:

Վէպը ըսի-բատներու ահաւոր շտեմարան մըն է. կը կարծէք, թէ Հեղինակն է յանցաւորը, տեսած եւ մատենի վերածած ըլլալուն Համար այդ բոլորը: Չենք կարծեր:

Արդեօք այս վէպը եթէ գրէր Յակոբ Կարապետեան, պիտի վերաջնջէր գրական Հերոս Վաղարշակ Արշակունիի անձնասպանութեամբը, երբ իր 1970ին Հրատարակած «Անծանօթ Հոգիներ» գիրքին «Որեւէ տեղից մինչեւ այստեղ» պատմուածքին մէջ կը գրէ.

«Ամէն անգամ, երբ գրիչը ձեռքս եմ վերցնում, ուզում եմ գրել չգրուած պատմութիւնը Հոգիների, որ կային, կան ու պիտի լինեն»:

«Գրչի ստրուկ չեմ: Երբեմն գրում եմ մատիտով կամ գրամեքենայի վրայ, սակայն յաճախ ուրիշների ամենախո-

րունկ պատմութիւններն իսկ գրում եմ իմ Հոգու պարտիզում:  
 «Կարճ: Ստեղծում եմ, քանի դեռ կեանքը կայ, քանի դեռ  
 թաւալում է խենթացած իր առօրեայի ու տիեզերական ըն-  
 թացքի մէջ: Մտադիր չէի խրթին միտք արտայայտել: Ուղղում:  
 Աւելի ճիշտ՝ պարզարանում: Գրում եմ այնպիսի ժամանակ,  
 երբ սովորաբար, մարդիկ - խոհեմ ու բնականոն մարդիկ, եր-  
 քեմն էլ անբնական մարդիկ, զբաղուած են ապրելու արուես-  
 տի ուսումնասիրութեամբ:

«Յրինակ: Իմ լաւագոյն չգրուած պատմութիւնը ստեղծա-  
 գործեցի մի օր Քանդաս Սիթի, Միգուրիում, ելեկտրաքարշի  
 մէջ, երբ ճանապարհորդներից մէկը մասնագիտօրէն հարբած՝  
 ցուցամատը մարգարէաբար բարձրացնելով յայտարարեց.

«- Հետաքրքրական է իմանալ, թէ մեզ ո՞ւր են տանում  
 եւ ինչո՞ւ...»

«Շատ փորձեցի անկեղծութեան այդ գլուխ-գործոցը  
 ստեղծագործութեան թղթին յանձնել, բայց այդ ինձ չա-  
 ջողուեց: Միանգամընդմիջաւ գրուած պատմութիւնը այլեւս  
 գրուած է: Պէտք չէ քանդել կառույցը: Ու չքանդեցի: Եթէ,  
 ա՛նգամ մի Հոգի ընթերցող ունի գրողը, արդէն արգարացուած  
 է իր գործը:

«Յիշեալ դէպքում ես էի ընթերցողը»:  
*Իսկ ինչ կը վերաբերի մեզի, վերջին երկու ամիսներուն  
 մենք ընթերցողն էինք Սմբատ Փանոսեանի պատմուածքնե-  
 րուն ու վէպերուն եւ գտանք, որ ան, Սփիւռքի մեր լաւագոյն  
 արձակագիրներէն մէկն է, վարպետ պատմուածագիր մը ու  
 բազմաթիւ հերոսներով վէպ գրելու վարպետութեան տէր  
 հեղինակ մը:*

(Շար. 2 եւ վերջ)  
 Հալէպ

Թորոս Թորանեան

**Պ. Սևասյան**

**«ԵՄ ԻՄ ԱՆՈՒՅ «ԱՏԱՏՏԱՆԻ»**

**ՈՂԻՍԱԿԱՆԸ**

«Ես իմ անուշ»ի նուիրուած այս ձեռնարկին նախորդ հատուածներուն մէջ օգտագործուած տուեալները ամբողջական չէին կրնար ըլլալ ու ամբողջական չեն: Միայն վերջին ամիսներուն մեզի տրուեցաւ հանդիպիլ անոր տարրեր կողմերուն անընտանայն պիսի մանրամասնութիւններու, որոնք, իբրեւ լրացուցիչ տարրեր, օր մը կրնան օգտագործուիլ միայն ուրիշ տպագրութեան մէջ:

Ներկայ հատուածը կը ձգտի ուրուագծել մեծ համարում վայելած քերթուածները նմանակելու համաշխարհային երեւոյթին, անշուշտ, իբրեւ զուգահեռ ձեռնարկ «Ես իմ անուշ»ին, որուն մեզի ծանօթ նմանակներէն չորսը զուարթախոտեան կայուածին կը պատկանին, իսկ հինգերորդը՝ սեւերգիծանքին, որուն երբեք պիտի չուզէինք հանդիպած ըլլալ, զոր սակայն, չենք կրնար անտես առնել...

Գրականութեան պատմութեանց մէջ եղած են գործեր, բնօրինակաւ չափածոյ, որոնց հետևողութեամբ տուեալ ազգին կամ այլ ազգերու գրողներ արտայայտած են իրենց անհատական փորձառութիւնները կամ պատկերացուցած են հանրային երեւոյթներէն մէկը կամ միւսը:

Յիշելու համար լրջութեան կնիք կրող «հետևողութիւններէն» մէկը, մտաբերենք Մկրտիչ Պէշիկ-բաշլեանի «Հայ Բագրով» բանաստեղծութիւնը, որ ձեռուած է վիթթոր Հիւկոյի մէկ քերթուածին նմանողութեամբ («Նմանողութիւն «Վիթթոր Հիւկոյի»):

Մեր ծանօթութեան սահմաններուն մէջ կան քանի մը քերթուածներ, որոնք ծնունդ տուած են բազմաթիւ ու բազմերանգ հետևողութիւններու, յաջորդաբար՝ Ֆրանսացի Ֆելիքս Արվէրի «Հընչեակ»ը, անգլիացի Բոտեարտ Քիփլինկի «Երէ»ն եւ Չարեմցի «Ես իմ անուշ Հայաստանի»ն:

Առաջին անգամ ուշադրութեան յանձնենք առաջինը, բնագիրով ու Վահան Թէֆէեանի թարգմանութեամբ:

SONNET

Ma vie a son secret, mon âme a son mystère.  
 Un amour éternel en un moment conçu:  
 Le mal est sans espoir: aussi j'ai du le faire;  
 Et celle qui l'a fait naître n'en a jamais rien su.

Hélas! j'aurai passé près d'elle inaperçu.  
 Toujours à ses côtés et pourtant solitaire.  
 Et j'aurai jusqu'au bout fait mon temps sur la terre.  
 N'osant rien demander et n'ayant rien reçu.

Pour elle, quelque Dieu l'ait faite douce et tendre.  
 Elle ira son chemin distraite, et sans entendre  
 Ce murmure d'amour élevé sur ses pas.

A l'austère devoir pieusement fidèle.  
 Elle dira lisant ces vers tout remplis d'elle;  
 Quelle est donc cette femme? et ne comprendra pas.

1833

FELIX ARVERS

ՀՆՉԵԱԿ

*Ինչպէս զաղպնդիք մը հոգիս, խորհուրդ մ'ալ կեանքս է լցած,  
 Յաւերժական սէր մ'անհուն, զոր երկվայրկեան մը ծնաւ.  
 Յարս անյոյս էր ուստի շխտանցի զայն բնաւ,  
 Եւ զայն փոռողն ալ երբեք չունեցաւ ոչ մէկ կասկած:*

*Ես միշտ, աւաղ, իր բովէն պիտի անցնիմ աննշմար,  
 Միշտ իմ մօտիկը թեպէտ, բայց մենաւոր յաւիտեան,  
 Եւ աշխարհի վրայ բնեմ պիտի շրջանքս լրման  
 Ոչինչ խնդրած եւ ոչինչ ալ ստացած ինչ համար:*

*Մինչդեռ ինքը շատ անուշ ու թեւ շատ ալ սղու,  
 Պիտի երթայ իր ճամբէն, անփոյթ, առանց լսելու  
 Միտոյ մըրմունցը յառնող իր քայլերուն հեղքին վրայ:*

*Հաստատրիմ ու հլու իր սուրբ պարտքին խաղաճերը,  
 Պիտի բաւ, երբ կարողայ իրմով լեցուն աչս փողերը.  
 «Ո՛վ է այդ կինը արդեօք», եւ չպիտի հասկնայ:*

Շուրջ քառասուն տարի առաջ Պէյրուսի «Նայիրի» շաբաթաթերթին մէջ Արվէրի «Հնչեակ»ին առիթով ու առընթեր լոյս տեսաւ նոթ մը, ուր կը տրուէր սա շահեկան ծանօթութիւնը.

«Անհամար էջեր նուիրուած են Արվէրի «Հնչեակ»ին, ուսումնասիրական, վերլուծական եւ նոյնիսկ երգիծական: Աւելի քան 200 Հնչեակներ գրուած են ծանօթ գրողներու կողմէ, ի պատասխան կամ ի լրացում Արվէրի «Հնչեակ»ին, Հետեւողութեամբ նախատիպարին: Արամիտ բանաստեղծ մը, Լուի Այկոն, բանաստեղծութեանց շարքով մը խօսեցուցած է նաեւ կիները, Արվէրի տողերով: Տեղ մը բանաստեղծին կողմէ անտեղեակ համարուող սիրուհին է, որ կը խօսի, ըսելու համար, թէ ինք... տեղեակ էր արդէն, բայց չէր յայտնէր, ուրիշ տեղ աւելի համարձակ եւ ինքնամատոյց կիներ է, որ կը մեղադրէ բանաստեղծը իր լուսնեան համար, այլ տեղ խաբւած ամուսինը կը պատմէ իր դժբախտութիւնը, միշտ Արվէրի բառերով, եւ այսպէս անվերջ («Նայիրի» շաբաթաթերթ, 1966, թիւ 16-16-17):

Ֆելիքս Արվէրի «Հնչեակ»ին հայերէնի վեց վերածումները ուշադրութեան յանձնելէ ետք, շաբաթաթերթը վեցերորդին Հետ կու տար նաեւ Արվէրի չափերով եւ անոր ընդդիմախօսող Լուի Այկոնի երկու չափաբերութիւնները: Գրականութեան պատմութեան մէջ շահեկանութենէ գուրկ չէ երեւոյթը: Այդ հիմամբ արտագրենք գրնէ մէկը, երկրորդը.

ԿԻՆԸ, ՈՐ ԿԸ ՍՊՍՍԵՐ...

Թոյլ քուր ժպտի, բարեկամ, երբ անհուն սերդ այսպէս  
Հանդիսական լրջորենամբ կը վերածնս զաղպնիբի:  
Շաք միամիտ եւ սակայն, եթ ծածկել կը կարծես,  
Ես քու այդ սերդ արդէն դեռ շծնած գիտէի:

Դուն, պաշտելով հանդերձ զիս, անտես մնալ կրնայի՞ր,  
Ու դեռ, մօտիկս նստած՝ ապրիլ այնքան մեկուսի  
Երջանկուրեան բանային չեղերուդ մէջ ունէիք,  
Թող խնդրէիր ու արդէն... պիտի գրուէր ան քնզի:

Գիտցիր, թէ կիներ սիրող կը քառասպի շաք օրեր  
Սիրոյ կանչին անհնարուր իր սրտին խորը միջնս,  
Սիրոյ հրաւերն ուշանալ, որուն այնքան կը սպասէր...

Հաւաքարիմ ամուսնոյն ան... սրտպնայ կը մնար...  
Տես, ես ինչպէս հասկցայ քաղցր փողերդ «Իրմով լի»  
Հէք բարեկամ, դուն էիր, որ հասկնայ չկրցար...

IF

Խոստովանիմք,  
որ ձեռքիս Արվերի  
«Հնչեալ»ից հետե-  
ւորութեամբ ձե-  
ւած 200 հնչեալնե-  
րը հետագոսերու  
եւ անանց մասին  
մինչեւ անգամ բը-  
նուցիկ կարծիք  
յայտնելու կարե-  
ւորութիւնը վեր է  
մեր միջոցներէն,  
հետեւաբար բաւա-  
րարուիմք Լուի Այ-  
կոնի նախորդ էջից  
արտագրուած մը-  
մայրով, եւ «Ես իմ  
անուշ»ի հետեւորով  
մեր մէջ սարքը-  
ւածներուն անցնե-  
լէ առաջ, յիշեմք  
Բոստարտ Բիֆիին-  
կի «Նիք»ն, որ  
հետեւորութեամբ  
հիւսուած գործնե-  
րուն մասին կու  
տայ սպասիչ գա-  
ղափար մը:

Նպատակայար-  
մար բուեցաւ հոս  
եւս վարուիլ այն-  
պէս՝ ինչպէս վար-  
ւեցանք ձեռքիս  
Արվերի «Հնչե-  
ալ»ից պարագա-  
յից, այսինքն՝ ցախ  
մերկայացնել բնա-  
ցիրը, ապա բարգ-  
մանութեանց լա-  
ւագոյն տարրերա-  
կը, ուղիղ գծով  
Մ. Իշխանի փո-  
խադրութիւնը, որ  
«Հնչեալ»ից թէլե-  
հանական բարգ-  
մանութեան պէս  
ցարդ անմրցելի կը  
մնայ:

If you can keep your head when all about you  
Are losing theirs and blaming it on you;  
If you can trust yourself when all men doubt you,  
But make allowance for their doubting too;  
If you can wait and not be tired by waiting,  
Or being lied about, don't deal in lies,  
Or being hated don't give way to hating,  
And yet don't look too good, nor talk too wise;

If you can dream - and not make dreams your master;  
If you can think - and not make thoughts your aim,  
If you can meet with Triumph and Disaster  
And treat those two imposters just the same;  
If you can bear to hear the truth you've spoken  
Twisted by knaves to make a trap for fools,  
Or watch the things you gave your life to, broken,  
And stoop and build'em up with worn-out tools;

If you can make one heap of all your winnings  
And risk it on one turn of pitch-and-toss,  
And lose, and start again at your beginnings  
And never breathe a word about your loss;  
If you can force your heart and nerve and sinew  
To serve your turn long after they are gone,  
And so hold on when there is nothing in you  
Except the will which says to them: "Hold on".

If you can talk with crowds and keep your virtue,  
Or walk with Kings - nor lose the common touch,  
If neither foes nor loving friends can hurt you,  
If all men count with you, but none too much;  
If you can feel the unforgiving minute  
With sixty second's worth of distance run,  
Yours is the earth and every thing that's in it,  
And which is more - you'll be Man, my son.

RUDYARD KIPLING



ԵԹԷ

Եթէ կրնաս պահել գլուխդ առանձին,  
 Երբ խուճապի մէջ է չորս դիդ ամէն մարդ,  
 Եթէ կրնաս վստահ ըլլալ քու անձին,  
 Երբ ուրիշներ կը կասկածին քու վրայ,  
 Եթէ կրնաս միշտ սպասել անձանձիր,  
 Կամ չստել՝ շքապարտած սուտերով,  
 Ապողներու միջև մնալ սիրայիր,  
 Եթէ կրնաս ըլլալ բարի բայց ուժո՛ւր:

Եթէ կրնաս դուն երագել եւ սակայն  
 Չըլլալ գերին երագներու գերիշատոյ,  
 Յաղթանակէն ետք հանդիպիլ պարպոթեան  
 Եւ նո՛յն ձեռով ընդունիլ գոյգն այդ խարոյ,  
 Եթէ կրնաս լսել քու խօսքը վճիտ  
 Չարախոխուած յիմարներու ծուղակի,  
 Եւ խորակուած փեսնել մեծ երկը կեանքիդ,  
 Բայց վերստին գայն շինելու գաս ծունկի՛:

Եթէ կրնաս շահը հազար ճիգերու  
 Մէկ հարուածով յանձնել բախարի սեղանին  
 Եւ անտրտուն, առանց երբեք ողբալու  
 Վերսկսիլ ծայրէն ամէն ինչ կրկին,  
 Եթէ կրնաս սիրտ ու ջիղեր ու մկան  
 Մաշումէն ետք նորէն լարել անդադար  
 Եւ դիմանալ, երբ մեռած է ամէն բան,  
 Բացի կամքէն, որ կը մնայ մէջըդ վառ:

Եթէ կրնաս արքաներու հետ՝ պարզուկ,  
 Ամրոխին մէջ՝ առաքինի ըլլալ միշտ,  
 Եթէ թաղես կրքի թոպէն վաղանցուկ,  
 Եթէ մարդիկ անգոր են քեզ առթել վիշտ  
 Եւ ամէնուն կու փաս արժէքն իր արդար,  
 Եթէ սիրես բայց սիրոյ խենթ չդառնաս,  
 Քո՛ւկդ է երկիրն ու իր զանձերն անհամար,  
 Եւ աւելին՝ այն արեն Մարդ ես, փղա՛ս:

*Թարգմ. Մ. ԻՇԽԱՆ*

Թէական ձևով բանաձևուած արձակ մտածումներն ու Հաստատումները թիւ ու Համար չունին բոլոր ժողովուրդներուն մէջ:

Մինչ չափածոյի պարագային «Եթէ»ները այնքան բազմաթիւ չեն թուիր, ամէնէն տարածունը, միշտ մեր ծանօթութեան սահմաններուն մէջ, կը շարունակէ մնալ Բոտեարտ Քիփլինկի «Իմաստարանութիւնը», որուն Հետ չենք կրնար շիշել անգլիացի բանաստեղծին ծնունդէն շատ առաջ մեռած մեր բանաստեղծին «Եթէ»ն, որ իբրև խորագիր ծանօթ չէ, բայց որուն եօթը տուներէն վեցը կը սկսի «Եթէ»ով:

Ակնարկը, ինչպէս կուսնցինք, կը վերաբերի պատանութեան օրերուն գրած Պետրոս Գուրեանի «Իմ մահը» բանաստեղծութեան, ըստ որում՝

Եթէ տժգոյն մահու հրեշտակ...  
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ,  
Շոգիանան ցաւքս ու հոգիս,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ:  
Եւայն...

Քիփլինկի «Եթէ»ին օրինակով տարբեր Հարցեր յանգիչափի տակ առած մտատրականները թիւով շատ են, մինչ Գուրեանի Հետեւողութեամբ ոտանաւոր սարքողներ Հաղխ թէ եղած են: Մենք կը յիշենք Թէոդիկի «Տարեցոյց»ներէն մէկուն մէջ միայն Հատ մը, որ իր խեղկատակ բնոյթին Համար չ'արժեր անգամ ուշադրութեան յանձնել:

Բոտեարտ Քիփլինկի «Եթէ»ին նմանողութեամբ կառուցուած չափածոներուն ու արձակունակ գրուածքներուն մէջ մեր ուշադրութիւնը գրաւած են երեք կտորներ, առաջինը գրուած է 20 Նոյեմբեր 1920ին եւ լոյս տեսած է անգլիական ազգեցիկ «Նիու Սթէյթսմեն» թերթին մէջ, H.E.C. ստորագրութեամբ:

Քասամայր ստորագրութիւնը կրող երկրորդը թարգմանաբար արտագրած ենք «Ճիկար» շաբաթաթերթի թիւ 1282 Համարէն:

Իսկ երկրորդին բնագիրը նախ լոյս տեսաւ քաղաքիս «Լ'Որիան - Լը Ժուռ» օրաթերթի 15 Յունիս 1984 թուակիր Համարին մէջ եւ գրեթէ անմիջապէս թարգմանաբար երեւցաւ «Ազգակ» օրաթերթի էջերուն՝ 18 Յունիս 1984:

«Ես իմ անուշ»ի Հետեւողութեամբ հայկական միջավայրերու մթութիւններն ու մութերը դիտելէ առաջ, Հետաքրքրական է կարդալ Քիփլինկի «Եթէ»ին Հետեւողութեամբ սեւագրուած օտար միջավայրերուն մէջ երեւցած բարքերն ու գործած արատաւորները, որոնք բաւական մեծ թիւով ընդհանրութիւններ ունին խաթարուած մեր միջավայրերուն, պաշտօնամուրներուն ու միաններուն Հետ...

ԵԹԷ

Ռ. Քիփիլիսկի ներողամտութեամբ

Եթէ կրնաս քու աթոռդ պահել, երբ քեզմէ գերադասները  
կորսնցնելու վրայ են իրենց դիրքերը.  
Եթէ կրնաս քու պաշտօնդ պահել, երբ բոլորն ալ կը կասկածին  
կարողութեանդ վրայ եւ դուն գիտես, որ արդար է անոնց  
կասկածը.  
Եթէ կրնաս սպասել եւ չոգնիլ սպասելէ,  
երբ յոյսերդ ու վախերդ ի դերն եկն  
եւ մարդիկ արժէքդ պիտի գնահատեն  
տեսնելով, որ խղճմտանքդ ինչպէ՛ս ճզմեցիր.  
Եթէ կրնաս կոնակդ դարձնել անոր, որ քեզի սորվեցուց.  
Եթէ կրնաս մտածել, բայց մտածումդ փորձարարի չզարնել  
եւ երբ քեզ հովանաւորողը ձայն տայ՝ ըսել  
«Ինչ որ անոր փափաքն է, լաւագոյն ուղին է».  
Եթէ կրնաս լսել, թէ քու պաշտած ճշմարտութիւններդ ինչպէ՛ս  
կ'ոլորուին եւ թակարդի կը վերածուին անմիտներու համար,  
Կամ՝ տեսնել, թէ ինչպէ՛ս կ'ոտնակոխուին այն արժէքները,  
որոնց համար կեանքդ զոհելու պատրաստ էիր,  
եւ երբ կրնաս խաղը խորացնել, առանց օրէնքները  
յարգելու.  
Եթէ կրնաս հանդուրժել որ արտասանած խօսքերդ սուտ  
դրակուին,  
երբ շատ լաւ գիտես, որ ճշմարտութիւնը քուկդ էր.  
Եթէ կրնաս առնականութիւնդ ջեխի մէջ նետել  
եւ երդնու, որ սեւը ճերմակ է, իսկ կարմիրը՝ կապոյտ.  
Եթէ կրնաս սիրտդ, միտքդ եւ պատիւդ բերել  
ու զոհել շահերուդ բազմին վրայ,  
առանց որ կատարած զոհողութիւնդ ի զուր անցնի.  
Եթէ ո՛չ թշնամիներդ եւ ոչ ալ բարեկամներդ  
կրնան ցաւ պատճառել քեզի.  
Եթէ կրնաս անօթի ամբոխին առաքինութեան մասին խօսիլ,  
կամ՝ պատրաստ ըլլալ որեւէ բան խոստանալու.  
Եթէ կրնաս ամէնէն սուղ վայրկեանն իսկ մտնել  
անփութօրէն եւ յեղեղուկ ձեռով.  
Այդ ատեն համախմբումը կ'ողջունէ քեզ իր շարքերէն ներս  
եւ - ինչ որ անկի կարէտը է -  
ժամանակի ընթացքին կը տիրանաս գործի...

(«Նիու Աթլթաւնէն», 20 Նոյեմբեր 1992) H.E.C.

ԵԹԷ ԴԱՏԱԻՈՐ ԸԼԼԱՅԻ

Եթէ ուշադիր քու մեծատրոնէրուդ փափաքին՝  
 Նաճեցի ըլլալու առիթը օգտագործելէ չես հրաժարիր,  
 Եթէ կրնաս առանց ճիգի խոյ ձեռնալ գանգատներուն.  
 Եթէ միշտ պաշտպանողական կը խօսիս գօրաւորին համար.  
 Եթէ առանց սխալելու կրնաս չարերը բարիներէն  
 Զանազանել անվարան, ինչպէս նաեւ՝ առանց հաճոյքի,  
 Եթէ կրնաս առանց տկարանալու  
 Նուաստացնող յանցանքի մը համար, Վեզիրին . . .  
 Նուիրել արիւնլուայ գլուխ մը՝ բարեւելով.  
 Եթէ կ'նուգես, որ ամէնուրեք կարգուկանոն տիրէ ու  
 պարտադրուի,  
 Եթէ լաւատեղեակ մանրամասնութեան, բայց անգիտակ  
 ամբողջութեան,  
 Սննեղուկ ու մանրագնին, երբեմն խղճամիտ,  
 Թուքով կը թրջես ու կը փակցնես ամէն տեղ  
 Պատժուած պիտակը, գեղեցիկ կատարելագործում:  
 Եթէ աչքդ յառած պահես կառավարութեան վրայ.  
 Եթէ կը կարծես, որ վճարելը հաւասարակշռութիւն կը  
 հաստատէ,  
 Թէ ուրիշներու սրտին մէջ սրտայոյզ մէկ լար կը թրթռայ,  
 Թէ դուն գերազանցած ես գանոնք, որ կը խոցես:  
 Թէ յանցատրոնէրը միայն կը վճարեն Չարին գինը.  
 Եթէ ուրիշին տառապանքը քեզ անտարբեր կը ձգէ.  
 Եթէ միշտ կը շփոթես Արդարութիւնն ու Պատիժը  
 Երբեք դատաստր մի ըլլար, որդի՛ս:

(«Ճիկարօ», շարաքաթերթ, թիւ 1282)

ՔԱՄԱՆԱՅՈՐ

## ՆԵՐԷ, ՔԻՓԼԻՆԿ

Եթէ գիտես ըլլալ բաղաբազէտ, երազել բաղաբազանութեան մասին, ապրիլ բաղաբազանութեամբ,

Եթէ դուն գիտես ըլլալ մոլեռանդ, ոտքով-ձեռքով ենթարկելի վարդապետութեան մը կամ կրօնքի մը,

Եթէ գիտես ըլլալ ստրուկ, բայց պահել ամէն տեսակ բռնագրափչներու հետ, պաշտպանելու համար քու շահերդ,

Եթէ գիտես հրահրել պատերազմ մը, մարել զայն, ապա դարձեալ հրահրել, ըստ քու քնահաճոյքիդ,

Կազմաւորուծել կեանքը քու համաբաղաբացիներուդ, սահմանագիծին վրայ արգիլելով ներսուծումները, գրգռել խռովութիւնները՝ ձեռացնելով, որ անոնք յստակ նպատակ մը կը հետապնդեն, որուն հասած ես դուն ինքդ,

Եթէ գիտես թնդանօթ գործածել, ուրակոծել որեւէ ձեռով, որեւէ տեղ, ոեւէ սէկը, հնձել անմեղները եւ կազմակերպել եւ վաղորդայնիւ կազմակերպել բողոքի գործադուլ մը,

Եթէ հասնայրային հիմամբ մը գիտես առեւանգել, զաճի պէս ծեծել պատանդ մը, որպէսզի յետոյ ներողութիւն խնդրես, սուրճ հրանցնել եւ ապա ազատ արձակել զայն,

Եթէ գիտես խելքդ գործածել ահաբեկութեան ի խնդիր, ականջի ինքնաշարժ մը, ողջ թաղամաս մը վերածել մութի եւ հուրի, եւ ըսել որ պատասխանատուն ողբերգութեան հասարակաց թշնամին է,

Եթէ գիտես բանակը պատակտել, վերակազմել զայն, վերապատակտել եւ վարկ պահանջել անոր օգտին, խոստանալով, որ օր մը ան սիտի ազատագրէ հայրենիքը,

Բանակցիլ խորալիցիներուն հետ, դառնալ եւ բանակցիլ սուրիացիներուն հետ եւ նոյն եռանդով պաշտպանել երկու բանակցութիւններն ալ,

Եթէ գիտես վարկաբեկել խորհրդարանը եւ պահանջել ապա անոր վստահութիւնը,

Եթէ գիտես նշաւակել կառավարութիւնը եւ ապա անոր ընծայել անհրաժեշտ վստահութիւնը, իր անգործօնութեան համար երկու տարուան թռչակ վճարելով,

Եթէ գիտես մարտնի ըլլալ եւ ատել շիիները,

Եթէ գիտես շիի ըլլալ եւ ատել սիւնիները,

Եթէ գիտես տիրոջ ըլլալ եւ ատել միւս բոլոր համայնքները,

Եթէ գիտես տարաձայնութիւններ սփռել, պնդելով, որ 15

Յունիսին ժամը 10.52ին «բան մը տեղի պիտի ունենայ» եւ մերժել այդ մասին աւելին ըսել,

Եթէ գիտես - եւ կրնաս - վարձել յարկաբաժին մը 70 հազար լիբանանեան ոսկիի, առանց վարանումի, համակերպելով, որ քու տունդ գրատուած պիտի մնայ գաղթական ընտանիքի մը կողմէ,

Ապրիլ առանց ելեկտրականութեան, առանց ջուրի, առանց հեռաձայնի, առանց մագլոթի եւ օտար բարեկամներուդ պատմել, որ երկիրդ Արեւելքի Զուլիցերիան է,

Եթէ գիտես տոկալ ծովային ճամբորդութեան դժուարութեան ամէն անգամ, որ որոշես ճամբորդել,

Եթէ գիտես զաւակներդ դպրոց դրկել եւ երեկոյեան ռումբերուն տակ վազել՝ եւ ձեռք ձգել անոնց ծուատուած մարմինները,

Ապրիլ ծիրիին մէջ, զնդացիր պարպել, երբ ընկեր մը կ'ամուսնացնես կամ ուրիշ մը կը թաղես,

Եթէ գիտես միաժամանակ հետեւի պատկերասփիռային երկու հակադիր հաղորդումներու, անդադար մէկ կայանէն միւսը անցնելով, հասկնալու համար, թէ ինչ կը հաղորդէ «գետինն անցնելիք» միւսը,

Եթէ գիտես ռումբերէն խուսափիլ՝ ազատ արձակագլէնի մը զնդակներուն զոհ դառնալու համար,

Եթէ գիտես խուսափիլ ռումբերէն եւ ազատ արձակագլէններէն՝ մեռնելով ինքնաշարժի արկածի մը հետեւանքով,

Եթէ գիտես ընդունիլ, վերջապէս, որ Արեւելքը Արեւելք է, եւ Արեւմուտքը Արեւմուտք է եւ անոնք երբեք իրարու պիտի չհանդիպին,

Այն ատեն, եղբայրներդ, զարմիկներդ, դաշնակիցներդ եւ նոյնիսկ թշնամիներդ, դիմացդ ծնկաչոք, ասէն ինչ յանձն պիտի առնեն քեզի «օգնելու» համար, օր մը աճիւններուդ վրայ իյնալու:

Բայց աւելի՛ն. այն ատեն լիբանանցի մըն ես, տղա՛ս:

Իր գրական առաջին փորձերուն եւ լոյս ընծայած առաջին գրքոյկներուն մէջ, Եղիշէ Չարենց առաւելագոյն չափով մը կրնց ՎաՀան Տէրեանի ազդեցութիւնը ու, իր կարգին՝ զգալի ազդեցութիւն մը ձգեց Հասակակիցներուն թէ՛ յաջորդող սերունդներուն վրայ:

Հետեւեցաւ ու Հետեւակներու բանակ մը ունեցաւ, միշտ իր առաջին գործերով:

Ոչ ոք փորձեց կամ կրցաւ փորձել սակայն իր վերջին գործերուն, յատկապէս «Գիրք Ճանապարհի»ն լեցնող գործերուն, այլ մանաւանդ «Մահուան տեսիլ»ին, «Տաղեր»ուն ու «Ուղերձներ»ուն ոճով գրութիւններ յորինել, անոր Համար անշուշտ, որ այդ տեսիլները, տաղերն ու ուղերձները ազդեցութեան երանգներ չէին կրեր եւ իրենց անկրկնելի ինքնատրպութեամբ զեղծ էին օրինակելի ըլլալու դիրութիւններէն:

Նման երեւոյթներու առջեւ է Հաւանաբար, որ գրական տեսարան մը օրինագրած է, թէ ինքնատիպ գրողը ան չէ, որ մէկու մը չի նմանիր, այլ ան՝ որուն մէկը չի կրնար նմանիլ:

Ու անխուսափելի է Հարցումը:

Տեսարանին բացառած բացարձակ բացառութիւններուն շարքին կը պատկանի «Ես իմ անուշ Հայաստանի»ն, թէ նմանութիւններ կրող եւ դիրին նմանութիւններու ծնունդ տուող կրկնակ խոցելիութեամբ մը կը ներկայանայ ընթերցողին:

«Տաղեր»ուն ու «Ուղերձներ»ուն նմանողութեամբ սարքուած որեւէ կտոր վատահարար անմիջապէս մէկ կողմ պիտի չարտէր ընթերցողը, մինչ որքան ալ թեթեւութիւններ բովանդակեն «Ես իմ անուշ Հայաստանի»ի չափերով ու յանգերով կատարուած ձեռնարկները կամ... կապկումները, մարդիկ անպայման մինչեւ ծայրը պիտի փորձեն կարդալ զանոնք:

Կարդայ՝ այո:

Բայց Հակասակ «Ես իմ անուշ»ի ընձեռած նմանողական դիրութիւններուն ու կատարուած փորձերուն, անոնցմէ որեւէ մէկը չէ կրցած ու չի կրնար դոյզն չափով մը հմայաթափ ընել անոր խորհուրդը: Անիկա կը մնայ ինքը՝ «Ես իմ անուշ Հայաստանի», տեսութիւններէն առաջ ու վեր, անկրկնելի:

Ստորեւ մեզի ծանօթ նմանողութիւնները, որոնց առաջինէն երեք եւ երկրորդէն մէկ տուն զեղչուած են Հոս:

Յիշեցնենք, որ առաջինը արտագրած ենք Քուրիկի «Մի-ծաղ»էն (1982, էջ 331), երկրորդը՝ «Ազրակ մարդական»էն (13 Յուլիս 1954), երրորդը՝ «Նայիրի» շարաթաթերթէն (1967, թիւ 48), իսկ չորրորդը Հայրենի մամուլէն: Երրորդը՝ անստորագիր:

**ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ**

(Չարենցի ուրբով, Թ-ուրիկի խելքով)

Ես իմ տարուկ Լիբանանի, նեղ ու նուազ հողն եմ սիրում,  
Իր լեռների, ծովակների, կարճ ու զաճաճ ծառն եմ սիրում,  
Մազարեայի իր դաշտերուն, անհոտ վարդի գոյնն եմ սիրում,  
Նազարասնայ իր գիւղերի չոր ակերուն ջուրն եմ սիրում:

Իմ կարօտած սրտի համար, խմելէն մեծ հաճոյք չը կայ,  
Մեղանին շուրջ, փոքերին պէս, երապուրիչ ծամանց չը կայ,  
Դահլիճների, կէս լոյսին տակ, պարելուն պէս վայելք չը կայ,  
Այս գնացքով, լիբանանցուն, էս աշխարհում անկում չը կայ:

Աշխարհ անցնի, այս տեղի պէս, այլ ու առատ քաղաք չը կայ,  
Նազար - հազար կին ու աղջիկ, չը ներկուած շրթունք չը կայ,  
Պախալին քով, ոսպ ու լուրիս, ածան գնով բան մը չը կայ,  
Որքան ուզէ, սուղ կը ծախէ, ձեռքը բռնող մէկը չը կայ:

Որքան անցնի, սիրում եմ ես, արաբագիր օրէնքը իր,  
Աչքը գոցող, ձեռքը բացող օրէնագէտ անձերը իր,  
Մէկով գնող, հարիւր ծախող, սուտով վեճ մագոյները իր,  
Պաշտօններու ետեւ վազող մեծտիարուստ տեղացին իր:

**Պէյրուք** **ԹՈՒՐԻԿ**

**ԳՈՎՔ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒՆ**

Չարենցի Ուրբով,  
Թ-ուրիկի Բասով,  
Մարգիսեանի գլուխով

Ես իմ անուշ Լիբանանի նոր պիտոյեան խումբն եմ սիրում,  
Կարմիր - ձերմակ շապիկների արեակէզ գոյնն եմ սիրում,  
Տասը ոսկի գրպանեւու ցունկուփին մը սրտին սեղմած՝  
Առանց փորձի խաղի եկած՝ մարզիկներուն խաղն եմ սիրում:

Ուր էլ լինեմ չեմ մոռանար, Բագրամեանը, Ռատինկը մեր,  
Վ.Մ.Մ.ի աչքը ծակող մարտատուչոր Սալամը մեր,  
Ամէն խաղի միջոտ յաղթական Վ.Մ.Մ.ը ճարտար ու վեր,  
Ու Նըժմէի միապաղաղ եւ անհրապոյր խաղն եմ սիրում:

Իմ կարօտած սրտի համար ֆութպոլէն մեծ հաճոյք չկայ,  
Դաշտին վրայ Մարայի պէս առանց կռուի խաղցող չկայ:  
Մաճառներէն աւելի նուրբ, Պրագիլէն ալ շատ արագ  
Լիբանանի շամիիտն ութեան, Մարայէն զատ թեկնածու կա՞յ:

Աշխարհ անցիր էս տեղի պէս ոտք կոտրելու վարպետ չկայ,  
Նազար - հազար ֆութպոլիստ կայ, իրաւարար բնաւ չկայ,  
Մահ, պատերազմ, փայտ, ածելի ու մահաբոյր ասորճանակ,  
Լիբանանէն աւելի լաւ ֆութպոլ խաղցող երկիր չկա՞յ:

**Պէյրուք** **ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ**



**ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ...**

*Ես իմ անուշ Սփիւռքների կոտորակուած բառն եմ սիրում,  
Մեր հին դատի ողբանուագ անլսելի լարն եմ սիրում,  
Բաժան – բաժան հասնայնքների իրարամերժ քէնը անհաշտ,  
Ու Նայիրեան գաղութների բազմաժողոք երգն եմ սիրում:*

*Սիրում եմ ես Սփիւռքը մեր, կուսակցութեանց վէճերն ամէն,  
Օրաթերթերն ու ամսօրնայ հանդէսներու բերքը նսեմ,  
Բեմերից բեմ գործիչների մեծախօսիկ ճառերը սին,  
Ու հնամեայ դպրոցների անփառունակ դասն եմ սիրում:*

*Ուր էլ լինեմ չեմ մոռանայ ես կռուական տղերքը մեր,  
Չեմ մոռանայ աղուէսագիրք մեզ կարդացող ծերերը մեր,  
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն սքեմաւոր սուրբերը մեր,  
Էլի ես ծոյլ, անմարան սփիւռքահայ կեանքն եմ սիրում:*

*Իմ կարօտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկայ,  
Ժողովուրդիս միացման սէս անկարելի ցնորք չկայ,  
Աշխարհ անցիր Նոր Աշխարհի նման չքեաղ երկիր չկայ,  
Ինչպէս անհաս փառքի ճամբայ ես Նիւ Եորքի լոյսն եմ սիրում:*

Պէլրոյթ «ՆԱՅԻՐԻ» - անտորագիր

**ՏԵՄՈՒՐ ԵՐԳԻՇԱՆՔ**

**ԵՍ ԻՄ ԱՆՈՒՄ ՎԱՅԱՍՏԱՆԻ**

(Չարենցեան մոպիւներով)

*Ես իմ անուժ Վայաստանի արիւնահամ բառն եմ սիրում,  
Նահատակուած հոժ ծառերի ծաղկավիժած բարն եմ սիրում,  
Մերկ ու սոված թափառ եկող գաղթողներին հայրենամերժ  
Ու հարսնացած աղջիկների անհարսանիք պարն եմ սիրում:*

*Սիրում եմ մեր երկիրը մութ, ջուրը՝ սակաւ, կեանքը՝ նսեմ,  
Արեւ ցերեկն ու գիշերուայ մութը ցրող աստղը վսեմ,  
Մխամաձկոյթ քաղաքների ներս ու դրսի պատերը սեւ  
Ու որբացած շիրիմների չեղած յուշէ բարն եմ սիրում:*

*Ուր էլ լինեմ, չեմ մոռանայ «միացումի» ձեռքերը մեր,  
Չեմ մոռանայ անբուժելի հագարախոց վէրքերը մեր,  
Թէկուզ սրտիս սիրտն էլ խոցեն անտիպ ընկած գրքերը մեր՝  
Էլի ես խեղճ ու արնաքամ՝ իմ Վայաստան եարն եմ սիրում:*

*Իմ կարօտած սրտի համար ինչ յոյս տուող մի մարդ չկայ,  
Մեզ դժոխքից դրախտ տանող խեղքը գլխին ճակատ չկայ, –  
Աշխարհ անցիր՝ գերի ընկած Արարատին արատ չկայ,  
Ինչպէս վաղուայ յոյսի ճամբայ՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:*

Երեւան ՌԱԶՄԻԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ

«Ես իմ անուշ Հայաստանի»-ն երգիծական չափածոներու ներշնչարան զգարձաւ միայն, այլ ծիծաղելի դառնալու դուռներ եւս բացաւ ոտանաւորի շարք մը բանուորներուն առջեւ:

«Սիրում եմ»ով սկսող ու վերջացող զաւեշտախառն չափածոները դեռ այնքան նեղացուցիչ չթուեցան մարդոց, որքան թուեցան նոյն ոճին դիմած ուրիշներու Հանդիսաւոր լրջութիւնը, երբ ասոնք արագօրէն դափնիներ խլելու մտքով շնայեցան ամէնէն դժնէտեօիլ արարածներու ցաւափիթ կատայցներու դիմաց յեղեղել «սիրում»ը:

Շարքայիներու այդ շարքին մէջ առանձնապէս ուշագրաւ էր Աշոտ Գրաշիի սիրազեղ «պոռթկումը», երբ «Գննիւթօրէն չքեղ ու ստալինօրէն անդուլ» այս աշուղը բարձրաձայն դալլալից:

Կոմունիզմի չքեղ շէնքի պատի մարմար քարն եմ սիրում,  
Սովետական մեր գեղեցիկ, աննման աշխարհն եմ սիրում:  
Մեր իմաստուն Առաջնորդի անպարփակ Հանճարն եմ  
սիրում,  
Մեր մեծ Կրեմլի վեհ ամբիոնից արտասանած ճառն եմ  
սիրում...

Կրկնելով ըսենք, որ եթէ նախորդ էջերուն արտագրուածները զաւեշտախառն սահմաններուն մէջ դիտուած յաջող կամ կէս յաջող Հետեւողութիւններ ըլլալու չքմեղանքը ունէին իրենց հետ, այս մէկը բոլորովին գերծ է նման ներողամիտ վերաբերումներէ, կրելով կապկումի անփառունակ կնիք մը:

Աշոտ Գրաշին այս քայլին դիմած է Հաւանաբար այն մտքով, որ նոյն տարիներուն (1962) «Ես իմ անուշ Հայաստանի»-ն արգիլուած բանաստեղծութիւն էր ըզվանդակ խորհրդային աշխարհին մէջ եւ ինք, «ստալինօրէն անդուլ»ը, կը կարծէր, որ յաւիտենապէս դատապարտուած պիտի մնայ անիկա եւ ոեւէ մէկը պիտի չուզէ կամ յանդգնի իր ստրկամիտ «սիրում»ին դէմ պաշտպանել Ջարենցի ճշմարիտ սէրը:

Կրնայ ըլլալ, ի՞նչ չեղաւ ու չէր կրնար ըլլալ որ խորհուրդներու այդ երկարատեւ քառսին մէջ: Կրնայ ըլլալ:

\*  
\* \*

«Ես իմ անուշ Հայաստան»ի Հետեւողութեամբ տեղական, մարզական, տնտեսական, ազգային ու ընկերային իրադարձութիւններ պատկերելու երգիծական փորձերը Հաւանաբար կանխող էջերուն արտագրուածները չեն միայն, օրաթերթերուն ու Հանդէսներուն մէջ անպայման կան ուրիշներ, որոնք մեր ուշադրութենէն ու Հասողութենէն դուրս ինկած են, կը մնան:

Մենք ունինք կիսկատար ծանօթութիւն մը Հինգերորդի մը մասին, 1969ին Ջարենցին նուիրուած Հայրենի քննադատ

*Գարեգին Յովսէփեանի մենագրութեան էջերուն, Հետեւեալ պայմաններուն մէջ.*

«Անհրաժեշտ է կանգ առնել նաեւ մի պարողիայի պարզաբանման վրայ: Երեւի այդ ծայրայեղ գոհարկ պարողիայի հեղինակը կարծել է, թէ ամէն մի սրբութիւն եւ հանճարեղ կոթող կարելի է էժանագին պարողիայի, պարզապէս յերկրանքի վերածել: Չես կարողանում ըմբռնել, թէ ում պէտք է այդ չափածոյ տափակութիւնը, որի ընթերցանութիւնը ծայրից ծայր միայն տհաճութեան զգացում է յարուցում:

**ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ**

*(Ներսի բերնից) Ե.Չ.ին*

Ես իմ լքած Հայաստանի հոգին փչած տառն եմ սիրում,  
 Մեր վայրերան աշուղների սագին լացի լարն եմ սիրում,  
 Ու նախանձի մաղձը սրտիս, փախուստիս մէջ թշուառական,  
 Ղարապետի փաշաների գարշապարի հողն եմ սիրում:  
 «Ինչպէս ասում են, «Արեւ»ում տպագրուած այս պարողիայի հեղինակը Բոնչունն է» («Ձարենցի պոեզիան», 1969, էջ 64):

*Անկախ քննադատին կարծիքներէն, Հարկ է դնել Հարեւանցիորէն պարզել չարենցեան վերի հետեւողութիւնը ստորագրած Բոնչունի ջղայնութեան պատճառը, անոր պատմական աստատու, ուր կ'ուրուագծուի Ձարենցի կենսագրութեան անըմբռնելի մէկ գիծը, որ հիմք տուաւ օր մը Քիֆիլիսի երիտասարդութեան քննադատութեան, աւելի ուշ, ինչպէս կ'երեւի, Բոնչունի պարողիային, ու հետո ժամանակներուն չի կրնար Հաշտ աչքով դիտուիլ ոչուէ՛ Հայու կողմէ:*

*Որպէսզի պարզ դառնայ ամէն ինչ, ամփոփենք պատմութիւնը, աղբիւր ունենալով չարենցազէտներէն քննադատ Հրանտ Քամրազեանի «Երիտասարդ Ձարենցը» անուն Հատորը, որ լոյս տեսաւ Երեւան, 1974ին:*

*1914ի աշնան պայթած Համաշխարհային Առաջին պատերազմին առիթով տակնուվրայ կ'ըլլայ նաեւ Ձարենցի հոգին եւ Հակառակ Հօրը ճնշումներուն, կը ձգէ դպրոցը եւ կ'անդամագրուի 1916ի ամրան Բանաքեռի մէջ ձեւաւորուած Հայկական կամաւորական բանակին, դառնալով զինուոր երկրորդ վաշտին, որուն մաս կը կազմէր նաեւ Հայրենիքին փրկութեան Համար Ամերիկայէն կոուելու շտապած զբազէտ Վահան Քոթովենց:*

*Սեպտեմբերին, այդ բանակը կը մտնէ Արեւմտեան Հայաստան եւ, Իզմիրէն դէպի Վան քաղաք ատեն, կը Հանդիպի սպաննուածներու ու աւերակներու սարսափելի տեսարանի մը ու պահ մը կանգ կ'առնէ Քափարէզ լեռան վրայ: Քիչ անց, Շատախի ճամբուն, Հէրճ գիւղի մօտ, Նարեկի, Աղթամարի եւ Ոստանի Համար մղուող կոխներէն առաջ՝ վաշտապետը, օգ-*

տաղործելով իրենց աչքին պարզուած սահմակեցուցիչ տեսարանները, մտալուտ կոխէն առաջ գօտեպնդելու Համար զինուորները, ոգեշունչ խօսքեր կ'արտասանէ: Նոյն ատեն խօսք կ'առնեն նաեւ նկարիչ Ա. Տէր Առաքելեան, Վահան Քոթիվենց եւ Եղիշէ Չարենց:

Եւ վերջին անգամ երդում էինք, որ  
Ոչ ոք իր ուխտը երբեք չի խախտի...

Շուտով, սակայն, ազէտը աղէտին կը յաջորդէ եւ ոռւաբանակի Հրամանատարութիւնը, մեկնելով իրեն յատուկ Հաշիւներէն, Հայաստանի սահմաններէն դուրս կ'ընէ կամաւորական որոշ ջոկատները, որոնց մէկ մասը կ'ապաստանի պարսկական սահմանը: Նահանջող այդ ջոկատին մէջ կը գտնուի նաեւ Չարենց, որ պարտութիւններէն ու արիւնոտ տեսարաններէն բոլորովին Հիասթափ՝ 1916ի ձմրան կ'անցնի Քիֆլիս, ուր Հրատարակութեան կու տայ իր «Տանձէական առասպել» պոեմը, զոր կը նուիրէ Դեկտեմբեր 25ին Սուլգուդի դաշտին մէջ ինկած իր նահատակ ընկերներուն:

է. մնաք բարով. ընկերներ արի,  
Դուք պատուով անցաք ձեր կեանքի ճամբան:

Իսկ մենք - նենգօրէն նահանջեցինք յետ-  
Ձիւնադաշտի մրրիկների տակ:

Քիֆլիսէն ետք, Չարենց կ'երեւի Կարս, ուր եղբօրը Հետ կ'աշխատի Շօրը կրպակը ու կը պարապի բանաստեղծութեամբ: Նոյն տարուոյն Սեպտեմբերին կը մեկնի Մոսկուա, ուր կը մնայ վեց ամիս, մինչեւ 1917 թուականի Մարտը, որուն յաջորդող տասներկու ամիսներուն պարբերաբար կ'երեւի Կարս, Քիֆլիս, էրզրում:

Աւելի զարմանալին, աւելի ճիշդ կ'ըլլար ըսել՝ անըմբռնելին, կը պատահի ատկէ ետք:

Ճիշդ այն օրերուն, երբ կամաւորական մեր գունդերը, թրջական հորդաներու ներխուժումին դէմ ծառանալով մէկ կողմէ եւ, միւս կողմէ՝ անցնելով զլուխը երկու Հարիւր Հազար Հայ զաղթականներու, կը քալէին Արեւմտեան Հայաստանէն դէպի Արեւելեան Հայաստան, եւ մտալուտ էին Սարգստայան պատեան պատմալիւր կոխները, Չարենց, «1918ի վաղ դարնան», կը վճռէ «դուրս գալ մեծ աշխարհ, գնալ մինչեւ Չինաստան», եւ ընկերոջ՝ Վիվանին Հետ կ'ելլէ ճամբայ: Ոստնափրկութիւնը իրադարձութիւններու Հետեւանքով, զիրենք փոխադրող շոգեկառքը կանգ կ'առնէ Արմաւիրի մէջ, ուր կը Հանդիպին Հայ զաղթականներու, անոնց շարքին նաեւ իր ծնողներուն, որոնք կը տանին զինք իրենց Հետ, Մայկոպ: Կարճ ժամանակ մը Չարենց կը մնայ Հոն, ապա կ'իյնայ Յարիցին, կը մտնէ կարմիր զօրքերու շարքերը եւ անոնց Հետ կը շարունակէ քաղաքներ քանդելու եւ աւերելու իր յանձն առած կարմիրաշառայլ արկածախնդրութիւնը:

*Հրանտ Թամրազեան շարունակելով կը յիշեցնէ.*

«1918 թ. վերջերին նրան տեսնում են Անդրկովկասի քաղաքներում: Թիֆլիսի երիտասարդութիւնը նրան արդէն գիտէր, Համարում էր յեղափոխական-բոլշևիկ, ոմանք մինչեւ իսկ դէպի Հիւսիս ունեցած նրա ջերմութիւնը դիտում են որպէս դաւաճանութեան պէս մի բան ազգային իտէալների նկատմամբ» (էջ 63):

*Ուրեմն՝*

«1918 վաղ գարնան ճամբայ կ'ելլէ դէպի մեծ սլիսարհ», իսկ «1918 թ. վերջերին նրան տեսնում են Անդրկովկասի քաղաքներում»:

*Հոս կանգ առնենք եւ Հաշուի առնենք «1918 թ. վաղ գարնան» եւ 1918ի վերջերուն միջև ինկած ժամանակը եւ մտաբերենք այդ եօթը-ութ ամիսներուն մեր Հայրենիքին ու ժողովուրդին ապրած բարդ կացութիւնը, նախընթաց շունեցող ելեւէջներուն արագութիւնը, Մայիսեան պանծալի յաղթանակները, բնիկ թէ «եկուոր» Հազարավէրք բեկորները ոտքի կեցնելու գործիչներուն դժնդակ փորձը, պետութիւն ստեղծելու եւ մնալու Հերոսական ճիգերը: Եւ այն Հազար ու մէկ ազգակերտ ձեռնարկները, որոնցմէ Հեռու մնացած էր «մեծ աշխարհ» ելած Եղիշէ Չարենց եւ «Հեռու-Հեռուներում» ամբոխներու Հեռ ամբոխային տրամադրութեամբ պարզ դառնալու Հեշտանքով կ'արբենար: Այս մէկը մեզի Համար է՛ր եւ կը մնայ Չարենցի Աքիլէսի կրունկներուն ամէնէն անդամանելին, որ իբրեւ մարգարէութիւն դիտուեցաւ ու փառարանուեցաւ տասնամեակներ շարունակ եւ այնքան մեծ թիւով մարդոց կողմէ:*

*Ցիտունական Թուականներէն առաջ ու ետքը Եզիպտոսի «Արեւ» օրաթերթի աշխատակից Բոնշոն, Հեղ մը Հարկադրաբար նահանջած եւ ապա կամովին վտանգի գիծերէն Հեռու մնացած Չարենցի իրականութիւնը, փախուստներն ու բացակայութիւնները Հաշուի առնելով Հիւսած է իր պարողիան, ու եթէ բիրտ ստացուած են իր բառերը, անպայման ինք չէ, չի կրնար ինքը ըլլալ յանցաւոր:*

*Անշուշտ, մենք ամէնքս պիտի ուզէինք, Չարենցի յիշատակին Համար պիտի ուզէինք, ու նաեւ Հայ մարդուն արժանապատուութեան Համար, որ «կարմիր պոետ»ը միայն Հինգ ամիս մնացած չըլլար կամաւորական շարժումին մէջ, այլ առաջին ընկրկումէն ետք, փոյթ ընէր կրկին միանալու 16 Հազարը անցնող այդ վեհապանծ բանակին, ու անոր Հետ շարունակէր Հարուածել դարաւոր ոտիսը, եւ ապա՝ անոր Հետ դարձեալ, մաս կազմէր գաղթականներու նահանջը կազմակերպող գործին, եւ Հուսկ ապա՝ Սարդարապատի մօտ ներխուժող Հորդանները Չախճախող անոր սխրագործութենէն ցուք մը ինկած ըլլար նաեւ իր վրայ, ինչպէս ինկաւ նոյն բանակին մէջ կռուած իր զրական բարեկամներէն Ակսել Բակունցի եւ Վահան Թոթովենցի շողափայլ ճակատներուն:*

Պատահեցաւ սակայն, որ մարդիկ նոյնիսկ վերապահու-  
թեամբ չդիմաւորեցին Չարենցի նահանջն ու տաք կէտերէն  
անոր յաջորդական փախուստները, այլ իրականութիւններուն  
տրամագծօրէն Հակոտակ դիրքերու վրայ դիտեցին զինք,  
ժպրհեցան ա՛նգամ ընթերցողին ծանօթութիւններն ու յիշ-  
դութիւնը արհամարհող սարդարապատեան պսակ մը զետեղել  
անոր դիտուլ:

Նման առասպելներ սարքողներէն մէկը Հանդիսացաւ Ալ-  
մաստ Չաքարեան, որ՝

«Գրական թերթ»ին յանձնած իր մէկ գրութեան մէջ  
կ'ըսէ, թէ՛ երբ ուսական զօրքերը կը լքեն կովկասեան  
ճակատը՝

«Երիտասարդ Չարենցը այս անգամ Սողոմոն եղբօրը  
Հետ միասին, զէնքը ձեռքին զօրավար Անդրանիկի դրօշին  
ներքոյ կուում, կուուելով ճաշակում է էրզրումից Կարս նա-  
Հանջի, ապա Հայրենի քաղաքը Թուրքական ոստիան յանձնելու  
ա՛հեղ փորձութիւնը» (1990, թիւ 17):

Իր «Ազգային երազ» պոեմին գրառման թուականէն գի-  
տենք, որ Չարենց եղած է էրզրում, բայց ստոյգ չէ Անդրանիկի  
ջոկատին կամատրագրուած ըլլալու Հանգամանքը, մինչեւ  
անգամ խիստ կասկածելի է այդ մէկուն ճշդութիւնը, այն չոր  
տրամաբանութեամբ, որ 1917 Դեկտեմբերին էրզրումի մէջ  
սկսած պոեմը աւարտած է Թիֆլիս՝ 1918 Փետրուարին, Հաւա-  
նաբար մօտիկ-մերձաւոր այն օրերուն, երբ Թուրքերը գրաւե-  
ցին էրզրումը (26 Փետրուար):

Այս փաստը ինքնին կարծել կու տայ, որ Չարենցի էրզր-  
ումի Հանդիպումը եղած է բոլորովին պատահական Հանդի-  
պում մը եւ ոչ թէ՛ 16 Հազար կտրիճներու կամատրական ան-  
դարձ յանձնառութեանց առնչուող յատուկ տենդ մը: Այդ  
պայմաններուն մէջ, ներելի է մտածել, որ բանաստեղծը  
վտանգին ձայնը Հազիւ լսած՝ շունչը առած է Թիֆլիս:

Հոս, արդէն, ջարդուփշուր կ'ըլլայ Չարենցին վրայ Ալ-  
մաստ Չաքարեանի նետած ծիրանին, դուռ բանալով նաեւ  
նոյնքան աննպաստ Հարցումներու:

Արդարեւ, կամաւորի այն ի՛նչ յանձնառութիւն է, երբ  
ծուատուած Հայրենիքը եւ կոտորակուած ժողովուրդը պաշտ-  
պանելու բախտորոշ պահուն ենթական կը լքէ իր դիրքը, եւ  
երկրորդ՝ այն ի՛նչ զօրավարի գօրութիւն է, որ իր «դրօշին  
ներքոյ» ծառայելու կանչուած կամաւորին փոխանակ կարգա-  
պահութեան երկաթեայ օրէնքը յիշեցնելու, թոյլ կու տայ անոր  
ըստ կամս վարուիլ իր ուխտին Հետ:

«Պարզից էլ պարզ» կը դատնայ, որ Ալմաստ Չաքարեանի  
Հիւսած «Ներխափը» ո՛չ կամաւոր Չարենցին պնտի կը բերէ եւ ոչ  
ալ կամաւորական առաջին գունդի Հրամանատար Անդրանիկին:

Պատմական նոյն իրադարձութիւններուն, մասնակցու-  
թիւններուն, խաղերուն ու անգօրութիւններուն մասին քննա-

դատ Հրանտ Քամրազեան եւս ունի ակնարկ մը, ուր Չարենցի օգտին արձանագրուած մասը, կը կարծենք, դարձեալ Չարենցի օգտին չէ:

**Կարդանք.**

«Ցարական բանակը ուղմի դաշտում վարում էր դիւանագիտական մեծ խաղ, նրա նաՀանձների եւ առաջխաղացումների իմաստը աւելի քան պարզ էր... Հայաստանը թողնել առանց Հայերի: Դիւանագիտութեանը զոՀ էր գնում Հայրենիքը, թուրքերը անարգել ոչնչացնում էին ժողովրդին, իսկ կամաւորական ջոկատները, որոնց մէջ էր բանաստեղծը, անզօր էին կասեցնելու արեան ու խարդաւանքի ընթացքը:

«Չարենցի աչքի առաջ ընկնում էին Հինաւորաց քաղաքներ Վանը, Սարիղամիշը, Էրզրումը, Կարսը, Հրկիզում են գիւղերը» «Երիտասարդ Չարենցը», էջ 26:

Ցարական բանակը, ճիշդ է, դիւանագիտական խաղեր կը խաղար մեր ու մեր պատմական Հայրենիքին գլխուն, քայց փաստ է, որ անոր տեղատուութեան եւ մակընթացութեան Հորովոյթներուն ատեն, եւ կամաւորական մեր ջոկատներուն ներկայութեան, թուրքերը այնքան ալ «անարդել» չէին կրնար թրքանալ եւ չկրցան թրքանալ: Համարձակեցան անարգել թրքանալ Լենինի «Դէպի տուն» հրամանագրին ի Հետեւանս ոռուսական զօրքերուն կազմալուծման վաղորդային, Հոկտեմբեր 1917էն սկսեալ, եւ նոյն պատճառով էր, որ ինկան մեր Հինաւորաց քաղաքները, վերեւ յիշուած շարքին հրզրումն ու Կարսը վերջին անգամ, յաջորդաբար 26 Փետրուար 1918ին եւ 26 Ապրիլ 1918ին, եւ ինկան ո՛չ թէ Չարենցի աչքի առաջ, այլ՝ Չարենցի աչքէն Հեռու, երբ Չարենցի աչքը ուրիշ տեղ էր, ու սիրտը յանձնուած էր Հայրենական ու ժողովրդանուէր ապրումներէն բոլորովին Հեռու Հեռանկարներու, երազներու:

«Այսպիսի մի երազ էր, - կը գրէ Քամրազեան, - 1918 թ. վաղ գարնան վճիռը՝ դուրս գալ մեծ աշխարհ, գնալ մինչեւ Ալեքսանտան» | «Երիտասարդ Չարենցը», էջ 64):

«Վաղ գարուն»ը, ինչպէս սորված ենք մանկուց, Մարտ ամսոյն կէսերուն կը գուգադիպի կամ Ապրիլի առաջին շաբաթներուն, երբ Չարենց «կապկպելով գրքերն ու թղթերը» արդէն Հասած էր Արմաւիր, թուրք փաշաներուն անՀասանելի տեղ մը, Հետեւաբար ճիշդ չէ «Անդրանիկի դրօշի ներքոյ» պատկերացնել զինք, զէնք զնեղ ձեռքը եւ ապա ըսել, որ ան ճաշակեց «Հայրենի քաղաքը թուրքական ոստիկան յանձնելու աՀեղ փորձութիւնը», մինչ Հայրենի քաղաքը յանձնուեցաւ, երբ ինք, անգամ մը ըսուեցաւ արդէն, Հեռուններուն, «խելագարուած ամբոխներու» խառնուած՝ անորոյ քաղաքներ գրաւելու արկածախնդրութեամբ տարուած էր:

Հակառակ այս բոլորին, կամ անտեսելով անՀերքելի այս իրողութիւնները, ճրի պսակներու այս պսակադիրը, Ալմաստ Չաքարեան, «Գրական թերթ»ին յանձնած յօդուածէն երեք

տարի առաջ «Պատմաբանասիրական Հանգես»ին մէջ քաջաբար կը գրէր.

«Հայոց գրականութեան պատիւ է բերում այն իրողութիւնը, որ էրզրումից Սարգարապատ նահանջի եւ ապա ճակատամարտի օրհասական օրերուն զէնքը ձեռքին մարտնչել են Ե. Չարենցը, Վ. Թոթովենցը, Ալ. Բակունցը» (1987, թիւ 2, էջ 7):

Վահան Թոթովենց եւ Ակսել Բակունց՝ այո՛, ասոնց մասնակցութիւնը պատիւ կը բերէ Հայ գրականութեան, բայց այդ պատիւը իրենց գոհաբերութիւններով վաստակած քաջերու խոյանքներուն ատեն, ինչպէս ըսուեցաւ, Չարենց խառնամբոյններուն Հետ, յանուն կարմիր յեղափոխութեան, քաղաքներու վրայ կը գրոհէր, որուն փառքը ի կենդանութեան կարծ պահ մը եւ յետ մահու ամբողջ երեսնամեակ մը վայելից այնքան ձրի չաղփաղփութիւններով...

Չարենց, ցաւօք, զուրկ մնաց սարդարապատեան պատիւէն...

Չարենցի միւս պատիւները կը բաւեն իրեն, իրմէ կ'աւելնան նոյնիսկ, որոնք, սակայն, չեն կրնար մոռցնել բոնչոնեան դիտողութիւնը, «փախուստին մէջ թշուառական» առած անոր ոչ պատուարեք քայլերը:

Կենսագրական այս կէտը չէր կրնար վրիպիլ ու չվրիպեցաւ ալ Հրանտ Թամրազեանի ուշադրութենէն, որ կոպիտ անկեղծութեամբ Բոնչոնի որակած «փախուստը» Համարեց պարզապէս «խենթ երազ», սա պայմաններուն մէջ.

«Իրօք, դաժան իրականութեան մէջ, բանաստեղծի Հոգում ծաղկում էին նաեւ խենթ երազներ, որոնց, ի հարկէ, վիճակուած չէր երկար կեանք»:

«Այդպիսի մի երազ էր 1918 թ. վաղ դարնան վճիռը դուրս գալ մեծ աշխարհ, զնալ մինչեւ Չինաստան»:

Թամրազեանի Հատորին լոյս ընծայման թուականը «փափուկ ճնշման» ժամանակն էր, երբ աւելին կարելի չէր ըսել թերեւս, Հաւանաբար կասկածի շուք մը չձգելու Համար այնքան դունազարդուած ու այնքան չարաչաՀուած խնդրոյ առարկայ «փախուստին» եւ նոյն փախուստէն ծնունդ առած «Ամբոխներ»ուն վրայ:

Ճիշդ է Թամրազեանի փխտածանաչումը, թէ նման խենթ երազի մը «վիճակուած չէր երկար կեանք», աչնան վերջաւորութեան Չարենց վերադարձաւ Հայրենիք, բայց իր բացակայութեան այդ «կարճ» շրջանին էր, որ մեր Հողին վրայ ու Հոգիներուն մէջ տեղի ունեցան դարերու արժէք ունեցող իրադարձութիւններ, որոնց ցաւագինսօրէն մաս չկազմեց ինք, նոյն օրերուն մեր գրականութեան երկնականարին վրայ շողացող ամենավառ աստղը՝ Եղիշէ Չարենց:

(Շար. 7) ՊՕՂՈՍ ՄՆԿՊԵՄՆ



## Կղճարներ

### ՃՇԳՐՏՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ՈՒ ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԵԱՆ...

Խմբագիրներու կողմէ աշխատակիցներուն վատահերու սկզբունքը գնահատելի սկզբունք է Հարկաւ, բայց միայն այն պարագային, որ այդ աշխատակիցները շօշափուած նիւթին հետ մտերիմ կապեր հաստատած ըլլալու հաւաստիքներ տուած ըլլան, այլապէս կրնան թիրիմացութիւններու դուռ բանալ ու կասկածի տակ ձգել ճշմարտութիւններու հանդէպ տուեալ թերթին նախանձախնդրութեան չափը:

Երևոյթը հազուադէպ չէ:  
Յօդուածագիրներ կան մեր մամուլին մէջ, որոնց մէկերկու գրութիւններէն ետք, յաջորդներուն մարդ սիրտ կ'ունենայ մօտենալ ո՛չ թէ իրենց ստորագրութիւններուն առաջացուցած մղումներով, այլ՝ ընդգրկած նիւթերուն պատճառով, եւ յաճախ այնպիսի անհեթեթութիւններու ականատես կ'ըլլայ, որ խմբագիրներուն վատահումները յարաշար օգտագործած ըլլալու փաստին հետ ընթերցողին նկատմամբ յարգալիք ըլլալու որեւէ պարտականութիւն չեն զգար:

Նման գրութիւն մը կարդացինք Լուս Անճելոսի «Նոր կեանք»-ի մէջ, Անդրանիկ Սարեան ստորագրութեամբ, ի մասին «Յակոբ Օշական»-ի (31 Դեկտեմբեր 1998):

Օշական կարդալու, չկարդալու, վերստին անոր վերադառնալու խոստովանութիւններ ընելէ ետք, յօդուածագիրը դարձեալ պահանջ կը զգայ Օշական կարդալու՝

«Մանաւանդ որ այս անգամուայ վէպը հիւսուած էր մի ինչ որ պարսկահայ անձ ու հերոսի շուրջ, որ կրում է «Մահակ Պարզեւեան» խորագիրը: Դա ամսէ ամիս լոյս էր տեսնում «Բազին» ամսագրում, Պօղոս Մնայեանի մանրախոյզ հսկողութեան բովից անցնելուց յետոյ: Լա՛ւ, որ դա ձեռքս էր հասնում ամսէ ամիս, եւ ժամանակ էր տալիս շնչելու եւ ինքս ինձ հաշի տալու սովորականից պարզ եւ դիրամատչելի թուող այս վիպագրութեան էութեան շուրջ: 450ից 500 էջ, եւ... եւ խնդրում եմ Հարց չտաք թէ ի՞նչ ձգտումով եւ ո՞ւմ համար էր գրուած այդ պարսկահայ Պարզեւեան Մահակի պատմութիւնը: Որովհետեւ՝ ինչ որ կարդացել լաւ էլ հասկացել եմ, բայց որ ասեա մի շող, մի ցոլք, մի սեւեռուն դրուագ ու message մնացել

է մտքունս թէ չէ, դա ոչ ինձ է յայտնի, ոչ եւս Երկնային Տիրոջը» (էջ 18):

Յօդուածագիրը լաւ կ'ընէր անշուշտ, եթէ նախ կարդացածէն ոչինչ մնացող իր մտքին եւ Երկնային Տիրոջ Հասկացողութեան միջեւ Հաւասարութեան նշաններ չընէր, եւ երկրորդ՝ իր կարդացածը «լաւ էլ Հասկանալու» աւելորդ Հաւաստիքներ չշտայէր իր էջերուն, երբ դոնէ մեր տեսած այս գրութեան մէջ խիստ կասկածելի բնոյթ մը կը մատնէ Հասկանալու իր ունակութիւնը: Հասկացողութեան ինչ յաւակնութիւն է ան, որ Պարսկաստանի ու պարսկահայերու Հետ որեւէ կապ չունեցող Սահակ Պարզեւեանի մասին գրած Օշականի վէպը «Պարսկահայ Սահակի պատմութիւն» կը յորջորջէ:

Ուրիշ պատմութիւն.-

Նոյն էջին մէջ յօդուածագիրը կը գրէ.

«Օշականը՝ իր «Հարթենք»ի ցախաւելով, ուժ ասես աւլած ու փողոց նետած իր դաժան սկզբունքների անբեկ թելադրանքով: Այնքան դաժան ու անքնելի՝ որ «Ալազեազի մանիների» ու «Ապու - Լայա Մահարի» ստեղծագործող յաւերժ անմահ Ա. Խահակեանին անգամ պատիւ չարեց մի մութ անկիւն տեղ տալու իր 10-12 Հասորնոց «Համապատկեր Գրականութեան» կոթողային գործում»:

Օշականի յիշեալ գործը «Համապատկեր Գրականութեան» չի կոչուիր, կը կոչուի «Համապատկեր Արեւմտահայ գրականութեան»: Օշականի դէմ անպայման բան մը ըսելու մոլեգնութիւնը յօդուածագիրին մոռցնել տուած է նոյնիսկ օշականեան շարքին անունը: Այլապէս, դուցէ այլուր վերապահէր «Գաւերթ անմահ» Խահակեանին շող տուած իր տուրքը եւ Հետո մնար Արեւմտահայ գրականութեան պատմութեան մէջ արեւելահայ դէմք մը փնտտելու փորձութիւնէն:

Դիտել տանք նոյնպէս, որ «Համապատկեր»ը կանգ առաւ 10ի վրայ, 12ի չհասաւ: Օշական 10ին եւ 12ին միջեւ ինկած գրականութեան պատմութիւն մը ունի, ուր Խահակեանի մասին վերլուծումներ կարդալու պատեհութիւն պիտի տրուի յօդուածագիրին եւ ուրիշներու, եթէ Համբերութիւն ունենան:

«Նոր կեանք»ի յօդուածագիրը կը շարունակէ.

«1915ին Հրաշքով մահից փրկուած Օշականը նախ Բուլղարիա, ապա Կիպրոս է Հաստատուում՝ «Մելլոնեան»ում, որպէս գրականութեան դասատու»:

Պուկարիայէն ետք Օշականի յաջորդ կայանը ճիշդ չէ Կիպրոսը նկատել: Օշականի մակարդակով դէմքերուն Համար ժամանակային նոյնիսկ կարճ պահը նշանակութիւն ունի, ինչպէս նշանակութիւն ունին եւ ունեցած են կարճ պահերով անոնց այցելած վայրերը: Հետեւաբար, պայման է ընթերցողին Հաղորդել ամբողջական ծանօթութիւններ, որոնք դժբախտաբար պակասած են սոյն յօդուածագիրին: Կարճ. Պուկարիայէն ետք Օշականի յաջորդ կայքը Գահիրէն էր, ուր մնաց եւ

ուսուցչութեամբ պարապեցաւ ամբողջ երկու տարի, «Պարսկահայ Պարգեւեան Սահակի պատմութեան» միջնավայրին մէջ ու ճանչցաւ նոյն վէպին գործող անձերուն մեծ մասը:

«Յակոբ Օշական» խորագրուած գրութեան Հեղինակը չօչափած է նաեւ Զօպանեան-Օշական Հարց մը, յիշեցնելով, որ Օշականի «եւ ուրիշների միջեւ բանավիճային Հանգամանքը այնքան լարուեց եւ սրուեց, որ Արշակ Զօպանեանը Համբերութիւնից ելած, Օշականին մամուլում բացէ ի բաց անուանեց «էշական»:

Մեր գրականութեան մօտիկ անձերը ծանօթ էին Օշականը պատուելու Զօպանեանի այս չքնադ որակումին, բայց միշտ ջանք կ'ընէին մոռնալ դժուար մոռցուելիք այդ անարգանքը, ու ատիկա ոչ թէ Օշականին խնայելու համար, այլ, մեղմ ասած, Զօպանեանի յիշատակին...

Յօդուածագիրը Օշականը կը տանի Փարիզ, ուր կը Հիւրընկալութի Զօպանեանի կողմէ եւ երկուքը մէկ գիրքերու քարայրին մէջէն միասին ու կուգէ կուգ ու անցքէ անցք անցնելէ ետք՝

«Օշական ցնցուած ու խղճի խայթից Հալածական, տուն վերադառնալով մէկ շունչով մի գիրք Հրատարակութեան տունց, «Թուղթին փառքը» անունով, ձօնուած, իր կողմից Հալածուած Արշակ Զօպանեանին»:

Մենք, որ քիչ մը ծանօթ ենք Օշականի գրականութեան, իր կուտակած Հակայ վաստակին մէջ երբեք չենք յիշեր «Թուղթին փառքը» անունով գիրք մը, ոչ իսկ նման խորագրի մը յիշատակութիւնը: «Թուղթին փառքը» անունով գրքոյկ մը ունի Զօպանեան: Օշականն ու Զօպանեանը իրարու Հե՛տ շփոթուած են արդեօք Հոս: Ով գիտէ...

Տասնամեակ մը առաջ լոյս տեսած գիրքերու Հերոսներուն ծագումը չկարենալ ճշդելու փաստեր տուած մարդը եօթանասուն տարի առաջ գրուած գիրքերուն մասին երեւի չէր կրնար Հաւաստի տեղեկութիւններ Հաղորդել:

«Նոր կեանք»ի յօդուածագիրը նոյն գրութեան մէջ կը խօսի նաեւ «Մեհեան»ի եւ մեհեանականներու մասին, ընդգծելով դերը Կոստան Զարեանի. «Ընքն էլ լինում է գլխաւոր խմբագիրը, որը աւաղ ութ-ինը ամիս աւելի կեանք չէ ունենում, 1914ի ծագած պատճառի Հետեւանքով»:

«Մեհեան»ի թիւը ութը չհասաւ, ոչ ալ, ցաւօք, բարձրացաւ իննի: Կանգ առաւ եօթնի վրայ: Ինչ կը վերաբերի Զարեանի գլխաւոր խմբագրի Հանգամանքին, այդ մէկը յիշեցնենք իրեն եւ այլոց, որ բոլորովին անուանական էր, որովհետեւ «Մեհեան»ի գործն խմբագիր չէր կրնար ըլլալ այն օրերուն Փրանսագիր Զարեանը:

Յօդուածագիրը դարձեալ կը վերադառնայ Կոստան Զարեանի կենսագրութեան, Հայաստանէն ետք զայն կը բնակեցնէ Հոս, «Որտեղից սկսում է աշխատակցել «Հայրենիք» ամսա-

գիրին մանաւոր պայմանով: Եւ 1928ին Հրապարակ է Հանում իր պոեմների գլուխ-գործոց՝ «Տատրագոմի Հարսը», ձօնուած Ա. Ահարոնեանին»:

*Եթէ թուականները նշանակութիւն ունին երկի մը արարման ու Հրատարակութեան պատմութեան մէջ, բժախնդիր ըլլանք գործածելու գոնէ՝ ճիշդ թուականները ու այս պարագային աւելցնելով բսենք, որ «Տատրագոմի Հարսը» 1928ին Հրապարակ չհանուեցաւ, առաջին անգամ Հրապարակ Հանուեցաւ երկու տարի ետք, «Հայրենիք» ամսագրի էջերէն, 1930ի Ապրիլին:*

«Նմանը չունեցող մի եզակի ստեղծագործութիւն» կը Համարէ զայն յօդուածագիրը ու կը յիշէ անոր մասին շուրջօրէն արտայայտուած դէմքերը, - Զօպանեան, Ահարոնեան, Նաւասարդեան, Մխաթեան, անշուշտ ոչ թէ գործը մեծարելու անխառն աստուծով, այլ՝ Հակադրաբար Օշականին:

«Իսկ, - կը շարունակէ ան, - երէկուայ գրչեղբայրը եւ գործընկեր Յակոբ Օշականին ականջ դնենք, թէ ի՞նչ է իր կարծիքն ու տեսակէտը»:

*Ու ականջ դրինք.*

«Սուտ ու փուտ, անկենդան, շինծու պոեմ մըն է «Տատրագոմի Հարսը», բայց զարմանացեալ, զարդարուն, «ի Հանդերձս ոսկեհոռոս գարդարեալ»: Ա. Ահարոնեան Եեքսփիր մը տեսաւ անոր Հեղինակին ետին: Ատիկա կոյրին լոյսի վրայ traité մը գրելուն կը նմանէր, ու զիս չզարմացուց: Բայց Զօպանեանը կը ճանչնար գոնէ ազգերու զրականութեանց լաւագոյն պոեմները: Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ մեծատաղանդ բանաստեղծ մը տեսաւ պոեմին ետին: Հոս է տրտմութիւնը: Ա. Զօպանեան (Հասարակ) մարդոց Համեմատ ակնոցներ ունի... («Համապատկեր», Հատոր 10, էջ 364):

*Օշականի ձեռագիրին կապուած է ճիշդ չկարդացուելու տխուր Համբաւ մը, բայց կը խորհինք, թէ սխալ կարդացուած ամէն բառի մեղքը պէտք չէ անպայման Օշականին կամ իր ձեռագիրին ուսերուն բարդել: Ճիշդ սխալ կարդացողներ ալ չեն պակասած ու չեն պակսիր մեր մէջ, ինչպէս է պարագան Հոս: Ընթերցողը ինք պէտք չունի աղբիւրին օգնութեամբ ճշդելու վերի նախադասութեան մէջ ճշացող «զարմանացեալ» անճաշ բառին իրականութիւնը, որ պարբերութեան մթնոլորտէն ու դրացի բառերուն նկարագիրէն Հետեցնելով պէտք է ըլլայ «զարգմանակեալ», բայց անպայման պէտք ունի ճշդելու իմաստը Ա. Զօպանեանի անունին դիմաց դրուած փակագծեալ Հասարակին, որ գոյութիւն չունի բնագրին մէջ...*

*Ձրանք, որ բժախնդիր ըլլայր ու ճշգրիտ ըլլայր կարեւորութիւն չունին գրութեան Համար, Հապա ի՞նչը կարեւորութիւն ունի, ճիշդ սխալ արտագրելը:*

*Օշականէն մէջբերուած վերի պարբերութենէն ետք, յօդուածագիրը կը բացազանչէ.*

«Եւ ինչեր, ինչեր»...  
Չմոռնանք յիշեցնել, միւս կարելոր Հարցը, ա՛յն՝ որ յօղ-  
ւածագիրը գրչակիցներէն ու գրչեղբայրներէն կը սպասէ բար-  
եացակամ ըլլալու պարտականութիւն մը, որ նոյնքան սարսա-  
փելի է իբրեւ մտայնութիւն:

Որովհետեւ, գրչեղբայր ու գործակից ըլլալը երբեք պատ-  
ճառ մը չէ եղած ու չի կրնար ըլլալ գրական գործի մը մասին  
անպայման դրական կարծիք մը յայտնելու, եթէ գործը նման  
զեղումներու առիթ տուող որակներու վրայ խարսխուած չէ:  
Օչական սովորութիւն ունէր եղբայրութիւն ու ընկերութիւն  
ընել նախ գործերուն եւ ապա միայն եւ անպայման գործերուն  
ընդմէջէն անոնց Հեղինակներուն Հետ:

Ասիկա մօտեցում մըն է, որ կը թուի, թէ ամէն մարդու  
մօտ նոյն արժէքը չունի: Այդ պատճառով է, որ ոմանք Հաւաս-  
տի տեսութիւններու տէր կը մնան եւ կ'ունենան մնայուն բա-  
րեկամներ, իսկ ուրիշներ փխրուն ենթահողերու վրայ կառուց-  
ւած վատուժ տեսութիւններ ու զնայուն հողեղէններ...

Յօդուածագիրը ի նպաստ «Տատրագոմի Հարս»ին եւ,  
ըստ իր նախատրամադրութեան, ի վնաս Օչականին՝ յիշած է,  
ինչպէս տեսանք, կարգ մը Հանգամանաւոր դէմքերու կարծիք-  
ները, բայց որպէսզի Օչական բոլորովին առանձին չմնայ  
տատրագոմեան իր տպաւորութեան մէջ, զոնէ նոր սերունդ-  
ներուն Համար արտագրենք նաեւ Վազգէն Մուշանեանի խօս-  
քը, զոր մեծ մեհնականէն աւելի քան տասը տարի առաջ  
աղաղակած էր ան...

**ՏԱՏՐԱԳՈՄԻ ՀԱՐՍԸ, ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԻ.-**

Հարկ է զգուշանալ Հապճեպ ու միահամուռ վաւերացում-  
ներէն՝ որ վերջին տարիներու ընթացքին, դիւրին յաղթանակ-  
ներու առաջնորդեցին գաղթաՀայ կարգ մը գրողներ: Որովհե-  
տեւ ո՛չ պատեՀապաշտ դպիրներն են - սա՛՛ անկող գրադատ-  
ները - եւ ո՛չ ալ մտքի վարձկան դարպասողները որ կրնան  
Հաստատել գրագէտի մը արդար իշխանութիւնը: Քուէն կը  
պատկանի վաղուան բարձրացող սերունդին - որ պիտի մեծ-  
նայ Հայրենի Հողի պատառի մը վրայ ու Հոս՝ այս ցիր ու ցան  
գարութիւններուն մէջ, մեզ:

Դժուար է այս խորհրդածութիւնները չընել, երբ մարդ կը  
կարդայ «Տատրագոմի Հարսը» ու այդ բառերու շքեղ կոյտին  
մէջէն, կը փնտռէ Հինաւորց ու արինայեղց երկիրը որուն  
ցաւագին երագովը կերակրուեցան ամբողջ սերունդներ: Ո՞վ է  
այս մարդը, այո՛, գրասեղանին վրայ Հակած դպիրը այս, որ  
ուրիշին յիշողութեան քանի մը էջերուն վրայ՝ քանի մը ժամ  
որոճալով, տխուր յաւակնութիւնը ունի Հայոց երկրին մեռեալ,  
այլ այնքան մերձ անցեալը երգելու: Մենք կը մերժենք այս  
մարդուն գրադարանային դիւցազներգութիւնը՝ որ մտքի ըն-

դարձակ գիշութին մըն է պարզապէս:

Որովհետեւ ո՞ւր է արիւնէ թըջած կարմիր հողը, ուր կը թաւալին յեղափոխականին յուշերը: Իր ներբանները այրած են բնաւ այդ հազարամեայ քարերուն վրայ: Ո՛չ, աշխարհագրական տախտակի կտոր մըն է այդ երկիրը, այս մարդուն համար, որ զարմանալի, անկարելի դիրութեամբ մը կ'երգէ ի Հաշիւ այս կամ այն բանակին: Ստար մըն է, որ կեցած մեր ցաւի ընդարձակ տարածութեան դիմաց՝ կ'ապաւինի իր բառերուն գեղեցկութեան, մեզ խաբելու համար:

Ու այդ բառերը սուտ կը խօսին: Ձի բառերուն ետին մենք կը փնտռենք մարդը իր ստոյգ յուզումներով, իր հոգեկան ալիքներով: Բառը արարք մըն է մեզի համար, մուրհակ մը՝ որուն դիմաց, իբր երաշխիք, կայ վաւերական բան մը: Հրէական աստուածաշնչական աւանդութիւնը արարչութեան խորհուրդը պատմել կը սկսի այսպէս - *Սկիզբէն էր բանը* (le verbe):

Արդ՝ յարատեւ, դժուար, ցաւառիթ աշխատանքով, կարելի է ըսել՝ ներքին Հրկիզումով միայն բառը կրնայ բարձրանալ բանին արարչագործ ու զմայելի գեղեցկութեան:

Ահա թէ ինչո՞ւ Հարկ չենք տեսներ անդամագնեկ գործը, որովհետեւ աղանական արատը, որով ան վրիպած է, զայն կը վերածէ, ըսինք արդէն, գրողարանային բառերու շքեղ կոյտի մը: Կը ինչդրենք որ այս մարդը զգուշանայ Հինցնելէ, մաշեցնելէ, իր պարունակութենէն պարպելէ հայոց լեզուին «արեւահամ» բառերը:

Ու կը ցաւինք որ «Հանճարեղ» մարդու իր սոնքացող կեցուածքը, իր վեհափառ արհամարհանքն ու անյատակ ունայնամտութիւնը եւ ո՛չ իսկ մեր Հին ընկերոջ Չերմ ու երկարաչունչ Չատագովականը՝ ոչինչ կ'աւելցնեն այդ սուտ երգին վրայ:

Այս ըսելով, կը սիրենք յուսալ - ինչպէս պիտի ըսէր միւսը - որ Հեղինակը նո՛յն արհամարհանքով - որ վեհափառ էր կարծեմ - պիտի ընդունի մեր այս դիտողութիւնները, մեր անհաշտ մերժումին Հաւատիքին հետ ( *«Մենք»*, 1932, թիւ 1):

Վ. Շ.

«ԷՖԷՐԻՄ»

*Ինչպէս ծանօթ է, մեր մտաորականներէն ոմանք գերագնահատած էին Կոստան Զարեանի «Տատրագրմի Հարսը», իսկ Սշական եւ Շուշանեան սուտ ու փուտ, սուտ ու փուտէն աւելի տխուր զբաղումներով ձեռք բերուած բերք կը համարէին միաներուն կողմէ գլուխ-գործոց Համարուած նոյն պոեմը, Համարեա՛ւ ամբողջութեամբ անխոռով ձգելով Հեղինակին անձը:*

Սակայն վերջին մօտ քառասուն տարիներուն, գործին զուգահեռ յատուկ պարագայ մը դարձաւ անոր անձը, որ իր անկայունութեան հետ անյարմար կացութիւններու ենթարկեց անկայունութեան հակամէտ բաւական թիւով պատեհապաշտներ:

Համայնավար Հայաստանի իշխանութեանց պէսպիսուն խոստումներէն կաշառուած՝ Կոստան Զարեան վախճունական թուականները կանխող երեսնամեակին իր որդեգրած, ձեւակերպած, գրականութեան իրրեւ ուժական աստղձ օգտագործած գաղափարներուն կռնակ դարձնելով, իր մայրամուտէն քիչ մը առաջ սկսաւ տրամադծօրէն հակադիր սկզբունքներով հանդէս գալ, եւ որոշ մարդիկ Զարեանի այդ դիմափոխութիւնը սկսան իրենց հաշուոյն չարաչահել նոյնքան մեղապարտ փութկոտութեամբ մը, ա՛յն աստիճան, որ գործուած մերկապարանոց մեղքերը առաքինութիւն համարեցին, բարբանջելով ի դէպս եւ յանդէպս:

Կոստան Զարեանի անսպասելի այդ ելոյթները անսպասելի բարբանջանքներով դիմաւորողներէն մէկը հանդիսացաւ նաեւ ամերիկահայ անուանի բեկարուժ Տոքթ. Համբարձում Քէքլիքեան, որ գրաւոր աշխարհին մէջ ալ փորձեց իր բախտը, հեղինակաւոր կարծիքներ ալ յայտնեց հոս ու հոն, գնահատանքներ շտայեց ազատ մարդու մը բոլորովին անյարիր պարագաներու, ինչպէս ըրած է Կոստան Զարեանի առիթով, այս անգամ նամակային զեղումով, որուն մենք ծանօթացանք միայն վերջերս, Վարդան Մատթէոսեանի «Կոստան Զարեանի շուրջ» անուն աշխատասիրութեան մէջ:

«Նամակդ աւփ: Կարդացի ափեղ-ցփեղ լրագրական Հայ-Հուշները: Պզտիկ մարդոցմէ միայն կարելի է այդքան սպասել: Միւս կողմէն շատ բարեկամներ շահեցար: Ամէնքն ալ հիացան քու քաջութեանդ եւ ճշմարտախօսութեանդ վրայ: Հիմա գիտեն, թէ ո՞վ ես, ինչ տեսակ մարդ ես: Քաջ ես: Մենք կը սիրենք իրենց միտքը առանց կապանքի դուրս թափող մարդը: Էֆէրիմ» (էջ 433):

«Էֆէրիմ»...

Վերջացաւ գնաց:

16 Յունիս 1961ին, Զարեան իր քանդակագործ դստեր հետ Հայաստան այցելեց եւ ձայնասփիւռէն կարմիր կայսրութեան եւ այն օրերու մեր արքանեակին ի նպաստ անհակակշիռ յայտարարութիւններ ըրաւ, որոնց անհեթեթ նկարագիրը մամուլոյ նիւթ դարձաւ հակահամայնավար ճակատին:

Տոքթ. Համբարձում Քէքլիքեանի ակնարկութիւնը կը վերաբերի Զարեանի ձայնասփիւռային նոյն յայտարարութեանց, որոնց առիթով ճշմարտախօս կը համարուի ան, Կոստան Զարեանը, կ'արժանանայ քաջի տիտղոսին, իսկ նոյն յայտարարութեանց դէմ բարձրացած կարծիքները «ափեղ-ցփեղ լրագրական Հայ-Հուշներ», ու լրագրական կարծիքներուն հե-

դինականը՝ «պզտիկ մարդիկ», որոնցմէ միայն կարելի է այդ-  
քան սպասել»:

Պարագայապաշտ Զարեանի պարագայական յայտարարու-  
թիւններուն դէմ ծառայող մարդե՞րը «պզտիկ մարդիկ» էին արդեօք, թէ՛ սրբազան սկզբունքներ պաշտպանողները այդպէս ճիշորէն պզտիկ համարող բեկարուժը ինք մեծ չէր...

Մեր նախկին ընկերը, որ յիսունական թուականներու կէ-  
սերէն սկսեալ ինքնուրոյն կարծիքներ անձնաւորող գործուն մը  
չէր համարուեր արդէն զրական հրապարակին վրայ, իր  
շարաթափերթին մէջ քննադատի տխուղոս մըն ալ շտայած էր  
այս բեկարուժին եւ ոչ միայն այդ, աւելի՛ն. ասպարէզին մէջ ոչ  
աւելի ոչ պակաս Սշականի ուղղակի յաջորդը հռչակած էր  
զայն, այս բեկարուժը, որ իրենց էութեան դաւանանած մար-  
դոց դաւանանութիւնը քաջութեան հետ շփոթելու չափ թոյլ էր  
զրական ախտաճանաչումներու մարզին մէջ, եւ գրողին պոռ-  
նիկի դեր մը սահմանած եւ զրականութեան մէջ շարունակ  
պոռնկացող իր հերոսին պոռնկութեան ի լուր «Էֆէրիմ» շող  
կու տար:

Կոստան Զարեանի պոռնկական այդ «դաւանանքը»  
վաթնունական թուականներուն բացայայտուած «բարեմաս-  
նութիւն» մը չէր, այլ որդեգրուած էր իր կողմէ աւելի քան  
երեսուն տարիներ առաջ, Չժական թուականներու կէսերուն,  
յայտարարուած Եղիշէ Զարեանցին հետ ունեցած մէկ գրոյցին  
ատեն ու էպիգրամացած նոյն Զարեանցին գրչով՝

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

Երբ խօսում էի մի անգամ քո հետ՝  
Ասացիր դու ինձ, ով «յայտնի» պոետ.-  
- Գրողը որ կայ պոռնիկ է միայն-  
Ով որ շատ տուեց կը տրուի նրան:-  
Եւ դու տրուեցիր, պոռնիկի նման,  
Քեզ շատ տուողին:  
Բացազանչել է ինձ մնում միայն.-  
- Վայ վերցնողին:

Եղիշէ Զարեանցի դատեր՝ Անահիտ Զարեանցի կողմէ  
խմբագրուած «Անտիպ եւ չհրատարակուած գործեր» (1983)  
անուն ստուար հատորէն (էջ 269) վերցուած էպիգրամ է  
«Կոստան Զարեանը», որուն մէջ ձեւակերպուած նկարագիրը  
երբեք բարեշրջութեան նշաններ ցոյց չտուաւ եւ աւելի քան  
երբեւիցէ դրսևորուեցաւ երեսուն տարիներ ետք, ձայնասփիւ-  
ռային բարձրադասակ յայտարարութեամբ:

Կարդանք.-  
«Ասում եմ որ դէպի Հայաստան արած իմ ճամբորդու-  
թեանս ժամանակ եւ յետոյ, չարամիտ ու շահագրգռուած մար-



գիկ ամէն տեսակ անճիշդ լուրեր են տարածում իմ մասին: Արդ, պարտք եմ համարում յայտարարելու, որ Հայաստանում յայտնած իմ կարծիքները ուստիոյին կամ թերթերին, մնում են միանգամայն վաւերական. եւ եթէ այսօր նորից պէտք է լինէր կրկնելու՝ մի բառ պիտի չիփռէի» («Ձուարթնոց», 20 նոյեմբեր 1961, թիւ 1):

*Երանի թէ այդպէս ըլլար, Հաւատարիմ մնար որդեգրած նոր կեցուածքին, կարճ ժամանակ մը ետք ուրիշ դիմագիծ մը չպարզէր, բայց ան Հաւատարիմ կրցած է մնալ միայն իր անհաւատարիմ էութեան: Ահա՛ թէ ինչպէս.*

«Ուզում եմ իմացուի, որ ներկայ Հայաստան գալստ Համարում եմ սխալ: Հայ, այսպէս կոչուած գրողների թնամանքը իմ Հանդէպ ամէն բանից ցածր է, թուրք, ստոր... Մեծ մասամբ անկարող մարդիկ, որոնք բացի մեռածներից մի մեծ բանաստեղծ չեն տուած. առաջին օրից ամէն բան արին, որ իմ աղգի սոաջ բռնած գերս նսեմացնեն, արժանիքներս փոքրացնեն եւ Համբաւս փոքրացնեն: Ահա 4 տարի է, որ գրողների միութիւնը ինձ անդամ չի Հաստատել», («Հայութիւն», Երեւան, 1992, թիւ 1):

*Եւայն:*

### «ՄԵԾ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ»

*Կանխող էջերուն մատնանշուած Կոստան Զարեանի խոստովանութիւններուն առանձնապէս պէտք չկար, զուշակելու համար, որ անպակաս պիտի ըլլան իրեն մատուցուող դառնութեան բաժակները: Ատկէ առաջ քանիցս ըսուած ու գրուած է, որ իր Հաշուենկատ ներգաղթը առիթ պիտի Հանդիսանայ եւ առիթ Հանդիսացաւ իր անմին ու գրականութեան Հարստահարութիւններուն: Հեղ մը յարուած ծուղակներուն մէջ ինչպէ՛ս ետք, կարմիր իշխանութիւններուն Համար որեւէ արժէք չէր ներկայացներ այլեւս ինք, անոնք իրենց օրակարգին վրայ առած ըլլալով միայն իր լիակատար արժեզրկումը:*

*Բայց ամէն ոք այդպէս չընկալեց Համայնավարներուն ու Կոստան Զարեանի աշնանային մեղրալուսինը, եղան նոյնպէս Զարեանի դիմափոխութիւնը «էֆէրիմ»ով ողջունողներուն Հետ նաեւ դիմափոխին գիրկ բացող կարմրաշառայլները «էֆէրիմ»ով պատուող Հարկատուներ, որոնցմէ մէկն ալ Հանդիսացաւ երաժշտական մարզին մէջ վաստակած Աշոտ Պատմագրեան:*

*1978ին, Պէշրութի մէջ լոյս ընծայած «Իմ յուշերից» անուն 246 էջոց Հատորին մէջ, Կոստան Զարեանին նուիրած էջերուն Պատմագրեան կը խօսի անոր առաջին ներգաղթին (1922), արտագաղթին (1925) եւ երկրորդ ներգաղթին (1962)*

մասին, փորձելով պարզել այդ վերիվայրումներուն բարդ նկարագիրը:

Ըստ յուշագրիին, Կոստան Ջարեան միտումով արտագաղթած է (1926), ու երբ սովետներուն կապած իր վարդապոյն ու Հնչուն Հաշիները ի դերեւ ելած են իր տոմարին մէջ, անցած է քսանական թուականներու կէտերուն մեր Հայրենիքի իշխանութիւններուն դէմ ծառայած Դաշնակցութեան կողմը, իր ուժերը ի սպաս դնելով մղուող գաղափարական նոյն պայքարին:

Ի դէպ, Կոստան Ջարեանի արտագաղթին եւ սովետներուն կապուած անոր Հաշիներուն մասին ակնարկութիւն մը ունի նաեւ Վահան Թէքէեան, Լեւոն Զաւէն Սիւրմէլեանին ուղղած մէկ նամակին մէջ.

«Ապացոյց որ շարլաթան մըն է - Հազի երկու տարի Հայաստան մտալէ վերջ միջոցը գտաւ ու եւրոպա նետեց ինքզինքը, ուր կ'ապրի Հայաստանի կառավարութեան գովեստը կարդալով» (Վահան Թէքէեանի նամակները Լեւոն Զաւէն Սիւրմէլեանին», 1972, Պէյրութ, էջ 125):

Վահան Թէքէեան չի շարունակեր «Հայաստանի կառավարութեան գովեստը կարդացող» Ջարեանի կենսագրականը, մինչ Պատմագրեան կը փութայ յիշեցնել անոր մէկ դիրքէն միւսին «անցման եղանակը», նոր դիրքորոշումին իրրեւ ապացոյց մէջերեկով.

«Կառավարութեան հրամանով եւ կուսակցական որոշումով գրականութիւն են ստեղծում եւ ատրճանակի ուժով բանաստեղծութիւն պարտադրում» (Հայրենիք», 1927):

Նոյն յուշին մէջ, Պատմագրեան կը յիշէ նաեւ Ջարեանի յարձակման թիրախ դարձած Մարտիրոս Սարեանը եւ այսօր անունը անյայտ անձնատրութիւն մը ու կ'եզրակացնէ, որ՝

«Ուրիշ շատեր, թէ՛ Հայաստանում եւ թէ՛ դրսում չազատեցին նրա թունտս գրչից» (էջ 120):

Դատապարտելով «թունտս գրիչ» գործածող Կոստան Ջարեանի այդ գիծը, յուշագիրը կ'աւելցնէ.

«Հայաստանի կառավարութիւնը սիրով ընդունեց իր անատակ որդուն եւ մեծ հոգածութիւն ցոյց տուեց նրա կեանքի վերջին յրջանին» (էջ 120):

1978ին լոյս տեսած գիրքի մը էջերուն գետեղուած այս «Հաստատումը» երեւի վաթսուական թուականներու սկիզբը գրի առնուած է, այլապէս, կը խորհինք, երաժիշտը պարկեշտ պիտի ըլլար եւ այդքան շտալ պիտի չըլլար Հայաստանի այն օրերու կառավարութեան ուղղած իր գովքին մէջ, որովհետեւ հոգածութեան քղամիտներով զարդարուածները երբեք հոգածու չեղան Կոստան Ջարեանի հանդէպ, ընդհակառակն, «Հոգածուններուն» առաջին գործը եղաւ «Ճաքրաջրեղ» իր անձը եւ աւագախորհել «ճաւ»ը, որ սահմանուած էր լեռը բարձրանալ, այդ գոյգ ամօթներով խոցելով նաեւ սիրտը Հայրենի բազմու-

թիւներուն, որոնք եթէ չկրցան իրենց դժգոհութիւնը արտայայտել «Հոգածութեամբ» պատուրած ջարդարարներուն դէմ, ջարդուելու յօժարութիւնը ստրկօրէն ընդունած Ջարեանի դէմ ծառայան Հաւաքարար թէ անհատարար:

Կոստան Ջարեանի յուղարկատրութեան պատկերը մինակը պիտի բաւէր, պարզելու համար, թէ Հայաստանի Համայնավար իշխանութիւնները ինչ անողոք վերաբերում մը ցոյց տուած էին իրենց փետրաթափած Ջարեանին եւ դժգոհութեան ինչ տարերք մը կուտակուած էր ժողովուրդին մէջ իշխանութիւն-Ջարեան փոխ յարաբերութեան հանդէպ:

Այս խորհրդածութիւններէն աւելի պերճախօս է նոյնինքն Կոստան Ջարեանի խոստովանութիւնը, երկրորդ ներգաղթէն (1962) ընդամէնը երկու տարի միայն անց, 31 Նոյեմբեր 1964.

«4 տարի է, որ ամէն բան անում են, որ երկրից մեկնեմ, որ Հայ գրականութիւնը մնայ իր ճահճացած վիճակում, խեղճ խաղ, առանց մեծութեան: Ոչ մի ժամանակ կեանքումս, ոչ մի երկրում այդպիսի միակութիւն չեմ ապրել եւ այդպիսի Հոգեկան վիճակի չեմ ենթարկուել»:

- Ա՛յս էր իրեն հանդէպ ցոյց տրուած «մեծ Հոգածութիւնը»:

Իր անսկզբունք, յեղեղուկ, յարմարուողական բնատրութեան, շահամոլութեան ու մեծարուելու մոլեկան մարմաջնեւրուն հետեւանքով վաղուց չքացած է Կոստան Ջարեանին Հաւաքը ընծայելու բարեացակամութիւնը մարդոց մէջ, եւ այդ հիմամբ ոմանք կրնան վերի տողերը համարել իր հերթական տրտունջներէն մէկը, բայց ահա եւ իր աւազ որդւոյն, ողբացեալ ճարտարապետ Արմէն Ջարեանի վկայութիւնը, որ նոյնը կը Հաստատէ Հօրը տրուած կարմիր Հայաստանի պատիժին մասին.

«Բայց Կոստան Ջարեանը իր երկրում պատժուած գրող է: Ահա մի փաստ. Երեւանի համալսարանում բանասիրական ֆակուլտետի ուսանողին արգելուած էր դիպլոմ պաշտպանել Կ. Ջարեանի ստեղծագործութիւնների թեմայով» («Գրական թերթ» 1991, թիւ 6):

Կրկին կ'ուրուանայ նոյն հարցումը.  
- Ա՛յս էր «մեծ Հոգածութիւնը»:

Վաթսունական թուականներուն «մեծ Հոգածութիւն» չկար հոն, բայց տեղ մը կար Հոգեկան ճորտութեան մեծ կամակորութիւն, եւ այդ տեղը Լուսաւորչի աստղին սահմաններէն աւելի՝ մարդոց անսահման ազատութիւններ շնորհած անսահման աշխարհն էր...

Այս կամ այն կողմ թեքելու իր դիւրութիւնները Հաշուի առած, երբեմն այն տպաւորութիւնը կը տիրէ, որ Կոստան Ջարեան գաղափարական, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ քաղաքական շահագրգռութեամբ երբեք սեղանի առջեւ չէ

նստած, Հետեւաբար նժարին մէջ առանձին կշիռ մը չունին եւ պէտք չէ ունենան անոր յաճախակի դիմափոխութիւնները:

Այս առարկութիւնը Հիմք չունի սակայն եւ ճիշդ այն է, որ գաղափարական ու քաղաքական Հարցերուն իրեն չափ էջ յատկացուցած գրագէտ դժուար է յիշել քսանական թուականներէն սկսեալ ամբողջ քառասուն տարիներու վրայ երկարած գրականութեան մէջ: «Անցորդը եւ իր ճամբան», «Բանկօսպը եւ մամուլի ոսկորները», «Երկիրներ եւ աստուածներ», «Նաւը լերան վրայ», ասոնք եւ ասոնց կարգին՝ ան ստորագրած է ուրիշ բազմաթիւ էջեր, ուր իրար կը Հրմշտկեն Հակահամայնավար իր տեսութիւններն ու ռուսական ու թրքական արեւելումներուն մասին իր անբարենպաստ կարծիքները: Յիշեալ բոլոր գործերուն Հանդէպ ան կողմ եղած է ու կողմ փոխած, փոխ առ փոխ դատապարտած ու արդարացուցած է նոյն երեւոյթը կամ նոյն գործօնը, նոյնիսկ բարեփոխած է նախապէս սեւագրած թուրքը...

Ըսել պէտք է սակայն, որ կուսակցական կամ քաղաքական Հովերը չեն միայն, որ մէկ կողմէն միւսը նետած են առանցքէ զուրկ իր էութիւնը, այլ ներքին Հովերը եւս վճռական դեր խաղացած են Հոս, ի վերջոյ ընթերցողը բերելով այն եզրակացութեան, որ կայուն ոչ մէկ կեցուածքի տէր խառնուածք եղած է ան:

Կարդանք «Անցորդը եւ իր ճամբան» փորձագրութեան յառաջարանին մէջ կատարած իր մէկ յայտարարութիւնը, սա՛.

«Առաջիմ, թող ընթերցողը իմանայ, որ այս էջերը իր դունչը շոյիլու Համար չեն դրուած, որ ո՛չ նրա Համակրանքը եւ ոչ Հակակրանքը որեւէ նշանակութիւն ունեն: Այս սողերը գրիլու ժամանակ նրա ներկայութիւնը Հաշուի չի առնուած»:

Այս յայտարարութիւնը ճշմարիտ գրագէտի յայտարարութիւն է, ձգտումնաւոր մօտեցումները Հիմնովին մերժող կեցուածք, միայն ներքին մղումներուն ձայն տալու կոչում, որ կրնար վայելել անխառն գրականութեան երկրպագու բոլոր մարդոց Համարումը:

Ու վայելեց ատեն մը:  
Բայց Կոստան Զարեան, ինչպէս կրկնուեցաւ բազմիցս, երբեք Հաւատարիմ չէ եղած ինքն իրեն, եւ Հոս եւս Հաւատարիմ չմնաց ինքն իրեն, Հնգամեակ մը Հաղիւ անց նոր յայտարարութեամբ մը ընդունեց, որ ընթերցողը ըստած տարր մը կայ ու կայ անոր անհրաժեշտ դատնալու տենչ մը իր Հոգիին:

Ահա թէ ինչպէս.  
«Թէ այս գրքի միակ յաւակնութիւնն է կարողանալ մի օր Հասկանալի եւ անհրաժեշտ դառնալ նրանց, որոնք կը ձգտին լինել նորից, կառուցանել նոր Հոգեկան մի գօրութիւն, գոյանալ, ամբողջովին, ճակատագրականօրէն («Երկիրներ եւ աստուածներ»):

Կոստան Զարեան ընթերցողին անհրաժեշտ դառնալու

նոյն ցանկութիւնը արձանագրեց նաեւ 1943ին, «Նաւը լերան վրայ» վէպի յառաջաբանին մէջ.

«Եթէ այս վէպը, վճռական այս օրերին, վերակոչելով մեր մարմինների եւ սրտերի մէջ դեռ տառապող անցեալը, կարողանայ մի կերպով իսկ նպաստել Հայ ոգու վերածնունդին, Հեղինակը իբեմս պիտի համարի քախտաւոր»:

Երեք տարի ետք, անգամ մը եւս կ'ընդունի ընթերցող ըստ լածին գոյութիւնը եւ դեր մը կը սահմանէ գրականութեան, այս անգամ չափածոյ գործի մը առիթով, Պէյրութի «Անի» ամսագիրին յղած մէկ նամակին վրայ.

«Լրկում եմ, «Ձի, ԳԱՐՈՒՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ» անտիպ շարքից մի կտոր, որ, կարծում եմ, կարող է ծառայել ձեր նպատակին, Հայրենազարձ շարժումին նպաստել» (Ա. տարի, թիւ 2, 1946):

Ո՛ւր մնաց ընթերցողը Հաշուի չառնելու գոռոզութիւնը:


Ասիկա իսկ եւ իսկ Կոստան Զարեանն է:

Վայրկեանի տրամադրութիւններով շնչող Հողեղէնը:

Հաւատարմութեան ողիին անհայտ թշնամին:

Յաջորդով կը խօսուի տպագիր գործի մը հետադայ քախտին մասին Հեղինակին արտօնուած իրաւունքին, սրբագրութեան սահմաններուն, «Նաւը լերան վրայ» վէպին ենթադրուած մաքրաջրումներուն եւ մաքրաջրումները «Նաւ»ուն բարիք հմարած մեր ճորտերուն մասին...

**ԼՈՅՍ ՏԵՍԱՆ**



**ՈՐԴԻ ԱՍՏՈՒԾՈՅ  
ՈՐԴԻ ՄԱՐԴՈՅ**

(Հեղինակ՝  
ԱՐԱՄ Ա. ԿԱՔՈՂԻԿՈՍ)



Մեծի Տանն Կիլիկիոյ  
Կաթողիկոսութեան Ան-  
թիլիասի տպարանէն վեր-  
ջերս լոյս տեսաւ Արամ Ա.  
Կաթողիկոսի «Որդի Աս-  
տուծոյ որդի մարդոյ»  
խորագրեալ Հատորը, որ  
194 էջերու մէջ կ'ամփոփէ  
աստուածաբանական եւ

յատկապէս քրիստոնարանական երկեր չօլափող թիւով 32  
գրութիւններ:

Հատորը կը բացուի «Յառաջարան» խորագրեալ մուտ-  
քով, որ զիտել տալէ ետք, թէ «գերեզմանէն յարութիւն առած  
ու երկինք բարձրացած Յիսուս Քրիստոս Աստուածամարդը  
միշտ ալ պիտի մնայ մարդկային պատմութեան մեծագոյն  
խորհուրդը», պահ մը կը դանդաղի Յիսուսի երեւոյթին դիմաց,  
ուր ժամանակն ու վայրը, անժամանակը ու ժամանակը, ան-  
հունը եւ հունաւորը, երեւոյթն ու աներեւոյթը, երկինքն ու եր-  
կիրը, մէկ խօսքով՝ Աստուած ու մարդ իրարու Հանդիպեցան  
«Եւ Բանն մարմին եղև»:

Վերջին քսան տարիներու ընթացքին, Մննդեան եւ Զատ-  
կրան տօներուն առիթով ժողովուրդին ուղղած իր պատգամ-  
ներուն ընդթին անդրադառնալով՝ Արամ Ա. Կաթողիկոս ըն-  
թերցողին ուշադրութեան կը յանձնէ, որ անոնք «յաւուր  
պատշաճի» գրուած կամ խօսուած սովորական քարոզներէ  
անդին կ'անցնին եւ կը դառնան աստուածաբանական վերլու-  
ծումներ՝ Յիսուս Քրիստոսի անձնն աւելի անոր առաքելու-  
թիւնը պարզաբանելու նպատակով:

Եզրակացնելով՝ «Յառաջարանը» կը շեշտէ, թէ այս Հա-

տորը բանականութեան ու Հաւատքի ճամբով Քրիստոսին աւելի եւս մօտենալու հրաւեր մըն է, որպէսզի ո՛չ միայն խորապէս ճանչնանք Ձայն, այլեւ Քրիստոսը փոխադրենք մեր կեանքի շրջածիրէն ներս եւ մեր կեանքը Քրիստոսով ապրինք:

Այս Հատորին Համար յատկապէս գրուած «Ը՛վ է Յլուս Քրիստոս» գրութիւնը կու տայ սեղմ, բայց ամբողջական պատասխանը արժարժուած Հարցումին՝ աստուածային ու մարդկային բնութիւններու ներդաշնակ ամբողջութեամբ ներկայացող մարդեղացեալ Աստուծոյ Որդիին առաքելութեան նպատակները վերհանելու առաջադրանքով:

23րդ էջով կը սկսի «Աստուծոյ Մտունը» ծնունդը նոր կեանքի» խորագրեալ Հատորին Ա. մասը, ուր յաջորդաբար կը ներկայացուին 1979-1998 ժամանակաշրջանին Հայ Հաւատացեալներուն յուած հետեւեալ գրութիւնները,- «Աւետիաներու աւետիսը», «Որհուրդ մեծ եւ սքանչելի...», «Եւ յերկիր խաղաղութիւն...», «Մտունդէն՝ վերածնունդ», «Մարդու վերականգնումը», «Աղքատացեալ Աստուածորդին», «Քրիստոսը՝ յոյսը աշխարհին», Մտունը Աստուծոյ՝ վերածնունդը Հայութեան», «Բեթղեհէմ՝ սիրոյ ճառագայթումը», «Դէպի Բեթղեհէմ», «Բեթղեհէմ՝ աղբիւր ազատութեան», «Դէպի լոյսի առաքելութիւն», «Յոյսին գալուստը», «Մարդը՝ Աստուծոյ մարդեղութեան նպատակը», «Մարդացեալ Աստուած՝ լոյսը ճշմարտութեան», «Սիրոյ խոնարհումը» եւ «Աստուծոյ վերադառնալու հրաւեր»:

Ինչպէս կը պարզուի խորագրերէն, Ս. Մտունդի առիթով մարդեղացեալ Աստուածորդիին գալուստը ողջունող եւ Անոր առաքելութիւնը պարզաբանող այս պատգամները կ'արձագանդեն իրարու եւ յաճախ կ'արժարժեն նոյնանման մտածումներ ու մօտեցումներ, որոնք պաշտօնած են եղածին պէս, առանց զեղչելու նոյնիսկ կրկնութիւնները, որովհետեւ անոնք մէկ կողմէ «անմիջականօրէն աղերս ունին քրիստոնէական Հաւատքին կապուած ճշմարտութիւններուն հետ» եւ, միւս կողմէ՝ «նկատի ունենալով այն իրողութիւնը, որ Քրիստոս միշտ գոյութեանական ներկայութիւն դարձած է ու պէտք է այդպէս մնայ մեր Հաւաքական կեանքէն ներս»:

Քրիստոսի ծնունդին շուրջ խորհրդածող այս խօսքերէն ետք, Հատորին վերջին 74 էջերը կը ներկայանան «Քրիստոսի յարութիւնը՝ յաղթանակը նոր կեանքի» ընդհանուր անուան տակ ամփոփելով իրերայաջորդ 13 գրութիւններ,- «Գերեզմանէն անդին...», «Յաղթանակի տօնը», «Մահով կեանք կերտել», «Թափուր գերեզմանը՝ աղբիւր մշտանորոգ կեանքի», «Յարութեան Հաւատքով», «Քրիստոս՝ կեանքի ճանապարհ», «Յարութիւնը Քրիստոսի՝ ազատագրումը մարդուն», «Հրաւեր վկայութեան», «Ուսէն՝ կեանք, խաչով կեանք», «Յարեալ խաչեցեալ», «Քրիստոս՝ վերածնունդը մարդուն», «Քրիստոսի յարութիւնը՝ աղբիւր վերանորոգման», «Ջօրա-

ցե'ք Բրիտոսի յարութեամբ»:

Քաջեցեալ Աստուածորդին յարութեան խորհուրդին շեշտադրումներով ո'չ միայն քրիստոնէութեան, այլեւ՝ կեանքին, մարդու ազատագրումին, վերածնունդին, մարդակերտման, ինչպէս նաեւ յանրժողովեան զազունիքները վերծանող այս պատգամներն ալ իրարու կ'ազդուցուն շղթայի օղակներու պէս: Կը կազմեն մէկ ամբողջութիւն եւ պարզ ու ժողովրդային եղանակով մը հայ մարդը ո'չ միայն կը փոխադրեն հոգեմտաւոր աշխարհ մը, այլեւ ա'լ աւելի կ'ամրապնդեն անոր ազգային ու կրօնական դարաւոր արժատները...



ՏԻԿՆԻԿԸ

(Հեղինակ՝

Յ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ)



Սուրբահայ արձակագիր Յակոբ Միքայելեանի ըստեղծումները ի մի խմբող «Տիկնիկ» անուն հատորը ընթերցողին կը ներկայացնէ 13 պատմութիւններ, որոնք նախապէս լոյս տեսած էին Պէյրութի «Նիրակ» ամսագրի էջերուն:

190 էջերէ կազմուած «Տիկնիկ»ը կը բացուի հակիրճ կենսագրականով մը, որ կը ներկայացնէ Յակոբ Միքայելեանի կեանքին գլխաւոր կէտերը: Ասոր վրայ յաւելեալ լոյս մը սփռելու կու գայ հատորին հրատարակիչին՝ Փորոս Փորանեանի «Յակոբ Միքայելեան» խորագրեալ «խօսք հրատարակիչին»-ը կ'ըսէ. «...Անոր պատմութիւնները, ուր պիտի գտնէք մեր կեանքին պատկերացումը, գրուած պարզ, հասկնալի ու երբեմն գեղահիւ հայերէնով մը, կ'ամբողջացնեն սեփական պայմանները»:

Հրատարակիչին բարի երթի խօսքէն ետք, Յ. Միքայելեանի պատմութիւնները ընթերցողին կը ներկայանան երեք



բաժանումներով՝ «Տիկնիկը», «Թիւրինացութիւն» եւ «Կար ու չկար», որոնց մէջ ամէնէն ծաւալունը կը Հանդիսանայ Հինգ պատմութիւններէ կազմուած եւ Հատորին էջերուն կէսը գրաւած վերջին շարքը: Առաջին պատմութեան շարքը՝ «Տիկնիկը», ձեռով մը կը Հանդիսանայ Յակոբ Միքայէլեանի տիպարներուն ըմբոստ նկարագիրին Համապատկերը, որ կը բացուի թելերէ կախուած, կամազուրկ եւ իր կամքէն անկախ թելերով ո՛չ միայն կաշկանդուած, այլեւ իբր թէ արուեստագէտ տիրոջը Հրահանգներով շարժող տիկնիկին յեղափոխութեամբ, երբ ան կ'որոշէ փրցնել թելերը եւ վայելել իր ազատութիւնը: Ստրուկ ու ենթակայ մարդը խորհրդանշող տիկնիկը կը բացայայտէ իր բուն ինքնութիւնը, երբ զինք կեցուցած ոստիկաններուն «-Թելերդ...» Հրահանգ-պահանջին կը պատասխանէ. «-Ի՞նչ թելեր, մարդ եմ ըսի, չէ՞»: Կը ձերբակալեն: Ա՛յ աւելի Հաստ թելերով կ'ամրացնեն զինք: Բայց ան կ'որոշէ տեղի չտալ եւ շարունակել իր պայքարը: Եւ այս անգամ կը սկսի մազցիլ դէպի վեր, դէպի զինք շարժող անծանօթը եւ մզել իր ինքնութեան գոյամարտը:

Մարդկային նոյն լուռ կոխը կը շարունակուի «Որդում», «Օր մը» եւ «Սպասում» անուն իրերայաջորդ պատմութիւններուն մէջ: Առաջին կտորին մէջ իր մտածումներուն ճիշդ Հակառակը՝ քաղաքավար պատասխաններ տուող Հերոսը եթէ իր անզուսպ զայրոյթը կը պոռթկայ զարդասեղանի վրայի ապակեայ սրուակը Հայելիին զարնելով եւ այդպէսով արժընանալով իր իսկ Հիւսած ցնորքէն, «Օր մը»ի գառամեալ Հերոսուհին խաբկանքին ահաւորութիւնը անգիտակցաբար կ'ապրի իր ներսիդին ծաւալող վարդազոյն կեղծ երազներու կշռոյթով՝ ինքզինք օրօրելով անզոյ երիտասարդներու, այսինքն՝ սիրոյ սպասեալ ասպետներու յղուած, սակայն յստակ Հասցէներ չունեցող նամակներու ինքնախարէութեամբ, «Սպասում»ի անպարտելի գաղտնարարապաշտը ֆիզիքապէս եւ Հոգեպէս կը քայքայուի բողոքազիր առ բողոքազիր՝ ուռնացնելով Արդարութեան Պալատի քուլիաներուն կարգադրուած անարդար տնօրինումներուն դէմ աղաղակող իր բողոքներուն թղթապանակը:

Կեանքի անզուժ Հոսանքին դէմ ծառանալու մարդկային պոռթկումը տարբեր երանգներով ինքզինք կ'արտայայտէ նաեւ Հատորին երկրորդ պատմութեան շարքին մէջ: Առաջին կտորին՝ «Ցեղափոխութիւնը» խորագրեալ կարճ այլաբանութեան կ'արձագանգէ «վէպը» անուն պատմութեանը, որ քնարական երանգներով կը ներկայացնէ առաջին սիրոյ կրակէն բռնուած Հրայրի եւ Արմիկի կեանքի անդրանիկ դառնութիւնն ու անկէ բխած Հոգեկան տաղնապները: Դարձեալ դպրոցական յուշերու վրայ Հիմնուած «Իննսուն աստիճան» եւ «Թիւրինացութիւն» խորագրեալ պատմութիւնները կը ջանան մեկնաբանութեան սեղանին վրայ դնել Թիւրինացութիւններու Հե-

տեւանքով կամ պատճառով մարդկային կեանքին մէջ կատարուած այն փոփոխութիւնները, որոնք կ'ունենան ճակատագրական նշանակութիւն:

Վերոնշեալ երկու պատմուածաւորները՝ իբրեւ նիւթ, ոճ եւ դրական յատկանիշներ, կարծես թէ կը նախապատրաստեն «Տիկնիկը»ի երկրորդ Հարիւր էջերը զբաղեցուցած այն Հինգ պատմուածքները, որոնք իրենց Հեքիաթային ուրրտները կը թելադրեն «կար ու չկար» քարացուցական խորագրով: Քառասնական-չիտական թուականներու Հալէպն է թատերաբեմը յիշեալ Հինգ ստեղծումներուն, աւելի ճիշդ՝ ցեխաշաղ աղիւսով կառուցուած անկանոն միայարկ տուններու, ծուռ ու մուռ ցեխոտ փողոցներու, պատուհան պատուհանի գրեթէ փակած տնակներու աշխարհը եւ Երկրէն ու Կիլիկիայէն հոն շունչ առած անտաշ, կարծր, քայց մանուկի չափ փափուկ սիրտ ունեցող Համեստ Հայերու նոր կեանքը, զոր լաւագոյնս կը գրքեւորեն «Նոր գիւղեան Համանուագ» եւ «Արծիւները գետնի վրայ» անուն պատմուածքները, երբ կը յաջողին ներկայացնել Նոր Քիւղի աղքատ, պատուախնդիր, ազգայնասէր, անխարդախ եւ օրը օրին ճակտի քրտիքով ապրող տիպարներուն ո՛չ միայն արտաքին պատկերը, այլեւ՝ ներքին աշխարհի յոյզերն ու երազները:

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒԲԵՐ**

**«Եպարրորական  
հապոր մը  
«Խորհրդարանական  
Հաղընդիր»ը**

Այս զարնան, Փարիզի *"Barfillat"* երատարակչատունն յոյս տեսած է *«Լանաստեղծութիւններ, խորհրդարանական հաղընդիր»* անուն հատոր մը, որուն կազմութեան իրենց մասնակցութիւնը թերած են Ֆրանսայի խորհրդարանի արեւի քան 500 երեսփոխանները՝ ընտրելով իրենց նախասիրած բանաստեղծութիւնները:

7001 արեւի ԼԵԻԻ հաշուով այս հատորնորին մէջ տեղ գտած են ֆրանսացի եւ օտար 280 բանաստեղծներ ու գրագէտներ, որոնցմէ ռմանք ճկատի առնուած են մէկէ արեւի երեսփոխաններու կողմէ:

Հատորին մէջ կան նաեւ ֆրանսագիր ու հայագիր բանաստեղծներ, իսկ ընտրուած քերթուածներուն մէջ կարելի է հանդիպիլ այնպիսի նմոյշներու, որոնք կը շօշափեն «հայկական նիւթեր»:

Այսպէս, Փարիք Տէփճեան ընտրած է Լուի Արակոնի *"Strophes pour se souvenir"* անուն բանաստեղծութիւնը, որ նուիրուած է Ֆրանսայի ազատագրութեան ի խնդիր նահատակուած մարտիկներուն (ինչպէ՛ս՝ Միսաք Մանուչեանի) եւ ուր Արակոն մէջբերումներ կատարած է Մանուչեանի քերթողութենէն (էջ 31):



Միշէլ Փերիքսը իր մահէն քանի մը օր առաջ ընտրած է Շարլ Ազնաւորի *"Le Temps"* (էջ 57), Քրիսթիան Գիլվիլիէ՛ Ռօլքէն Մելիքի *"Le plus bel Amour"* ի, իսկ Ռոժէ Մէյի՛ Փիեռ Թովմասեանի *"L'amitié"*: Աերջապէս, Ալֆրէդիլի քաղաքապետ եւ երեսփոխան Ռընէ Ռօլքի նախասիրած բանաստեղծութիւնը եղած է Դանիէլ Վարուճանի *«Կարմիր հողը»* անուն քերթուածը (բնականաբար՝ անոր ֆրանսերէնի քարգմանութիւնը, *"La Terre Rouge"*, էջ 646):

Հատորին յառաջաբանին հեղինակն է Ֆրանսական խորհրդարանի նախագահ Լօրան Ֆապիուս, որ առաջին հերթին քաջատրած է այս հատորնորին կազմութեան տուն տուած դրդապատճառները: Ապա, ան դիտել տուած է, թէ ինք իրատուց շունի դատելու կատարուած ընտրու-

քիները, որովհետև անոնք կը վկայեն զուր անձնական ճաշակի եւ սրերու մասին:

Այսպէս, իրաքանչիւր երեսփոխան յայտնած է իր նախասիրութիւնը՝ առանց գիտնալու իր պաշտօնակիցներուն կատարած բնորոտփունները եւ, իսկապէս, արդիւնքը եղած է հետաքրքրական ու յստակ գիծերով պարզած ֆրանսացի երեսփոխաններուն բանաստեղծական ճաշակը:

Օրինակ, Ֆրանսայի նախկին վարչապետներէն Պալատիւր ընտրած է Արքիւր Ռեմպոյի "Chanson de la plus haute Tour"ը, Ժիւսթար տ'Էսթլեն՝ Շարլ Պօսլէրի "Mœsta et Errabunda"ն, Ֆիլիպ տը Վիլլիէ՝ Փոլ Վերլենի "Clair de lune"ը, Փիեռ Լըյուշ՝ Ժագ Փրեվէրի "Il ne faut pas"ը, Ա. Սանթիմի՝ Լա Ֆոնթէնի "Les deux taureaux et une grenouille"ը, Լուի Ալքմազ՝ Շարլ Պօսլէրի "XLI"ն, Կի Հերմիէ՝ Լուի Արալոնի "La poètes"ը, Էլյուս Լաֆրանքա՝ Շարլան Խալիլ Շարանի "De la connaissance de soi"ը, Լօրան Քաթալա՝ Փապօ Ներոտայի "Les libérateurs"ը, Լօրան Ֆապիոս՝ Վալէրիի "Le Cimetière Marin"ը, Ռեմէ Պառ՝ Վալէրիի "Palme"ը, Եւայլն...



«Turkish Daily News» օրաթերքը, որ մասնատրարար օտարներու մօտ տարածուն անգլերէն թերթ է, Շաբաթ, 3 Ապրիլի իր քիւին մէջ, ամբողջ էջի մը վրայ երատարակած էր Անի քաղաքի մասին յօդուած մը, ստորագրուած՝ մի ոմն Նէյլէթ Մ. Վ. Տ. Շար-Պաշարի կողմէ, (յայտնապէս օտարական մը): Անիի եկեղեցիներուն ու պատմութեան նուիրուած այս լայնածաւալ յօդուածին խորագիրն էր «**Անի մոռցուած քաղաքը**»: Բայց երբ մեծ համբերութեամբ կարդացինք անգլերէն այդ երկարաշունչ յօդուածը, տեսանք, որ Անի քաղաքը չէր, որ մոռցուած էր, այլ Հայ ժողովուրդն էր, որ մոռցուած էր: Արդարեւ, ամբողջ յօդուածին մէջ, երբ այնքան յաճախակի կերպով կը հանդիպէինք անգլերէնի վերածելով անճանաչելի դարձած հայկական անուններու, տոհմանուններու, եկեղեցիներու անուններու, ի գուր կը փնտռէինք հայուն անունը: Ո՞ր ժողովուրդին մայրաքաղաքը եղած էր այս քաղաքը, որո՞նց կը պատկանէին այն հազար ու մէկ եկեղեցիները, որոնց մասին կը խօսուի, ո՞ր ժողովուրդին կը պատկանէին պատմական այն տոհմերը կամ իշխանութիւնները, որոնց անունները կը տրուէին: Հայոց մասին ո՛չ մէկ յիշատակութիւն՝ մէկ բա-

ԱՆԻ ՄՈՌՅՈՒՄԸ  
ՔԱՂԱՔ  
ԿԱՄ ՄՈՌՅՈՒՄԸ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ

Իսթանպուլահայ «Մարմարա» օրաթերքը, քրքրական մամուլն կատարած գրեթէ ամէնօրեայ քաղաքաձրներու շարքին, իր 3 Ապրիլի քիւով բնթերցողին ուշադրութեան յանձնած է հետեւեալ տեղեկութիւնը.-

ցառութեամբ միայն: Միայն մէկ անգամ կը գործածուէր «Արմէնիքն Պակրագիրք», այսինքն՝ Հայ Բազմապատկաններ անունը: «Իսկապէս ցառալի մերձեցում մը, որ զոնէ չէր սպասուէր "Turkish Daily News"ի նման թերթէ մը, որ այս խնդիրներուն մէջ ներմիտ կեցուածք չէ ունեցած ցարդ: Կը սիրենք յօտալ, որ խմբագրութեան ուշադրութենէն վրիպած էր հայերը զանց առնելու այն դիտարութիւնը, որ աւելի քան զգալի է յօղուածագիրին մօտ»:

«300 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԻՏԻ ՈՉՆՉԱՆԱՅ»

«Աարմարս» օրաթերթը կը յայտնէ, թէ «Ենի եկեղեցի» թերթի 28 Մայիս 1999 թիվին մէջ լոյս տեսած է վերի խորագիրը կրող ցնցիչ թղթակցութիւն մը՝ Էյուպիի Ս. Աստուածածին եկեղեցիին մասին, որուն վրայ «երկար ժամանակի ի վեր այք դրած է քաղաքապետ Ահմետ Կւնճ»:

Քաղաքապետութիւնը եկեղեցին սեփականացնելու ու գրաւելու օրոշում ընդունած է հետեւեալ պատրուակով.- Եկեղեցին կը գտնուի բանուկ շուկային կեդրոնը և արգելք կը հանդիսանայ շուկայի բնդարձակման: Քաղաքապետը կը ցանկայ այս եկեղեցին սեփականացնել, փլցնել և անոր տեղ շուկայ բանալ:

Այս մասին երկար ատենն ի վեր շարունակուող դատը հասած է մինչեւ Վճռարեկ Ատեան: Իր ընտրական քարոզարշաւին մէջ, քաղաքապետը խօստացած

է անպայման վերջ տալ այս եկեղեցիին և անոր գրաւած հողը յատկացնել շուկայի բնդարձակման ծրագիրի իրականացման:

Շարունակելով՝ թուրք թերթը կ'աւելցնէ, որ խնդրոյ առարկան 6000 քառ. մետր տարածութիւն մըն է, որ հայոց կը պատկանի: Սակայն թաղին մէջ հայ չէ մնացած և Ս. Աստուածածինի գմբէթին ներքեւ ամիսը մէկ անգամ միայն արարողութիւն կը կատարուի՝ Պայրամփաշա բնակող հայերուն համար, որոնց թիւը 70 է:

Քաղաքապետութեան յարուցած դժուարութիւններու նշումը շարունակելով «Ենի եկեղեցի» կը յայտնէ, որ քաղաքապետութիւնը կտրած է եկեղեցիին հասոյթի բոլոր աղբիւրները. հակառակ անոր կալուածատուրը այլ կը պահանջէ ևս այս կացութեան հետեւանքով առաջացած եկեղեցւոյ պարտքը քաղաքապետութեան հասած է 800 միլիոն թրքական լիրայի: «Այս գոմարը ուրկէ՞ պիտի գտնենք», հարց կու տայ Թաշճը, որ տեսակցելու ևս հարցը պարզելու համար քաղաքապետին ներկայացած է, բայց թուրք պատասխանատուն չէ ընդունած զինք:

Էյուպիի միակ հայ բնակիչը Ս. Աստուածածին եկեղեցւոյ ժամկոչն է, որ եկեղեցւոյ շրջափակին մէջ կը բնակի՝ իր երկու զաւակներով: «Ան ոչ իր անունը կու տայ և ոչ ալ կ'արդօնէ, որ զինք նկարեն: Կը պապմէ, որ այս եկեղեցիին դրան արջնու անգամ մը մոլորովեան ռումբ մը պայքած է, իսկ երկրորդ առիթով մըն ալ խողովակաչն ռումբ արշակուած է», կ'աւելցնէ թուրք օրաթերթը:

Եզրակացնելով, «Ենի եկեղեցի» դիտել կու տայ, որ Էյու-

պիի Ս. Աստուածածին եկեղեցին 324 տարեկան է: Քանիցս նորոգում է: Նորոգութիւններն մէկուն ծախսերը հոգացած է Արքունի վարչակազմի Յովհաննէս պէյ Տատեան: Փայտաշէն եկեղեցին 1855ին վերածում էր քարաշէնի:



### ԱՆԻ ԵՓՐԵՍԵԱՆԻ ԱՍՏՈՒՆՔԻ ԵՐԵԿՈՆ

Կիրակի, 2 Մայիս 1999ի երեկոյեան, «Յակոբ Տէր Աւրոմեան» հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ յիշատակահայ ասմունքող Տիկին Անի Եփրեմեանի «Մենք հայեր» խորագրեալ ասմունքի երեկոն, նուիրում Ապրիլեան նահատակներու յիշատակին:

Քաղաքական, կրօնական, ազգային, միութեանական եւ կրթական պատասխանատուներու, ինչպէս նաեւ սրանք լեցուցած գեղարուեստատէր բազմութեան մը ներկայութեամբ Տիկին Ա. Եփրեմեան հանդէս եկաւ իրարու օղակուած բանաստեղծութիւններու շարքով մը, որ ընթացաւ ներքին զարգացում մը եւտպրնդող յստակ ծրագրով՝ ներկաներուն փոխանցելու համար օրուան պատգամը:

Արեւտանայ ու արեւելահայ գրողներու գործերէն ընտրուած յափածոյ թէ արձակ կտորներուն ընդմէջէն ասմունքողունին վործեց կատարել հայու ինքնութեան եւ ոգիին հարցադրումը՝ մեր դարարու պատմութեան կարգ մը յատկանշական իրողութիւններուն, բարոյական եւ հոգևոր նուաճումներուն, Յեղասպանութեան, Արցախեան հերոսամարտին եւ անկէ ներշնչուած յաղ-

բանակի ոգիին բնականացումով, որուն յաջողութեան նպատեցին բեմադրիչ Ռոպերթ Առաքելեան եւ ասմունքողունին ընկերացած փոքրահասակ մասնակիցները:

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՅԻԿՆԵՐՈՒ ԲԱՅԱՌԻԿ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Մոնթրէալի «Համագային»ի «Միփան» մասնաճիւղի կազմակերպութեամբ, 16 Ապրիլին, Հայ Կեդրոնի «Ա. Ահարոնեան» սրահին մէջ տեղի ունեցած է բացման հանդիսութիւնը համաշխարհային յայտնի ֆիլատելիտ-ցուցադրող եւ միեւնոյն ատեն հայկական պատմական արժէք ներկայացնող բացիկներու մասնագէտ Պերճ Ֆեներճիի անհատական հարուստ հաւաքածոյին, որ ընդգրկած է հայերու համար յատուկ նշանակու-

րին ներկայացուցած 1897-1920 ժամանակահատուածը:

«Արեւելքէն Արեւմուտք» խորագրին տակ՝ Պերճ Ֆեներճի հայ եւ օտար կանդիսատեսներուն նրանցուցած է հայկական 722 բացիկներ՝ իրենց պատմական արժէքները եւ նրատարական քուականները նշող ծանօթագրութիւններով:

30 տարուան երկարաշունչ եւ յարատեւ փնտռութիւններու եւ նիւթական ու բարոյական մեծ զոհողութիւններու զնով ձեռն կերպարանք ստացած այս հարաւորն միակն է իր տեսակին մէջ եւ, ըստ Toronto Post-card Clubի զնահատումին՝ համաշխարհային մակարդակով յայտնի 10 հարաւորներէն մէկը:

16-19 Ապրիլ երկարող այս ցուցահանդէսին ներկայացուած են հազարագիտ հարաւորներ՝ նամակահիշներ, բացիկներ, ծրարներ, եւայլն, որոնց յիմաց պահ մը կանգ առած երէց, երիտասարդ թէ աշակերտ հազարաւոր այցելուները մեծ վերացումով ապրած են հայոց պատմութեան վերոնշեալ տարիները՝ յուզիչ եւ ոգեշնչող պատկերներով:

**ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՅ  
ՏԱՂԱՆԴ ՄԸ՝  
ՄԱՐԿՈՍ ԽԵՏԱՅԵԱՆ**

Սպանիոյ մէջ տեղի ունեցած «Մշակոյթներու բնդմլջէն» միջազգային մրցոյթին, արժանիքնանայ Մարկոս Խետայեան արժանացած է առաջնութեան մրցանակին՝ իր «Եազմիկ» («Յասմիկներ») խորագրեալ հատորին համար:



«Նորականութիւնը, անհանդուրժողութիւնը եւ այլանորոգութիւնը» անուն մրցոյթի դատակազմին մաս կազմած է նաեւ Էքսքրեմատուրա սպանական համալսարանի գրականութեան դասախօս Կրկորիօ Թարրէս, որ բարձր գնահատած է հայ պատանիին գիրքը:

Լճամեայ Մարկոս Խետայեան արդէն իսկ հեղինակն է 4 գիրքերու, որոնցմէ երկուքը նրատարակուած են, իսկ միւսները կը մնան անտիպ:

1993էն սկսեալ ան մասնակցած է մանուկ եւ պատանի քստեղծագործողներու արժանիքնան եւ միջազգային զանազան մրցոյթներու եւ տիրացած՝ մէկ անի մրցանակներու: Արժանիքնի մէջ կայացող Առաջին Գրական Մրցոյթին, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն երկրագունդի բազմաառասնեակ երկիրներ ներկայացնող մանուկներ ու պատանիներ, Մարկոս Խետայեան տիրացած է տարւան առաջնութեան մրցանակին:

ՌՈՊԷՐ  
 ՀՍՏԷՃԵԱՆԻ  
 ԼԻԲԱՆԱՆ  
 ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



«Գիտակ» ամսաթերթի երա-  
 լերով Յունիսի առաջին օրերուն,  
 մշակութային առաքելութեամբ  
 Լիբանան այցելեց «Մարմարա»  
 օրաթերթի խմբագրապետ, ար-  
 ձակագիր Ռոպեր Հատտիճեան,  
 որ իր եօթնօրեայ կեցութեան ըն-  
 թացքին եղաւ հիւրը լիբանա-  
 նահայ մամուլի խմբագրական  
 կազմերուն, մշակութային միու-  
 թեանց եւ մեր միութեան կողմ  
 ազգային կառոյցներու պատաս-  
 խանատուներուն:

Այդ օրերուն, Չորեքշաբթի, 9  
 Յունիսի երեկոյեան, Պուրճ Հա-  
 մուտի «Յ. Պօղոսեան» հանդի-  
 սաստիակին մէջ, «Գիտակ» ամ-  
 սաթերթի կազմակերպութեամբ  
 եւ լիբանանահայ մշակութային  
 միութեանց զորձակցութեամբ  
 տեղի տուցաւ Պարոյր Սեւակի  
 ծննդեան 75ամեակին նուիրուած  
 հանդիսութիւն մը, ի ներկայու-  
 թեան մշակութային միութիւննե-  
 րու ներկայացուցիչներու, պե-  
 տական երեսփոխաններու, Լի-  
 բանանի մօտ Հայաստանի դես-  
 պացիին եւ եղերաբայտ քանաս-  
 տեղծին հարսին ու բողոքիկին  
 Գայեանէ եւ Սեւակ Սեւակի:

Լիբանանի եւ Հայաստանի  
 քայքայներու ունկնդրութենէն  
 ետք, բացման խօսքը կատարեց  
 Տիկին Լեւա Գարայեան - Բա-  
 գուպեան: Այնուհետեւ զորձադ-  
 րութեամբ գեղարուեստական յայ-  
 տագիր, որմէ ետք «Քազին»-ի  
 աշխատակիցներէն Լեւոն Շա-  
 ռոյեան հանրութեան ներկայա-  
 ցուց հիւր դասախօսք:

Լիբանանահայ գաղութին իր

խոր շնորհակալութիւնը եւ իս-  
 քանակապահանջներու ողջունե-  
 րը փոխանցելէ ետք, Ռ. Հատ-  
 տիճեան լուսարձակի տակ առաւ  
 Պ. Սեւակ մարդը, գրական վաս-  
 տակը եւ ազգային ժառանգու-  
 թիւնը իրրեւ հայութեան քոյր  
 զարակները միատրոյ առանցք:  
 Ան ըսաւ, որ ազգ մը չի գոյատե-  
 ւեր առանց բանաստեղծութեան,  
 մանաւանդ երբ գոյրկ է Պ. Սեւա-  
 կին կշիռը ունեցող տաղանդ-  
 ներ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
 ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱԻ  
 ԼԻԲԱՆԱՆԻ  
 ՄԱՅՐԻՆԵՐՈՒ Ա. ԿԱՐԳԻ  
 ՇՔԱՆՇԱՆՈՎ

Չորեքշաբթի, 26 Մայիսին,  
 Նախագահական պալատին մէջ,  
 Լիբանանի հանրապետութեան  
 նախագահ գորակար Էմիլ Լա-  
 հուտ Լիբանանի Մայրիներու Ա.  
 կարգի բաճրագոյն շքանշանով



պարզևատրեց Արամ Ա. Կաթողիկոսը:

Այս պարզևատրումը կատարուեցաւ միջազգային գետնի վրայ ի նպատակ լիբանանցի վեհափառ Հայրապետին կատարած աշխատանքներուն եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ատենապետ վերջնատրուելուն առիթով:

Նախագահ Լահուտի գնահատանքի խօսքէն ետք, Վեհափառ Հայրապետը իրեն տրուած այս գնահատանքը նկատեց «Պատիւ մը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որ հաւաքական ծառայութիւն մըն է հայ եկեղեցւոյ ու հայ ժողովուրդին, եւ այդ ծառայութեան մէջ իր կարեւոր տեղը ունի Լիբանանը»:

Վեհափառը աւելցուց. «Հայկական ջարդերէն ետք, հայերը Լիբանանն եկան գաղթական, սակայն գաղթական չմտնելով անոնք դարձան լիբանանցի ու պայքարեցան ի խնդիր Լիբանանի զերիշխանութեան, անկախութեան ու միութեան: Լիբանանը է՝ եւ պէ՛տք է մնայ մշակույթներու ու կրօններու երկիր, գոյակցութեան ու ազատութեան երկիր, եւ կամուրջ մը՝ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ: Լիբանանի հայութիւնը այս զիտակցութեամբ կապուած է Լիբանանին եւ պարտաւոր է իր կարեւոր ընկեր Լիբանանի համար»:

նահայ) արուեստագիտուի Արփինճ Փեհլիվանեանի երաժշտական գործունէութեան 40ամեայ վաստակին նուիրուած հանդիսութիւն մը:

«Համազգային», «Թէքէան» եւ «Նոր Սերունդ» մշակութային միութիւններու կազմակերպած եւ արուեստագիտուիին նախկին աշակերտ-աշակերտուիներուն, խմբավար օրդիին՝ Ճորճ Փեհլիվանեանի, ինչպէս նաեւ Հ.Բ.-Ը.Մ.ի, Հ.Օ.Մ.ի եւ ԼԱՐՔ երաժշտական ընկերակցութեան գործօն աջակցութիւնը վայելող սոյն հանդիսութիւնը վայելած է հովանաւորութիւնը Բորճ Տօրմէնեանի, որուն կողքին ներկայ գտնուած են Լիբանանի հիպատոսը, Վաչէ Արք. Յովսէփեան, Մուշեղ Եպս. Մարտիրոսեան եւ շարք մը բարձրաստիճան անճառարութիւններ:

Հանդիսութեան զլխատը բաժինով ներկայացուած է Ֆրանսահայ բեմադրիչ Ժիրայր Փափազեանի պատրաստած «Արփինճ Փեհլիվանեան - իր կեանքը երաժշտական ուղեւորութիւն» անուն տեսերիզը: Ապա բեմ բարձրացած է օրուան բանաստեղծ երաժշտական քննադատ եւ բանաստեղծ Պետրոս Ալահայտոյեան, որ հանգամանօրէն ներկայացուցած է յօբելեարին երգային արուեստը եւ անոր կեանքի եւ ստեղծագործական ուղեւորութեան զիտար կանգրրուանները:

Հանդիսութեան աւարտին աւղի ունեցած է կոնդակի ընթերցում եւ շքանշաններու տուչութիւն: Վաչէ Արք. Յովսէփեան մեծարեալ արուեստագիտուիին փոխանցած է Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակն ու «Ս. Մեսրոպ եւ Ս. Սահակ» շքանշանը, իսկ Մուշեղ

ԱՐՓԻՆԷ  
ՓԵՆԼԻՎԱՆԵԱՆԻ  
ՅՈՐՃԵԱՆԵԱՆԻ  
ՆԱԽԿԻՍՈՒԹԻՒՆԸ

6 Յունիսին, Լաւ Անճելքի Օքսիտանիքի Քոլէճի «Թոռն Հոլ» դահլիճին մէջ տեղի ունեցած է սփիւրքահայ (նախկին լիբանա-

Եպս. Մարտիրոսեան՝ Արամ Ա. Կաթողիկոսի տիկնանց յատուկ գնահատանքի մետալը:

**ԳԷՈՐԳ ԱՃԵՄԵԱՆԻ ՄԱՀԸ**



24 Դեկտեմբեր 1998ին, ամառորեայ արձակուրդի մը ընթացքին, կարուածի մը հետեւանքով անակնկալօրն մահացաւ լիբանանահայ արձակագիր, հրատարակագիր, խմբագիր եւ մտաւորական Գեորգ Աճեմեան՝ 66 տարեկան հասակին:

Գեորգ Աճեմեան ծնած է 1932ին, Սուրիայ Մուսայուն գիւղաքաղաքը: Նախնական կրթութիւնը կը ստանայ Հալեպի Հայկազեան եւ Կիւլաբնեան վարժարաններուն մէջ, իսկ երկրորդական ուսումը՝ Ալեքիսո գոլէճ: Ապա կը փոխադրուի Լիբանան եւ 1958ին կը վկայուի Պէյրութի

Ամերիկեան Համալսարանէն՝ գրականութեան եւ իմաստասիրութեան Պակաուոր Արուեստից (B.A.) վկայականով:

Երիտասարդ տարիքէն պատմութեամբներով, պատկերներով, արձակ գրութիւններով ու գրականագիտական եւ հասարակական յօդուածներով Գեորգ Աճեմեան կ'աշխատակցի սփիւոքահայ ու հայրենի մամուլին, ինչպէս՝ «Սփիւոք»ի, «Բազին»ի, «Շիրակ»ի, «Հայկազեան հայագիտական հանդէս»ի, «Գարուն»ի, «Զարթոնք»ի, եւայլն:

Գեորգ Աճեմեան մաս կը կազմէ «Սփիւոք»ի խմբագրութեան եւ կարճ շրջան մը նաեւ կը ստանձնէ խմբագրապետի պատասխանատուութիւնը:

1956ին, Գ. Աճեմեան կը երատարակէ իր երախայրիքը՝ «Անկարելի պատմութիւն» անուն պատմութեամբներու ժողովածուն: Անոր կը յաջորդեն պատմութեամբներ, վէպեր, տեսական էջեր եւ հրատարակագրական յօդուածներ ամփոփող տասնէ աւելի հատորներ, որոնցմէ կ'արժէ նշել՝ «Անորոշութեամբ եւ մասամբ նորին», «Անապահովութեան փողոցները», «Պիտի շարժարեւոյթները», «Ակամայ ժողովածուն եւ այլ դերասաններ», «Տեսական - քննադատական փորձեր», «Պիտի յիշենք երբեքիցէ Լիբանանի Հայաստանը», եւայլն: Իր գրչին կը պատկանին նաեւ անգլերէնով գրուած տեսական եւ գեղարուեստական հատորներ:

Գեորգ Աճեմեանի մահով՝ Սփիւոքը կորսնցոց աշխոյժ եւ բեղուն գրիչ մը:

«ՀԱՐՈՒԱԾԸ»

- արձակ -

Հեղինակ՝ Գրիգոր Պլլտեան

Կիլիկիա-Գրատուն-հրատարակչատուն-ուպարան, 1998



«ԿՐԿՆԵՐԵՒՈՅԹ»

- բանաստեղծութիւններ -

Հեղինակ՝ Վարանդ

Հրատարակք. Գեորգ Մելիտինեցի գրական մրցանակի-թիւ 32



«ՓԱՓԱ ՔԻՆՆՅԱԼԵՐ ԵՒ ՀԱՅԵՐԸ»

- յուշագրութիւն -

Հեղինակ՝ Իտա Ալեմետտին

Հրատարակք. Գեորգ Մելիտինեցի գրական մրցանակի-թիւ 36



«Ի ԼՈՒՐ»

- քերթածներ -

Հեղինակ՝ Փանոս ճերանեան

Հրատարակք. Գեորգ Մելիտինեցի գրական մրցանակի-թիւ 37

ԼԻՐԱՆԱՆ

Հատվածաճառ 10.000 Լ.Ո.  
Տարեկան բաժնեգին 40.000 Լ.Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

باكين  
مجلة شهرية : ادبية فنية وعلمية  
المدير المسؤول  
السيد ارتين كارنيك قرانجيان

•

PAKINE  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն  
ԱՄՍԱԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր  
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ.

Խմբագրության անդամ  
ԱԱՐԳԻՍ ԿՐԱԿՈՍԵԱՆ

Հասցե՝  
Centre Culturel SHAGZOYAN  
Bourj Hammoud — Liban